



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99  
4-93



18 NOV 2011

891.99  
4-93  
unp.

Կ Ր Պ Հ

242

# ՊԱՏԿԵՐՆԵՐ

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1007  
31831

Արտառոված՝ Մեղու-Հայաստանի, Նոր-Դար,  
Լումայ և Արձագանք լրագրելից:

L U S O R U



### ՆՈՐ-ՆԱԽՈՒՁԵՒԱՆ

Нахичевань н-Д.  
Типографія С. Я. Авакова

1905

24.03.2013

36654

Дозволено цензурою Тифлисъ, 29 Марта 1905 г.

## ՊԱՏԿԵՐՆԵՐ Եւ ՊԱՏՄՈՒՄԸՔՆԵՐ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

- |  |   |
|--|---|
| <p>Մինչև ող...</p> <p>Ժենեա.</p> <p>Կեանիքի խաչը.</p> <p>Վրէժ.</p> <p>Ան քարի աղօթաւորը.</p> <p>Հարստահարութեան զոհ.</p> <p>Վերջինը Բոլղարներից.</p> <p>Քաղզի խաղը.</p> <p>Իր փոխարէն.</p> <p>Հայ էր նա.</p> <p>Արժանաւոր հատուցումն.</p> <p>Ժամանակակից սրիկան.</p> | <p>Հաճի-Խաչօն.</p> <p>Բարի՛ ձահապարհ...</p> <p>Սիւնեցի Հայրապետը.</p> <p>Երկու փամբուշտներ.</p> <p>Արգինա.</p> <p>Տիրացու Ակօն.</p> <p>Քեալլածին.</p> <p>Երազ.</p> <p>Եւզբաշին.</p> <p>Օսման-Եաման.</p> <p>Ցիշողութիւններ անցեալից.</p> <p>Արեածագին.</p> |
|--|---|

ԵՐԵՎԱՆ ՈՐ...

## **ՄԻՆՉԵՒ ՈՐ...**

---

Ես տեսայ նրան Կ. բաղաքի օտարականաց վերջին պանդսկի մութ և խոնաւ ձեղունի տակ, անմաքուր ցնցոտինելի մէջ, ապական-ուած՝ խեղգող օդն և հոգիկան ու ֆիզիքական ոյժերը սպառող մնունդը՝ ներկայացնում էին մի կատարեալ կմախք, թէ և այդ աստի-ճան մաշուած ու բեկրեկուած զրութեան մէջ ևս փայլում էր նրա հեղահամբոյք, աղնուական գէմքը՝ գեղեցիկ հոգու աննման արտայա-տութեամբ. սերբակ աշքերում զեռ չէր հանգիլ շողակնի նման փայլ-փլող լոյսը. նրանք նման էին երկնային լուսասփիւռ աստղերի, որ մինչև անկումն պահպանում են իրենց սքանչելի փայլը. գունատ այտերի վերայ դարձեալ խաղում էր պարզ և անմեղ ժպիալ. լայն՝ կարծես փղոսկրեայ ճակատը չէր արտայացում փորբոգութեան կամ յուսահատութեան և ոչ մի նշոյլ... Նա լուռ տարածուած էր կոշտ անկողնակալի վերայ, երբ բարեսիրտ մարդի հոչակ վայելող՝ բժիշկը մօտեցաւ նրան, դնեց բաղկերակը, լսեց կրծքից ու մէջքից, վերա-հսկու կոսի և հիւանդութեան բուն պատճառներին:

— Խոնաւ ընակարսնի հեղձուցիշ օդը, հոգեպէս քայլայող դրութեան հետ, սաստիկ ազգել է քո թռփելի վերայ և եթէ շարունակես ապրել ներկայ պայմանների մէջ, հազիւ թէ յուսալի լինի քո կեանքի փրկութիւնը...— ամինայն սառնասրտութիւնով արտաքերեց նա և հեռացաւ:

Հեռացաւ նա. հեռացմն կ նրա բազմաթիւ «ազգասէր» այցելուները, որոնց ականջին ստէպ հնչում էր «սիրելի հիւանդի» մելամաղձիկ, վշտահար ձայնը, որ զուրս էր թռչում բեկրեկուած որտիժանը ելեէջների հետ:

բանում. այստեղ ամբողջ շաբաթներով անխնամ և անպաշտպան տան-  
ջուել եմ ես, սակայն աւելի տոկալ ու մաքառել միանգամայն անկա-  
րող և անդօք եմ, խնդրում եմ, եղբայրութեան, մարդկութեան անու-  
նով, գէթ մի քանի օր ազատեցէք ինձ այս մուժ ու խոնաւ նկուղի  
սպանող մթնոլորտից. գէթ մի ամենակարճ միջոց պատսպարեցէք  
ինձ, մինչև որ.., մինչև որ...

Քոլորը՝, ըստ երեսյթին, սրտի ու զգացմունքի տէր մարդիկ  
էին, և անտարակոյս իրանում էին վշտի ծովակում խեղդուող օտա-  
րականի անհնարին դրութեանը. բոլորը՝, բոլորը անխտիր, ցանկա-  
նում էին կարեկցել նրան, փրկել, կեանք ու արե պարգևել.., սա-  
կայն, չէր կատարւում այդ երեսյթը գործնականապէս, փաստօրէն,  
նրանք ամենքն էլ խոյս էին տալիս, զլանում էին հայ-քրիստոնէին  
վայել մարդասիրութեամբ վերաբերուել դէպի երիտասարդ Յարու-  
թինը, դէպի այն մարդը՝ որ ուրիշների բարօրութեան համար զո-  
հարեցում էր իր սեպհական անձը... այդպէս է արդեօք արդի մարդ-  
կութեան փափուկ քաղաքականութիւնը, թէ՝ այդ նրա բաժինը,  
նրա ճակատագիրն էր:

Բ.

Յանաստեղծական սքանչելի գիշեր է. մոյգ-կապոյտ երկնակա-  
մարի վերայ տժգոյն փայլիլում են աստղերը՝ տժգոյն՝ ոբովհետեւ  
պայծառ լուսինը, կարծես նորահարսի ժպիտն երեսին, յամրաքայ,  
սիգամնմ, առաջ է լասկում, իր ջինջ լոյսը անխտիր սփուելով և  
ստրուկ, և տիրող, և բարի, և չար մարդկանց վրայ հաւասարապէս.  
ահա այդ պահուն բոսքորի ափերում, թիւրքական մայրաքաղաքի  
արուարձաններից մինում, մի հոյակապ, մեծ և սքանչելի շինութեան  
առաջ, հաստաբուն կաղնիների և ստուերաւոր հականիների ծառուղի-  
ներում շրջում էր մի երիտասարդ զոյգ, եւրոպական նորաձեւ, կոկ և  
մաքուր տարազով. շաղի ու շողի նման՝ մանկամարդ աղջիկը պֆնուած էր  
ոսկեղին՝ ակնակուռ զարդերով, որոնք, իւրաքչիւր թեթեսակի շարժ-  
ման հետ, անդրադանում էին գիշերային թագուհու լուսեղին  
փշրանքները... երիտասարդ տղան հպած նրա կողքին՝ թէ-թէկ՝  
անցուղաձ էին անում, ներշնչելով գեղեցիկ յոյսերի հետ՝ երփնե-  
րանգ ծաղիկների անուշանուութիւնով մնուած՝ հով ու զով օղը:

— Այն, պիտի գնամ, այնտեղ՝ սպասում է ինձ ուխտակից ընկեր-  
ներիս լազմութիւնը. այնտեղ՝ գրկաբաց սպասում է ինձ մի. այլ սէր,  
որին պարտական եմ ես իմ գոյութիւնով, որ ինձ կեանք է տուել  
և հոգի ներշնչել... Դնում եմ ես, չնաշխարհիկդ իմ, սակայն իսկն-  
գրում եմ, որ չմոռանաս ինձ, չդաւաճանես իմ սիրոյն և իմ յիշա-

տակը անջինջ պահես սրտիդ խոզքում...

— Այս, իմ թանկագին, մի թողներ ինձ անտերունջ, անմիխ-  
թար. առանց քեզ ապրել ես չեմ կարող. ինայիբ գէթ իմ ծաղիկ  
հասակին, եթէ չես ցանկանում, որ դեռ չքայուած, չծաղկած՝ իսամ-  
բի ու չսրանայ իմ գոյութեան վարդը...— արտասուր աշքերին, շիկա-  
հեր գլուխը յինած երիտասարդ տղայի կրծքին, արտաբերում էր  
դեռահաս աղջիկը—մէկը՝ մայրաքաղաքի հազուագիւտ գեղեցկուհի-  
ներից:

— Իմ ուխտը անդառնալի է, պէտք է գնամ. նախ քանի քեզ, ես  
ճանաչել, իս պաշտել եմ մի այլ նուիրական սէր, մի ուրիշ սուրբ  
ու վսեմ գաղափար. փառքի մի անման պսակ, փշով ու տատասկով  
հիւսուած... և որի համար պէտք է զոհեմ ամենայն ինչ, մինչեւ որ...  
մինչեւ որ...

Գ.

Քառյարկանի փառաշէն տան վերին յարկի ընդարձակ դահլի-  
ճում, որը կահաւորուած էր եւրոպական ճոխ և ընտիր կահ-կարասի-  
քով. ուկեհուռ ջահերսկ, թանկագին գորգերով և արծաթաթել ծո-  
պերով եղերուած՝ մետաքսի՝ մանրանկար՝ վարագոյներով... նստած  
էր՝ 50-55 աշուններ տեսած և դէմքի գեղեցիկ գծագրութեան հետ-  
քերը հազիւ թէ պահպանած՝ գրեթէ մի ծերունի կին. նրա շագա-  
նակագոյն մազերը հիւսուած էին սպիտակի թանձը խառնուրդով,  
սեիկ աշքերը սկսուել էին մաշտել կամ խամրել. մէջը փոքր ինչ  
կռացել էր—մերձենում էր նրան կեանքի զաժան ձմեռ, թէկ, ըստ  
երեսյթին՝ այդ երեկոյացած հասակում իսկ սիրում էր նա սլըրանքը,  
կեանքի վայելքը... կրծքի վերայ փայլիլում էր տասնեակ ակներով  
ճոխացուած ոսկեղին մի հազուագիւտ զարդ, որ ներկայացնում էր  
թիւրքական կիսալուսինն ու աստղը սրածայր տէգերի և սլարների  
մէջ ինձուած... նրա գալկացած երեսի վրայ կարդացում էր հոգե-  
կան յուղմունք և սրաի խոսվութիւն. այդ փայլիկնին նա կրուած էր,  
արտասուրի կոհակները, մարդարատի խոշոր հատիկների նման, վայր  
էին գլուխում առատութեամբ և ահնետանում շողոզուն զարդարանք-  
ների ծալքերում...

— Թնդ այդ թիւր և միանգամայն դատապարտելի մտադրութիւնը,  
սիրելի որդեսակ, խնայիր գէթ անմիիթար ծնողացդ աղաշանքին.  
առա տեսնեմ թէ ինչ է պակասում քեզ այս վաղանցուկ աշխարհում.  
ինչ ևս պտուս գու այդ անիծեալ պանդխտութեան մէջ: Ո՞վ պէտքէ  
վայելէ մեր փարթամ հարստութիւնը, ո՞վ պէտքէ քո հայրական օջա-  
վայելէ մեր փարթամ հարստութիւնը, ո՞վ պէտքէ քո հայրական օջա-  
վայելէ մեր փարթամ հարստութիւնը...— Այդպիսի խօսքերով դիմեց հասակաւոր տիկինը եւր

որդուն, որ նոյնալիս սրտայոյդ և յամբաքայլ երթեեկում՝ էր դահլիճի երկախնութեամբ. բայց նա մտախոհ և լուռ էր, ինչպէս որ էին տան որմերն ու կարսաիթը. կարծես նրա հետ խօսելիս շլինէր մէկը, կարծես նա միայն էր և այն՝ հեռաւոր Այրարատի ամայի դաշտերում... Խեղագիտ մայրը եօթը զաւակ ծնելուց յիտոյ, այսօր մի որդի ունէր միայն կենդանի և այն մտածում էր թողնել նրան խսպառ անմիտ-թար և հեռանալ հեռու, հեռու երկիր, որի բաղդը կապուած էր համարում իւր բաղդի՝ փառքը՝ իւր փառքի հետ...»

—Քեղ եմ ասում, սիրելիդ իմ, լսիր մօրդ թախանձանքը... փառք Աստուծոյ, քեղ համար պատրաստ են աղնիւ և պատուաւոր պաշտօններ, իթէ չես կամենում վաճառական լինել կամ քո լեզուվ՝ «Հնուգ» դառնալ, պատկառելի հարստութիւն և գեղեցիկ հարսնացու...

—Իզո՞ւր աշխատում ես իմ իդէալի, իմ ձգտումների վրայ բըռնանալ: Ես պիտի կատարեմ իմ սրբազան պարագը, իմ անդառնալի ուխտը... Իսկ չեղել ինձ ցանկալի նպատակից, անկարոն է՝ ոչ ծնողական գոլովանքը, ոչ նազելի աղջկայ սէրը, ոչ ոսկիների շեղջը... Նշանակում է՝ պէտք է գնաս:

—Այն, կ'զնամ:

—Ուրեմն երբ կարողենք սպասել քո ցանկալի վերադարձին: Երբոր ինքը՝ ժամանակը կ'որոշչ... Ես պիտի թափառեմ, ես պիտի տոկամ և տանջուիմ, մինչև որ... մինչև որ...

Դ.

Փրանսիայի լուսաւոր մայրաքաղաքում բարձրագոյն ուսումն ստանալուց յիտոյ, Յարութիւնը վերադարձաւ իւր ծննդավայրը, ուր թէն իր վաճառական հօր ցանկալի ինչն էր, որ նա կառավարէր իր առեստական տան գործերը, սակայն երիտասարդը հրապուրուած էր բոլորվին ուրիշ գաղափարով, յոյսերով ու ձգտումներով. Նա շեր կամինում իւր հօր ու պապի նման՝ ջնուդ դառնալ... Նա իսկապէս տողորուած էր մի շատ խճուած ինդըրի լուծումով, և այդ երկոյթը ընդգրկում էր իւր բաղդն էլ, իւր երջանկութիւնն էլ...

25 գարուններ էր տեսել նա. միջանասակ, զէմքի ու հոգու ան-նման գեղեցկութիւնով, երբ, շանսալով ոչ մայրական թախանձանք-ներին, ոչ սիրող աղջկայ չերմ արցունքներին, ոչ ծնող հօր՝ ժառան-գութիւնից զըկուելու՝ սպառնալիքին, գուրս զնաց նա «էֆլնդիների» հայրենիթից. Երկար շրջեցաւ նա, երկար թափառեցաւ. աղքատ, մերկ և քաղցած: Սաւառնում էր Յարութիւնը ինչպէս մի գերեզմանական ուրուական՝ հերոսների շիրմների վրայ, ինչպէս նաշխուն թիթես.

Նիկը խարոյիկի շրջակալքում, մինչև որ կ'հանդէր կրակը կամ կայրէր նրան իր բոցով, մինչև որ...

Ե.

Նոյեմբերի ամսի ցուլտ օրերից մէկն էր: Կ. քաղաքը ծածկուած էր թանձր մէգով ու մաւախուզով. վազօրդեան արեի թոյլ ճառա-գայթները հազիւ թէ զօրում էին այնքան լուսաւորել, որ կարելի լի-նէր առարկաները փոքր ինչ հեռաւորութեան վրայ որոշել միմեանցից. մի խօսքով, մարգկանց սրաերի նման, ընութիւնն էլ տիսուր էր ու լալկան. ահա այդ պահուն լսելի եղաւ հնագարեան վոքրիկ եկեղեցու ընդհատ զանգահարութեան մելամադու ձայնը. Ժողովրդի խուն բաղմութիւնը կարծես համակուած մի անսասելի ախրութեամբ՝ շտա-պում էր սիրոյ և խաղաղութեան տաճարը. այնաեղ՝ արուեստական ծաղիկներով ու գողարիկ պատկներով ծածկուած դագաղի շարջը՝ ցաւակցական խօսքեր ու մըմունջի հառաջանքներ էին լուսում. այն-տեղ՝ ըստ սովորութեան՝ սրանչելի, սրտաշարժ և զգայուն ճառեր էին տրաք ու ում, նրա գիտիկ վրայ ուխտում էր ժողովուրդը պաշտել նրա գաղափարը... յաւիտեան անմուանալի պահել իր սրտում աղնիւ մարդի անգին յշշատակը...

Միջին և հաստրակ գասի ժողովուրդը իր ուսերի վրայ առած նրա գին, որպէս Յիսուսը բաւնում էր իր խաչը, տարան նրան իր գողզոթան, լացով ու կոծով, մայր-հողին յանձնելու:

—Դնաս բարեաւ, անմուանալի Յարութիւն, ալէկոծ գաղափարի անծայր ու անյագ ծովը քեզ էլ կլանեց ու տաբան..., այն, ժամա-նակից շատ վաղ վիճակուած էր քեզ յաւիտենական պանդխտութիւն, խաչ ու սառը գերեզման, գուցէ այնաեղ էլ գու պանդուխտ պիտի մնաս, զըկուած ու հալածուած, մինչև որ, մինչև որ...

Այդքան կարճ և անփոփ էր քահանայի գամբանականը:

Եւ նրա հողակոյտի վրայ մի բառ միայն գրոշմուեց.

«Յարութիւն»:

## ԺԵՆԵԱ

Ա.

Սպիտակ թաշկինակը ձեռին, մերթ ճակատից ծորսդ քրտնի  
շիթերը և մերթ քնչած աչքերից առատորին հոսող արտասուրի խո-  
չոր կոհակները սրբելով, քայլամոլոր և մտայոյ անցուղաբձ է անում  
նա այն բնակարանի առջե, ուր իր բաղդաւորութեան հէնց առաջին  
օրից սու էր գրել, ուր գատարկուել էին՝ ամուսնութեան առթիւ  
լիաշուրթն բարեմազդութիւնների քաղցրահնչին բաժակները և ուր,  
այդ իսկ բաղէին, թառամում, ունայն և վաղանցուկ աշխարհի հետ  
իր գոյսութեան թելերն էր խզում.—ով, —նա՝ որ յուսախարութեամբ  
միայն շնչեց, ամրապինդ հաւատով տոկաց կեանքի հարուածի ու զօ-  
րիկ հալածանքի դէմ, արաւ իր խաչը անվրդով սիրով և համրե-  
րութեամբ գոտեսուած...

Արգամը՝ որ այդ վայրկենին խորը վշտով համակուած՝ թա-  
փում է աղի ու լեղի արտասուրի յորդ անձրե, երիտասարդութիւնից  
դէպի այրութիւն անցած՝ 35-36 տարեկան մի վայելչակաղմ, լայն  
ընչացքով, սաթի նման սև աչքերով ու սիրուն դէմքավ զինուրական է.  
նրա վայլիլուն ուսաղինները, բազմելանդ ժապաւէնների բարդու-  
թիւնն ու ոսկեհուու երախակալով «քաջութեան համար» ստացած  
շողշողուն սուրը լուելեայն շատ գողարիկ դէպեր են պատմում ձեզ  
նրա անցեալից և, թերևս, կ'երաշխաւորին ապագայ բարօրութեանը...  
եթէ միայն բթացած ու բարացած խղճի խայթը չ'փափկի և երկ-  
նային արդար ցասումն ու վրէժինդրութիւնը յամենայ... բայց ինչ էր  
նրա թախճութեան էական պատճուը, արդեօք նա՝ որի աչքերի  
լոյսը խաւարում և հոգու զօրութիւնը ջլատում ու քաղում էր այդ  
իսկ պահուն, թէ մի այլ ցնցող հանգամանք:

— Ժենեա, ժենեա, — միմնջում էր նրա լիզուն: Դա իր կինն էր,  
ութը ձիգ տարինների անրաժան ընկերն ու հաւատարիմ լծակիցը, որ  
ինչպէս գարնանային «արտասուր» (լանդիշ) շուտով ծաղկեց, ժամա-  
նակից վաղ՝ խամրելու և թառամելու համար:  
— Ե՞կ ինձ մօտ, սիրելի Արգամ. — ասաց նա սակաւ ինչ առաջ

Էկ, որ տամ քեզ իմ վերջին հրաժեշտը... մնաս բարեաւ. ես բոլոր սպառվ ներում եմ քեզ. այժմ ազատ ես սիրելու նրան, որի թակարդի մէջ խճճուած էր քո հոգին և որը սեացրեց իմ բազդի այնքան լուսավառ աստղը...

Բ.

Հաճելի անուշահոաւթեամբ սնուած՝ ծառախիտ ու ծաղկալի պարտէ է, անսւանի կալուածտտէր Խ-ի՝ աննման ամարանոցը՝ մողաւական երլրում: Դրախտը չեմ տեսել, բայց եթէ նա փոքր իշտաէ նմանիր այս երկրային հրաշալիքներով օժտուած՝ սքանչելի պարտիդին՝ արժէր մարդկանց այնքան հիասքանչ գովասանըն ու միծարանքը... երփներփն ծդիկների՝ անուշահոտ վարդերի, մեխակների, յասմիկների, երկնանւան մանիշակի ու անապական «արտասուրի» մէջ նստած են աղջիկ ու տղայ, նրանք նման են մոմերին ասեմ թէ՝ լուսերին արձանի. այնքան թարմ, նուրբ և քնքուշ են նրանց զիմագծերը, որ մայիսեան վարդն էլ, ապրիլիան «արտասուրին» էլ ամաչում են երես ցոյց տալ և ժպտալ նրանց հանդէպ. զգում են վայրկենապէս իրենց ոշնչութիւնն ու տգեղութիւնը այն կենդանի՝ բանական՝ ծաղիկների համեմատութեամբ, որ հրաշալի ընութեան գլուխ գործոցն է:

Օբիորդը պատշաճ վեհութեամբ մեկնել էր մոմերին ձեռքը, որ ջերմագին համբոյրներով ծածկում ու սիրոյ արտասուրով ցողում էր երիտասարդ տղան:

— Երգւում եմ, Արարչի, իմ պատուի և այն բոլորի անունով, որոնք սուրբ են ինձ համար, ապրիլ՝ քեզ սիրելու համար միայն... աշ-հ, նազերիդ իմ, հրեշտակիդ իմ, մի սեացնիլ իմ արել, իմ երջանկութիւնը, մի մերժիր ինձանից քո թանկագին ձեռը, որի յուսով, ահա բոլորում է տարին, որ շնչում և այնքան բարեբազդ եմ համարում ես ինձ:

— Եթէ արդեւք չեն լինիլ ծնողներս, եթէ յիշաւի դու արժանի ես իմ սիրոյն... — թոթովում է գեղեցիկունու լեզուն ձայնի այնպիսի թովչութեամբ, որ քաղում է տղայի սիրան ու հոգին, որ կարծես հմայում է նրան կախարդական հմայքով:

Երիտասարդ սպան՝ որ նոր էր ստացել իւր ասպետական սուրբ բարձրագոյն ուսման մրցագրի հետ, արբած աննման աղջկայ գեղով, կարծես ուշագնաց՝ ծունկ է չոքում նրա առջե, և նրանց վառհացքն ու միմիկան խօսում է ամենայն բան, ինչ որ չի կարող ճառել ամենաերջանիկ հուեսը լեզուն: ծաղիկների թագաւորութեան մէջ, կապոյտ երկնակամարի տակ, քաղցլախօս թռչիկների խնդակ-

յութեամբ կապուեց նրանց սիրոյ ուխտն ու դաշը—ցաւիտեան սիրել, միասին շնչել, միասին մեռնել»...

Գ.

Ճքեղ կառքերի աղմկալի երթնեկութիւն, դաշնամուրի, փողի ու թմբուկի անուշ մեղեդիներ. սքանչելի երգեցողութիւն, փարթամ սեղան, համագամ խորակիկներով, շամպանեան զինու շատրուան և ոսկու ու մարգարտի անձրեւ... համազգեստների ու նորաձն՝ գոյնզգոյն տարազի բաղդաւոր շաբքեր...

Ի՞նչ կար.

Արգամի և ժենեայի միութեան հանդիսաւոր խրախմանքն է:

— Յարմարաւուր, կարծես միմեանց համար ստեղծուած զոյգ են, երկուսն էլ բարձրագոյն ուսումն ստացած, երկուսն էլ ազնուական ընտանիքի և փարթամ օջախի զաւակներ. երկուսն էլ նորահաս և գեղեցիկ... — լուսում էր հազարաւոր բերաններից, լիաշուրթն և սրտագին բարեմաղթութիւններով համեմուած:

Նորահարսի օժիտը չ ա փ ա ւ ո ր է լ. մի ընդարձակ կալուած թեսսարաբիայում, այսինքն՝ մի քանի գիւղեր՝ կուսական անտառներով ու բերբի հողերով, չափաւոր էր իհարկէ այդ օժիտը Արգամի և ոչ հասարակ մահկանացուներիս նկատմամբ, մի մարդի՝ որ ոչ այնքան իւր օջախի հոչակով, որքան որ համազգեստի և մրցագրի արտաքին փայլով կարսողացել էր կաշկանդել կալուածատիրոջ սիրու և, որ գլխաւորն էր, յափշտակել նրա սիրուն դստրիկի հրեշտակային անմեղ ու անփորձ հոգին...

Աստուածային տաճարում «հայր մերի» նման սերտած ուխտն ու երդումը վերստին կրկնուեց հրապարակապէս նաև Ստեղծող-Ըրարչի աներևոյթ աշքերի առջե:

Դ.

Հոլովուեցին մերթ ուրախ և մերթ տրտում ամիսներն ու տարիները. Արգամը այժմ մելամաղձիկ և մտայոյդ էր դարձել. թաղուած հալստութեան ու բաղդաւութեան մէջ, նա անձնատուր էր եղել աշխարհային անվայել զուարճութիւնների. իսկ ժենեան՝ օր ըստ օրէ դալկանում, հալ ու մաշ էր լինում, տանջում էր նրան խորին վիշար, որ թունաւոր իժի նման՝ նստած նրա սրտում էր և կրծոտում... ինչն էր արդեօք շաբթասութ. — ասենք շատերից մէկը — Մի անգամ Անհա Վասիլեևան նրանց մօտ հիւր էր եկել, նա, կարելի է ասել, որ մի հասարակ, մի սովորական կին էր, ոչ-դիւրեկան

գծագրութեամբ, Ժենեան պատռում էր նրան, որպէս իր ազգականունուն, որպէս մի կողջ որ խսկապէս կարօտ էր կարելցութեան, որ ճանաշուած էր խելահաս և դէպի այդ ընտանիքը բարեացակամ: Նրբ նա մնաս բարե արեց, Ժենեան նկատեց ինչ որ շաղփաղփանք, հաճոյախօսութիւն Արգամի և նրա միջի, տեսաւ, որ թեն ընկած՝ ճանապարհեց նրան Արգամը և..., և վերադարձաւ տուն 24 ժամից յետոյ, թէ և հազիւ էր պատահում, որ Արգամը ամբողջ գիշեր մնար կամ լուսացնէր իր սեպհական յարկի տակ. նրա կեանը հետզհետէ շարքաշ էր դառնում, նուիրուած անխորհուրդ զուալճութեան՝ թղթախաղի, զրոսանքի... բայց այս առաջին անգամն էր, որ վերահաս էր լինում Սննայի հետ ունեցած նրա սիրախօսութեանը և նրա ականջին էին հասնում համբոյների շփշփոցը: Ժենեան լուռ էր, նրա լեզուն չէր զօրում արտասանել այդպիսի շարաբաստիկ, յուսահատական իրականութեան մասին և ոչ մի խօսք... իսկ թէ ինչ էր կատարում նրա ներսում, այդ կարսղ էր զգալ միմիայն ինըը: Պատճառ ունէր արդիօք Արգամը խէթ աշքով նայելու կամ խոժոռելու իր սկզուն Ժենեայից, որ այժմ զոյգ մանուկների մայր էր, անտարակոյս ոչ և ոչ. գէթ այդպէս էր վկայում նրանում ներքին մարդը, բայց փաստն այն էր, որ Ժենեան՝ հաւատարիմ մնալով իւր խոստման՝ անպայման սիրում էր նրան, մինչդեռ Արգամը ճանաշում էր Ժենեային, որպէս իր պաշտօնական կողջ, իր զաւակների մօրը, որի փարթամ հարսառութեան մէջ, ինչպէս ասում է ժողովուրդը՝ կարելի էր լողալ և մեծանուն փառքովը երկալ ու փայլել աշխարհում... դատապարտելի սովորութիւնը մոլութեան փերածուեց և սկիզբն եղաւ Ժենեայի փաղաժամ կորստեան:

## Ե.

Ժենեան տկար է. նա տանջվում է անորոշ հիւանդութեամբ. թժկների կարկուա է թափվում, բայց արդիւնքը այնքան էլ միիթարական չէ:

—Պէտք է ամոքել նրա ներքինը՝ կազմուրել հսկեկան ուժերը. թնդ շըշապատեն սարեկամները, նրա սրտի մտերիմները և աշխատեն ցրել այն վիշաը՝ որ տանջում և վրդովում է նրան:—Ասում են բոլորը, որ տրամաբանօրէն պէտք է միանգամայն անհեթեթ համարել, մի՛թէ չաստուածունու նման մհծարուած Ժենեան էլ վիշտ ունի...—

Նորաաի տիկինը ընած չէր. բայց հոգու թափիծը թմրութեան ու զառանցանքների մէջ թալել էր նրան: նրա տեսութեան առջև

պատկերանում էին հազարաւոր դէպքերի ու անցքերի յուշեր, իր ոչ այնքան հեռու անցեալից, ուրախ ու տիսուր, պարզ ու խաւար գոյներով ներկուած. թախծութեամբ մասմեռում է և Արգամի սիրոյ առաջին ուխտը.—պատուի և կոչման անունով նուիրագործուած. բայց գարնանային անուշահոտ վարդի ու «արտասուքի» (լանդիչ) հետ չորսացի, յօդս էին ցնդել նա և սիրոյ այն համելի զեղմունքը, որ կեանը ու երջանիկութիւն էին ներշնչում նրան, բաց է անում ծանրացած աշքերը. ահա նստած է իր կողքին՝ զոյգ սիրասուն զաւակներին գրկալառնուած՝ Աննա Վասիլենան, որ ստէպ զուարճախօսում է Արգամի հետ և յաճախ՝ երկուով միասին՝ քահ, քահ... ծիծաղում կամ անդիւր կերպով հրհուում են... Ժենեան նախանձից կայծակնահար է լինում, թժկները զարմացմամբ վկայում են, որ հիւանդութեան ըլջանը այնքան արագութեամբ հասել էր ուղեղի բորբոքման...

Եւ նա ընդ միշտ խցում է իր լսելիքն ու վակում է աննման աշքերը այլ ևս չ'զգալու, չ'աեսնելու ինչ որ կատարվում է իր շուրջը... Զգում է Արգամը.

—Ի՞նչ.

Իր արալքի ագեղութիւնը և ջերմ արտասուքի հեղեղով թըրշում է ոչ թէ Ժենեայի. մոմեղին գէմքն ու ցամաքած աջը՝ այլ նրա ձեռքով՝ զուարթ ու բաղդաւոր վայրկեաններում՝ իր անուան ու աղլանուան սկզբնատառերով ծաղկագրած սպիտակ թաշկինակը... միախառնելով իր խեղդուկ հեծկլատանը զոյգ որբիկների աղէխարը լաց ու կոծին:

$$\frac{1007}{31831}$$

ԿԵԱՆՔԻ ԽԱՉ

三

Ծերունի զբագէտը մի պօլսւիմբերխալի արխառւրով՝ անհօնի գո-  
վիստներ էր շուալիլ աւետարանի ճշմարիտ ու լուսաւոզ մաքերի,  
քրիստոնէական վարդապետութեան նկատմամբ, որ իր թէ՝ եսթերն  
անհամբ ճանաչել, ուսումնասիրել և ըմբռնիլ էր և գիտակցօքէն, տո-  
գսրուած այդ գաղափարով, փափագ էր յայտնում ո. աւազանի մկրս-  
տութեամբ մաքիլ իր հոգին անցեալ ապականութիւններից և պատ-  
րաստուել ապագայ անանցանելի կեանքի համար... միմիայն բառեր,  
օտար մտքի արայայտութիւն, զիւանական անդուր ոճով ու տգեղ  
դարձուածներով պղողուած, որոնց նկըքն, առանց կարգալու իսկ,  
հարկաւաք էր պատուիրողի անուան և ազգանուան ստորագրու-  
թիւնը. իսկ Իսթերը բիստանեայ էր գառնում հայ տղայի հետ յաւի-  
թիւնը. իսկ Իսթերը ցանկալի տեխնանքով. քան իր գաւանած կծու-  
տեանն կապտուելու ցանկալի տեխնանքով. քան իր գաւանած կծու-

Երիտասարդ կնոջ այդ չափաբառիկ խնդիրն այնքան էլ թա-  
փառել մեր հոգեսոր Դիւանատների «սեղաններում», որ եսթերը իր  
նման մի սիրունիկ եսթեր էլ էլ արտազբեր և, ըստ կրօնի, անորոշ  
գոյնի մարդկանց թիւը մի հատով աւելացըրել:

Մեր հոգիով վարչութիւններից մինում, ողորմելի, հիացած ու քայլայւած յարկի ներքեւ, մի զգգուած բազկաթոսի մէջ թըռւած

էր, մաշուած դէմքով ու ալեխառն մորուքով, երիտասարդութիւնից դէպի ծերութիւն անցնող քարտուզաբը և մի ինչ որ թուզթ էր մրոտում. «Հայր մերի» նման սերտած դիւանիկան ֆրազներն արագ-արագ փոխադրուում էին ուղեղից քարտէզին. և որքան թուզթ էր մրսուել նա իւր գարաքաջ կեանքում, որքան թանաքի գոլորշի ու ալիդարինի անհաճոյ հոտով մոռած օդ ներշնչել. տեսէք, տասնեակ տարիների խծիծելոց թերուել, ցած է իջել նրա աջ ուսը և մեքենայական աշխատութիւնը բթացրել է սիրան էլ, ուղեղն էլ...

Մանկամարդ հրէուհին նազելի քայլելով, նաշխուն թիթեռնիկի նման՝ թեթև ու սիրուն հագնուած՝ արձանացաւ մեր քարտուղարի առջև:

— Եսթել Միջման, — ներկայացրեց նա ինքն իրեն և զետեղուեց ցոյց տրուած տեղում: Քալառողաբը իր կապագոյն ակնոցներիներբ-քից դժուեց նրա մոմեղէն դէմքի այնքան նուրբ ու սքանչելի գծերը. «Երկի տեղական օտարախօս հայերից է. հարուստ կալուածատիրուհի, որ եկել է՝ կամ մետրիքական վկայագիր խնդրելու կամ ամուսնալու-ծութեան համար խնդիր ներկայացնելու, . . .» մտածեց պարոնը և վայր դնելով ըթացած զրիչն ու մաշուած ակնոցները, քաղաքավարութեամբ հարցրեց նրա գալստեան պատճառը:

—Իմ մասին գործ կայ այստեղ... Միջման,, եթէ մտաբերում էք, ես իդաւունք սուացյա քրիստոնէութիւն ընդունելու, սակայն չ. քաղաքում այդ անյարմաք համարուեց. այստեղ էլ երէկ զիմեցի հայր-Ցիլինտսիեանին, դժուարութիւններ է առաջ բերում,, սկսեմ անելիքս...

Հպարտ աղջկայ այնքան խրոխտ ձայնը սկսեց դողդողալ, նա՝  
ըստ երևոյթին՝ սաստիկ զղային էր, մի հիւանդութիւն, որ յատուկ է  
ժամանակակից ձևապաշտ ու քմահաճ կանանց. և նա մանկափան հե-  
ծեծանքով լաց եղաւ: Քարտուղարը՝ որ «ջլպանութեան» մասին գա-  
ղափար էլ չունէր, այդ իսկապէս սրտաշարժ ցնցող՝ տպաւորութեան  
ներքե զգացուեց, թէ և բաւական ուշ հասկացաւ բռն խնդիրը:

Հանայէ...», «Յաղագս անառակ վարուց Խ վարդապետի..», «Յաղագս վատնելոյ Տ. վարդ... զարդինս կառածոյն էջմ...», «Յաղագս վտանգաւոր վարակիչ հիւանդութեան քահանային Ա, ա...», «Յաղագս կնախող Մարտ... քահանայի...», «Յաղագս ապօբինի կենակցութեան Մ. քահանայի ընդ հարազատ...», «Յաղագս գաղեալ գանձանակադրամաց Մայր Աթոռոյ և ս. Երուսալէմի խաչակիր ա. քնյին 0...», «Յաղագս ընդունելոյ գհրէուհի Եսթերն Միշման...»: Ահա ձեր գործը. տեսնենք... Դեռ անցեալ տարի թոյլատրուած է եղել խաչակիր Գ. քահանային մկրտել ձեզ Հ.-ում.—Դարձաւ քարտուղարը դէպի Խորայէլի գուստարը. «Գործելը» մի կողմ դնելով և կրկին թաղուելով 1870-ական թուականներից, ատենի ընտիր կարասին կաղմող՝ այժմ մաշուած ու բգկառուած բաղկաթողի մէջ:

Եսթերի խոշոր ու սաթի նման սկըրակ աչքերից տակալին զայր էին գլորուում արտասուրի կոհակները. շողակնի նման ջինջ ու թափանցիկ. նրա ձուածեւ սիրուն դէմքը շառագունել—ծիրանի կարմրութիւն ու արեի ջերմութիւն էին ստացել. նրբակազմ կուրծքը խեղդող յուզմունքից բաբախում էր՝ նման մեռնող մարդի վերջին վայրկեան-ներին:

— Լսեցէք խնդրեմ, — խեղդուկ ձայնով առաց մանկահասակ կինը,  
երբ փոքր ի շատէ խաղաղուեց նրա ներքին փոթորիկը և պաշտօնա-  
կար անձի յուսաղբական խօսքերը հաճելի սպեղանի դարձաւ նրա  
ըեկեկիւած ու վշտոտ սրտին: — Տարիներ առաջ, երբ ես խնդիր  
ներկայացրի հոգեոր իշխանութեան՝ քրիստոնէութիւն ընդունելու, իմ  
սրտի մտերիմը չափազանց սիրում էր ինձ... թերևս այժմս էլ խաղա-  
չին հանգել նրանում սրբազն կրակի կայծերը... Այս, ծանր է ինձ  
ասել, որ ես թերահաւատում եմ, որովհետեւ, չփիտեմ, պատրուակ է  
միայն թէ յիբաւի հրէութիւնն է արդելք մեր, այսպէս ասսած՝ պաշ-  
տօնական միութեանը, անպասկիները՝ ապօբինի են համարում. իսկ  
ապօրինի կինակիցները՝ հալածւում են օլէնիք ոյժով և, որ գլխաւորնէ,  
հասարակական կարծիքի խստութեամբ..., իմ բարդաւոր օրերի բարե-  
կամը՝ հայ տղան, այժմ վերջնականապէս պահանջում է ինձանից՝  
կամ մկրտուել ձեր եկեղեցու ծէսով կամ հեռանալ իրենից... հրէա-  
ները՝ իմ նախիկին բարեկամներն ու նոյն իսկ հարազատներս այլև  
գոյութիւն չունեն ինձ համար, հետեւաբար և ես խսպան զուրկ եմ  
նիւթական միջոցներից, որ կարող լինեմ հատուցանել քահանաներին  
այն պատկառելի գումարը՝ որ պահանջում են նրանք թէ այստեղ և  
թէ չում:

Քարտուղարի, որ նմանօրինակ արկածների ու զադուլքի գոր-

ծերի մի ամբողջ արխիւ էր պարունակում իր գլխում, մեքենաբարձեռ ճակատին տարաւ, շոյեց կնճիռների շերտերը և խորհրդաւոր շեշտով՝ հարցրեց՝

—ի՞նչ գումար և ինչու համար:

—Կնքագրամ կամ մկրտութեան վարձ։ Ասում են, այդ սահմանուած է Վիճակային վարչութեան և Սթոռի համար, որպէս նպաստ, որպէս օժանդակութիւն,.. բայց, դատեցէք ինքնելք, որտեղից կարող եմ հատուցանել, երբ տարիներ առաջ մի պարզ շըջազգեստավ դուրս եմ եկել հայրենական տանից և կերակրուում եմ մի հասարակ ուսուցչի բրտանց արդիւնքով։

— Ո՞րքան են պահանջում:

—Այստեղ օհ, հայր խաչակիլ Գ. շատ անգութ է և խոտապահանջ. 300 ր. է ասում, իսկ այստեղ քահանան, ըստ երկոյթին, ուսումնական, սրտի և զգացմունքի տէր մարդ է, շատ կարի կցարար վերաբերուեց և զիջաւ մինչև 200 ըուբլու: Ես մնացել էի յուսահատ և խսպառ մոլորուած. հիւրանոցի տէրը, ուր որ իջևանել եմ, դարձեալ մկրտուած հրէայ, հետաքըքըռուեց իմ կեանքի այս խոշոր միջադէպով ու խորհուրդ տուեց դիմել ուղղակի ձեղ...

—Այդ բոլորը՝ գեղեցիկ.—վրայ ըեւեց հոգևոր ատենի պաշաօնեան, մաքրելով կապտագոյն ակնոցները ու դառնութեամբ հոգոց հանելով!—Դժուար թէ հայր Մարկոս Ցիլինտրեանը համարձակուէր իշխանութեան քթի տակ, ձեզանից մի այդպիսի խոշոր գործար պահանջել և այն՝ «Վիճակի» կամ «Աթոռի» անունով:

— Զարախօսելու կամ զբարտելու ոչ մի բարոյական շահ չունիմ. ընդհակառակը՝ այստեղի քահանան իր կարեկցական սրտաշարժ ճառով կատարելապէս վերականգնեց իմ մէջ փշուած յոյսերն ու հաւատը, բայց «սահմանուած» 200 լ. մի գումար էր, յաւակնութիւն ունէր, երդմամբ հաւատացնելու նա, «սրից և ոչ երկու կոպէկ պիտի մնար իր օգտին»...

—Դուք քաջութիւն կունհնաք արդեօք, կը կնել այդ բանը առաջ-նորդի ներկայութիւնից:—Հայցը քարտուղարը և առանց դրական պատասխանի սպասելու՝ գուրս գնագ դիւնատնից:

Եսթերը մնաց միայնակ և աշքերը դարձրեց դէպի հանդիպակաց մեծ գրասնակութ, որ ծածկուած էր կարմրագոյն թերմաշ մահուղով, պղնձաթել սեացած փնջիկներով և զերուած ու թանաքի սեսեթերով նախշուած։ Սեղանի վրայ դասաւորուած էին բզկտուած ու կազմահան եղած գրքեր, թղթերի թանձը ծրաբներ։ ցաք ու ցրիւ թափուած՝ զրիչներ, մելանառ, աւազաման, մի զոյգ ժանդատ մումա-

կալ չ'վառուած՝ գունատ և կեղտոտ՝ մոմերով, որոց ծայրերից մինչեւ առաստաղ ջանաւէր սարդերը իրենց ցանցաձեւ ոստայններն էին գործել և որսած ճանճերով զարդարել ու ճոխացրել... խաշ, աւետարան... բոլորը՝ հին, բոլորը դժգոյն և կարծես դարերի թանձր փոշով ծածկուած...

— Այն, անշուշտ լաւ են եղել այս բոլորը մի ժամանակ. բայց  
այժմ... նայի՛ նախագահական բազկաթութին. խեղճ ու կրակ, կրտը-  
ռուած թեռվ ու խարխուլ ոսներով՝ կեղափ մէջ թաղուած. հապա՝  
գրասեղանը բեռի ծանրութեան ներքի ծոռւել, 90 տարի գերութեան  
ու զդիթաների մէջ հեծող զառամեալի նման՝ դէպի գետին է խոնարհուել  
և վայրկենից՝ վայրկեան սպասում է իսպան անկման ու տապալման...  
պէտք է մի մոգական ոյժ, մի գօրեղ ձեռ, որ այս բոլորը վերածէ  
իրենց նախնական վիճակին, վայլ և գոյն տայ, մաքրէ ու սրբէ...—  
Մտածում էր ինքն իրեն հրէուհին և համեմատում այս «հայկական»  
մեծահնչիւն հիմնարկութեան, գէթ ալտարինը, իւր տեսած ուրիշ  
վարչական ատեանների ու նոյն իսկ մասնաւոր գրասենեակների հետ...  
շատ սակաւ նմանութիւն ու միխթարբական բան գտնում և զլիսի շար-  
ժումով սահմանափակում իր զարմացքն ու հիասթափումը:

9

Արքահամ Միշմանը, որպէս հարուստ առևտութեական, յայտնի էր Ռուսիայի հարաւային քաղաքներում. հացի ընդարձակ առևտութեական նա Աւոտրիայի և Ռումինիայի հետ. և, ինչպէս ասում են, որպէս «Երուսաղէմի իսլական ազնուական» (հրէայ), թէկ վաշխառու էր, կարեոր դէպքում նաև կեղծող ու խաբող, սակայն հրէութեան լաւագոյն ջիղերից—անդամներից մէկն էր համարւում: Հ. քաղաքում փարթամ աղօթատուն է շինել նա. ուսկե՛ռու անօթներսվ, թանկագին զարդերով ու սքանչելի բիւրեղեայ ջահերով ճոխացրել. իր սեպհական ծախքով «մալամուդներ» (ծխական դպրոց) է պահում, առատօքէն օգնում է՝ աղքատանոցին, անկելանոցին և ուրիշ Աստուածահանոյ հիմնարկութիւններին: Զատ անդամ առևտութեական կամ արդիւնարերական գործեր է ստեղծում նա յատկապէս գաղթական և՝ յաճախ՝ վախստական կրօնակիցների համար, յարմարացնելով՝ նրանց ֆիզիքական և մտաւոր ոյժերին ու կարօղութեանը. և այդ ձեռնարկութիւնները աւելի կարեկցական, եղբայրական՝ աստառ ունեին քան թէ՝ շահագիտական գծուծ նպատակ. Միշմանը գիտէր՝ թէ ում պէտք է հարկ տալ և ում աքս... մի տիպ, որի նմանը սակայն հաղուագիւտ է հայ ժողովրդի՝ մէջ մանաւանդ հարաւային Ռուսիայում,

ուր ամենափարթամ կալուածատէրն անգամ՝ թէկուղ հ. Ցիլինտրեանի  
այնքան խնկարկած՝ «յայտնի միլիօնատէր և անուանի բարեգործն» կսկ.  
«Վանեաներով» ու Արտիչներով... որոց գործերում հարիւրաւոր  
մօլդաներ, լեհեր, հրէաներ..., կան, զլանում են օրինակ՝ մի որ և է,  
նոյն խակ պիտանի հային դիւրութիւն տալ իր առօսեայ ապրուստը  
հայթհայթելու. էլ մոռանանք յիշել բարեգործական որ և է փշրանքի  
կամ եղբայրական զգացմոնքի մի հիւլէի բացակայութեան մասին.,.  
և ինչ զարմացք, երբ յաճախ, այդ իսկ հայասեցութեան հիւանդու-  
թիւնով վարակուած են և բուն հայաստանից այս կողմ փոխադրուած՝  
կուսակրօն հայրելն անգամ... Բայց անցնենք մեր պատմութեանը.  
Սրբահամը երկու զաւակ ունէր. Մոշկօ և Եսթեր. մէկը՝ միւսից աշխոյժ,  
վառ ու կենդանի. մէկը՝ միւսից ընդունակ ու գեղեցիկ: Նրանք սո-  
վորում էին տեղական միջնակարգ գպրոցներում. Եսթերի նկատմամբ  
մանաւանդ, ծնողներն առանձին հոգածութիւն ունէին, բերել էին  
տուել յատկապէս ընտանիկան դաստիարակչուհի և պատրաստող,  
գպրոցից դուրս: Ուրախ գարունները հոլովում էին անդգալի, աննկա-  
տելի կերպով, և օրիուղի Եսթերը, մայիսեան սրանչելի վարդի նման,  
բացում էր ու բարգաւաճում. ծնողները, իրենց աշքի լոյսի նման,  
սիրում էին նրան և ոչ մի նիւթական զոհաբերութիւն չէին խնայում  
նրա մտաւոր զարգացման ու բարոյական առաջադիմութեան համար,  
սակայն բազդի մի ուրիշ խաղ, մի այլ վիճակ էր սպասում ընդգրկե-  
լու նրան... Մի օր ծունկ շոքած իր երիտասարդ ու զեղեցիկ մօր  
առջե. բաց էր անում նա իր մատաղ սիրաը, որ վշտու էր ու վի-  
րաւոր, որ հրգեհուած սիրոյ կայծերով, կարօտ էր ծնողի բարի տրա-  
մադրութեանը՝ իրեն վրկարար բայասանի... .

—Ես սիրում եմ նրան, մայրիկ, Սաշան գեղեցիկ է, բարի...

— օ՝, օ, նա հեթանոս է. նա քրիստոնեաց է... չէ, այդ ան-  
հնարին է... խելքի արի, դսարիկս, Աստուած մի արասցէ, եթէ լսէ  
քո՞ հայրը թէ՝ գու յաւակնութիւն ունիս կրօնափոխ ու դաւաճան լի-  
նել. բարեպաշտ Միշմանի անուան ու նրա ամբողջ ազգատոհմի վե-  
րայ մի այդպիսի անմաքընկի ցեխ շպրտել... գիտցիր, որ հայրդ  
կ'յօշոտէ քեզ, հազար կտոր կտնի և մի կտոր անդամ բաժին չի հա-  
նիլ մեր կրօնական ովերելիմին...

— Յայց ես չեմ կարող դիմանալ սիրոյ այդ անհնարին ջերմութեանը... ես կ'թունաւորուեմ, ես կ'մեռնեմ և առանց նրան չնշել, ապօի, ախ, անզօր եմ, անկարող եմ, մայրիկ ջան, անհնարին է այդ... փրկիք ինձ, խնայիք իմ ծաղիկ հասակին... մայր իմ, մայր իմ...

Արտաստուքի հեղեղը խեղդում էր նրան. սիրող մայրը նոյնակա

## ՊՊԱՍՈՒԹՅՈՒՆ

Սաշայի, Եսթերի գաղինը լեզուի դաստիարակի, ձիգ տարիների մօտիկ յարաբերութիւնը այդ ընտանիքի հետ՝ լաւ ազգեցութիւն էր գործել նրանց վրայ. և ընդհանրապէս տեղական հրէաների բարձր շրջանում իր որոշ տեղն էր բռնել նա, որպէս աղնիւ ու շրտակ մարդ, լայն, ազատ հայցըների տէր և ժամանակակից կեանը բառաջադիմական գաղափարներով տոգորուած մի լուսամիտ երիտասարդ; Եսթերի մայըը թերևս սրանց հակառակ չէր օրհնելու նրանց միութիւնը, սակայն, որ քըլիստոնեայց էր... և միթէ կարծդ էր անուանի Միշմանի զուտարը կրօնափոխ լինել, քըլիստոնէի կին գառնալ...

Եսթերի հայրն այդ մասին ոչինչ չ'կիտէր, կամ հազրւ կասպա-  
ծել էր նրանց սիրային յարաբերութեանը, սակայն մի շարաբաստիկ  
օր տարածուեց քաղաքում, որ եսթերը հեռացել է իր դաստիարակի  
հետ: Հայրը ազգաբարուեց, որ իդուք հետամուտ չ'լինի. աղջիկն ին-  
քնին պիտի վերադառնայ իր սրաի մաեսմի հետ, երբ օրինաւոր կեր-  
պով կատարուած կ'լինի նրանց միութեան խորհուրդը: Եւ այդ ցան-  
կալի երջանկութիւնը նա գնում էր հրէութեան ու հայրենի ունե-  
ցուածքի արժէքով...

Digitized by srujanika@gmail.com

թեան վշտու վայրկեաննելը, տոկալ ու մաքառել ամեն աեսակ զրկանքի ու հալածանքի դէմ... և այդ անդրանիկ սիրոյ կամ կուսական անամպ ուխտագրութեանը վկայ էին կոչտմ հայելու նման հարթ ու անվրդով ծովը, երկնային անբովանդակ տարածութիւնը, նախշուած գորգի նման, սար ու ձոր, դաշտ ու հովիտ ծածկող մանուկ բնութիւնը և վեցապէս Ծ.-ի լուս, բայց հրաշակելոտ արձանը իր տարածած յաղթական բազուկով:

— չոգ չէ, իմ անգին Սաշա, եթէ վարժամ ապարանքի փոխարէն, աղքատիկ խուղի մէջ ապրելիս լինիմ ես... սրաի հաճութիւնով հրաժարում եմ և՛ հօրից, և՛ մօրից, հայրենի ունեցուածքից և նոյն խոկ այն կը օնից, որ մինչև այսօր նուրիական և սուրբ է եղել ինձ համար. որի մէջ ծնուել եմ ես և լացի գեղեցիկ վարդապետութիւնից՝ ոչ մի սկ բիծ չեմ նկատել. միայն թէ քեզ հետ չնշեմ, քեզ հետ ապրեմ.— Փարելով երիտասարդ տղայի պարանոցը՝ ասում էր աղջիկը և բուռն ուրախութեան ջերմագին արտասուբով արտայայտում ինչ որ դժուարին էր վկայել լեզուով ու բառերով...

— Ի՞նչ տարակոյս, իմ աստուածային, որ այդ անշուրք խոռվի  
մէջ մենք անհամեմատ երջանիկ պիտի լինինք, քան իշխաններն ու  
կրեսոսները իլենց սոկեղէն ապարանքում, շողակների ու ականակուռ  
զարդերի մէջ...

Եւ, որպէս արձանի լրացուցիչ մասը՝ նրանք դրկախառնեցին միմևանց. իսկ Ռ.-ի յուշաբանը իր տարբածած ձեռքով պսակում և օրհնում էր սիլող զոյգի՝ Ալէքսանդրի ու Եսթերի միութիւնը:

b.

Միշմանի բարի անուան վրայից սրբելու այն սե, տպեղ բիծը,  
որ իր մանկական անմիտ արարքով թողել էր եռթերը, կարեռը էր  
կամ եսթերի մահը, կամ, որ չարիքի փոքրագոյնն էր և ծնողների  
համար ցանկալի, նրա հեռանկալը հրէական մի որ և է կեդրոն, օրի-  
նակ՝ Պաղեստին, Ամերիկա... Սբրահամը այնքան զայրացած և խո-  
րապէս վշտացած էր իր զստեր տպեղ արարքից, որ պատրաստ էր  
թէկուզ յօշոտել, գաղաններին կերպակուր բաժանել նրա ոսկորները,  
սակայն, չէ որ Խորայէլի որդին սարսափ է զգում որ և է ասպետա-  
կան ցոյցից, վրիժառութիւնից, եթէ նա առնջութիւն ունի զէնքի և  
արեան հետ. նա սարսափում է բանտից, ոստիկանի խարազանից...  
դատարաններումն էլ թափառելը այնքան դիւրեկան բան չէր, մնում էր  
ուրեմն, որ պատուի խնդիրը ձևաւորէր վաճառականական եղանակով:  
Եսթերը մայր էր արդէն, երբ տեղական նօտարը իր ստուար

գրքով մուտքած գործեց նբա ընակարանը և առաջարկեց ընդունել իր հօր՝ Արքահամի նույիլած՝ 20 հաղար բուրլին՝ մի երկարկանի ընակարանի հետ, սակայն այդ բանի աւատան խսկալէս մի այլ երեսիթ էր—թողնել սիրած տղային և հեռանալ... հեռանալ Պաղեստին, Ամերիկա... մի խօսքով վերականգնել Միջման աղքատոհմի ստնահաշուած, ջախջախուած ոլատիւր...

—Նայ որ տակաւին ձրտում է բռնահալ իմ սրախի, իմ զգաց-  
մունքի, աղատ կամքի և մարդկային իրաւունքի վրայ, թնդ ընաւ  
յաւակինութիւն չունենայ ինձ ծնող կոչչուելու, վաղուց արդէն նա դա-  
դարել է ինձ համար հայր և բարեկամ լինելուց, հետեարար և իրա-  
ւունք էլ չունի իմ բարօրութեան, նոյն իսկ իմ գոյութեան մասին  
մտածելու... Զբիկանքներով դիպած հարսաւութիւնը նրան կարող է  
պիտանի լինել՝ սինագոյների, մալամուտների և ուրիշ Աստուածա-  
հաճոյ հիմնարկութիւնների համար, ուր սերնդից—սերունդ պիտի  
յիշափ նրա վասաւոր անունը իր հակայական բարեկործութիւններով.  
Ենչ արած թէ այդ պայծառ հորիզոնի վրայ սև ամպի մի աննշան  
կտոր պիտի մնայ՝ իր հարազատ աղջկայ անհրգ կրօնափոխութեամբ...  
Նոյն առաջարկը եղաւ և հարազատ եղոր և աղջկանների  
ձեռքով, սակայն եսթերի իիլաը ապառաժի նման՝ կարծրացել—սա-  
ռուց էր դարձել, որին ջերմացնելու համար միանգամայի անդոր էին,  
ոչ սսկու հրապարազ վայլը, ոչ մահուան սարսափը...

Քարտասւղաբը արագ-արագ գնում էր Առաջնորդաբան եսթերի կրօնափոխութեան առթիւ զեկուցանելու վիճակի հոգեոր պետին, բայդ իսկ պահուն իր սովորութեան համեմատ՝ մի կտոր շաքար սրը այդ իսկ պահուն իր սովորութեան համեմատ՝ մի կտոր շաքար բերանաւմ, ձևոք բը քամակին զարսած՝ մինչև հօթն կապոյները հասնող երեակայական բարձրութեան վրայ, վեհ և յամբարայլ ձեմում էր գեղածիծաղ պարափում:

Դամակի հայութեան առաջնապետած է հղել Հ. քաղաքի խաչակիր Տէր Գ. ին մկրտել:

— Ինչու ուրիշն չի մկրտել.

— 2 պիտիմ. ասում է...

— Վեց ամիս առաջ:

—Այս, թերիս կամնեալիք ծանօթանալ գործի հետ:

— Անպատճառ, անսլատճառ. Ներկայացըք ինձ գործը՝ աղջկայ կամ աղջիկը՝ գործի հետ... — իբր թէ սրախօսեց հսկեսը հայրը, որի դերձանի նման գեղնած դոյնը այդ իսկ վայրկեանին մոյդ-կապայափ փոխուեց. մանր, ճպուտ աշքերում վայլատակեցին վառ կայծել, սրտի յայգերը կարծես կինդանագան...

Սակաւ ինչ յետոյ կուսակբօն հայրը լսում էր եսթերի բերանից այն մանկամատնութիւնները, որոնք վերաբերում էին քահանաների սակարկութեանը՝ նրան մկրտելու խնդրում... Գեղեցիկ էր պիտուն կնոջ պատմութեան ոճն ու դասաւորութիւնը, սքանչելի՛ էր ու գրաւիչ նրա թոթովանքը, որ թափանցում էր կղերականի սրտի խորքը, ասես վարդ մատները՝ հազում էին քնարի լարերին... հապա շարժազած դէմքի անման թարմութիւնն ու դուարթութիւնը, կենդանի, հրավառ աշքերը, չինարենու նման՝ շիփ-շիտակ հասակը... այս բոլորը աւելի քան ափորթելի տպաւորութիւն գործեցին իր ամբողջ կիանքը վանական մելամաղձիկ խուցերում անդկազբած հոգեսոր հօր վրայ:

— զուտավ կաբգաղը ցէք, սր մկրտուի տիկինը հենց այստեղի նկեղեցւմ, — զարձաւ նա դէպի իր պաշտօնեան, մի կարուկ սրպչում, որ հազիւ թէ արած լինէք նա իր պաշտօնավարութեան ամբողջ ըրջանում...

—Թոյլ տուէք ինձ կնքահայր լինել:—Կոկես կնոջ նման կոտրատուելով, հպարտ ու սիգաճեմ առաջ գալով՝ ասաց մի եղիասարդ տղայ. —շաղախ մազերով, լայն ընչացքով ու ապուշի դէմքով, մէկը՝ մեր գանական ողողմնի ծափակեցները.

—Միայն իմ գակորդը մասն պահանջութեաց:

—Այդ հօտ աւելի լաւ.—ասաց պարզուեցած նրանք բոլորուց ինչ առողջական սուսանքը մօտ, տաճեական սուսանքը վայելելու:

b.

Ճաւառվ ներկայացաւ իր իշխանաւորին հայր Մարկոս Ցիլին-  
տը եանը, որ ապօպասի նման ցամաքած մարդ էր, տաշելի նման բա-  
րակ, սաւանի չափ գունատ, որով շատ չէր տարբերուում խոնաւ ներք-  
նատան մէջ պահուած՝ սոխի ու գաղարի ծլերից. շիկագոյն ցանցաւ  
մօրուք ունէր և ջինջ կապոյտ աշքեր շարժուն բիբերով, զոյգ փո-  
սիկների մէջ թառուած.

Հննեցէք նլա հանգերձը. շիրակեցի խնամախօս զնացող ու էսի նմտն՝ հագել է մէկը՝ սիւսի վրայից, ամեն գոյնի և տեսակի. մետք-

սեղէն են նրա վերաբերությունները, կապանները... մէկը՝ միւսից խշչուն,  
ծաղկենկար, ընտիր կառփից, բոլորն էլ ասես՝ անուշահոտ ջրերով  
սնուած ու ինամքով յաբգարուած. շագանակագոյն կեղծամերը ծած-  
կել էր, բիւրեղի ալիքների նման փայլվող ցելինդրով, նուրբ, սպի-  
տակ ձևոնցներ, որոնք սակայն ծանօթ աշբերից հաղիւ թէ ծած-  
կէն անմաքուը, արինոտ ձեռների զագիր ոճիքները. իսկ հաղարաւոր  
արկածներով խոցուած ու գուլպայի նման կարկատուած սիրտը՝ զրա-  
հաւորուած էր քահանայական ոսկենուու խաչով, որի վրայ կարող էր  
քանդակուած լինել միմիայն ձախակողմեան աւազակի պատճերը...

Հայր Յիլինդը և անը վագուց չէ, որ սալոննական կեանքը թողած՝ հարուստ ծիխ վրայ քահանայ էր ձեռնադրուել և իր սառապարշ, կեղծաւոր ու քծնող բնաւորութեամբ կարողացել էր հաճոյանալ կար- ճամիս վարչութեան ու նրա վստահութիւնը գրաւել, անտարակոյս շարաչար կերպով շահագողծելու համար... Սյս էլ ասենք, որ նրա աշխարհայիցողութիւնը շատ լայն էր.—անհամբ ներկայացել և համ- բուրել էր և օլսաոյի ձեռը շմորանալով նա և նոյնը անել հ. Կրօն- շտալսկու նկատմամբ.—մի տարօրինակ գաղափար, որ սակաւ ինչ առաջ հազուագիւտ էր հայերիս մէջ. նա յարմարութիւն էր գտնում օրինակատարութիւնը համեմել, երբեմն, օտար լեզուի քարոզներով, ճառերով և թոյլ տալ, որ օրիթովսք հոգեսրականը, «եղբայրաբար» մկրտի իր ծիխ երեխան կամ թաղէ ննջեցեալը...

Յարգական խոնարին ողջոյնից յետոյ, և Մարկոսը հրահանգուեց  
իշխանութեան կողմից կատարել մկանութեան և զբոշմի ո. խորհուրդը  
եսթերի վայ և ապա չնորհ ըլքել իր մօտ մի բաժակ «առջով» (ոռմ)  
թէյ վայելելու: Այս անօրէնութիւնը այնքան էլ զիւր չեկաւ հայր  
Մարկոսին: —Կարելի՞ էր թեթևսովիկեանցին, «յայտնի միլիօնատէր և  
անուանի բարեգործ» Մամոնապաշտեանին կամ Կատու Ասլանիշնն  
կնքահայր հրաւիրել և զանազան պատրուակով մի քանի հարիւր բուբ-  
կնքահայր հրաւիրել... և ինչ կարէք կար իշխանաւորին միջամտել այսպի-  
լիներ կորգել... և ինչ կարէք կար իշխանաւորին միջամտել լսել  
սի գործում, կնքահայր լինել, ընթիրի՞ հրաւիրել, վերջապէս լսել  
և այդքան զգացմունքով վերաբերուել մի հրէուհու խնդրին, որը սա-  
կայն կարն էր արդինաւոր լինել մեր անձնական շահերի նկատ-  
մամբ... չեմ հասկանում: —Այսպիսի խոհերով ծանրաբեռնած իր  
գլուխիք՝ դուրս գնաց քահանան:

Նոյն երեկոյի հան քը լիստոնէ աւազանում մկրտած ու «վարապատած» եսթերը՝ Մըբուհի անուն էլ ստացել և կուսակրօն հօր զարդարուն սեղանի գլխին բազմել և գոհ նրա մարդավայել կարեկցութիւնից՝ առանտիրոջ առանձին խնամքով պատրաստել տուած քայլ

յրելքներն ու խորտիկներն էք վայելում, որոնք հասնեմուած էին, եթէ կարելի է այսպէս ասել՝ սուրբ հօր հազուագիւա ուրախ տրամադրութեամբ և բաւական անդիւը, իբր թէ՝ հաճոյախօսութիւններսվ...

Եհարկէ այդ խրախճանքին մասնակցում էին՝ քահանան իր շողոփորթ ու ճրանան ճառերով, կնքահայրը՝ իր ոլորուն ընչացքով ու բաց բերանով, քարտուղարը՝ իր հնազանդ որկորով...

Ը.

Սրբուհին իր սիրուն մանկիկի հեա հոգեկան հրճուանքով ճանապարհուեց գէպի տուն, նա այժմ քրիստոնեայ էր և նրա միութիւնը հայ տղայի հետ՝ պիտի ճանաշուէր պաշտօնապէս՝ քահանայի օրհնութեամբ: Երիասասալդ, տատրակի նման անհեղ կինը ո՞րպիսի փրուն ծրագրներ ունէր կազմած իր գլխում. այլ ևս իր պաշտելի Սաշան ասիթ չունէր «ամաշելու ընտիր՝ ինտելիգենտ՝ հասարակութեան առջև, որպէս ատլորինի կնապահ»: Այժմ ինքը՝ Սրբուհին նրա լծակիցն էր, տան տիկինը բառի ընդարձակ նշանակութեամբ... կարող էր հիւրեր ընդունել, եկեղեցի յաճախել, մասնակցել ընտանեկան հրաւէրքներին ու խնճոքներին... Սակայն իր օդեղէն ամրոցները շուտով ցնդեցին. և նա զգաց իրեն դժբաղդ ու արգահատելի վիճակի մէջ, այն բնակարանը, ուր 2-3 տարիներ կեանը էր վայելել նա իր սիրած աղամարդի հետ, որը լոււ, անխօս վկայ էր նրանց սիրային անցեալին, այժմ մերկացել էր իր զարդարանքներից. Էլ նշ կարասիներ կային, նշ սիրած գրադարանն ու տիտուր խոհերը ցրող գաշնամուրը, նշ աղախինն էր երեսւմ և նշ Սաշան,.. լինչ էր նշանակում այս բոլորը: Բնակարանի տիրուհին առանձին ցաւակցութիւնով յայտնեց թէ՝ պարոնը դատարկել է բնակարանը և հեռացել... ծամծմելով էր առում նա՝ «հետացել է, Աստուած գիտէ թէ ուր, մի այլ հրէւհու հետ, որի նկատմամբ խօսւում էր քաղաքում թէ՝ սիրային յարաբերութեան մէջ էր պարսնի հետ»,..»

Դուք տեսել էք, թէ ինչպէս ուժեղ բազուկների մէջ շարժուող սուր կացնի ուժգին հարուածների տակ, դժոխային ճարճատիւնով գետին է տապալուում հասարուն եղենին, հացենին ընկուղենին... բաւական էր այդ շարագուշակ բոթը, Սրբուհուն գետին վլորելու համար...

Եղան բարեսիլս մարդիկ, որոնք սրանվ ու զգացմունքով վերաբերուեցին գէպի այս անմեղ արարածը, որոնք ստկային տնկարող եղան փրկել նրա սիրասուն մանկան վաղահաս կոստացից:

Մի սկ նամակ, սկ մաղձերի դժոխային վիժմունք, սիրած տղայի-

ձեռքով զրուած, ազդաբարում էր նրան, որ՝ կարող էր ամուսնանալ մի այլ երիտասարդի հետ, որ իր վերադարձը համարում էր միանգամայն անհնարին...»

Եւ այն օրից շատ ժամանակ շանցաւ. պարզ ու զով առաւօտ էր, ինչպիսին մենք տեսանք Ալէքսանդրի և նսթերի սիրաբորբոք ուխտադրութեան օրը Ռ.-ի արձանի մօտ: Սկ ծովի կլանող ալիքները, շերտ-շերտ դաստորուած, կարծես խաղ էին անում մի կանացի հերածակ դիմակի հետ. նրա մատաղ երեսին գես չեր խամրել գեղեցկութեան վարդը, որ սակայն անիծում էր աշխարհային կեանքը իր նողկալի ու զաղիր երկոյթներսվ... Երկար ոսկեգոյն մազերը ծփում էին կապատառն ջլերի երեսին, մոմեղին սիրուն ձեռները տարածուած էին աջ ու ձախ. սիրած մարդին գրկախառնուելու համար արդիօք...

Նրան ճանաշեցին:

Սրբուհին կամ նախկին եսթերը «ասկաց» և տարաւ կեանքի ծանր խաչը մարդին վայել ուխտակատարութեամբ. լինչ արած թէ Ռւետարանի քարտպիչն էլ, հրէայ սարբին էլ հրաժարուեցին իրենց վերջին օրհնութեամբ պատուել նրա յիշատակին ու մշտնջենական օթեանը...

### Additional funds

ԳՐԸ Ժ

1893 թուի յուլիսին էր, հպարտ Սաստիկ անտարիկ բարձունք-ի ըստ զգացում էին զնդակների ու սումբների ճարճառութեառվ, առա-ուութեամբ տեղում էր քիչպէ հասսակների հրեցէն կարկուաի տարափը. հայ-կացացած ժայռերի գագաթներից հեռու-հեռու սկանում էին հայ-կական ապասամբ խմբակների զնդակները և վասօգի ծովիք, որպէս կական ապասամբ խմբակների զնդակները և վասօգի ծովիք, որպէս կիշերային մատափաւզ՝ ոլոր-մոլոր բարձրանում էր դէպի վեր, դէպի դիմուն կապուակը, թերես իր հետ հալածուած բրիտանուայ ժողովրդի ջինջ կապուակը, թերես իր հետ հալածուած բրիտանուայ ժողովրդի արտունչն ու գասն մորմորը Ամենակարողի գահոցի առջև գոկերայի տարածելու համար...»

Թնդում էր երկիրը. թնգում էր նոյն խվկ և օտարելքացի շայի սպահան ու հոգին. Սաստին՝ գալերով անտափկ ու յաւէտ անհման Սառուն պաշարման վիճակի՝ կեանքի ու մահուան ճգնաժամի մէջ էր. Թիբական սուրբ, անյագ և անդգայ վիշապի նման՝ ծծում էր անհպարտ ու անմեղ հայի վարդապոյն արիւնը, նրա վիճակը՝ փոթորկալից, մըրկայսյզ ծովակի երեսին իր զեկը, իր ուղեցոյցը կորսրած նաւակի նման, մաքառում էր կուտակուած խոժոռ ու վէտ-վէտ ալիքների դէմ, նա անհամբեր ու տկնապիշ մնում էր փրկարար մակոյկին, եթէ վերջինո իրօք գոյութիւն ունի մեղ համար այս ալեծուփ ու տատառ կառ աշխարհի երեսին...

Գես օր էր, անատաւլիտ ձորակի մէջ կամ իսկապէս սնզգակ կիլմի առջև, որ բաց է անում անցորդի համար ամուր Սասաւնի փողի առջև, որ բաց է անում անցորդի համար ամուր Սասաւնի փողի առջև, թագուսախ մէջ, զարան մտած՝ անհամբերաւթեամբ անցըը, թագուսախ մէջ, զարան մտած՝ անհամբերաւթեամբ սպասում էին բիւրդ հրասակները հեռաւոր մուաքի զատարկուելուն, որ ներս խածելով՝ տիբանան ազատ Սասաւնին ու բանան, բանանան ու արիւն հոսեցնեն...

Ահա եղջերուի նմտն՝ բակոսն ու հերածակի, կառավարմբը արի նաներկ սուրբ ձեռին՝ վագ է տալիս շաղի ու շողի նմտն մի նորսատի կին, մի սկաչեայ սիրուն զեղցկունիք, որ սակայն վերծ չէ հետակին, որին զարանամուտ հետեւում են, անտառի կածանքներից, որին զարանամուտ հետեւում են, անտառի կածանքներից,

ներով, ժայսերի իջուածների... հետ ըրդական խմբակներ իրենց պարագլուխ բեկերով ու գենպեաներով: Նա կանգ առաւ. լայն թիկունքով յինուեց հաստաբուն և զարաւոր եղենուն. նրա սեորակ խոշը աչքերից դժոխային վառ վառ բոցեր են ցայտում, գեղիցիկ զէմքի վրայ զբոշմուած է հոգեկան ծայրայիդ յուսահատութիւնն ու այլայլումը. հպարա կուրծքի տափառակները խորտակուած լաստի պէս՝ տարուրերուում և ծանիր, խեղոսդ ելեէջներ են անում. լեզուն նզովք ու անէծք է մըմնջում, վարդիկն ըրթունքը դպուում են և նա հաղիւ ներշնչուում է երփներփն ծաղկանց անուշահատութեամբ լի անօոր, հովասուն օդը... մի խօսքով նա մարմնացած յուսահատութիւն էր, կենդանի վլէժ...

Տեսանք թէ ինչպէս տամնեակ քիւրզեր շլջապատեցին նրան և խոսանում էին փրկանք ու աղատութիւն, եթէ կենդանույն անձնատուր լինէր, եթէ... բայց հայ փափկասուն, պարկեշտ ու ամօթխած կինը այդ վայկանին նմանում է վիրաւոր վագրի, նրա աշքերը ցուած են արիւնով ու կրակով, նրա ձեռքում կայծակի նման փայլատակող վրիժառութեան սուրբ զարձաւ զէպի սրբանը, զէպի հաւածովն ու հարուածովը: Քրոյերը իզմ'ը յաւակնութիւն սենէին խաղ անել, իդուք կարծում էին ծաղրել հերսունուն իր անմատութեան համար. իզմ'ը նրանք հրհուալով ու զուարճախօսելով, մտածում էին գերել կամ աիրանալ նրան—անեէը ու անվաշապան ստրկուհուն—սրի բազուկները հրաշը են զործում այդ պահուն. յաջորդաբար հնձւում են հրոսակների գլուխները. արիւնաների ու արիւնաշաղախ գետին է գլորուում մէկը, միւրը, երսրդը, չորտողը...

Բ.

Սնառիկ Սասունն ու Տաւրոսի անմատչելի լիւնաշղթան, անմահ Զէյթունն ու աննման կիլիկիան ամենայն իրաւամբ կարող են պարծենալ, որպէս անկախ աշխարհներ իրենց բաջարի գուակներով: Տիկին Այծեմիկը միայն չէ չայտատանում, որ իր անվեհութեամբ ու հաղուազիւտ բաջութեամբ ապշեցրեց գաղանաբարոյ Տավրիլ-Սուլթանին՝ Անիի պաշարման ժամանակ. Մշեցի Կարինէն՝ երկրորդ անհատը չէր հայ կահանց մէջ, որ դիաթաւալ գետին էր զլորում անօրէններին, երբ վտանգուած էր ս. ըելի հայրենիքը... Սասունը այդպիսի շատ հերսունիներ է ծնել. Սասունի գեղածիծալ վայրերում բանել, ծաղկել ու թոռումել են նրանք անթիւ ու անհամար քանակութեամբ...

Տիկին նազենիկն ես ականատես լինելով իր ամուսնի, հարազատների ու մերձաւորների կրած՝ արիւնոտ հալածանքներին ու անտ-

սելի նեղութիւններին, ահսնելով թէ ինչպիսի անասնական անսըրտութեամբ մաշեցին ու յօշուացին իր ամուսնուն, ծնողներին..., որոշեց իր փոքրիկ մահուլիներին էլ թաղել սեպհական յարկի տակ.— ըրջապատել իր տունն ու տեղը խոտի դէղով, կրակել խոտը և ամենայն յոյս լափող խալոյիկին յանձնած՝ սուրբ ձեռին՝ զաղազած վագրի նման՝ բանել այն շնչերի ու աւանների ուղին, ուր հայկական անմեղ արիւնն է վոթւում, ուր վրէժի բարձրագոշ աղաղակով թնդում է օղը. և արձագանք զտնում ժայռոտ բարձրունիքների մէջ ու ծառախիտ վայրերում... այնտեղ գարաւոր վրէժի հատուցումն է կատարուում, այնաեղ՝ տէղերի, աշտէների ու սրերի շաշիւնն է լսում...

Գ.

Ճակատամարտը դադարել էր:

Վերջալոյսի թոյլ-վարդագոյն ճառագայթները ներկել էին ծուրուբերանի սեսի բարձրունիքները, ամենայն ինչ կարմրին էր տալիս. կարմրի էր երկերը, կարմրի էր եթերը... կուսական անտառի խորդում, քրպական ցողունապատ տաղաւարի առջե, բարձրուղեց բարդենու սոսից քաշ էր արուած մի կանացի, հերարձակ, իսպառ մերկ ու արիւնաներկ գիտի, հալիւրաւոր վէլքերով, կտրատուած սափնքներով ու զուրս թափուած փոստափով... քրիզ մահուլիները հրճուում և զուարձանուում էին այդ ալանդակ, սոսկալի ու ցնցող տեսարանով. զուարձանիկ, սենէի թբուունիքը, որոց ամուսնիներին իր սրի հարուածներով յաւէրժահարսանց աշխալն էր ուղարկել նա, կտրատուած ներով յաւէրժահարսանց աշխալն էր ուղարկել նա, կտրատուած սրունքների ներքե պատրաստում էին փայտերի ու տատասկների մի փթխարի կոյտ...

Դիշերային խաւարի մէջ ճարճատում էր խարոյկը և նրա բոցին լիզուների հետ, մերթ ընդ մերթ երեւում էր մեղ ծանօթնազնիկի դալուկ ուրուականը, որպէս մի քսամնելի, սրտաշարժ ու աղէկտուր պատկերի...

Այդ սե, զաժան ծուխը տակաւին ծխում է Սասունյ լիսներում ու շլջակագրում: Նոյն խարոյկը զեռ ևս ճենճերում է և նրա անհաճաց աշխալ այսոր էլ տարածուած է՝ արեկերից—տրեմուտք, հիւսիսից—հարաւ...

Ռմբակոծուում է և Սասունը...

## ՍԵՒ ՔԱՐԻ ԱՆԹՐԱԿՈՐԾ

—Ո՞վ Գուր, Ամենապէտ և Ամենակարող, բաւական համարքի  
իմ կրած զըկանքներն ու տառապանքը... գէթ փրկիր իմ տարա-  
բաղդ ընտանիքը վերահաս սովից ու մահից... եթէ ցանկանա՞ Տէր,  
կարնդ ես:—Սյսպէս էր խօսում նրա ցամաքած լեզուն, հազիւ Լսելի,  
խեղդուկ ու սրտաճմլիկ ձայնով:

Եւ նա ազօթում էր անդապըսում. և նա կրկնում էր այդ խօր-  
հրդաւոր աղերսը, բուռն հաւատով ու լի յօյսով՝ սկսուած վաղօրդիան  
պայծառ արեածագից՝ մինչև կարմբուն վերջալոյսը:

P.

Վաղուց չեմ, որ Անդրկովկասի գաւառական քաղաքներից մէկում, ինչպէս ասում է ժողովուրդը՝ ծխում էր մի շեն ու փառաւոր օջախ, փարթամ երկրի ամենաահեսակ հարստութեամբ, որ սերնդաբար իրեն էր հասել անորոշ ժամանակներից. ոսկին՝ պարկերով էր պահում, կրկնակի միջնորմում, քարեղին աւաղանի մէջ. սպասաւորում էին քառասուն ծառաներ, քառասուն՝ ընկած և աշխատող ձեռքերից խապառ զրկուած՝ ընտանիքներ կերակրուում. Էլ վանք ու Աստուածահաճոյ հիմնարկութիւն չկար, որ զրիպած լինէր յիշուած ընտանիքի բարի ուշագրութիւնից կամ բարեպաշտական օժանդակութիւնից. պանդուխտը՝ այդ հասարակաց պանդոկումն էր իր հանգիստ գանում, քաղցածը՝ յագենում, կարօտաւորը՝ լիանում...

Բայց, աշխարհի օրէնքը թելադրում է, որ պայծառ ցեղեկուան յաջսրդէ մժին գիշեր. յուլիսի այրող ջերմութեանը՝ յունուարի սառնամանիք, բուռն ցնծութեանը՝ սուզի ու թափծութեան հեծկլանք... Այդ քնտանիքի նահաղեաը, իր զոյգ չափահաս զաւակների հետ միասին, շար նախանձի զոհ դարձաւ. դրացու, նոյն իսկ հարազարի ու մերձաւորի չկամութեան դատապարաելի ոպէն՝ կարճ ժամանակամիջոցում, յափշտակութեան ու աւարի մատնեց այն բոլոր կարողութիւնը՝ որ իբրև բարեգործութեան փշոտ պսակ՝ բալորուել էր այդ ընտանիքի շուրջը, որի վերջին շառաւիզ՝ երիտասարդ Վարդգէսը միայն մնս ց իր նորատի սիրազ կնոջ հետ միասին: Նա իր հայրենի օջախի բաղդաւորութեան ժամանակ էր ծնուել ու սնուել. յաղթանդամ էր նա, խարսեաշ մազերով, սև՝ խոչոր բիբերով, երկնանման լճակների մէջ թաղուած. թաւ, կիսարտօր, ասես վրձինով նկարուած յօնքերը, նորածիլ, ոլսրուն ընշացքը՝ աւելի փայլ էին տալիս նրա առնական գեղեցկութեանը. յաճախ՝ ձի նստած՝ զրօննելու էր գնում նա քաղաքից մշ այնքան հեռու, թաւուա անտառները, ուր մարդկային աւերածութիւրից դիրք՝ աղատ ընութիւնը իր սպանչելի տիրապետութեան աթուն էր հաստատել. Վարդգէսի նժոյդ ձիու սմբակները ոլսրուն բենեները ծալուում էին ոսկեայ զրամների շարքով, ոսկեղին զգնոցն ու թամբի ակնակուռ մասերը իր զմայլելի գեղեցկութիւնուն ու փայլով՝ մարդի աշք էին շացնուում և իրօք դժուար էր նայել այդ ասպետին անտարբեր կերպով, ուր կեղրոնանուում էր աշխարհային երջանկութիւնը իր նախանձելի վեհութեամբ և վայելքով: Տեսէք, արարական ու ձին շարժում է իր աննման բաշը ասես խաղ է անում արեի ճառագայթների հետ, թուշկոտում է և օրօրում թանկագին զգնոցը ախորժ զնպզնզոցով...

Աշխարհի սփանչելի ընդօրինակող վրձինները՝ կտակի վրայ, ժամանակակից չնորհալի օրիսրդներն ու նորահարմները՝ գորգերի վրայ, մի խօսքով իւրաքանչիւր գեղարսւեստին ծառայող անձն իր տաղանդի, իր մատների աշխատութեան՝ իբրև զողարիկ օրինակ կամ մողել՝ ծառայնցնում էր Վարդպէսի առնական, զմայլելի դէմքը, առպետական տարազով. երբեմն նաև ոև ձին տակին, շրջապատուած ոնտես բարակներով՝ որսի գնայիս:

Բայց... ի՞նչ զարմանք, որ այսպէս է անցնում փառքը աշխարհի:

9.

Վարդպէսի բաղգաւոր ամուսնութիւնից 10 տարի էր անցել.— Պաղպաւոր ասացինք, որսվհետև Արտաշէսի և Սաթենիկի հարսանեաց նման, այն օրերին տեղում էր սովի և մարդարիս, որի նմանը անծանօթ էր հասարակ մահկանացուներին, որ՝ ամենայն իրաւամբ՝ կարնդ էր ժամանակակից վիպասանների համար հարուստ նիւթ մատակարակել., .—Նոյն քաղաքի հեռաւոր խորչում, մի սղորմելի, ասես դժոխից պոկուած՝ կիսաքանդ խճիթում, նուաղած աշքորսվ, դժոյն և մաշուած դէմքով կծկուած էր մի մանկահասակ կին, հէնց առաջին հայեացքից, առանց հոգերան լինելու հեշա էր կարդալ՝ թանձր ամպի նման նրա ճակատին նստած՝ ու օրերի տիսուր պատմութիւնը, բեկրիկուած հոգու դժոյն պատկերը... մի կողմում՝ օրօրոցն էր դրուած ութն ամսական մանկիկով, որ մեքենաբար շարժում էր նա, պղասոր աշքերը դէպի մանկիկը սկսուած և մտքով իսպառ վերացած. ահա նա տեսնում է անցեալի մտապատճերը, քաղդի խարուսիկ ու վաղանցուկ խաղը... և նրա ցամաքած կրծքից գուրս են թռչում աղեխարշ երգի սրամճիկ մրմունջ... և ոքքան ներդաշնակ է այդ մեղեղին քաղցած երեխի աղիողորմ ճիշին և անպաճոյն օրօրոցի ճըռ-ճուոցին. միւսում տարածուած է աղքատիկ ցնցութների մէջ՝ 7-8 տարեկան մի ուրիշ մանուկ, — նրա բաղդի ապագայ յոյս՝ անդրանիկ զաւակը, որ լսելեայն դիտում էր ծնող մօր անվերջանալի արտասուքներն և, կարծես, բնագդմամբ թափանցելով մօր մողեկան աշխարհ՝ ցանկանում է կարեկից լինել, թեթեացնել կամ բաժանել նրա հետ այնքան ճնշադ վշտի ծանրութիւնը: — Մի լաց լինիթ, մայրիկ-ջան... հայրիկս շուտով տուն կգայ. տես լոււտմ է եկեղեցու զան-գերի զօղանջիւնը, հիմա կգայ նա և մեզ հաց կ'բերի, կերակուր է, միրգ էլ... — Թոթովկեց նրա լեզուն գտահ կերպով և լի հաւատով: «Հայրիկը շուտով կգայ» այս ախորժ նախագաստութիւնը ոլաքի ման թափ անցաւ երխաւասարդ մօր վշտերով լճացած և հազարաւոր

նետերով խոցուած՝ սրտի խոլքը, ցնցուեց և քնած մարդի պէս՝ սթափուեց նա ու բարձրացրեց կրծքին խոնարհած զլուխը:

— Այս, շուտով կ'գայ նա, բայց տեսնենք բարասիրտ պարոնը այս շաբթի կտայ նրան իր գառնաշարչար քրաինքի վարձը...— Արտայայտեց անգիտակցօրէն: Մանկիկը ուրախութեան ցոյց արեց և փաթաթուեց վշտոտ ծնողի պարանցով, վերջինս լի խանդաղատանօք հպեց իր ցամաքած շրթունքները նրա կրակուած այտերին. թափութեան դոյգ կաթիլներ մեղմօրէն վայը իջան նրա ոսկորացած երեսից և թրչեցին զաւակի դալուկ գէմքը...

Եւ մարմնացած վշտի այդ աղէխարշ պատկերը, որպէս փղոսկրեայ քանդակուած արձան՝ եթէ նշ եգիպտական մումիա՝ երկար միջոց մնաց լուռ ու անշարժ, մինչև որ հրագնդի աչք ծակող սլաքները խալաւ աներեսյթացան հեռաւոր հորիզոնում և անվտան քայլերով ներս մտաւ մի հասակաւոր մարդ, կորացած իրանով, վտիտ ու հոգեպէս տանջուած...

— Նազլն, իմ քաղցրիկ նազլու...— լսուեցաւ նրա բերանից լի անձկութեամբ, զգացմունքով ու աւինով: Նազլուն՝ որի աշքերում տակուին չէր չսրացել աղի արտասուրի աղրիւրը՝ դէմքի պարզութեամբ, նորահարսի նման՝ ուրախ-ուրախ վեր բարձրացաւ տեղից, գրկեց ամուսնուն և սրտագին համրուեց նրան:

— Իմ պարոնը այս շաբաթին էլ չտուեց օրավարձու. սպասիր, ասաց, մի քանի ժամանակ էլ...— Անհամարձակ կերպով խօսեց տղամարդը, որ՝ ինչպէս տեսանք, իր գործն էր շինել ջերմ արտասուրներով ցողել հինաւուրց վանքի բնիքոները:

— Կոպասենք, թագ օրհնուած լինի Սմենակաբողի բարի կամքը.— վրայ բերեց նաղլուն:

Եւ այդօրինակ վիճակի մէջ, ու քարի աղօթաւորը՝ քրիստոնէտական հաւատով գոտեսրուած՝ կարծիս աւելի բաշալերուեց և յուսագրուեց:

Դ.

Երեկոյ էր, քանի գնում կապոյտ երկնակամարը պայծառանում էր շողակնի նման փայլվող աստղերով, կար ժամանակ, տարիներ ասած, որ նման գիշերներին, աւերակ եկեղեցու, կամ ինչպէս անուանում է նրան տեղական ժողովուրը, «սի քարի աղօթաւոր» մարդը տուն էր վերադառնում հանգիստ սրտով, ուրախ ու դուարթ, իսկ այժմ զիսեկոր ու սրտաբեկ. նրա քայլերը անհամարձակ էին, կորսրած թանկագին ակնեղէնը պարսղ մարդի դանդաղկոտաւթեամբ. նրանում բորբոքում էր այն տանջող միաբը՝ թէ լցուած չէ

արդեօք իր համար նախասահմանուած դաւնութեան բաժակը..., նկանչը պիտի գթայ վերջապէս գէթ իր հրեշտակի շափ անմեղ կնոջն ու նորածիլ զաւակներին և հատուցանէ փրկութեան ցանկալի նաւահանգիստը..., նրա տեսութեան հանդէպ, կարծես, երևում էր այն խորհրդաւոր խարոյկը՝ որ պէտք է առաջնորդէր՝ գիշերային մթութեան մէջ, ճանապարհից շեղուած ու մոլորուած անցորդին:

Ահա նա կանգ առաւ իր խրճիթի առջն, վայրկենապէս պղտորմաքիր պաշարեցին նրա ուղեղը. ինչ էր տեսնում նա՝ բաղդաւոր ժամանակների նման, պատուհաններից արտացոլում է կրակի լոյսը, ծխում է և օջախի ծխնելոյզը. մի երեղիթ, որ վաղուց օտար էր և անծանօթ իր խղճուկ բնակարանին:

— Փառք Քեզ, Սստուած, փառք Քեզ...— բացականչեց նա և անուրջների մէջ զառանցող հիւանդի նման՝ սկսեց կրկնել իր այն աղերսանքը, որ բաղկատարած վերառաքում էր նա, ինկի ու մոմի ծխի ներքն իր բնական գոյնն ու միրուն բանդակների նուրբ գծերը թաղած՝ սկիկ խաչի առջն, այդ իսկ պահուն, այդ իսկ պահուն, աղերսանքը նացել էր իր տեսութեան հանդէպ, ողբարմած ու կարեկից զիմագծով... կծկուեց նա փոքրիկ պատուհանի մօս, ինչպէս որ մեզապարաը՝ իր զլիսաման դատավճիւր լսելիս. նրա սրտում յուսահատ խոհերի մի տեսակ լճակ էր գոյացել և կարծես քիչ էր մնում, որ խեղիք նրան, սակայն խորապէս հաւատում էր ծիրոջ վերահաս զիութեանը, նա գիտէր, որ իր աղի ու լեզի արտասուքները ապարդիւն չ'պիտի անցնէին և փափուկ ու արգաւանդ հողի մէջ ընկնող հատիկի նման՝ պիտի «բաղում արդիւնք» տային:

— Ո՞վ է, ձայնեց կինը, բաց անելով զսնակն և նկատելով մի ինչ որ ստուէր.

— Ե՛ս եմ, նազլու, սիրուն նազլու:

— Գէհ, շտապիլ, վաղուց է, որ ջուր եմ տաքացրել քեզ լողացնելու համար. օշարակ, գինի և կերպուր պատրաստել... չէ որ քո յնելու համար, օշարակ, գինի և կերպուր պատրաստելիք վարձը— մի կապոց պարսնը բերեց աշխատութեանդ հաղարապատիկ վարձը— մի կապունակ, որ երկար ժամանակ՝ մինչև կերպուման պիտի բաւականանայ մեզ վայելչապէս ապրելու համար:

— Ո՞վ էր նա, միթէ ինքը, իմ պարոնը:— Մի տեսակ այլալ-մունքով հարցըց սկ բարի աղօթաւորը:

— Զիտեմ, մի դալկապէմ ծերունի, վառ աշքերով ու ձեան նման սպիտակ մօրուքով, որը սակայն, ինձ թւում է թէ՝ կամենում էր ան-ժանօթ մնալ... հը, գիտէս որքան ոսկի ու ակնեղէն շնորհեց, մի ժամանում էր աւելի գուշակ գալուց...— Զատաթօսեց կինը, որի շարմաղ գէմքը այդ վայրամբ կապում էր այս արուած բոլորուած լուսնին, նոյնքան պայծառ կեանին նման էր 15 օրուայ բոլորուած լուսնին,

ու լրացնոր, սակայն նրա նման զուրկ ջերմութիւնից ու կեանիքի կրակից:

Սզօթաւորի անձնաւորութիւնը անշուշտ անծանօթ չէ ձեզ համար, նա բաղդաւոր օջախի վերջին շառակի ՝Վարդպէսն էր, որ հրաշքով ձես բերուած գումարով վերականգնեց խանդարուած տաճարը, ուր՝ այնուհետեւ իր գոհացսղտկան աղօթքների հետ միխախոնւում էր նաև խնկի ու կնդրուկի անուշահոսաւթիւնը և աստուածապաշտութեան հոգեսրտնէ ալէլուն:

ՀԱՐՍԱՀԱՐՈՒԹԵԱՆ ԶՈՒ

U

Անսիրտ, հարստահարող վաշխառուի տոկոսները, առաջիկ հարկահանի պատճառած անասելի զըկանքները, հետևաբար փող վասկակելու տենչանքը, իշխանաւորի հալածանքը, թշնամու արհամար-հանքն ու հեգնական ծիծաղը, դրացու ամօթանքը և բարեկամի ափսոսանքը վերջապէս Տարօնի գաւառից, իր հայրենի տան, իր «մամ-լարաթիւ», իր սիրելի ամուսնու և պաշտելի զաւակների գըկից յա-փլատակեց լայն թիկունքով, բարձր հասակով և վայելուշ կազմուած-քով երիտասարդական 27 գալստներ հաղիւ բոլորած՝ առոյգ և ուժեղ վարդանին էլ...

Նա շաբաով մուտ գործեց Կովկասի «Հիւրասէլք» և մեծաշնչքա-  
դարները՝ Տփխիս, Շուշի, Գանձակ, Գումրի, Վաղարշապատ, Երևան,  
ամենայն տեղ գործեց զառն աշխատանքով և ճակատի արդար քըլ-  
տինքով ճարիլ իր սեաբաղդ ընտանիքի համար մի պատառ չոր հայ.  
փորձեց գէթ այն տալուայ համար իր պարտքի տոկոսը վաստակած՝  
տուն վերադառնալ, բայց ապարդի մն... Տիվխիսի փոտաւոր շնչքերը  
և հաստափոր «պարունիքն» ու աղաները, Երևանի պօռոտախօս  
«միւրատէլները», Զուշուայ մելամաղձոա բէկերը, Դանձակի թրքա-  
մօլ վաշխառուները... Մայր-Աթոռի սուրբ հայրերն անգամ սահմա-  
նաւորուած էին միմիայն իլենց անձնական գծուծ հաշիներով, ողոր-  
մելի տարօնցու վրայ ուշադրութիւն գարձնող էլ շաբ: Յաճախ մեր  
բարեպաշտ և մարդասէր աղաների կողմից նրա օրական գառն աշխա-  
րաբեպաշտ և մարդասէր աղաներում իր օրինաւոր և արդար վարձատրութիւնը...  
Մի բանի տարիներ ամեն «քունջ ու պուճալ» թափառելոց յետոյ,  
Տաշիր գաւառի կուռական խիս և թաւշապատ անտառներում առանձ-  
նացած, հասաւաեց իր բնակութեան տեղին—իր բայնը, որի հանգէպ՝  
գեղածիծաղ հովտի մի անկիւնում, վճիտ առուակի զոյց ափանց հետ՝  
ձգուած էր մի քանի տեսակ ընդեղէններով զարդարուած, Պարդանի  
փոքրիկ այգեստանը:

«Մամլաքաթից» և կողները և նաև կնիքը սահմագութեաւ

այնքան էլ միսիթարական բաներ չէին աւետում զշտոտ պանդխտականին. «Վարդան ջան, զիմ ջան ու ջիկար, զիմ ջուխտակ աչքի լուս, զիմ սոնղի գուման Վարդան.»—այսպէս էր խօսում իր կնոջ «բարեգիրը»—զինաս, եօթ քարա խարաճի վատէնի օլլատ, տաճկու բէմուրվաթ աղէն քաշեց տարաւ զրմէն չուլ ու չափուա, բէժան ու քալաշ լծկան խետ մառալ կովուն. մըր սոնղի սըթար... թըրւ, պարտնտէր խայու օջախ Մշու-Սուլթան սըր Կարապի ակօլէ. զիս՝ խետ ճղերիսի ակլոր ու սէֆիլ, փշուր մի սկ զունիկի կարօտ թորգեց... վայ լէմն բան. եօթ լման տարիի թորգերիս վաթան-դարպաթ գացեր. եօթ տարի աշքսի արտսոնիր կաշկէինք քու ճամպախ. քու զօղալ երեսինի, քու քարսա քուսա ճամուն խորպան... եօթ տարի սեղան չենք բոլորի, Պառվու-տղայ հալսի եօթ տարի խետ մըղիկ կտրածի անոշ քուն ու դադար... եաման Վարդան, խաւար Վարդան, խասիր մըղիկ իմդատ. մըղիկ սաղ-սաղ կու խորին հուզա. մըղիկ թէմըրվաթ մը՛ թսրգի...»

եօթը տարիների ընթացքում այդպիսի շատ թղթեր ու «խարսիկներ» յաջորդեցին միմեանց, եօթի վերայ բարդուեցին նայնքան շարարախտ ու տիսուր տարիներ ևս և այնուհետեւ լոեց նբա յուսահատ ընտանիքը... իսկ Վարդանը այժմ այն չէր, սրին մենք հանդիպեցանք սրանից 14 տարի առաջ, նա թէ և սուրբ և անխախտ պահեց «Մառմառ գերեզմանի» անունով իր կնոջ տուած խոստումը,—շգտաւճանել՝ հաւատարիմ մհալ նրա սիրուն—սակայն անզօր եղաւ սրակելու այն ցանկալի յօյսերը՝ սրոցմով տոգորստած՝ պանդխտացաւ նա, 14 տարիների գառն օտարութիւնը, կնոջ և զաւակների սրատակէղ կարօտը մաշել ու քայքայէլ էր նրան թէ փիղիքապէս և թէ հոգեպէս, նրա կայտառ երեսի կոկ և մաքուր գծագրութիւնը՝ աղաւաղուել, կնճուտել ու թառամել էր. սկ մաղերն ու խիտ մորուքը հիւսուել էին սպիտակի ստուար խառնուրդով, կարմիր և մսոս թշերը նիհարել և խանձուել էին, սերպակ կեանքի կրակով հրդեհուած՝ խոշոր աչքերը թաղուել էին խորոնիկ փոսերի մէջ, ասես խամբել, մթագնել էին նրանք:

14 ձեզ տարիներ չոր հացով և բանջարեղներով սնուեցաւ նա, անտեսեց մի փոքրիկ գումար, և այդ բանիմ փայլուն սոկիները նրանում վստահութիւն ներշնչեցին ճանապարհուի դէպի հայրենիք. սակայն նա մի բարոյական պարա էլ ունէր կատարելու, պանդխտութեան երկաթի գաւազանը ձեռին՝ շափելով Այբարտեան դաշտը կարեսր համարեց՝ համբուրել «լուսաթաթախ» և գեղարդը, Լուսառութիւ-Պապի ձեռքով հաստատուած Միածնի իջման սրբաղան տեղերը, մի զայգ մոմ վառել իր զաւակների արեշտառութեան և բարօւթեան

համար և այնպէս հասնել իր ցանկալի «մուրագին»...

Դարնանային մի զուրաթ առաւօտ, մեղմ և ներգաշնակ զանգահարութեան հետ, ուժասպառ Վարդանը՝ «չուլ ու չափուաների» ծանր պարկը շալակին, մուտ գործեց չայոց աղգի միակ պարծանք ու միփթարութիւն համարուած սուրբ էջմիածնի անշուք զարբառներսկ.. ծունկ չորած՝ չերմ համբոյլներով ծածկեց և լեղի արտասուրով ողողեց տաճարի այն սրբաղան քարերը, որնց իր բերանով օրնինել և ձեռքերով օծել էր աղգի միծ և անդրանիկ հայրապետը...

Բ.

Սմուան վերջերումն էր, մի չերմ առաւօտ, Ղաղարապատի գաւթում, խոնաւ գեանի վրայ տարածուած էր Մշեցի Վարդանը. այնակ նա տանջւում էր աենդային ծանր հիւանդութիւնով. մի ամբողջ օր արեգակը իր հրեղէն ճառագայթներով այրեց ու խորովեց նրան, մինչև որ վեղարաւոր հիւրընկալը չնորի արեց պատսպարելու Ղաղարապատի մութ ու խոնաւ նկուղներից մինում... չարագուշակ չերմախար անգթութեամբ զրկել էր անտէր «զարիպին» շարժուելու կարութիւնից անգամ.

— Ա՛յս, զիմ արե, զիմ բաղդ, զիմ անուշ Գուլի.—Խեղդուկ ձայնով մրմնջում էր նա,—մէկ լէ աշկէնի խօրօտ էրեսիդի. մէկ գախ լէ զիրկ մըղիկ ատնէինք զօղալ ճղերսի... միս, զախ մ' լէ օլրաէինք Մշու գաշտ, մըր անուշ վաթան, չայիր ու չիման՝ ոռնտ մամլաքաթ, խօրպան, սորա խօգիսի խայլինք... եաման Լուսաւորչու Գիւան, եաման Պառվու Ցղայ՝ Սըր Կարապե, խասիր մըղիկ իմդատ, թէ մուրագ մը՛ թորգա... վայ լէմն... շախատ էղի Մէրիկ-Աստուածածին, օրթէ եօթ ջախ պախիմ զրու ծոմ ու պաք. եօթ քարա տկօզ տոտիկով շէմքիմ մառմառ զերեզմանդի, քու օջխին էղնիմ խու ու խորպան...»

Ահա, այսպիսի զառանցանքների մէջ էր նա, ունայն ու սնուածի յօյսերը տակաւին շոյում էին նրա հիւանդ երեակայութիւնը և նա յաւակնութիւն ունէր իր զոյութիւնը բարը տալ հայրենիք, բաց աշխականութիւն ու գրկախառնել իր այնքան թանկագին հարազատներին ու զաւակներին... սակայն մահու անագորոյն հրեշտակը շուտով արածեց զարիպի վրայ իր սառցային թեերը: Մի ասուպ էլ ընկաւ ու չքացաւ անսահմանսութեան մէջ...

Գ.

Այն օրից մի ամբողջ տարի անցաւ, Տարօն զաւառի փոքրիկ

զիւղերից մինում զըկախառնելով իր առոյգ և կտրիճ որդում՝ վշտահար մայրլ՝ ուղարկում էր «զուրպաթ» յատկապէս իր ամուսին հայրենիր վերադարձնելու բուռն տենջանքով.

— Տոտիկիդ խորպան, զիմ ջուխտակ աչքի լուս, խարմամ էղի խարիստոթեան դադում. եաման շըմ ուզի ձեր փարէն, խետ բըզիկ կու դարձուս զիմ զլսաւսը Վարդան... Գնա, օլրոէ, օրթա, զըզգիկ ասիմ, լաօ, մըր կորուստ շը ճարլիս, մը՛ դառնա ի վաթան, վալլան խարամ կէնիմ քզիկ զիմ խալալ կաթնի, զիմ օխնէնք, զիմ ամագ... Զեռսի թալերիմ Պառվու տղի փէշ, էղի բըզիկ քօմակ, լաօ, անարատ կաթ խասնի իմդատ, իրիշկէ՞ Թիֆլիսնի, Դուռմիխնի... կէղի ճարիս զիմ թագ ու պրակ Վարդան,,,—այդպիսի սրտամորմոք խօսքերով, արտասուք աշքերին՝ ճանապարհեց որդուն՝ Վարդանի կինը:

Եղիու հարադատների բաժանման օրից կարճ ժամանակ էր անցել, աշնանային մի առաւօպ էջմիածնի պանդխտականաց գերեզմանատան մէջ, հաստափոր վիզարաւորի առաջնորդութեամբ հայրակորոյս երիտասարդը՝ աղի ու լեզի արտասուլքներով՝ մի պարզ քարեկոյա, մի հողի շեղջ էր որոնում.

— Արդենկալ, — ասում էր կուսակլօն հայրը. — մեզ մօտ՝ ուրբաթ-  
չայր Սուրբի ձեռի տակ՝ նա մի երկու ամիս՝ վանքի ջրկիրութիւն  
արաւ, իսկ Ղաղաբապատում՝ մի գիշեր միայն հիւր եղաւ, հետեւեալ  
առաւօտեան՝ լուսադիմին՝ Աստուծոյ կամքով նորա հոգին փոխա-  
դրուեցաւ երկնից արքայութիւնն,.. ձշմարիտ, որ այդ բարեպաշտ և  
Աստուածասէր մարդի մօտ չ'գտնուեց և ոչ մի դրամ. վանքի հաշուով  
թաղեցինը նըան, բայց օտարականի վլայ քար ձգել՝ միանգամայն  
խորթ երկոյթ է մեզ համար: Այս հարթ հրապարակը լցուն է մշակ-  
ների և գաղթականների անհամար դամբարաններով. այդ խեղճեր՝  
հօրդ նման՝ եկել են ուխտի, փող աշխատելու, կամ... աննպաստ  
պայմանների մէջ ապրելով՝ ջերմել են և հենց Աթոռի գրկում կնքել  
իրենց վաղանցուկ մահկանացուն: Թագ Հոգին-Սուրբ սփոփէ ու միփ-  
թարէ ձեզ, թող և հանգուցեալի հոգին իր սիրելինների թւում դասա-  
ւորէ: — Եւելացնում էր սրբակրօն արեգան:

Արդեօք Վարդանի սրբին է և չենթարկուեցած միանոլոյն վիճակին:

ՎԵՐՁԻՆԸ ԲՈԼՂԱՐՆԵՐԻՑ

U

Մեր կառքը իջնում էր խորդ ու բորդ զառիվայրով. յուլիսեան ձենձերող արեգակը և թանձ՝ խեղող փոշին անհնարին և յուսահատական էր դարձնում ճանապարհորդութիւնը, չնայելով, որ երկու ժամ առաջ միայն գուրս էինք եկել հրէական մայրաքաղաքից—կեղծոնից—դէպի Գրիգորիոսով կամ ինչպէս սովորաբար կոչում են նրան տեղացիք՝ Զեօրիա: Մեր ակսութեան առաջ բացուեց մի գեղածիծաղ՝ տիգանից տեսաբան, մի հրաշալի պէլզաժ. ոչ այնքան հեռու հոհապուրից տեսաբան, մի հրաշալի պէլզաժ. որ պըղ-բիզոնում սէզոտ ու անտառոս բարձրունքների ել և էջներն ու պըղ-բիզոնում սէզոտ ու անտառոս բարձրունքների լողակների մայրէն, որ զարերով քերն, ողողել և բազմածալ տոտ դնեսարի լոնթացքն է, որ զարերով քերն, ողողել և բազմածալ շերտերի ու իջուածների է վերածել մայր հողը: Դետի աւագանը տեսանելի է մեղ. ահա նա, բաց-մանիշակագոյն ֆոնի վրայ՝ լճացել է մոխրագոյն կամ մութ գոյնով. նրա ոլոր մոլոր ափերը ծածկում են թաւ և կանաչ կաղնիներ, բարդիներ, ուռի, թեղի, բողի հասաբուն ծառներ. որ սակայն վերջանում կամ միախառնուում է Կոչընից գիւղի փարթամ այդիների ու լայնատարած ծառատունկերի հետ: Նա լուելեայն աներեսյթ անում է քերելով ու ոռոգելով մոլգաւական բնակավայրի ափամերձ հանդերն ու հովիտները. նրա անդիւր մանչիւնը նման չէ ոչ կուրի բարձրագոյն աղմուկներին, ոչ բոլոքաւոր Արաքսի գարաւոր գոռուն-գոշունին և ոչ էլ իմ հայրենի միշտ յաւզաւած ու դարաւոր գոռուն-գոշունին և ոչ էլ իմ հայրենի միշտ յաւզաւած ու լալկան՝ Սիսուրեանի շառաշիւնին... նայում ենք մի ուրիշ կողմ. լալկան՝ Սիսուրեանի շառաշիւնին... նայում ենք մի ուրիշ կողմ. բնութեան սրանչելի կիղեցկութիւնը ճոխացուած է այստեղ նաև արուեստական հրապարակով.—միջակ մեծութեամբ, համեստ եկեղեցու սրածայր գմբէթները գոյնդգոյն նկարներով, գոթական ուռոյցքներով ու նուրբ մանոււածքներով զարդարուած, դէպի վեր, դէպի ջինչ կապտագոյն անսահմանութիւնն են բարձրանում, պահելով իրենց գագաթներին և ճակատներին անպահպայց խաչախայտի բազմաշերտ, ճաճանշաւոր և ոսկեհուռ ընդօրինակութիւնը: Եկեղեցուց դէպի արեճաճանշաւոր և ոսկեհուռ ընդօրինակութիւնը: Եկեղեցուց դէպի արեճաճանշաւոր կալուածատիբո՞չ՝ Պօպովի ապարանքն է, հնացած, մուաք-հարաւ՝ կալուածատիբո՞չ՝ Պօպովի ապարանքն է, հնացած, համարեա անճաշակ մի շինութիւն, սակայն ճոխ և փաթթամ իր բնա-

կան դիբքով ու տեսաբանով.—խիտ ծառնելը, երփներփն ծաղիկներ,  
գորգի նման՝ տեղ-աեղ փռուած՝ կահաշ խաղողանոց, ալեոր ընկու-  
զենու հաճելի հովանի, անուշահոտութեամբ սնուած՝ կենդանաբար օգ...

—Սա իմ բարեկամի, իմ աղքականի սեպհական տւանն է, մենք  
կ'հանգստանանք այստեղ, կ'վայելենք հիւրասէր տանտիկոց պատ-  
րաստած ճաշը՝ ապա թէ կանցնինք դէպի Գրիգորիսովոլ, —խօսեց  
ուզեկիցս, նաև սը ինձ քարշ էր տալիս Քիչնիից՝ 2եօրնա: Բարեկամո,  
որպէս Մոսկուայի հնագիտական ընկերութեան անդամ՝ յանձնարար-  
ուած էր հետազոտելու իր ծննդավայր Գրիգորիալում գտնուած զա-  
րաւոր հնութիւնները, որոց հայ գաղութը փոխադրել էր իր հետ  
18-րդ դարի վերջին քառսրբում Կառշան և Կիլի քաղաքներից և  
որոնք, ըստ աւանդութեան բերուած են Ընի մայրաքաղաքից, նրա  
աւելումից անմիջապէս յետոյ՝ 14-15-րդ դարերում. իսկ ես պէտք է  
լուսանկարէի ս. Նշանը, գրչագիր աւետարանների խորանապատկեր-  
ներն ու գունաւոր նկարները... կամ աւելի ճշշա, պէտք է միասին  
բաժանէնք զուտաբնութեան և ուրախութեան այն հաճելի ժամերը՝  
որ պիտի պատճառէր միշտ հիւրասէր աեղական Տէր-Դաւիթ աւագ-  
քահանան:

Մեր կառքը կանգ առաւ Կօշերնիցայում, ընդառաջեցին և սիրով ընդունեցին մեզ յունապատճեն, բայց մօք կսղմանից հայ, նորաափաթիկինը և նբա զուարթագէմ ամուսինը՝ բոլղար կալուածատիրոջ եղբօր-սրբին՝ աւելի ճիշա՞ երիտասարդ կալուածատէր:

6

—Մինչև սուբճի պատրաստուելը՝ մենք կարող ենք մի պայտ անել այգիում, այնտեղ և զով է և հաճելի. —ասաց տիկինը և առաջնորդեց մեզ գէպի գերեցիկ այգին, որ ձգուած էր ծերունի կալուածատիրոջ բնակարանի հետ, գէպի արկելա-հիւսիս. նա ընդարձակ է, բաժանուած տարրեր ծառատունիերով. մի կողմում՝ խաղողի անվերջանալի թփերն են, միւսում՝ հաստաբուն ընկուղենիները, ինձորինիները, տանձենիները, դեղձի, սալորի, սերկելիի, բալի, կեռասի, ծիրանի, ծառները գոյնզգոյն պտուղներով ծանրացած ու նախշուած. Ճեմելիների մի հեռաւոր ծայրում, ուր աջ և ձախ շարուած են բարձրուցէց բարդիներն ու ստուելաւոր հագակիները իրենց սպիտակ ու վարդագոյն անուշահոտ ծաղիկներով և ուր կանգ առանք մենք դարաւոր ընկուղենու հոգանու ներքե, առա նկատում ենք, որ ծառուղու հեռաւոր ծայրից շարժում է գէպի մեզ մի ցածրիկ՝ անիւաւոր բազկաթոռ, նրա վրա բազմել է մէկը և առաջ է շարժում երկու

գեղջուկ երիտասարդների ձեռքով .

—Ո՞վ է նա—հետարրբաւթեամբ հարցնում ենք մենք:

— Խմ կեսքայրն է, իմ ամուսնի հօրեղբայրը, ազգով Բոլղար, նա տկար է և սիրում է այդպէս զրունել: Նա իր նախաճաշիկը, լաւ եղանակներին, վայելում է հէնց այս ընկույթինու հովանու տակ.— պատասխանեց նորաաի կինը և շառագունելով՝ մի կողմ քաշուեց ակնածութեամբ սպասելով պատկառելի ծերունու գալստեան: Մի քանի վայրիեանից յետոյ մարդաքարչ սայլակը կանգ առաւ մեր առջե. աի-կինը՝ ասես՝ հայունու սպարկեցասւթեամբ մերձեցաւ և համբուրեց ծե-պահե չեղաւ սա ասուն մինենեւ էր նրան՝ համբուրելու.

— Ծանօթացըն, ովքեր են սրբեր՝ յարդիկի հիւրեսը: —  
Դիմեց նա իր հարսին:

—իմ մօրեղբայրը և իր բարեկամ—ուղեկիցը. —Դազի լսով  
ձայնով շնչեց տիկինը, իհարկէ տաճկական բարբառով: Ծերունու  
ականիջները սակաւ ինչ ծանր էին լսում. Նա դարձաւ զեղի մեզ,  
ողջունեց մեր այցը և հարցըց աղքանուններս:

— չայ էք: Այս. իմ սիրուն Բոլղարիայից յետով, այժմ պրկութեան հերթը ձերն է... Հնորհաւոլում եմ, անյ Աստուած, որ դուք աշողութեամբ թօթափէք բանակալի անտրդ լուծը: Բայց Բոլղարիայի վրայ իր աղասութիւնը շատ թանգ նստեց... Ասացէք խնդրեմ ինչ նորութիւն ունիք քաղաքական աշխարհից, ինչ գոյն ստացաւ բաղմաշարչար Մակեդոնիայի ապստամբութեան խնդիրը: Յաճախ սրբելով իր ճարպոտ զէմբից և ճակատից քրտնքի շիթերը՝ հարցընց ծերունին:

—Ստամբուլովը սպանուած է արդեն, նրա գոյութիւնը փուչ էլ բոլղարների համար.—ասացինք մենք:

— Սաամբուլովը... սպանուած է... է՞հ, հասկանալի չ...—  
ծեխոնին լսեց. նրա խամբած աշքերում կարծես փայլատակեցին  
կայծակի շանթերը. ածելած դէմքը մի տեսակ փայլենի արտայա-  
տութիւն ստացաւ, բազմակնճիռ ճակատը և թաւ յօնքերը շարժուե-  
լի է առաջ եկասակ. նա գրագուեցաւ և ցնցուեց...

— Ստամբուլովը մարմնացած հանձար էր, նա սիրում էր Թու-  
ղարիայի մեծութիւնը, բայց կան ենթազբողներ, որ իր անձնական  
շահի, իր փառքի համար միայն...—յարեց բարեկամու: Ծերունին՝  
ապօռչի նման, փափսխակի կերպով նայեց մեր երեսին.—Հըմ, դուք  
պաշտօնեաներ էք.—և առանց սպասելու որ և է պատասխանի, առան-  
ձին չեշտով շարունակեց իր ասելիքը.

—Պարսիններ, թվութեք ինձ կիսամալ

կագին Թոլդարիայով հանդերձ... ես ճանաչում եմ այդ հայրենասէր յեղափոխականին իմ սեպհական անձի, իմ հինգ մատների պէս... մի խստութեամբ դատէք. Թոլդարների հայրենասիրութիւնը անհուն է. Նրանց գոհարենքութիւններն էլ մեծ են եղել հայրենիքի ցանկալի անկախութեան ու ազատութեան համար... ինքնակովութիւն չ'համարէք, եթէ ասեմ, թէ ես՝ հայրենիքից վաղուց հեռացած, վերջինը՝ բոլդարներից, այնքան էլ ընդարձակ կարողութիւն չունենալով հանդերձ՝ 1853 թ. Սևաստովոլի պատերազմի ժամանակ՝ 15 վարձկան կամաւորներ էին պահում, որոնք ազմկում էին երկիրը և խռովաւմ օսմաննեան անիշխանութիւնը յօդուա Թոլդարիայի ազատութեան: Այնուհետև՝ իմ 60 հոգի՝ ձիաւրդները՝ 1874 թւականին, արին էին թափում, իսկ ես՝ իմ դառնաշարչար բրտինքով նրանց ոռնիկ և ուղմամթերք էի մատակարարում... ես չամուսնացայ, որովհեակ իմ գողափարը, իմ յայերի և յօյսերի, իմ մաքի ու ցնողքների միակ առարկան անգին հայրենիքի փրկութիւնն է, նա իմ ծնողն է, իմ միփիթարութիւնը, իմ դաւակը... և ահա բոլդարացու մեծաքանակ գումարները, վարդագոյն արինն ու կրած ամենատեսակ զրկանքները—ստեղծեցին վաւաւսը և անկախ Թոլդարիա: Ստամբուլովի յիշատակը աւելի քան թանգ և անմոռանալի՛ է իւրաքանչիւր բոլդարի համար..., ախ, հազար ափսոս...

Եկարունին հեկեկաց, նրա աշքերից վայր գլուրուեցին արտասուրի խոշոր կաթիլներ և նա լոեց:

Վկայուած էր Պօպովի հայրենասիրութիւնը և նրա միանուագ նուիրաբերած 25 հազար ոտուլի յօդուա «սուրբ գործին»...

#### Գ.

Կօշերնիցան Մոլդաւական գիւղ է՝ 50 տուն բնակիչներով, որոնք պարապում են՝ երկարութեամբ, այգեսպանութեամբ և անտառաբուծութեամբ: Ունին մի փոքրիկ ուսումնաբան, որ պահում է կալուածատիրոջ նպաստով և մի փառաշէն եկեղեցի, որ կառուցել է նոյն կալուածատէրը իր սեպհական ծախքով, թէկ, ինչպէս պատմեցին, բնակիչների ցանկութիւնն է եղել՝ գէթ Աստուածային տաճարի նկատմամբ՝ ծանրութիւն չ'պատճառել ծերունուն և իրենց արգիւնքով կանգնել.—«իմ գրամները կուտակուել են ձեր քրտինքով. Աստուծոյ համար աւելի հաճելի կ'լինի, եթէ իմ կամբն էլ շպակասի իր տան շինութեանը. մի զրկէք ինձ այդ միխթարութիւնից—թոյլ տուէք որ՝ Պօպովի գիւղում լինի և Պօպովի կառուցած նկեղեցին:»—Գիմել է նա տեղական մոլդաւներին և իր 30 հազար բուրլին զոհել 8իրոջ

անուանը, որպէս քրիստոնիայ... նա այսօր էլ վճարում և կերակրում է տեղական քահանային, կտլիին, ուսուցչին...

#### Դ.

Երեք օրից յետոյ, երբ մենք ուրախ տպաւորութեան տակ վերադարձանք հիւրընկալ Գրիգորիալուից՝ երիտասարդ կալուածատէրը սրախ ցաւօք պատմեց, որ մեր գնալուց անմիջապէս յետոյ, ծերունին շատ էր ատանջուել. Թոլդարիայի քաղաքական գրութիւնը, Ստամբուլովի անակնկալ մահը և այն, բաւական աղդել էին հայրենասէր Պօպովի սրախ և չզերի վսայ. նա արդէն կաթուածահար էր եղել և, բժշկի խորհրդով, հետեւալ առաւտեան, պէտք է ուղարկէին և բան օդեսա, բայց աչ փրկութեան յօյսով... Այս անգամ մեղ շ'յանդուեց սեղմել հայրենասէր բոլդարի ձեռը...



ԲԱԴԻ ԽԱՂԵ

U.

Վալերիան Եղորիչը և Սերգէյ Մաքսիմովիչը առաջինի, շիտակ ու ազնիւ մարդի՝ տեղն եկած ժամանակ՝ նոյն իսկ կծու տղասիրի և բարեգործի հաշակ ունեին. Նրանք շողակնի նման մի-մի փայլուն մոլորակներ էին մեր մութ ու խւալար մթնոլորտում. զէթ այդպէս էր նրանց մասին հասարակաց կարծիքը:

Թէ մեր թուած բարեմանուռի իւնիքը բաւական առաջազգաց  
և անդպյն բառեր են, տարբեր աստաներով միայն, ոչ ոք չի կա-  
կածել, բայց որ ակնարկած անհատներն ել բարձր էին կանգնած  
կարճատես ամբոխի որ և է կասկածանիքից, իրենց հոգեկան և իոէ-  
ալական վսեմ ձգաւամների նկատմամբ՝ բոլորովին հաւատալի էր:

Մի անդամ, կէս օր էր, երբ Սերգէյ Մաքսիմիչը, որ Մայր-Աթոռի  
հացով մտուած ու հայ եկեղեցու օժանդակութիւնով իր բարձրագոյն  
ուսումն ստացած մի երիտառարդ էր, նոր էր վեր կացել անկողնից  
և սիրելի կնոջ ու սիրառուն զաւակիերի հետ, ճոխ սեղանի շորջը  
բոլորուած՝ թէյ էր վայելում. Վասպուրականցի շաղակբատ ու քծնող  
սպասաւորը կեղծ յարգանքով կամ ստորաքարչ պատրաստականութեամբ  
մի նամակ գրեց նրա առջև՝ ձեան նման սպիտակ սփոռոցի վրայ:  
Յաղթանդամ, կողը երես, ուս աշեայ, կայտառ ու զուարթագէմ Պետ.  
Կալուածոց Կառավարի՛ Սերգէյ Մաքսիմիչը աճապարեց ծահօթա-  
նալ այդ թղթի բովանդակութեան հետ, որի հեղինակը իր վաղեմի  
բարեկամներից ու ճեմարանական ընկերներից մէկն էր. «Թանկագին  
բարեկամ,—գրում էր նա—գրամատոյցս, որ երկար տարիներ մեր  
ծխական գլուցներում ուսուցչական պաշտօն վարած՝ մի ընդունակ  
և շնորհալի անձն է, գեղեցիկ գրչութիւն ունի և անվայման վստա-  
հելի է. այժմ անդործ է և մի պատառ ուս հացի կարօտ. խորեմ  
շնորհ անէք մի որ և է պաշտօնով զետեղիլ ձեր դիւանատան մէջ  
կամ գիւղաքաղաքներից մինում. շատանում է նա ծառայել անհշան  
վարձատրութեամբ: Դրա ազնուութեան և հուատարմութեան նկատ-  
մամբ ես լիովին երաշխաւորում եմ ձեր առջև: Կրկնում եմ, որպէս

զաւակների և ընտանեաց տէր՝ այս պարօնը՝ ըստ սմինայնի արժանի է ուշադրութեան և կարեկցութեան, մանաւանդ, որ իր չորհալի գոշով և ուրիշ բարեմասնութիւններով մեծ յարմարութիւն կարող է ընձեռել ձեր գործերում։»

— Հըմ, Էլի՛ ողոքմութեան խնդիր, Էլի՛ ըէկլամներ... անիծած-ները մեղ հօ հանգիստ չ'պիտի տան. ի՞նչ անենք թէ վարժապետ է, ընտանիք ունի, քաղցած է...—ասաց Սերգէյ Մաքսիմիչը դժկամա-կութեամբ՝ մի տեսակ հարցական հայեացը ձգելով իր նորատի կնոջ շարմաղ երեսին:

— Սերեօժան, հոգիս, ճանապարհ դիր շուտով, թնդ գնա. այդ  
մարզը վարժապետ է եղել. հը՛, վատանգաւոր չէ... բացի այդ պիտի  
ծանրանայ և քո գրպանի վրայ... այ տղա, ասա որ պարտնը դեռ  
քնած է հետեաբար և չի կարսդ ընդունել իրեն: — Կարգադրեց տի-  
կինը՝ դէմքի տարօրինակ ծամծռութիւնով.

— Ե՞ չէ, Սովիա Պետրովնա, նելովկօ անյարմար է, հասկանւմ ես... պէտք է ձևով ու քաղաքավալբութեամբ վերաբերուել, ալիր գրել գիտէ, սեն ու սպիտակը հասկանում է. երկի ինքն իրեն ինտելիգենտ մարդ է համարում. մանկավարժ է եղել ոչ բարով... կարելի է այնպէս ինչ անել, սարքել, որ ինքն իրեն բէզարի ու հեռանայ.., այտղայ, ասա թղթաբերին, որ մտնի ինձ մօտ դիւնատուն վաղը՝ ժամը երկուսին. հասկացար:

—Հրամիլ էք, հասկացանք, վաղը ժամը երկուս պետանեանա:

— Անպատճառ զիւանատուն. լաւ չէ, որ վարժապետ մարդի մեր տանը տեսնեն; — Խորհրդաւոր կերպով վրայ բերեց մանկամարդ տիրուհին:

8

Հետևեալ օրը, առաւօտեան վաղ, անշուշտ ձնշող սրտնեղութիւնից ու անգործութիւնից ստիպուած՝ սոված որկորով, մեր վաղեմի վարժապեսը, արեածագի հետ, հսկող պահապանի նման, յամրաքայլ երթեեկում էր Սերգէյ Մաքսիմիչի դիւանատան ցանկապատի առջև։ Նա նմանում էր ամռան յեղաւցիչ տապից գալկացած տունկի. նոր է բացւում նրա ծաղկի կոփոնը, սակայն սկսել է խամքիլ, հիւծուիլ ու թառամիլ. գլխեկո՞ր է նա, մտայոյդ և տիսուր. հոգեկան անհնարին վիշտը խորապէս դրոշմուած է նրա կարծես մոմելոյն ճակատին. տարեների ընթացքում դասնաշարչար ըրախնքով ձեռք բերած փորձն ու հմառութիւնը այլ ևս ոչ գին ունէր և ոչ արթէք. իսկ ընտանիքի բազմաթիւ անդամներին հաց էր հարկաւոր, գէթ իրենց դժբաղդ գոյութիւնը այս տատասկոտ-անհիւրնկալ-աշխարհի երեսին մի կերպ քարշ

տալու համար... զբամագլուխ չունէք և իսկապէս ընդունակ էլ չէք քաղաքում մանրավաճառ կամ գիւղերում «չարչի» լինելու, շատ ան- գամ դիմումներ արեց այս և այն աղային, ծանօթին, բարեկամին, զբացուն... խնդրելով մի զբաղմունք, մի գործ, լինի նա փոքր, ստոր, թէկուզ սպանող իր մարդկային «եսը» և փշող, ջախջախող նրա ան- հատական ինքնուրոյնութիւնը, բայց ամենն էլ խոյս էին տալիս նոյն խոկ անուղղակի աջակցութիւնից...

«Վարժապետի» արտաքինը նրա նիւթական արգահատելի վիճակի պարզ հայելին էր. նրա մի ժամանակուայ՝ նոր ու կոկիկ՝ իսկ այժմ ողորմելի պիշտակը՝ ասես ջրի ու կրակի միջով անցել. հազար ու մի տեսակ չար ու բարի հանդիպել. օձիքը՝ խոզոտ, կռնակները՝ թափուած, տեղ-տեղ պատառուած կամ տարրեր գոյների կարկատաններով նախշուած. ամառուայ սպիտակ գլխարկ՝ նոյնեմբերի ցրտերին. առանց վերաբկուի կամ կենոցի, կօշիկները ծակոտուած ու տասնեակ կարկատաններով ծածկուած, մի դժույն, բղկառուած ամպհովանի՝ գուրս ցցուած ճաղերով. մի խօսքով բոլորը հին, բոլորը վթած ու ողորմելի դրութեան մէջ:

ծանել էր անցնում ասպակալի ժամանակը. երկու օր է, որ այս քաղաքումն էր, մի ինչ ով զարիֆ աղայի ահշուք պանդոկում համարեա քաղցած, առանց թէյի, առանց որ և է տաք, սննդարար կերակրի, սակայն վարդագոյն յոյոը թելադպում կամ ներչնչում էր նբամիջ ոյժ և կարողութիւն տոկալու և՛ ցրտի, և՛ բաղցի, և՛ անձնական ամեն տեսակ զբաների գլմ... մինչև որ կ'ծագի իր բաղդի ցանկալի արշալոյսը.—չը որ նա այժմ դիմումն է արել ինտելիգենտ, աղնիւ, արշալոյսը.—չը որ նա այժմ դիմումն է արել ինտելիգենտ, աղնիւ, սրտի ու զգացմունքների տէր մարդի, ովը շատ շատերի վրայ իր անուշ լեզուով ու կարեկցական ճառերով՝ սրանչելի տպանութիւն էր թողել և «աղգասիրի» պատուաւոր տիտղոսը շահել...

Վերջապէս հնչեց խորհրդաւոր ժամը և բախտաբինդիլ մասկա-  
վարժը նախանձելի երջանկութիւն ունեցաւ Սեբգէյ Մաքսիմիլիչի բարձր  
ուշադրութեան արժանանալ, լսել նրա բազրահնչիւն ձայնը, սեղմել  
նրա հայրենասիրական՝ ողորմած ձեռլը: Ռ' բայիսի զեղսւն զպացում-  
ներ այդ վայրկեանին՝ հալչող ձեան նման՝ սահեցան ու լճացան նրա  
ցամաքած սրառում, նրա տեսութեան առջև, ինչպէս շարժուն պատ-  
ցամաքած սրառում, կերպով ու գեղեցիկ գասաւորութեամբ՝ արձանացան.  
կերներ՝ վառ գոյներով ու գեղեցիկ գասաւորութեամբ՝ արձանացան.  
իր ընաանեկան բարեկեցիկ վիճակը, նորատի, սիրունիկ կինը՝ զոյգ  
ծաղկակիթիթ մանկիներով, էլ կրակի նման ամօթից կասկարմիր  
գառած՝ չէր բաղխում օտարի գուռլը. ընդհակառակը՝ նիւթապէս ապա-  
հով դրութեան մէջ, նա բարեգործութեան ձեռ է մեկնում իր գե-

տեցած նոյնպիսի արգահատելի վիճակի ենթակայ, իր զինակից—մաքի անձնութիւ մշակներին... պարտատէրերը՝ իւրաքանչիւր վայրկեան էլ շնու վրգովում նրա սրտի հանգիստն ու արխնը պղառում. մանկիկ-ները հագուած են կոկիկ ու զարդարուն, կուշա են նրանք անկարօտ և ապահով...

—Են ինչը, ճեմարանական ընկերս գրում է ձեր մասին, խընդրում է հոգալ ինչ որ հնարաւոր է.—ասաց Կալւածոց պարոն Կառավարիչը կարեկցարար.—ես էլ, ինչ եմ անում, զգում եմ ձեր վիճակի ծանրութիւնը, սակայն սրտի ցաւով պիտի ասեմ, որ առ այժմ ինձ մօտ ազատ անդ չլինելու պատճառով, գժուաբանում եմ կատարել բարեկամիս պահանջը կամ՝ աւելի պարզ՝ ինձ վրայ ծանրացած՝ բարոյական պարարը, այսինքն, ին ինչ անել, հնարաւորութիւն առաջ նման գեղեցիկ բարեմասնութիւններով օժառուած պատռաւկան երիտասարդի իր կացութիւնը մի կերպ բարելաւելու, որ իմ սրտին այնքան մօտ է և ցանկալի,.. սակայն չ'պէտք է վհատիլ, մինչեւ որ ինքս հնարաւորութիւն ունենամ ձեզ համար մի յարմարաւոր պաշտօն էն ինչ անել, ստեղծել իմ վարչութեան մէջ, կ'յանձնարարեմ գերազնիւ Վալերիան Եգորիչին մի համեստ պաշտօն չնորհել ձեզ: Եկէք, ուրիմն ինձ մօտ վազը՝ հէնց այս պահուն, ես կ'զրեմ նրան ձեր մասին ինչ որ հարկաւորն է:—Դիւրեկան շեշտով աւելացըց Սերգէյ Մաքսիմիչը: Վաղեմի մանկավարժ Դուրգէնեանը բառ չէր գտնում արտայայելու իր սրտի զգացածը, իր բուռն կոհունակութիւնը և հաճելի տպաւրութեան ներքեւ վերադարձու իր օթեանը, սրտաւրով սպասելով նշանակուած ժամին:

Տաղտկալի ժամանակը սպանելու համար, Գուրգէնեանը մի երկար ու ձիգ, յուսագրական նամակ գրեց իր ընտանիքին, փառաւորապէս գրուատելով Սերգէյ Մաքսիմիչի այդ «մարմնացած բարութեան» արտաքինը, կարեկցական վերաբերմունքը... մինչդեռ նոյն երեկոյեան գերազնիւ Ս. Մաքսիմիչը մի այսպիսի յանձնարարական էր պատրաստել Վալերիան Եգորիչի հասցէին՝ «Դիւրամատոյց» մէկն է թափառացչիկ, սպած ուսուցիչներից. ափոսու որ չնորհալի է և լաւ զրշութիւն ունի, ափսոս եմ ասում, որովհետեւ ներկայ պայմաններում, աշմիայն ուսուցչի, այլ և գրագէտ մարդկանց հետ որ և է առնչութիւն ունենալը միանգամայն անօգուտ է, ասացի իրեն, որ քեզ մօտ կարգ է մի համեստ պաշտօն ունենալ՝ «Ալիկցոս ուաղ արի», զու էլ յուսագիր իրեն, բայց կանխապէս արտագրել տուր սրա հետ ուղարկածս կարեւը թղթերը և վերագարձրու ինձ... մի առ ժամանակ ծառայեցրու, բայց դիւրանատանդ մէջ պաշտօն տալ կամ հովանաւորել,

բնաւ խորհուրդ չեմ տալ, զու հօ լաւ գիտես խոստանալու, յուսագրելու և «բարի երթ» մաղթելու կոկիկ եղանակը...

Վալերիան Եգորիչը մի հաստափոր և ճարպոս մարդ, որ իր նորաաի կնոջ՝ Կոնիիա Պետրովնայի շնորհիւ զօրեղ պրօտեկցիա ունէր և տեղական հասարակութեան մէջ առաջնակարգ տեղ էր բռնում, անծանօթ չէր այդպիսի «ագասիբական օպերացիաներին», նա սիրով ընդունեց Գուրգէնեանցին և թղթերի մի ահազին կոյտ զարսեց նրա առջեւ արտագրելու համար, մինչեւ որ մի որս, ոռնկաւոր տեղ պիտի յատկացնէր իր դիւրանատան մէջ:

Միամիտ երիտասարդը լի հաւատով և ամուր յոյսով ու եռանդով կպած էր իր ժամանակաւոր պարապմունքին. նա խորապէս համոզուած էր, որ այդ երկու աղնիւ ու բարի մարդկանց կարող աջակցութեամբ վերջապէս պիտի բարեկարգուի իր այնքան երերուն վիճակը ըստ նիւթականին և պիտի գիւրութիւն ունենայ մատակարարելու իր ընտանիքի առօրեայ ապրուատը:

## Գ.

Այն օրից մի ամիս էր անցել, գեկանմբերի ցրտերին էր. Զարիփ-աղայի անշուրը պանդոկում մի մութ և խոնաւ սենեակի մէջ, անյոյս և անպաշտապան տարածուած՝ փալիլում էր մեր վարժապետի գոյութեան հիւծուած պատրոյէլ—Գուրգէնեանցը բռնուած էր ծանր տենդով, նրա օրերը կարծես հաշուած էին:

Կեզուա և անգայն սեղանի վրայ մատիտով խծրծուած մի ինչ որ նամակ կար, ուր արձանագրել էր նա իր կիանքի այդ աղէխարշ միջնադէպը.

«...Ինձ հետ պատահած մանաւանդ վերջին դէպքը՝ ակամայից հասցնաւմ է այն պարզ եղբակացութեան, որ աշխարհիս երեսին աղնիւ, շխտակ ու ծմբալիա, սրտի զգացմունքի աէր մարդիկ եթէ ոչ գոյութիւն չունին, գէթ շատ սակաւածիւ, իսկապէս հաղուագիւա են, և ես շ'պատահացի այդպիսի մէկին, ընդհակառակը՝ բոլորը՝ հսական, էգոխաներ, բոլորը իրենց անձնական, գծուծ շահերին ծառայող՝ մարդատեաց փարիսեցիներ և քոլարփուած սրիկաներ են... Զոյդ, ինաւելիգենա և աղնիւ մարդի հուշակ ստացած պարոններ խաղ էին ինձ զաւակներիս արկի հետ. մի ամրոց ամիս քաղցած ու ժարաւ ինձ զարշարելուց յետոյ՝ վերջապէս շնորհ արին յայտնելու, որ մի ուրիշ շարշարելուց յետոյ՝ վերջապէս շնորհ արին յայտնելու, որ և է վարձ վճարպմունք ուրսնեմ, որ իմ աշխարհութեան համար որ և է վարձ վճարպմունք ուրսնեմ, որ իմ աշխարհութեան համար որ և է վարձ վճարպմունք էին... մինչդեռ կարենք էր ինձ հատու-

ցանել պանդոկի համար. ճանապարհածախս տուն վերագառնալու. վերջապէս պէտք է կերակրել և ձմեւուայ ստոնամանիքի դէմ պաշտպանել իմ ընտանիքի այնքան աաբարագդ գոյսթիւնը... գողանալ, կեղծել ու ստել չգիտեմ. իսկ ձեռ մեկնել՝ սորութիւն մուրալու... այդ էլ գժուար թէ բարեկարգէր իմ անհնարին կացութիւնը:

Օ՞հ, աշխարհը նեղ է ինձ համար; երանի՛ թէ մահը մի վայրկեան առաջ վրայ համեյք և վերջակէա զնէր իմ դառնաշարչար կիանքին... երանի՛ թէ՝ բնաւ լոյս աշխարհ տեսած չ'լինէի ես, կատաւէր այն չարագուշակ որորանը, որ ինձ վշտերի համար միայն մեծացրեց:»

Պանդոկապես զարիֆ-աղան, որ պիդժ ու անմարուր ձեռները թաթախուած էին տասնեակ մարդկանց անմեղ արիւնով, շօշափելով լուսամիտ մարդի այգալիսի արգահատելի և աղէխարշ վիճակը՝ սաստիկ զգացուեց. նա խելացնորի նման վագ էր տալիս այս և այն կողմաբժշկի, զարմանի... կարեկցական խօսքերով և ամենայն պատրաստականութեամբ յուսադրում և հոգելու միսիթարում էր ընկած մարդին:

— Սիրտ առ, եղբայր,—ասում էր նա—Աստուած ողսրմած է. ոչ մի բանի համար մի մաածիր, ես պատրաստ եմ քեզ նիւթապէս օգնելու. առ որբան զրամ և կամենաս. չէ որ աշխարհի զոյքը, հասսութիւնը, աշխարհին էլ պիտի մնայ: Ալլահին փառք, ես միջոց ունիմ, մարդ եմ, մեղք է, որ գէթ իմ հսկու համար, ուրիշներին էլ կարեկից չ'լինիմ, երբ առիթը ներկայնում է. թէկուզ այլակրօնի, անհաւատի և իմ ոխերիմի համար լինի այդ...

— Զարիֆ աղա, մի երկու տող բան եմ զրել իմ ներկայ զրութիւնից և մարդկանց մասին, որպէս էկ օխտների՝ շատ աննապատկարծիք յայտնել, թոյլ տուր աւելացնել, որ մի պատահական մահմետական անհամեմատ աղնուութեամբ և զգացմունքով վերաբերուեց զէպի մի ընկած և կարօտ անձն՝ որից ոչ մի բարոյական կամ նիւթական շահ չէր կարող ակնկալել, այսինքն՝ դէպի ինձ, նա առաւել լաղճմտանի և գութ ցայց տուեց, քան թէ զոյգ «կրեսոսները», աղգասիրի ու մարդասիրի միծահնչիւն և արլիկի ներքե պատապարուած իմ քրիստոնեայ եղբայրները:»—Եւ նա լուեց. գունաա դէմքի վրայ խաղաց վարդագոյն ժպիտը. իսկ մահմետականի արիւնաների աշքերում վայլատակեցին արասուրի զոյգ խոշոր կաթիլներ. զբանք ներքին յուզմունքի ամենազօրել վիժմունք էին, չէ որ նրա կատարած բարեգործութիւնը արդէն պատկուած և վարձատրուած էր բարզապէս. թերես յաւիտենականութեան երգեհոնի որտարսով ձայնը շայում էր նրա լուելիքը...

Այն օրից երկու շարաբասաիկ շաբաթներ անցան: Տեղական թերթերում մի այսպիսի ախուր լուր էր տպագրուած՝ «Հ. բաղարի յայտնի մանկավարժ, միշտ անարծաթ և շքաւոր, սակայն ամբողջ որտով նուիրուած իր պաշտած զրծին՝ Գուրզէնեանցը կնքեց իր երկայինը՝ պանդիստիւն մէջ, Զարիֆ-աղայի պանդսկում. իր գոյութեան վերջին վայրկեաններում նա իրեն անմեղ զոհ էր համարում անազորոյն բաղդի մի խաղին... և թախծութեամբ յիշում էր մանկիկների այն հաւարակութիւնը, որոց լոյս և գիտակցութիւն ներշնչելու կոչուած էր նա մի սրոշ ժամանակ:»

Հանդիսաւոր էր նրա թաղումը, գրեթէ ողբում ու լաց էր լինում բաղարի հասարակութեան սառւար մնածանութիւնը, սրտաշարժ, մելամաղձիկ, գամբանականներ խօսաւեցին և շատ պսակներ գրուեցին... մինչդեռ կենդանութեան միջոցին ոչ ոք շկամեցաւ ասածն առնել զոյն մարդի և աղնիւ մշտիկ վրայ...»

Նախկին սառացից Գուրզէնեանցի ծելունի ծնողները և մանախին մնացին զոյգին զոյգ որբիկներով օրական պարէնի կարօտ, կամարդ այբին մնացին զոյգ որբիկներով օրական պարէնի կարօտ, զրեթէ փաղոցում թափսւած, անաէր և անողաշտպան...

Այժմ զուր, Վալերիին եղորիչ և Սերգէ Մաքսիմիչ, կարնդ էր հանդիսաւ սրտով քուն լինել. Էլ նա չի բալմակ ձեր զուռը մի պահանգ ու հացի համար, մանաւանդ որ կոյր և անմիտ ամբոխը՝ ըստ առաջնոյն՝ պիտի շարունակէ յարզանաց ողջոյններով և սվաննաններով մեծարել ձեզ, իբրև մտրի լուսաւորութեան ջատագոյնիրի. տղին, մեծարել ձեզ, իբրև մտրի լուսաւորութեան ջատագոյնիրի: Եւ զուր, որպէս հմուտ ձեռքարեգործ և մարդասէր առաջաւորների: Եւ զուր, որպէս հմուտ ձեռնածուներ՝ արժանի՛ էր այլպիսի քաջալերութեան...

ԻՐ ՓՈԽԱՐԵՆ

U

Արդէն սկսուած էր յոյն-տաճկական պատերազմը, բայց անսիրտ բռնաւորի աւերիչ ուալ դեռ ներս չէր խուժել Լարիս, տակաւին վարդագոյն յոյսերով տօպորուած փաքրիկ չելեն ազգը իր մեծոգութեան առհաւատշեայ կամ ապացոյց էր համարում վերջին՝ իսկապէս յանդունքն քայլը անհամեմատ մեծ ոյժի և զօրութեան դէմ...: Տենդային եռանդ և տարօրինակ իրավանցում էր տիրում ամենայն տեղ, ուր որ խմբուած են մի քանի հսզի Աքիլլէսի զաւակներից. թէկուզ ճանապարհի վրայ, երկաթուղու, ձիաքարշի, պանդոկի, սրճարանի... մէջ, կամ նոյն իսկ վասնգաւոր փոթորկին խաղալիք դարձած՝ շիւզի նման ծովի երեսին ծփացող՝ մակոյկի, նաւակի, լաստի վրայ տար-տաք խօսում, վիճում, հալց ու փորձ անում, կշտամբում և նկովում են աշխարհի անիբաւաւթիւնը և խորհրդածում են՝ իրաքանչիւրը նրանցից՝ իրօվանն թեթեացնելու հայրենիքի կարիքը, մասնակից լինելու աղքային պատուասիրութեան վեհ և սրբազն գործին...:

Անցնում եմ Քիչնեկի «Մինապինովկայա» փողոցի, պատահում է ինձ մինը՝ իմ ծանօթ ռուս-պաշտօնեաներից.

—Համեն ես նորութիւն. —դիմում է նա ինձ:

—Ե՞նչ կայ. —Հարցնում եմ անհամբերութիւնմբ, գիտենալով, որ օրուայ հետաքրքրութեան նիւթն ու առարկան պատերազմի դաշտն է:

—Յոյները խուսափում են անօրինակ հռանդով, այդ մահքացած Արիլլէսների նշանաբանն է՝ փախուստ և փախուստ... Լարիսը առնուած է արդէն և, ասում են, որ թագաժանդ Կոնստանտինն էլ վիրաւորուած է... Հը՛, ափսոսն ես.—աւելացրեց խօսակիցս—ինչ տարակոյս, որ այս անխորհուրդ քմահաճութիւնն ու ոահնձգութիւնը շատ թանգ պիտի նոտի Աթենացոց համար:

—Այդպէս չէ,—մօտենալով մեզ և ողջունելով, ընդմիջն Սկաստավագոլի ճակատամարտում իր քաջութեամբ հոչակ ստացած մի պաշտօնաթող հելլեն-սպայ, —դարձաւոր աւանդութիւն կայ, որ երբ վերածնի չելլենի փառքը՝ Կոնստանդինը թագաւորէ և Սոփիան թա-

գուհի վերակռնուի, մեծն Կոնտանդինի և Մագուհի Սովիայի հաստատած «Այա-Սովիա» հրաշակերտ տաճարութեալ պէտք է լսուի քրիստոնէական աստուածալաշուութեան ալէլուն և պիտի բարեկ կընդուկի անսուշահոսութիւնը: Կանոնական ինքնի փարթամ մայրաքաղաքը իր ընտիր զաւակաց վարդապոյն արիւնազի պիտի վերագարձուի իր հարազատ տիրոջը... այդ մեր խորին համոզմանքն ու հաւատն է:

—Սխալուսում էք, բայց կամ, պերճախօս վաստերը հակասում են ձեր ցանկալի նախագուշակութեանը—Լարիսը՝ թիւրքի ձեռին է արդէն և արքայագին հրամանատարը վիրաւոր ու արիւնաները։ Նշանակում է՝ մի-երկու չարագուշակ պարտութիւնն ես, և ահա անարդկիսաւոնի դրոշը պիտի փողփողի հին չառաւածների վայրերում։—Միտհասկ սառնութեամբ և չեշտով վլայ բերեց ուսու-պաշտօնեան։

— 0՛, օ... այդ խիստ է և միանգամայն անարդար... սակայն գարմանալի չէ, եթէ այսպէս կաշկանդուած թողնին մեր ձեռները և եւսպական քաղաքագիւառիթիւնը շարունակէ արտօնիլ ու քաջալերել անօրէնին կատարելու դահճի անգութ դերը... ահ, միթէ անտէքունչ չայսասանի նման՝ հելենացց գեղածիծալ վայրերն ել արիւնաներկ ոպանդանոցի պէտք է վերածուին և գիտութեան ու կուլտուրայի անդրանիկ ներկայացուցիչ՝ յոյն աղջը բնաջինջ պիտի լինի աշխարհիս երեսոց...

Զոյգ, մաշուած ձեսնելով ծածկրց նա իր նիհար դէմքը: Երեաց թէ ինչպէս արտասուրի խոշոր կոհակները բերելով տկօսուած երեսը՝ մարդաբարի նման հատիկ հատիկ պլողուեցին և անհիտացան մոլուքի սպիտակ թելերի մէջ:

8

Երբ յուսափեկ և սրտայոյդ ծերունի ասպետը աճապարեց մուտքութել „Բեսսարաբեց“ թերթի խմբագրատուն, հաւասարանալու շարագուշակ իրողութեանը, խօսակիցս շարունակեց՝ զարմանալի հայրենասէր, միենայն ժամանակ յանդուգն և կամակոր ժողովուրդ են սրանք. ապացոյց Կրեաէլի խնդիբը՝ մի անհշան թիւրիմացութիւն և ահա հակառակ երսպական բալսր մեծ տէրութիւնների յըքորներին ու միջամտութեանը՝ սուր են բարձրացնում 10 անգամ աւելի ուժի և զօրութեան դէմ. յամառութեամբ ոչինչ չեն կամենում լսել և պընդում են վասօդի ծխավ հաճրեկելու քրիստոնէութեան անմեղ արիւնով մնուած և ստրուկ, անպաշտպան ժողովրդի դառնաշարչարք քրաինքով յրդիացած խյամ համայնքին. . .

—նշանակում է, որ նրանք այժմանի են գովառանքի և միծա-

բանիքի. դարձաւող ոև ստրկութիւնը անկարող է եղել իր պախառակելի զրոշմը զնել հազիւ այսօր ազատ չունչ քաշող, բայց ձիգ դարձեսվ ուութանների երկաթեայ լծի տակ հնձող այդ ընտիր ժապավագի ճակատին...

— Որբան որ պախարակելի է ստրկութեան անարդ ոգիս, սոյսքան էլ զատապարակելի է անմիտ գոռողութիւնն ու կամայկանութիւնը... ահագին զրկանքներով, դրհարերութեամբ ու արիւնով ձեռք բերուած ազգային ինքնուրբոյնութիւնն ու անկախութիւնը փանջի և նժարկել, քայլայուել և՛ նիւթապէս և՛ քաղաքականապէս—այդ բացառապէս յոյն հայրենասէբներին է յատուկ, որ՝ առնուազն՝ անմտութիւն է: Բայց առեմ մի ուրիշ միսիթարական նորութիւն էլ, մէկը՝ Քիչնեկ անուանի յոյներից, որ իր սեպհական ծախսով յունական գեղեցիկ տաճարն է չինել, որի անունով վերակաչուած է այս փողոցը...  
— Սինադինօն.

—Այս, Սինաղինոն, այսօր իր կալւածների մի մասը 200 հազար սուբլու գրաւ դնելով, իմ ներկայութեամբ՝ 150 հազար սուբլին գար սուբլու գրաւ դնելով, իմ ներկայութեամբ՝ 65 հազար տեղիս ան-Աթէնք փոխադրեց՝ իր լուսան սուբլ գործի համար. իսկ տեղիս ան-նշան յոյն գաղողթը հանգանակութեամբ 65 հազար ֆրանքի փոխա-ընտութիւն է արել արդէն. երիտասարդներից էլ բաւտկանին թուսվ կամաւորներ ուղևորուել են գէպի Յունաստան:

— Ելանի՝ այդ պազին, որի մէջ ապրում է ինքնածառաշութ սա,  
պատուասիբութեան վեհ զգացումը և զիաակցութեան ու մեծութեան  
ոգին,,,—մտածեցի ինքս ինձ և շարունակեցի ճանապարհու:

6

Երեք տարի է ահա, որ տնհաշում ճանաչում եմ Քիշնևում մի խեղճյոյն մանրավաճառի. նա հասարակաց զբոսարանի հանդէպ, «Պանախօտի» առևտրական տան սառւէրաւոր խորչերից մինում, հնաց մայթի վրայ, փոքրիկ, շարժական սեղանով «հալվա» էր վաճառում: Ընտանիքով ծանրաբենուած մարդ՝ 35-36 տարեկան: Վտիս դէմքով, վշտոտ և վատառողջ, հազիւ  $1\frac{1}{2}$  տարի է անցել, որ այս խսկապէս բաղդախնդիր «հալվուանու» գործը, շնորհիւ այս և այն յոյն խանութպահների ուշադրութեան՝ յաջող էր գնում. նա թողեց իր շարժական սեղանը «Աթլիտիկան-Հալվայով» և «Եիկոլահսկի» փողոցի մի անկիւնում նպարավաճառի մի փոքրիկ նկուղ սալքեց. այնուհետեւ լոելայն, անքան ու անդադրում աշխատանքով հայթայթում էր իր ընտանիքի օրական պարէնը և գոհ իր վիճակից, փառք էր տալիս Աստծուն, որ փոքր ի շատէ բարւոքեց իր զբութիւնը և ագատնց գաւակներն, ի

դանից-դուռ ընկած՝ հայ մուրալու վասնդից. դեռ մեծ որպին էլ օգնում էր իրան՝ կրպակի պատուհանի տուաջ, մի մեծ շիշ լիբը կիտրոնի զովացնող ջուր դրած՝ վաճառում էր ռամիկներին, արժան, շատ արժան, գաւաթը կը կապէկով, մի կոպէկով...

Սրանից մի քանի շաբաթ առաջ, յոյն ազգի քաղաքական ճգնաժամի կամ տագնապի միջոցին, պատահմամբ անց էի կենում նախկին «հալվաճու» նկուղի տուաջով, նկատեցի, որ նրա կինը և փոքրիկ երեխաները տարօրինակ շարժման մէջ են. կրպակը զատարկուած է արդէն, լիմոնի-ջրի շիշն էլ, գաւաթներն էլ վերացուած են պատուհանից. նրանք թողնում էին կրպակը իր աջող առևտով.—ինչ կայ, ինչ է պատահել.—հարցը իրան, սովորական ողջունից յետոյ:

—Ո՞չի՞նչ, կամինում իմ վերջացնել առետուրա:

—Ինչո՞ւ, չլինի՞ գրամատէր գարձար, կամ թերես ցանկանում ես Աթէնք գնալ, քո ներկայութեամբ քաջերի բանակը աւելի ստուարացնելու և զօրեղացնելու համար.—ասացի կատակով:

—Հըմ, հոգ չէ թէ «լակոտներս» անտէր կմնան, բայց քաղցից չեն կոտորուիլ. ցաւում եմ միտին, որ անկարող եմ իմ կաշին մինչեւ հայրենիք քարշ տալ... սակայն իմ փոխարէն ուղարկեցի մի աղքատիկ նպաստ—իմ լուման—սուրբ գործի համար...

Եւ յիրաւի, փաստորէն հաւասարացը ինձ, որ յոյն մանրավաճառը ամենայն ինչ, տան վերջին փոխաթն անդամ վաճառի հանելով՝ 400 ըուրիկ փող է գումարել և՝ «իր-փոխարէն» Յունաստան փոխադրել:

Նա այժմ նախնական վիճակին վերածուած՝ մի քանի փունտ «հալվա» նոյն տարարազդ սիսակով, գրած աւելի գարձեալ Պահախօսի կրպակի առջի և այնպէս պահպանում է իր ընտանիքի առօրեայ գոյութիւնը—կարողանում է մի պատառ սկ հայ մատակարարել:

Նա այժմ վշտոտ չէ, ընդհակառակը՝ ասես երջանիկ է զգում իրան, որովհետեւ գէթ իր թոյլ մատի ծայրով կարողացաւ հպել թանկագին հայրենիքի սիրտը ճնշող վիթխարի ժայռին...

## ՀԱՅ ԷՐ ՆԱ

(աւանդութիւն)

Ա.

Տասնեւութերսպակ գարի վիրջին քառորդումն էր, երջանկայիշատակ՝ «վշտալի» եփրեմ կաթուղիկոսը, իր եպիսկոպոսութեան օրով, իրը ընդհանուր նուրբակ շրջելիս է լինում աշխարհի զանազան կողմերում, ուր որ բայն են զրել և ապրում են ու, էջմիածնի հարազատ զաւակները, ի միջի այլոց նա մանում է և Բաղգատ, Ժամանակակից Օսմանիան պետութեան անուանի և ծաղկած քաղաքը, ուր հետաւոր անցեալում իշխում էին նշանաւոր խալիֆներն ու ամիրաները, ուր վերջին ժամանակներում պարում էին՝ կուսակալներն ու ընդհանուր հրամանատարները:

Մի քանի օր հիւրասիրուելով հայկական յարկի ներքին, որբազնը՝ մի բաղդաւոր գիսուածով՝ հանդիպում է երկրի կառավարիչ՝ Ահմէտ-Քեարիմ-Փաշային, որը սպիթիլ անկուտածներով ու ծոսերով գրուագած համազեստի մէջ, ակնակուռ երախակալով, սոկեառյլ սուրբ կողրից քարշ արած, արաբական թանկագին նժոյդ-ձիու վրայ, շրջապատուած թիլիապահներով ու խորհրդականներով, անսովոր յարգահեքով ու ակնածութեամբ ողջունում է սկազեստ հոգեսրականին և շարունակում է իր ճանապարհը:

—Տղակը,—ասում է սպազանը, նոյն երեկոյեան իրեն շրջապատող հայ ժողովրդին—այսօր հանդիպեց ինձ ձեր երկրի մեծ Կուսական կալը և տարօրինակ յարդանքով ընդունեց իմ սղօյնը, յարդանք՝ որ թիւրքին անհնարին էր դէպի քրիստոնեայ կիերականը: Եւ այդ երեւոյթը ես մի արտասովոր դիպուած եմ համարում... Միթէ նա սիրութը է հայ ժողովրդին. միթէ այստեղ ևս փանատիկ զուսանականի երկաթեայ ձեռը չի ճմլում խղճուկ քրիստոնէին... միթէ կարո՞ղ է օսմանիան բանակալի ներկայացուցիչը այդ աստիճան աղատամիտ լինել:

—Հալածանքը նոյնն է, ինչ որ ամենուրեք՝ կիսալուսնի հովա-

նու ներքեա, սակայն այս փաշայի նկատմամբ, հին սերնդի մէջ, ինչ որ առասպել է պատում. ենթադրում է թէ նա ծագումով հայ է, հայ ծնողների զաւակ.—պատասխանեց մի ոչ այնքան հասակաւոր մարդ:

—Հը՛, ծագումով հայ... թերես հայ լինի... տայ Աստուած, որ արդար լինի ձեր ենթադրութիւնը...—Մի քանի անգամ խորհրդաւոր կերպով արտարերեց Արքին:—Արդեօր հնարաւը չէ ստուգել այդ առեղծուածը հենց իրանից փաշայից. նա, լսա երեսյթին, բարեմիա է և թերես շ'հալածէ նրան՝ որը յաւակնութիւն ունենայ շօշափելու խորհրդաւոր մթութեան մէջ թաղուած՝ անցեալը, եթէ, իհարկէ, դա զուրկ չէ իրականութիւնից.—աւելացրեց նա, առանձին շեշտով ու աւիճով:

—Կամենում են հաւասարիացնել, որ նա եթէ ոչ հայի, զէթ Քրիստոնեայ մարդի—խաչապաշտի զաւակ է. զուցէ օրթոդոքս կամ հոռմէադաւան եկեղեցու ծիսակատարութեամբ մկրտուած,—պնդում էին ծերունիները, սակայն խնդիրը նրանումն էր թէ՝ ո՞րը հասակաւոր, ազդեցիկ մարդկանցից սրաի այնքան արիութիւն կունինար, որ ընդունակ լինէր հեղինակաւոր փաշային մի այդպիսի բարյական-մահացու հարուած հասցնել... անտարակայս ոչ ոք:

—Ես կ'զնամ Սրբազն, ես այդ մասին կ'խօսեմ փաշայի հետ.—լուեցաւ անկիւնում կծկուած՝ երիտասարդ տղայի խրոխս ձայնը:

—Այ տղայ, այ խենթ... անմիտ... ալուշ. գլխից անցել ես, ինչ է.—աղմկեցին ամեն կողմից:

—Նուպարը ձեզ նման անսիրտ չէ. նուպարը որ ա փրկարար գօրտթիւնով պիտի համարձակի խօսել փաշայի հետ, երես առ երես...—Քերմեսանդութեամբ երեսը խաչակնքելով՝ սասց նա և ծունկ շոբեց Սրբազնի օրհնութիւնն առնելու:

—Գնա, զաւակս, թորդ Տիրոջ ամենակարող աջը առաջնորդէ քեզ, օգնական և պահապան լինի...»

—Դիմ է դա, Սրբազն, խաչը վկայ՝ ապուշ է... իր յիմարսւթիւնով կարմա է մեզ բոլորիս սրախողխող անել տալ և 2եր վիճակն էլ ծանր վտանգի մատնել.—լուեց այս և այն անկիւնից, բայց նուպարը ստուէրի նման՝ չքացել, աներեսութացել էր արդէն:

Բ.

Փաշան նոր էր աւասել երեկոյեան աղօթքը և իր զարդարուն զահլինում, մտախոն կերպով, բեհեղիայ գահաւորակի վրայ ծալապատիկ նուտած՝ ծխում էր ներդիլէն: Ընդարձակ սենեակի մէջ տեղում,

ուղիղ գծով շարուած էին երեք հատ զրեթէ մարդաշափ, պղնձի աշտանակներ, բոլորչի, լայնկեկ պատուանդանով և գալարուն սիւնակներով, որոց գոգաւոր ծայրերին վառում էին կարմիր ու կանաչ ճարպի կերպները, ու ծուլի հետ մի տեսակ անախորժ խանձուածի հաս արձակելով: Ինչպէս ասացինք երկրի կաւակարչի այդ զահլիճը զարդարուած էր թանկապին արդ ու զարդով, նուրբ կերպասից էին նրա վանդակաձև պատուհանների ու նեղկակ գաների վարագոյները, ոսկեղին ժապաւէններավ և թանձն ծովերսվ եղերուած. յատակը ծածկուած էր Պարսկաստանի մանրանկար զորգերով, առաստաղը ներկայացնում էր կարծես հազարերանդ մալմարիսնից երիւրած մողայիների հրապարակ. և այդ սքանչելի քանդակները փորուած և յօրինուած էին նոճի փայտի վրայ, ոոկու և արծաթի զրուափներով ճախցուած.., փաշան հագած ունէր սոկեթել անկուտածներով զարդարուած՝ թանկապին կերպասի կառուցից՝ մի երկար, մինչեւ սրունկները համազ բաճկոն (անթարի) մետարսի զալարուն զօտիով, որի զոյգ, ստուար փնջերը բարչ էին ընկել նրա երկու կողերից. գլխին արնեցոյն ֆէս էր, որ իջնում էր մինչև ծովծորակը, կարմիր՝ տաեղնազործանդրավարտիկ. սոտերին՝ դեղնազոյն սանդալներ, ոսկեթել ժապաւէնով եղերուած: Ծանը հոգիմաշ մտատանջութեան մէջ էր նա, երբ զուան արձակ թուղած վարագոյնի ետեկից յայտնուեցաւ մի երիտասարդ տղայ, որ ակնածութեամբ ողջունեց երկրի պետին և յալգանքով ծունկ չոքեց նրա տոջն:

—Հը՛, ինչ ես կամենում.—խօսեց ալեադարդ փաշան:

—Մեծ կուսակալի թանկապին սղցութիւնը. թնդ ապրած մնայիմ լուսափայլ տէրը:

—Ասն տեսնեմ.

—Եթէ հրամայում է իմ իշխանը, եթէ արտօնում է նա ինձ:

—Ի՞նչ կայ, տսն.

—Իմ աղաշանքը ձեղանից, ողորմած փաշա, մի հակիրճ պատասխան է. սոսկ մի բառ միայն, և յուսամ, որ այդ մի բառի համար չէք դատապարտիլ ձեր անապժան ծառային, զերուն...»

—Ի՞նչ զատապարտութիւն, զաւակս, ասն, ասն տեսնեմ:

—Փաշա, կամենում էր տեղեկանալ թէ՝ իմ տէրը ծագումով ինչ աղգի է պատկանում.., այդքան միայն.

Ամպի սոսկալի սրուար կամ կայծակի բոցեղին հարուածը գուցէ պահան աղգու, ցնցով շլինէր հրնօրեայ մահմետական մեծաւորի հայնքան աղգու, ցնցով շլինէր հրնօրեայ մահմետական մեծաւորի հայնքան, որքան հապատակ հայի այդ անակնկալ հարցը: Նրա դէմքը այլա կերպուեց, ասես էլեքտարական մի զօրեղ հոսանք թափ անցաւ նրա

բոլոր երակներով, գունհատ և նիհար այտելի վրայ երեւցաւ մի տեսակ թեթե, բանազրօսիկ կարմրութիւն, ու, խոշոր աշքերը կարծես ամօթից վայր խսնարհուեցին և թխալու ամպի մի կտոր քարչ ընկաւ նրա յօնքերի հեա... հաղիւ սանձահարելով ներքին յուղմունքը, ոտի կանգնեց և դիմեց իր խօսակցին.

— Այլքան միայն, մի երեխայ յաւակնաթիւն ունի հաւաստիանալու թէ ինչ ազգի արիւն է խտզում Ահմէտ-Քեարիմ-վաշայի երակներում... և ինչ հարկաւոր է քեզ վիտենալ այդ:

— Թրովհեակ... իմ տէրը տպրած մնայ, լսել եմ, որ...

— Որ ես...

— Որ իմ տէրը ազգսվ...

— Թուրք չէ.

— Թուրք չէ:

— Հապա ինչ եմ ես:

— Ասում են թէ...

— Ի՞նչ.

— Խնայեցէք ինձ, ներեցէք համարձակութեանս.

— Ասա, խօսիր:

— Ասում են թէ՝ զուք բրիսամնէի, հայի զաւակ էք:

— Հը՛. հայի զաւակ..., յետոյ.

— Կամենում եմ այդ առթիւ աւետել եփրեմ որբազանին:

— Նշանակում է, նո՞ւ է ուղարկել քեզ ինձ մօա:

— Ո՛չ, բնաւ ոչ, վաշա.

— Լսիլ ինձ, սրգի, կարնա ևս հասկացնել հոգեսոր տիրոջ, որ իմ մասին իր լսածները ստոյդ են... սակայն...— վաշան խորը՝ հոգւոց հանեց և լսելեայն թագուց իր զահաւարակի մէջ. նրա սիրաը, ուղեղը, նեարդերը տակնուվրայ էին, մի կատաղի կոխւ էր մզում երկու տարբեր ցանկութիւնների նկատմամբ՝ երկնային անանց և երկային վաղանցուկ փառքի զգացումներ... Արժէ տրդեօր, հնազանդուելով իր ներքին ձայնին, կորսնել այն բոլորը՝ ինչ որ սաացել էր ձիգ տարբիների ընթացքում, իր գառնաշարչար աշխատանքի և կրած հաղար ու մի տեսակ զրկանքների փոխարէն...

— Նշանակում է իմ տէրը չի ժխտում իր ծագումը, այն եկիղեցին՝ ուր քաւել է նա իր սկզբնական մեղքերը, — խորհրդաւոր լուութիւնից յետոյ. շնչաց երիտասարդ տղան:

— Է՛լ բաւական է, զնա և աւետիր սրբազանին, որ իր կորսրած գասներից մէկը գարձեալ վիրագառնում է իր վարախը: — Զօրեղ շեշտով ասաց վաշան. — Եւ այդ բանը անտարակայս պէտք է զաղսնի մնայ

միր երկուորի մէջ. իսկ եթէ ժամանակից վաղ տարածուի միւսիւլմանների մէջ, հարկագրուած պիտի լինիմ քեզ անմիջապէս գլխատել տալու. լսում ես - աւելացրեց նա:

— Հնազննկ եմ իմ ալիրոջ պատուէրին,.. միանգամայն կարնա էք վստահ լինել իմ հաւասարմութեան և անպայման գաղտնապահութեանը:

— Դէհ, շտապիր, զնա, զաւակս, վաղը կէս զիշերին ևս սրբարազանի մօա կ'լինեմ. թնդ նա առանձնացած լինի և սպաօէ իմ այցին. — խեղդուկ ձայնով խօսեց ալեգարդ իշխանաւորը:

Գ.

Հայոց թաղում, մի ոչ այնքան փարթամ յարկի տակ, իր օգնական արեգայի և փոքրաւորի հետ զետեղուած էր սրբազան եփրեմը, հայ ազգի և՝ վշտալի և՝ երջանիկ Հայրապետը... նրա սիրաը լուած էր, նրա զգայուն հոգին՝ մեծ փոթորկի ժամանակ՝ նաւահանգստին մօտեցող մակոյիկ նման՝ տարսութեաւում էր երկիւլի և ուրախութեան ծովացած լսուերի մէջ. — այսօք պէտք է գտնէր նա իր մօլորուած կամ կորսուած սշխարհներից մէկին, այդ օրից էլ իր, տեղական հայ գաղայիթի և մի ուրիշ մեծ մարդի կացութիւնը պէտք է սոնկալի վտանգի ենթարկէր. ինչ կ'լինելը նրանց վիճակը, եթէ եղելութեան մասին վերահասու լինէր կառավարութիւնը կամ նոյն իսկ տիրող տարրը:

Վերջապէս խորհրդաւոր ժամին, սրբազանի ընդունաբանում յայտնուեցաւ մեծ հիւրը, որ յարսկանքով ողջունեց հոգեսոր հօրը և մինչդեռ վերջինո ստի կանգնած՝ կամենում էր զրկախառնել նրան և արտայայտել իր սրախ զգացածը, վաշան՝ երկխայի նման՝ արտասուրին աշքերին, համբուրում էր նրա ծնկները:

— Հայը, մեղայ յերկինս և առաջի քո. — արտասանեց նա, զգացուած, զողոզիւն ձայնավ:

Սյդ նրա սրասպին զղաւմն էր:  
Սրբազանը կարելցար վաթաթուեց Քեարիմ-աղայի պարանոցով և ջերմ համբայիներով ծածկեց ծերունու ճակատը:

— Ասա, այժմ, սիրելի վաշա, թէ ինչ հանգամանք հայ մարդից վաշա սաեղծեց, թէ ինչ հանգամանք քեզ օտարութեան և իսլամութեան զիրկը զլորից:

— Դա ունի իր բաւական ընդարձակ, իսկապէս սրաաշարժ պատմութիւնը, սակայն ևս կ'պատմեմ քեզ մի բանի խօսքով միայն: Ձեզ ներկայացող վաշան հայ ծնողների զաւակ է, նրա նախկին անոնը

Ցովակիմ էր, չայաստանի լոռի գաւառի՝ Դ.-պիւղից...

—*Yifit koupi qashashig:*

—Այս, այնժամ ես հաղիւ թէ՝ 16-17 տարեկան պատանի էի, երբ Օսմանցւոց և Պարսիկների միջև սոսկալի պատերազմ մղուելով առաջինները յաղթութեամբ խուժեցին մեր գիւղը և անասելի կոտորածի ու աւաբառութեան հետ, սկսուեց չարագուշակ գերեվարութիւնը, ինձ ես մի խումբ տղաների և մանէամարդ կանանց հետ գերի վարեցին գէպի այս հեռաւոր կողմը. Նախ՝ հարլագըցին ինձ խլամութիւն ընդունել, ապա՝ զինուուղական ծառայութեան մէջ պաշտօն յանձնեցին, այնուհետև 30 երկար ու ձիգ տարիների լնթացրաւմ խելքով ու դինքով պիտանի համարուեցի Սուլթանի Գահին և ասափառանքար առաջ գնացի: Բացի այդ յաջողեցաւ ինձ կնութեան առնել Քաղջատի նախկին կուսակալի գուստը և նրան արժանաւոր յաջորդ համարուել, որ և վարում եմ այդ պաշտօնիր եօթն տարիներից ի վեր...

— Ուշեմն 37 տարի է, ոլլ ընդունել ես Մուհամմէտի վարդապետութիւնը:

—Այն, այն օրից լրիւ 37 տապիներ են անցել, այժմ ես մի քանի զաւակների ծնող եմ, մէկը՝ աշխարհիս ամենաերջանիկ մարդկանցից, սակայն մի թունաւոր իժ չարաշար կրծում է իմ սիրալ. տանձում եմ ես հսկելիս... և միթէ հնարաւոր է կրօնափոխութեան և ազգութացութեան գնով ձեռք բերուած մեծութիւնը, փառքը մի արդար, պատուաւոր երկային համարել...

Փաշան զսյկ ավերի մէջ ծածկեց իր խոլչոմած զէմքը և սկսեց դառնապէս հեկեկալ:

—Այդ սխալը հնարիաւը է ուղղել, եթէ միայն քո կողմից, թանկապին փաշա, չպակասի ճշմարիտ զգջման հետ՝ սրաի արիւթիւնն ու կամքի ոյժը:

— օ՞հ, ոչ, այդ յաւիտեանս անսւղցելի կմնայ:

— Ինչու, միթէ դժուար է քեզ զարձեալ վերապասնալ բո մայրենի եկեղեցու գիրկը:

— Յանկալի է թէհ, բայց անհնարին է; սրբազն, անհնարին է, որովհետեւ ես սիրում եմ իմ ընտանիքին, սիրում եմ ոչնչով փոխարինելի իմ գաւակներին...»

— «Որ սիրէ զհայը կամ զմայը առաւել քան զիս, չէ ինձ արժանի՛: Եւ որ սիրէ զուսար կամ զդուսար առաւել քան զիս, չէ ինձ արժանի՛: Եւ որ աշ առնու զիսաշ իր և զայ զհետ իմ, չէ ինձ արժանի՛: Որ գտանէ զանցն իր, կորուսէ զնա և որ կորուսէ զանձն իր վասն ի մ գտցէ զնա:»—Այդպէս է խօսում աշխարհի Փրկիշը այն

մարդկանց հետ, որոնք ցանկանում են աշակերտել Նրան և երկնային անհանգիւթ երջանկութիւնն ու անթառամ պատկը վաստակել:

—Թույլ տուէք ուրիմն մտածել այդ մասին.

Երկու օրից յետոյ Անմլտ-Քեսարիմ-Փաշան յահճնելով սրբազնին  
մի խօչոր գումար, հազորագիւտ ակնեղիննել և զարդեց, խնդրեց, որ  
անլապազ էջմիածին վերադառնայ և սպասէ իր գալստեան.

—Մայր-Ծիռում,—ասաց նա—ևս գուցէ ներկայական ձեզ աղքատիկ ցնցուախների մէջ, գուցէ մերկ և քաղցած. ահա վճարում եմ ես ձեզ այսակդ, որ իմ հոգու համար աղօթող լինիք և, առհասարակ, ահնծանօթ շրջանում հոգաք իմ առօրեայ գոյութեան կարիքը և թոյլ շտափ, որ Բաղդատի կուսակալը մի սոսկական Յովակիմ դառնալով ծերութեան մէջ ձեռ միկնէ հաց մուրալու:

۹

የከንድር እና በዚህ ስነዎች ተከራክሮች

Փաշալի ապաբանկում տիրում էր մի տեսակ խորհրդաւոր լոռ-թիւն. Նրա մատաղահաս սիրուն աղջիկներն ու նորաքողբոյն տղայիւնակում էին խօսք քնի մէջ:

Նիջարանի մէջ տեղում, բարձր, արծաթեայ աշտանակի վրայ փայլիքում էր այրուսպ ճրագը, այդ պահուն մի ոգի, ուրուականի նման՝ սաւառնում էր հարեմի և առհասարակ հարուստ ապարանքի շուրջը. դա ինքը՝ Ահմէտ-Քեազիմն էր, որ սկզբում մօտենալով սեաշեայ, տակաւին գեղեցկութեան նուրբ զիմագծերն ու հետքերը պահպանած թրքուհուն, իր տասնեակ տարիների սիրելի և հաւատարիմ լծակցին, մինմօւին համբուրեց նրա վարդի նման կարմիր այտերը.

—Մնաս բարե, սիրելիդ իմ, մնաս բարե անգինդ և ասսուանալիդ իմ.—Հշնջաց նա, արտասուրի մի քանի խոշոր կաթիլներ, վազրդիան անհապակ ցողի նման շարսւեցին կոսջ դէմքի ու կուրծքի վրայ, նրանք գուժում էին բախտատոր յիշաղութիւններով այնքան հարուստ միտթեան ընդհատումը.—Եպա նա հերթով մօաեցաւ իր հասունացած զաւակներին, նոյնպիսի անձկութեամբ համբուրեց նրանց էլ: Կատարելով ծնողական բուռն սիրոյ վերջին պարաքը, փաշան հազիւ տիրելով ինքն իրան, հազիւ սանձահարելով ներքին յուզմունքը ու հոգու այնքան դառն ալիկածութիւնը, սրբեց խամրած աշքերից առատութեամբ հոսող լեզի արտասուրը ու մտաւ ձիանց: Ձիանց ցում արդէն պատրաստ էր իր անձնուէր և հաւատարիմ թիկնապահը ցում արդէն պատրաստ էր և արտարական երեք ընտափի երիվարեներ, որոնցից մէկը իր, միւրը՝ ուղեկցի և երբորդը՝ սսկու ու պաշարեղէնի բեսնակիլն էր:

Ահմէտ-Քեարիմ-աղան նստեց ձիու՝ ոսկով ու արծաթով ծեփուածթամբին, մի անգամ ևս նայեց իր դառնաշարչար քրամինքով ու աշխատութեամբ կասուցուած այն ահապին և հոյսկապ շինութեանը որի մէջ այդ խորհմագուր պահուն, իրենց հարազատին վերստին գրկելու, նրան՝ բարի առաւօտ ասելու անվրդով սրավ, անոյշ քնի մէջ, հանգիստ մրափում էին ամուսինն ու գաւակները...

Մի անբացարելի զօրութիւն առաջ նրան դէպի զազափարականը, դէպի բարին ու վսեմը, փաշան ուժգին խթեց արծաթանոյլ ասպանդակները ձիու փորին և իր հաւատարիմ զինակրի հետ, գիշերային մթութեան ու մշուշի մէջ աներեսութացաւ նա թաղդատի խորտ ու բորտ փողոցներս...

Ե.

— Իսմայիլ, տեսնում ես այդ սրածայր գմբէթները, տեսնում ես կանաչ ծառերի միջից երեացող այդ հոկայ, այդ վիթխարի շինութիւնը:

— Տեսնում եմ, աէր իմ:

— Դա քրիստոնէական հաւատի կենդրոնավայրն է, զա չայց ազգի մեծութեան, փառքի ու պարծանիքի որորանն ու յենարանն է..., այդտեղ է աղօթել չայտաանի մեծ լուսաւորիչ Գրիգորը. զա շնուած է հայոց հզօր՝ Տրդատ թագաւորի ձեռքով, Փրկչի տուած լուսեղին ուրուագծի համաձայն, երբ նա իջել էր այնտեղ երկնային կամարներից՝ լուսեղին սանդուղքներով... ես էլ, Իսմայիլ, այդ մեծ խորհրդաբանի հարազատ զաւակն եմ. գոյութեանս առաջին օրերում իմ սկզբնական մեղքերը ես քաւեցի այդ տաճարի մէջ, այժմ, զարձեալ կամենում եմ մանել այնտեղ՝ երկար ու ձիգ տարիների մեղքերս նրա մէջ քաւելու... այդ սե-սե քարերից գուրս չկայ ինձ համար փրկութիւն, չկայ և նշ մի հոգեկան միսիթարութիւն ու հանգիստ,,, Դէհ, զաւակս, գու ազնա ես քս հայրենիքը վերադառնալու... — Ցուզուած սրաով աւելացըց փաշան:

— Նշանակում է ես մի գուժկան, մի բօթաբեր պիտի լինեմ ձեր ընտանիքի, Բաղդատի իշխանների և ազգաբնակութեան համար:

— Ասա, որ Ահմէտ-Քեարիմ-փաշան հայ եկեղեցու զաւակ լինելով՝ ցանկացաւ իր վերջին օրերը հարազատ ծնողի գրկում անցնել, միսիթարել և միսիթարուիլ հոգեպէս. ասա, որ իսլամութեան համար այլես Ահմէտ-փաշայ չկայ... առ այս շողակնեայ մատանին և յանձնիք կնոջս, զա մէր ամուսնութեան առհաւատչեան կամ մտերմութեան օդակն է, տուր նրան և ասա, որ իր սիրելի ամուսինը յաւիտեանս

արձակում է նրան և արտօնում է ուրիշի հետ ամուսնալու... գնաս բարե, չնորհակալ հմ քեզանից:

Թուրք զինուորականը ապշած այդպիսի տարօրինակ՝ ցնցող երևյթով, մինչդեռ իր անելիքն էր մտածում, փաշան շարժեց մտրակը և նրա նժոյգ ձին մոնչեց ու սլաքի արագութեամբ թռաւ ու ծածկուեց սաղարթախիտ ծառերի ստուէրների տակ:

\* \*

Տակտին կենդանի աւանդութիւնը հաւաստացնում է, որ Եփրեմ եպիսկոպոսի միջնորդութեամբ էջմիածնի չայրապետից ներումն ստանալով՝ Ահմէտ-Քեարիմ-փաշան, որպէս Քրիստոնէի զաւակ՝ վերստին քրիստոնէական եկեղեցու գիրկ ընկանուեց և իր կեանքի վերջին օրերը անցնելով իր ծննդավայր՝ Դ.-գիւղում, վախճանեցաւ այնտեղ և թաղուեցաւ հայ ծնողների և եղբայրների հանգստաբանների մօտ:

## ԱՐԺԱՆԱՒՐ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ

(իրական անցք)

Ա.

Հին՝ Արշարունիաց գաւառի սահմանագլխում, այժմեան՝ Ալաճա  
և եաղլուճա լեռների ճիշտ մէջ տեղում, Տիկոս գետակի աջ և ձախ  
ափերի հետ, համանուն գիւղի արեւմտեան մասում դրուած է Ջիրակ  
և Արշարունիք գաւառների նախկին տիրապետ՝ Սահակ Կամսարականի՝  
մեզանից 13 զար առաջ կանգնած՝ հրաշակերտ մնաստանը, որ նո-  
րահարսի նման՝ զեռ բողը գլխին, հզարտ բազմել է... բայց աշ, նա  
այժմ նորահարս չէ, այլ բազզակուսոյ մուրացիկ, մի սպաւոր կին է,  
որ սկ բօղն երեսին՝ ցամաքած ձեռները անհամարձակ պարզած՝ պա-  
տահող անցորդի ողորմածութիւնն ու զթութիւնն է հայցում... նա  
մի մարմնացած զժբազութիւն է, քայլայուած ու բիկրիկուած, մեր-  
կացած զարդերից ու պաճուճանքներից, զսնից-զսու շրջող բազդա-  
կորոյս մեծատան նման՝ անհամարձակ, վախկոտ և ամաշկոտ...

Սահակ Կամսարականի փարթամ զանձարանը այլ ևս չի մաշ-  
տում նրա վայելիքի ու պշտանիքի համար. Խոսրովանոյշ բարեպաշտ  
թագուհին չի մերձենում շոյել կամ ճախացնել նրա վառաւորութիւնն  
ու փարթամութիւնը. Այլի կնոջ նման՝ սկ ու սուզ հագած՝ նա լաց է  
լինում զառնապէս. և նրա խամբած աշքերից զլորուող աղի ու լեղի  
արտասուլները միախառնուելով բողոքաւոլ տառակի կոհակներին՝  
րիմ անէծք կարդալով՝ միանում են հարազատ Արտօսին.. կիսա-  
վայրենի քրդի ու կրօնամոլ թիւբքի բրիչներն ու մուրճերը անյագ  
և անխնայ խոցոտում են նրա սիրալ և խպառ տապալելու ճիզը  
թափում, գիշատող անգղիկն ու սեիկ ագռաւները բոյն են զրել նրա  
կրծքի մէջ և անկուշա ծծում են կինսական հիւթը...

Դիտէք թէ ինչպիսի ուշազբառ, գեղեցիկ ու հիառքանչ, նա և  
աղէխարչ ու սրածմլիկ դէպքեր ու անցքեր պիտի պատմէ նա իր  
ձիգ գտրերի անցեալից, եթէ միայն զօրէ նրա լեզուն. բայց նա հա-  
մըլ է, նա մի անվերծանելի պատմութիւն է, մի շխօսական ալեար է  
կամ, աւելի ճիշտ մի պապանձուած ու հալածուած մուրացիկ...

1877 թուականի ամռան վերջերամն էր. բնութիւնը թէև տեղ-  
տեղ մերկանում էր իր գեղասպիւռ կատարելութիւնից, թէև գաշտերի  
ու բլուրների բուսականութիւնը դեղնել ու թոշնել էր, սակայն Տի-  
կոռի ձորակում, հինորեայ հաստաբուն ընկուղենիները, զեղձի ու  
տանձի ծառերը իրենց պատուներսվ ծանրաբեռնուած՝ վկայւում էին  
Տիկոռի բնսւթեան կարողութիւնն ու գեղեցկութիւնը, յիշեցնում էին  
նաև չայտատան աշխարհի բարեբերութիւնն ու ճոխութիւնը. հաղա-  
րւոր տարիներ նրանք շնչել ու ապլել էին նոյն վանքի ստուէրի տակ.  
նոյն վայրում ծլել ու ծաղկել, պտղել ու թորշումել էին... բայց այժմ  
մենաստանի նման՝ նրանց համար էլ կեանքի և մահուան ճգնաժամն  
էր: Հայ ժողովաւրդը սրտատրով սպասում էր այն բարերաստիկ վայր-  
կենին, երբ կարող կ'լինէր խսպառ թօթափել անարդ սարկութեան  
դարաւոր լուծը. օսմանցու հալածանքն ու բռնութիւնը այլ ևս ան-  
տանելի էր գարձել նրա համար... Եւ ահա նոյն ժողովրդեան նկր-  
կայացուցիչների առաջնորդութեամբ երեսում են ոռուական վայլվազ  
սուխները. երեսում է ինը գեղեցկատես և վայելչակաղմ, հեղահամ-  
բոյր և հնազանդի ոռուական զօրափար՝ թէհրուտ Զելկովիկեանը. նրա  
ոսկեգոյն նժոյդ ձին խաղալով ու խայտալով ոստուառում և թուշքներ է  
գործում իր տիրոջ սիրագործութեանը մի ժամ առաջ ականատես  
և մասնակից լինելու... նշշւմ է ճակատամարտի գոռ վիզը, տե-  
ղում է գնդակի տարափը, պարզամիտ հայ-շինականը ուսու զօրքի  
տուաջն ընկած՝ պարզում է նրան թշնամու տեղագրութիւնը. պար-  
զում է և օսմանցու ուազմական վիճակը...

Թնդ զոհ գնան բիւրաւոր կեանքեր. թնդ կոտրուի և հայ յօ-  
ժարակամը, զինուորը, զօրափարը. գեղջուկն ու խաժամսւժը. թնդ  
ուումքի հուրն ու երկաթը ամեն ինչ ամայութեան ու տերի մասնէ.—  
շէ որ հնչել է արդէն քրիստոնէից փրկութեան և կատանքների ազա-  
տութեան ցանկալի ժամը... մի կարճ միջոց ևս, և ահա—վարդագոյն  
յոյսների մարմնացումն—թըրական կիսալուսինը փշուած եղջիւրներով,  
նուտղած ու շնչասպառ տարածուած պիտի լինի Փրկչական քառա-  
թե խաչի առջե...

Անուրանալի է, որ սկսեալ քրիստոնէութեան հէից տուաջին օրից  
հայի գոյութիւնը պահպանուել է արտաքին հալածանքների զէմ կրօ-  
նի վահանով. եկեղեցու սրբազն որմերը ամենազօրեղ պատնէշներ  
են դարձել նենդամիտ ու արենարբառ առպատակի առաջ: Հայկական

հկեղեցին և՝ մարմնաւոր և՛ հոգեսր ապաստանարան ու նեցուկ է եղել.  
19 գար անլինդհատ մաքասել է նա ներքին ու արտարին հալա-  
ծանըների դէմ...

Զելկովիկեան զեներալի երեալուց յետոյ 24 ժամ էր անցել.  
ուսուաց բանակը յետ էր նահանջել արդէն և Տիկոռի ըրջակայրում  
Ալանա-լիւան աջ և ձախ կողերի հետ ու կատարներին վիտում էր  
թիւլք զօրքերի անհամար բազմութիւնը. Տիկոռու մենաստանը ըրջա-  
պատուած էր նրանց ահարկու զօրութեամբ. շեշտակի շալուած էին  
վաշտային թնդանօթները, որոնք մնում էին զօրափարի մի ակնար-  
կին՝ ամեն ինչ մեռելութեան մատնելու... իսկ հայ ժողովաւրդը իր  
ծխատէր բահանայով հանդերձ խանուած էր եկեղեցու թերերի վրայ,  
նրա տանիքում. այնտեղ՝ ծերերը աղօթք են մրմնջում, նորատի կա-  
հայք սրտամորմոք լաց ու շիւան անում, երեխալք այդ արարուինակ  
իրարանցումից շփոթուած՝ ճղճում ու աղէխալք աղաղակներ արձա-  
կում... երիտասարդ տղայք՝ հրադինները ձեռքերին՝ պատրաստում են  
վրէժառութեան. իսկ տեղական Յովհաննէս բահանան, Մովսիսի նման՝  
զոյգ բազուկները զէսի երկինք պարզած՝ նրա ողորմածութիւնն է  
հայցում. նա էլ ճիգն է թափում աղատել իր խսրայէլը անողոք Փա-  
րաւոնի ճանկերից: Թուրքերը պահանջում են լսելեայն անձնատուր  
լինել, պահանջում են կամովին պարզել իրենց պարանոցները թշնա-  
մու պերի տուաջ, իրենց պատիւը, հարսներն ու կոյս աղջիկնելը՝  
վիշտիչ զօրքերի զագիր հաճոյքին յանձնել...

Հայը այլ ևս անկարող է մարտնչիլ. խարխափած եկե-  
ղեցու ու քարերը անլինդունակ են ոռումքերի զէմ կոռւելու. թշնա-  
մին՝ անսիրտ է և անսովք, նա պահանջում է, որ արիւնով տուեծեն  
այն չարութեան համար, որ նրանք տիրանինգութեամբ նպաստեցին  
թշնամու կարողութեանը—պատերազմական զօրեկ կէտերն ու երկիրը  
զրաւելու:

«Քաջ և բարի հովիւը պիտի զոհէ իր անձը՝ հօտի բարօրու-  
թեան համար:»—Տէր Յովհաննէսը բուռն հաւատով և զգացուած՝  
թիւլք կենարար մարմնով և արիւ-  
մատոյց իր վերջին պատարագը. Տէրոջ կենարար մարմնով և արիւ-  
մով զրահաւորից իր հօտին և ինքը զլիսեկոր սազմոս մրմնջալով,  
վայր իջաւ ներքին աստիճաններից, հոգի բաղող շառաչով ճռուացին  
տաճարի երկաթագամ զաները. թնդաց ու ցնցեց յուսահաս ժողովրդի  
ու սիրտն ու հոգին և նա հպարտ քալիերով, անվեհել նայուածքով ու  
զոռող զէմքով ներկայացաւ ընդհանուր հրամատարին.

Կաղի-Մուխթար-փաշան փափուկ զահոյկի վրայ թեկն ընկած՝  
փոքրիկ կթղայով զառն սուրճ էր վայելում.

—Տէր—ասաց քահանան—եկել եմ քաւելու իմ մեղքը, ես ինքս էի սաւոնեցին ասածնորդողը. ինքս էի միայն մոլորեցնողը գիւղական ժողովրդին Օսմանիան կառավարութեան և Զեր բանակի դէմ. խնայիք իմ հօախին, սրավճեան նա անպարտ է և տնմեղ. մի ժամանիք Սուլթանի սաւը հպատակի արեան մէջ, ձեր առջնն է ահա իսկական մհջապարտի պարանցը...—և նա ծունկ չոքած՝ մեկնեց իր պարանցը սպասելով դահճի հարուածին:

—Վեր կաց, յարգելի Քէշիշ—ասոյ մեծահոգի հպամանատարը—դու կատարեցիք քո բարոյական պարտքը և ես սիրում եմ պարտաճանաչ մարդկանց. նրանք արժանի են ամենայն յարգահիքի ու ներդրութեան... ազնա ես դու, աղաս է և քո եկեղեցին ու ժողովրդը...

Այդ խօսքերի արձագանքը տակաւին լսում է Տէր-Յովհաննէսը, կանգնած է և հրաշակերա մենաստանիը...

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՐԻԿԱՆ

Ա.

Պապիկը թէն քաղաքում ծնուած ու ոնուած՝ բայց չքաւոր և իսկապէս գեղջուկ ծնողների զաւակ էր. մանկական օրերից նրան աւանդած վաս գաստիարակութիւնը, շրջողիկ և ապականուած վարքի տէր ընկերների շրջանը, բարոյապէս սպանով ազգեցութիւն ունեցան նրա վրայ և նա մի հին մանկավարժուհու մօտ աւարտելով հայկական տառերի ուսմունքը, ուս զրեց կեանքի այն նեխուած ասպարիզում, որ ժողովուն կոչում է՝ սրիկայութիւն։ Նրան ծանոթ էր բաղդախնդիր և հացկատակ թափառաշրջիկների բազմութիւնը, գինեաների ամեն մի խորշը, փողոցային կամ անտակ կանանց օթեանները, տւաղակների խորշերը... Պապիկը՝ ասես՝ գործադրում էր ամենայն հուանդ, ճիգ ու ջանք վայելչապէս պսակելու այն յօյսերը, որ նա ստանձնել էր սրիկայութեան անունով, որ նրա վրայ դրել էր իր նման ընկերների խումբը... իսկ ծնողական խրատներն ու սպառնալիքները անկարսող եղան ծառայել ցանկալի նպատակի. Պապիկի վարքը միանդամայն անուղղելի էր, յանդուզն և անդուսպ:

Դեռ պատանեկական թարմ և անփոյթ հասակում Պապիկի ձեռքով գտատարկում էին, ասանց այն էլ չքաւոր, հօր զրպանները. իսկ մօր արկղը, որի մէջ պահում էին նրա հայրենական համեստ օժիքը, բարեկամների և ամուսնի նուէրները և, ընդհանրապէս, փոքր ի շատէ արժէքաւոր իլեղինները, վաղուց արգէն զօհ էին զնացել նրա վայրկանական համույթներին. թղթախաղի, արբեցութեան և զանազան պակնական համույթների... և այդ ըստրի համար իզուր էին հօր խտրակելի մոլութիւնների... և այդ ըստրի համար իզուր էին հօր ծանր հաբուածները, բարեկամների սրտացաւ խրառը, սիրազ մօր աղաշանքն ու արտասուրք, իսկ նենդամիտ մարդկանց արհումարհալից ծիծաղը երբէք ազգեցութիւն չունեցան նրա վրայ. նա իր անխործակելի կամքի և յամառ «ենո-ի տէրն էր... Արբեցութեան, աւազատակելի կամքի և յամառ «ենո-ի տէրն էր... Արբեցութեան, կութեան և միանդամայն ապականուած բարոյականութեան մէջ նա կութեան և միանդամայն ապականուած բարոյականութեան մէջ նա կատակնութիւն ունէր զտնելու՝ մարդկային կոչման վայել-վսիմ կողմէին ու առաւելութիւնները...

Մինչդեռ դժբաղդ ծնողները օրական պարէնի կարօտ, փոքրա-հասակ քոյրերը և նորաբոլոց եղայրները մերկ և բոկոսն, այս կամ այն մեծատան սեղանի փշանքներով հազիւ. թէ կարողանում էին պահպանել իրենց թշուառ գոյութիւնը աշխարհիս երեսին, Պապիկը թանկագին շրերով զուգուած, 3-4 փունտ ծանրութեամբ արծաթիսկեզօծ կամարը մէջքին, արծաթապատ, գեղեցիկ ծխաքարշը բերա-նում, գլխարկը թեք զրած՝ կառքի մէջ, ոտք՝ ոտի վրայ, գինու շինու բաժակը ձեռին, «աղրէլ աղոց» հետ շընում էր քաղաքի փողոցներով և հրապարակներով, իրենց քամտկից քարշ տալով կառքերի մի ամբողջ կարաւան, երգիշների ու նուռագածուների խմբեր. առա-ջինների բարձրածայն «ուռան» ու «կեցցէ»-ները խառնուելով զուռնի ծվծվոցի հետ՝ իրենց աններդաշնակութիւնով ականջ էին խլացնում. իսկ յաճախ կրկնուող «հոգու ու հաւատի» սարսափելի հայհոյանքները, որ առատօքին տեղում էին այս և այն պատուաւոր, պատահական անցորդի զլիին... կարճատես ժամանակից յետոյ, այդ, ինըքանիքեան զազրալի զուարծութեանը կամ «քէֆին» հետեւում է գանահարութիւն, կուտ և արնհեղութիւն. ստեղծւում և յաջորդում էին միմեանց անվերջանալի գժտութիւնների ու զադանութիւնների պատկերները, մէկը միւսից սրատաճմիկ, ցնցող, այլանդակ ու արիւնոտ,.. սակայն Պապիկը պէտք է ասել, որ ստանայական աջողութեան հետ՝ ծանր բաղուկ և լաւ ոյժ ունէր:

3

Յուսաբեկ ծնողների կարծիքով Պապիկին յետ պահելու այդպիսի  
կորսատարեր և սպանող սովորութեան մոլար ճանապարհից մի ուրիշ  
հնար չկար, եթէ ոչ ծխառէր քահանայի, սրտացաւ հոգևոր հօր առա-  
ջարկութեան համաձայն՝ ամուսնացնել նրան գովանի վարքի և բարքի  
տէր՝ հազիւ 15 գարուններ բոլորած՝ գեղեցիկ աղջկայ հետ:

Պապիկի նման՝ լիչպէս սովորաբար կոչում են՝ «Լօթի-տղի» համար յաւիտեան կապուելը մէկի հետ թէի օտարութի և իսկապէս խորթ երևոյթ էր, բայց նա զիջաւ ծնողաց լաց ու թացին. ամուսնական կեանքը՝ Պապիկի նկատմամբ՝ ոչ թէ նրա համար էր, որ ընտանիքի պատուաւոր հայր լինի, բարի սերունդ առաջացնի մարդկային հասարակութեանը՝ այլ նրա համար, որ շատերի հետ մի ուրիշ կին ետ ունենար, որ կատարած լինի մի քաղաքացիական՝ պարզ և տաշրական՝ պարտաւորութիւն...

Ամուսնութիւնից յետոյ Պապիկը դարձեալ նոյն սրբիկան մնաց. նա չզգաց ամուսնական լծի ծանրութիւնը և ոչ էլ նրա տանքան քաղցր վայելքը. նրա վարքը՝ լսա բարոյականին՝ աւելի խորասուզուեց ապա- կանութեան տղմի մէջ...

Ծանօթ մարզը չէր կարող հաւատ լնծայիկ իր տեսածին, սա-  
կայն դա ճշմարիտ իրողութիւն էր, որ խարերայ Պապիկը դեռ ամուսնի  
կինդանութեան ժամանակ երկրորդ անգամ ամսաւնանում է «քաղա-  
քամբ» 5 հազար լուսքլի օժիտով, մի այլ աղջկայ հետ, թէև, փա-  
կագծի մէջ ասենք, որ այդ օրիսորդն էլ շաբավով հանդիպել էր մի քանի  
փեսացուների... ըստ Տփիտսեցց՝ «իրիք քսան» տարիք ունէր. փոքր  
ինչ նիհար էր և ու մազերը սպիտակի ստուար խառնուրդով հիւս-  
ուած...

— Քաղքիմէն չի, ամա, գէթաղփա, ուփրօ լաւ փուղ ունի, կոսէ. Գումրումը՝ կոսէ, իրիք էտաժի վրայ շինած մեծ-մեծ անիլ ունի, կոսէ... — Յուսաղբում էին հարսնցուին շատ «չար ու բարիի» հանդիպած՝ փորձառու պասանելը:

Ասառածային տաճարում նրանք երգուեցին հաւատարիմ և հնաղանդ լինել միմիանց, մի սիրտ, մի հոգի և մի մարմին զառնալ, բայց մշանջնական անխորտակելի կապը, որով իր թէ՝ կաշկանդ էին զոյկ ամոլները, հաստատուն կամ երկարատի չեղաւ. միդուած էին զոյկ ամոլները, հաղարաւոր ոսւրլիները իր զբանում ծըրաբած՝ երկու ամսից յևաոյ, հաղարաւոր ոսւրլիները իր զբանում ծըրաբած՝ մեր երիտասարդ Պապիկը սանահարելով ուխտ և երգում, անհետացաւ «բաղըեմէն»:

۹

Ընդունակ լինելով օգուտ քաղել պատեհ դէպքից՝ Պապիկը հարուստ գրպանավ, կոկիկ և վայելուշ տալազի մէջ երեխցաւ թիւբական ճոխ և փարթամ մայրաքաղաքի՝ Կ. Պօլսի՝ ընդարձակ հրապարակներում. և փարթամ մայրաքաղաքի՝ Կ. Պօլսի՝ ընդարձակ հրապարակներում. չիւբանական մէկում, ուր տպրում էր նա մեծ մարդին վայել զքե- զութեամբ...

Եյդ աեղ, միջին գաստկարգի շըշանուս, պատուալով ըստուն  
լութիւն գտնելով՝ անտարակոյս շատ ծնողների աշքեր անբաժան էին  
նրանից. և, Պապիկի համար, այդ միջիթալական երևոյթը երկարատև  
չեղաւ, որովհետեւ յաջողեցաւ նրան ամուսնանալ մի գեղատեսիլ, շափի  
ու շափի նման, մանկահասակ օրիսողի հետ, որը հարսւստ էր՝ զովանի  
վարքով ու ծանրակշիռ օժիառվ։ Զուտավ հանգամանքները կերպա-  
րանափոխուեցին, լուծուեցաւ Պապիկի խարէութեան թալիսման և նա  
երեաց գաղեմի բիւղանդական քաղաքումն էլ իլ բնական գոյնով..  
Այդ ինքըստինքեան տղեղ և անհաճոյ երևոյթը հարկադրեց նրան մի  
գայրեան առաջ թողնելով երբորդ ամուսնին՝ հեռանալ մի ուրիշ  
անձանօթ երկիր։

Փոքրիկ, գաւառական բաղաբներից մինում, աւազակաւթեան և ուրիշ եղեռնագործութիւնների համար ձերբակալուեցաւ նա, ապականուած մժնոլորտի, մութ և խաւար բանդի ղնդաններում Պապիկը տարիներով ապաշխարեց և աքնեցաւ. և այդ ժանր վիճակը գուցէ անվերջանալի լինէր.—Տաճկական անսիրտ և գաղանաբարոյ պաշտօնեանների ճիրաններից աղատուելու մի այլ հնար չկար, եթէ ոչ թըլպատութեամբ բաւէր իր յանցանքը և ամուսնանար ուղղափառ թըրքունու հետ:

Խումականութեան մէջ մեր Պապիկը կամ Օսման-էֆէնդին—կատարեալ վառք և պատի էր վայելում. նա ընդունուած էր զրեթէ առանց բացառութեան՝ ժողովրդի բոլոր խաւերում. նրան մեծարում և յարգում էր տեղական գայլմագամը, մօլանիրի խումբն ու կալուածատէր բէկը.., և այդ բոլորը նրա համար, որ նա չերմեռանդ մահմետական էր, որ հայութեանը գաւաճան էր և ատող, որ Քրիստոնէական հաւատին՝ անհաշտ թշնամի էր... Սակայն այդ զրտութիւնն էլ երկարաւու չեղաւ. ժամանակի հետ հանգամանքներն էլ վտփոխուեցին և գինեմոլութիւնը, որ Մուհամմէար օրէնքով խստիւ արդեւում էր հաւատացեալներին, զլորեց նրան անպատճութեան, հալծանքի և պատժապարտութեան դիրէ: Օսման-էֆէնդին անիծելով իր ճակատագիրը, որոշեց խոյս տալ մի ուրիշ երկիր—դէպի իր հայրենի բաղաքը...

Ե.

Պապիկի հայրենական տանից և իրեն սիրող ամուսնի զրկից բաժանուելուց յետոյ, բաւական ձիգ տարիներ էին անցել. նրա վաղաթառամ ծնողները վազուց արդէն մտել էին մայր-հողի ծոց. խոկինդ կինը իր միակ զաւակի հետ, բազուկների արդար աշխատանքով շարունակում էր պահպանել իր կոչումը, պատիւն ու իզնուկ գոյութիւնը տառասկոտ աշխարհի երեսին...

Կրօնափսի և անսիրտ հայլ մօանալով իր հայրենի երկրին, մտածեց մի անգամ ևս ամուսնանալ, մի անգամ էլ թարմանալ և իր պարանոցը ճկել աշխարհի բաղցրութեան, վարդեղէն լծի տակ... և ահա անմեղ շինականի մատագահաս աղջիկը բուռն սիրով և հագեղմայլութեամբ զրկախանուում էր նրան...

Պապիկի հինգերորդ օրինաւոր ամուսնութիւնից շատ ժամանակ չէր անցել, որ նրա կատարած բոլոր եղեռնագործութիւնները յայտնուեցան աշխարհին. վերջին պսակի խորհրդակատար քահանան խիստ պատժուեց հոգեոսր իշխանութեան ձեռքով. իսկ Պապիկը ենթարկուեցաւ միմիայն եկեղեցական բանադրանքի. այդ բանը սասաիկ շարժեց

նրա զայրոյթը և նա՝ մ'ը հնարագէա և ճարպիկ սրիկան աճապարեց օգուտ քաղել յարմարաւոր զէպից, մարդորսների «արկղից» մի կորպիկ գումար սաանալով և փոքր ի շատէ ապահովելով իր կացութիւնը ըստ նիւթականին, մտաւ բողոքական եղբայրների զրօշակի ներքի:

\*  
\*

Այժմ գուք ահսնում էք նրան «Փարմասօն» անունով մկրտուած՝ այս և այն գիւղի անկինում, պարզամիտ և անփորձ հայ-լուստուարշական շինականների շրջանում, յաճախ՝ անհովիւ փարախի մէջ, Աւետարանի փրկարար լոյսը տարածելիս...

## ՀԱՅԻ-ԽԱՅՈՆ

Ա.

Զմեռ էր, օդի սառնութիւնն ու աննկարագրելի ցըտաշունչ քամին անհնարին էին զարձնում երթեեկութիւնը, զբսում սասնամանկը չափում էր 23-25 ստաֆան. յիբալի զարմացքս մեծ եղաւ, երբ այդ անհնարին պահուն ներս խուժեցին իմ ընակարանը, աղքատիկ ցնցոտիների մէջ, հազիւ իրենց մերկութիւնը ծածկած՝ բոկոտն ու զլխաբաց մի խումբ երկաներ մանուկներ իրենց մեռելատիպ ծնողմօր հետ միասին. նրանք եթէ ոչ իսպառ սառած՝ այնքան էլ հեռու չէին ցրատհար լինելուց. կապտած մարմնով, դալուկ ու ցամաքած գէմրով... զարմացքս կրկնապատկուեց, զալարուեցին աղկիներս, ոիրոս լցուեց անսասելի զառնութիւնով, երբ վերահաս եղայ և շօշափեցի տարաբախտ կնոջ ողորմելի զրութեան էական չարժառիթները. նա էլ խճառել ու բռնուել էր տիրահանչակ՝ չաշի-խաչօյի, հայկական այդ անսիրտ Զաքի-վաշայի սպանող ցանցում, և այդ խորհրդաւոր ծուանսիրտ Զաքի-վաշայի սպանող ցանցում, և այդ առից, պէտք է փակագծի մէջ ասենք, որ յաճախ վրիպում է օրէնքի արդար զայրոյթը.—վաշխառուները ամենաւել հալածուեցին խստութեամբ, իսկ մեր չաճին... մեր չաճին միղիէի գաղանական անգթութիւնները. արենարբու հրօսակի տէզն ու մահաշունչ աշտէն... և որից, պէտք է փակագծի մէջ ասենք, որ յաճախ վրիպում է օրէնքի արդար զայրոյթը.—վաշխառուները ամենաւել հալածուեցին խստութեամբ, իսկ մեր չաճին... մեր չաճին միղիէի գաղանական անգթութիւնները. արենարբու հրօսակի տէզն ու հասարակաց կարծիքն ու դատաստանը՝ մեղանում՝ կամ բնութ է և անգոյն, կամ սառը՝ ինչպէս օտարականի մոռացուած գերեզման...

Բ.

Երիտասարդ կինը, որ իր վեց մատաղահաս որբիկների հետ միասին մօւտ գործեց մեղ մօտ՝ մի պատռ սև հացի գին խնդրելու, որ մնացի էր այս օր գանից՝ դուռ, մուրացիկ վիճակի մէջ, մի չնորհալի ու հոչակաւոր արհեստառի կին էր. նրա ամուսին վարպետ Սաքո՞ն՝ ինչպէս լսեցի՝ վաղուց չէ, որ խելագարուել և վախճանել էր

«վերջին զրկանքից» անմիջապէս յետոյ: Հոչակաւոր առաջինք որովհետև նա յայտնի էր մեր գաւառական քաղաքում որպէս բարեխիղճ, աշխատասէր և ընդունակ կամ հանձնարաւոր վարպետ, որպէս աղնիւ և փերջին առափան ուղղամիտ մարդ և անտարակոյս այդ հազուագիւտ շխակութիւնն ու աղնուամտութիւնը նրա համար պատրաստեցին կորստեան ու անկման տխուր գուրբը... մեր ճարպիկ Հաճին ընդունակ էր պղտոր ջրում ձուկ որոստում, նա անհանգիստ պտտում է պարզամիաների շուրջը, իրշալս բցուրի սիրահար նախշուն թիժեռնիկը խարոյիի շրջակայրում, այն նշանաւոր տարբերութեամբ միայն, որ վերջինս այրում է, երբ ոքահչելի հոգեզմայրութեամբ մերձենում է պրկաստաններու իր շոյած ու փայփայտ՝ հրեզին լիզուներին, մինչդեռ Հաճի-Խաչօյի տարապն ու քարացած ներքինը միանգամայն զուրկ են այրուելու ընդունակութիւնից. նրան թերես լափէ մշտնջենական գեհեանը, երբ արգաբութեան կշու ու վերջին գատաստանը լինի...

Վարպետ-Սարոյին ես անձամբ ճահաշում էի և յարգում. նա իր ճակատի արդար քրայինքով կազմել էր մի համեստ զրտմագլուխ, որ սակայն նախանձելի էր շատերի և, նոյն իսկ, իր բարեկամների ու արհեստակիցների համար. բայց, առհասարակ հարստահարուած-թոյլերի գատնաշարչար քրանց արդինքը պէտք է որպնել անոիրտ Հաճիների զրամաւրկներում... ահա թէ ինչպէս լուսարանեց Սարոյի տնանկ այրին իր ամուսնի կորստեան և նիւթական քայլայման իսկական պատկերը:

— Հողովում են տարիները, այն չարաբաստիկ օրից, որ մեր ինչըքը, տունն ու տեղը անցան՝ խոճից ու դգացմունքից խսպագուրի՝ Հաճի-Խաչօ Սվայինանի ձեռ և իմ վիճակը, այս վեց որրիկներով հանդերձ՝ օր ըստ օրէ աւելի վատթարանում և ասես խսպաս անտանելի է դառնաւմ... Հաճի-Խաչօն, օհ, Տէր ԱՌառուած, և սրբան վատ է ազգում այդ գարշելի անունը իմ նեարզերի, իմ փշրուած որտի վրայ. դա մի ճիւազ է, մարմնացած հրէց, որ բորենու աղանութեամբ ծծում է մարդկութեան արիւնը...— Նա հեկիկաց և յաւսհատ հոգու բորբուած հրդեհը կամեցաւ մարել աղի ու լեզի արտասուրների կաթիւներով.

— Ծարունակիմ, շարունակիր.— մըմնջացի ես:

— Դաւն, բայց հալալ աշխատանքով ու աւելի քան չափաւոր կենցաղալարութեամբ՝ մենք գանձել էինք մի համեստ գումար, ամուսնացաւ մեր սեպհական յարկն ունենալ իմ հայրենական գեանի վրայ, ուր որ իր ծնուած տեղի անհշան բեկորներն էին մնացել: Ասուուծոյ անունով ձեռնամուխ եղաւ աշխատութեան, բայց Տիրոջ աջողութիւնը ասես վաշխառուների և հարստահարողների համար է

միայն... որմնագիրները հսկայական պատերը կանգնեցրին. իսկ ինքը՝ որպէս հիւսն՝ իր ջանասէր աշակերտներով հանդերձ՝ ամբողջ ամիսներ արիւն քրայինք մտած՝ չաշշարտեց փայտեղին շինութեան վերայ: Դեղիցիկ էր շէնքի մակարդակը և իսկապէս յարմարաւոր բարձրաստիճան ընտանիքի բնակութեան համար. 10-12 աշերից բաղկացած, սքանչելի էր մանաւանդ արեւելան ճակատը, թուխ և կարմիր քարից ընտիր ճարտարապետութիւնով, մանրանկար քանդակիներով ու մանուածքներով զարգարուած, սակայն կարեսը է նկատել, որ գժբախտութիւնն էլ հէնց այդ արագին վայելչութեան ու գեղեցկութեան մէջն էր. ահա թէ ինչու. մի անգամ, դիամամբ թէ պատահմամբ, մեր տան աւշնից անց կենալիս՝ Հաճին հիանում է շինութեան գեղեցկութիւնով՝ «վարպետ Սարօ,— ասում է նա իմ ամուսնին— բարձր վայելես, շնորհաւոր և բահտաւոր բնակարան լինի. (սր սակայն սկ ընակարան զարձաւ, շնորհաւոր միսիայն Հաճու համար), միթէ կարողացել էիր մատների աշխատանքով այդքան դրամ գանձել...» Այն, նա իբաւունք ունէր զարմանալու, որովհետեւ իր անձնական փորձը ապացուցել էր, որ զբամ հաւաքելու, հարստութիւն դիզելու համար կարեսը է զրկիլ և կիղիքել, թուլերի արիւնն ու քրայինքը ծծել. պէտք է բթացնել, վաճառել և խիզը լ' ամենայն սրբութիւն...»

Ո՛չ,— պատասխանում է ամուսինս— կամեցայ մի համեստ շինութիւն անել, որովհետեւ բաւական սահմանափակ էր և նիւթական միջոցս, բայց զիջանելով վարպետների խորհրդին և օր-աւուր մի բան աւելացնելով՝ շինութիւնը իր նախագծից անհամեմատ շեղուեցաւ. այժմ մնում է ինձ ձեռ մեկնել ուրիշին՝ գործը վերջաւորելու համար՝ փոխարինաբար օժանդակութիւն խնդրելու...

— Է՞հ, հոգ մի անիլ այդ մասին, ես պատրաստ եմ օգնել քեզ, որքան և կամենաս, խնդրեմ տմենայն վստահութեամբ դիմես ինձ. իմ տոկոների քանակը անհշան է և բարեխիղճ, իսկ քեզ նման պատուական և աղնիւ արհեստաւորին, ես, տնտարակոյս, զիջող և կամեցող կ'լինիմ:

Զատ չանցաւ, որ Սարոն համաձայնեց սկզբում՝ 30 և վերջում՝ 50 տոկոս վճարել Հաճուն, այնուհետեւ 100 ր. դրամագլուխը ոչ միայն ամեց, այլև վճարուած գումարներն էլ մեր շարաբախտ մուրհակնեներում՝ «ի հաշիւ» չպրուեցին. միամիտ և անփորձ էր Սարոն, ինչպէս տասնամեայ պատանի. նա անպայման հաւատում էր մալգկանց շողորդութիւններին ու շաղփաղփանքին.— Հաճին վատ մարդ է, վաշխառն է, բայց վաճառականը՝ սրիկայ չէ. մարդը՝ գաղան չէ. միթէ 30-50 տոկոս բարդելով զարմագլիքն կարժէ վճարածս դրամներն էլ ուրանալ.— «յաճախ կրկնում էր նա, երբ 30-40 լուրջիներով

հատուցանելիս՝ խնդրում էր չաճուն նշանակել այդ վճարը մուլհակի մէջ, իր պարտի հաշում: 'Ի դէպ' ես երբէք չեմ մուտանալ այն, որ մի անգամ անզգուշութիւն ունեցայ դուրս գալ նրա առաջ, համբուրել կործանող ձեռը և թափանձել՝ բաւական համարելով տարիների ընթացքում իր ստացածը՝ աղատել մեզ անհնարին գերութիւնից.— Հաճի-աղա—ստացի ես—կորպեցի ամուսնիս ձիգ տարիների հալալ աշխատութեան արդիւնքը, յափշակեցի և իմ սսկերէն ու արծաթեղէն զարդարանքները և այդ բոլորը միթէ չեն համապատասխանում քա ակնկալած տոկոսիքին ու վաշխին...— Հանգիստ կաց, դուսարս, սիրալիք կերպով պատասխանեց ինձ չաճին, պակասում է մէայն 25 ր. չափ, ես կ'վերագրածնեմ ձեզ ձեր բոլոր պարտամուրհակները. այս էլ առեմ, ող իմ 100 բուբլին շինականների վրայ բաժանելով՝ ես պիտի ստանայի անհամեմատ շատ, քան ձեր 4-5 հարիւրը. բացի 100-ին՝ 50 տոկոսից՝ գիրացին ուրախութեամբ տալիս է և՛ իւղ, և՛ պանիք, և՛ ալիւր, և՛ մասցու... բայց ինչո՞ւ էք տարակուսում. ինչ արժէք կարող է ունենալ ինձ մօտ ձեր արդին վճարած մուլհակը և միթէ ես քրիստոնեայ չեմ. Ստուած և խիզ շունիմ, հ՛ը, չէ որ ես էլ ձեզ նման մանըիկ զաւակների հայր եմ. միթէ կ'ցանկայի այդ մատաղատի մահուկների բերանից խլել մի պատառ հացը... չէ, ձեր աւելորդ կոպէկը թաղ հարամ և «շան մի» լինի ինձ համար, մը իս ու մս մար լինի իմ հոգուն հետեւեալ աշխարհում...»

Եւ յիբաւի չաճին ջերմեւանդ քրիստոնեայ էր. ես յաճախ աեսնում էի նրան «եօթը-վէրքի» խորանում, Տիբրամօր հրաշագործ պատկերի առաջ ծնկաչսք և բազկապարած, դիտում էի թէ ինչպէս արտասուքի խոշոր կաթիկները ակոսում էին նրա մելամաղձիկ, ցամաքած երեսը. թէ ինչպէս արտացոլում էր նրա դէմքի վրայ ճշմարիս զդշման և ապաշխարանքի զգացումը. իւրաքանչիւթ շաբաթ և տօն օրերին նոյն ճակատագրական սե, իւզոտ փողպատը վզին, ճենճուա վերարկուի մէջ փաթաթուած՝ հինուրեայ ամպհովանին ձեռին՝ ճպնաւորի անմեղ քայլերով և հեղ ու խոնարի հայացըով, Սաղմոսից ու Նարեկից աղօթքներ մըմնջալով՝ եկեղեցի էր յաճախում. ամեն անգամ մոմեր ու կերոններ էր փառում սեղանի ու պատկերների առաջ. ոչ թէ երկրպագում, այլ լվում էր յատակի բարերն ու փսիաթները. իսկ երբ հոգով վերացած երջանիկների աշխարհը՝ նա գուրս էր գալիս մեղքերի քաւալանից, առևս հրեշտակային անմեղութիւն գարձած՝ կարեցաբար մօտենում էր տնանկներին ու աղքատներին, հարց ու փորձ էր անում, հետաքրքրում նրանցից իւրաքանչիւրի նիստ ու կացով. միսթարում, յուսադրում և կոպէկներ բաշխում..., և այդպէս չաճի-աղան իմ աշքում աւելի քան բարեպաշտ և բարեսիրտ էր երեսւմ, բայց

դարձմանում էի միայն թէ ինչո՞ւ նոյնը չէր վկայում ոչ ոք օտարներից կամ նրան մօտիկ ծանօթ գէմքերից. ընդհակառակն՝ շատերը աննպաստ և չար էին խօսում նրա մասին, ասում էին թէ մի շաբք մարդկանց կեղեկել, հարստահարել ու մշտնշենական կորստեան պատճառ է դարձել, և իրօք, այսօր աւնուազը՝ 20 հատ առանձին տներ ունի անգիտութեամբ յափշտակած և իւրացրած, հետեւարար և նոյնքան ընտանիքներ թշուառութեան ու կրստի մատնած... հերթը այժմ մերն էր, իր բարեպաշտական ճառից լրիւ մի ամիս յետոյ՝ ապշութեամբ ստացանք դատաւարի ծանուցագիրը, որով Սարօն կոչում էր չաճու 800 ր. պահանջին բաւարարութիւն տալու: Այդ անհանգիկալ հարուածը մ. անգամայն անտանելի եղու մեզ համար. երկշուամուն խելացնորի նման դիմում է պատահովին, պատմում եղելութիւնը և իւրաքանչիւր ձեռնհաս համարուող անձի աջակցութիւնը հայցում. չղացաւ նաև անսիրտ չաճու սպորմած ութեանը դիմել, փարել նրա սաները, փորձելով փափկացնել նրա սոկորացած խիզճը... որ սակայն մնաց խաղաղ անողոք. նա ուրացել էր և՛ ճշմարտութիւնը և՛ եղելութիւնը, իր Քրիստոնէական երգումն ու խոսառումը՝ ինչպէս որ Յուղան իր Տիբոջն ու Մէծ-վարդապետին. իսկ դատաստանի առջև խօսում էին միմիայն փաստերը... Հաճին՝ սաէպ նորոգելով պարտամուրհակը՝ չէր վերադարձել հինը, մինչդեռ վճարուած դրամների նկատմամբ մեր ձեռքում ոչ մի ապացոյց չկար: Աղիուութեան տարապի մէջ պարզամիտներին կեղեքող փաստաբանն էլ մեծամեծ խօսառումներով շահեց մեր սիրտը—շահագործեց դէպի ինքը տածած մեր յայսն ու հաւատարմութիւնը—և միանալով մեր հակատակորպի կամ աւելի ճիշտ անզգայ սսովի հետ՝ կը լինակի քայլացեց մեր նիւթական վիճակը և ընտանեաց կորստեան վիճ պատրաստեց...»

Տարաբաղդ այլին այլ ես չկարողացաւ շարունակել իր համառօտ, բայց սրտաշարժ պատմութիւնը. նա հեկեկաց և լաց եղաւ դառնալու. նրան ճայնակցեցին իր մանրիկ շաբարախտ որբիկները, որոնցից մեծերը լւելեայն սըրում էին իւրենց լեղի արտասուքը և անվստահ հեծկատում. իսկ աւելի փոքրիկները փարելով սիլող մօր ծնկները՝ կարծես ճիպն էին թափսում բաժանել նրա հոգեկան դառն թափիծները. թերես նրանց յիշողութեան մէջ կենդանի էր՝ «անուշիկ հայրիկ» թանկադիմ պատկերը. գարշելի չաճու ցամաքած սրտուականը, երբ նա դատաստանական վերակացուի առաջն ընկած՝ տիրանում էր իրենց նորաշն բնակարանին, երբ գորգուում և կատաղի սպառնալիքներ էր տեղացնում յուսահատ զրկուածի գլխին...»

Վարպետ Սաքոն անկարող լինելով տաճել չաճի-Խաչօյի հասցրած բարոյական ու նիւթական հարուածն ու անգութ հալածանքը՝ խելագարուեցաւ: Մի քանի ամիսներ նա անխորհուրդ թափառում էր քաղաքի փողոցներում և մատներով իր պարագերի հաշին էր անում, իսկ երբ «Հաճու» անունն էին տալիս, նա այնպէս հալածւում էր ու խումափում, ինչպէս որ՝ ըստ ծեր կանանց՝ չար-սատանան Ցիսութիստոսի անունը լսելիս...

Ի՞նչ տարակիս, որ լսելով Սաքոյի մահը՝ չաճին անսահման հրճուանք և ուրախութիւն զգաց, մի անուն հս աւելացաւ նրա ու երիայի թշում...

Զրկուած այրին, ինչպէս տեսանք, իր անպաշտպան որբիկներով, այսօր էլ թափառում է մեր շուրջը և արտասուր աչքերին մի պատառ ու հացի զին խնդրում: իսկ չաճի-Խաչօն՝ հանդիսաւ խղճով ու սրասվ տակաւին շարունակում է իր սովորական առեսուրը՝ հրէական «կ հ-չ Փ տ ը»:

## ԲԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀ...

(իրական անցք)

Ա.

— Խոջա Օհանջան, քո բախտի լուսապայծառ աստղը կարծես սկսել է թեքուել ու նսեմանալ... Էհ, լեզու չի զօրում, որ տոեմ, քեզ համար պատրաստում է կորսական ծուղակը... շատպիր, բարեկամ, մի վայրկեան առաջ թողնել այս երկիրը, ուր միմրայն արին է հոտում, իշխում է խարազանն ու բանութիւնը և ունեսը հայը անպայման շրջապատուած է բիւրաւը թշամիներով:— Խորին ցաւակցութեամբ ասաց իր հագուազիւտ բարեսրաւութեան ու առաքինութեան համար բոլորից էլ սիրուած ու յարգուած՝ թիրք վաճառականը իր տակարական առն ընկերին:

Այդ զէպքը տեղի ունեցաւ 1817 թուականի ամռանը:

— Ե՞ս, ինչ արած, երբ հայ անուան հետ միշտ կապուած է գժրադդ ապագան՝ արիւնն ու արտասուրը՝ արհաւիրքը, վիշար, հալածանքը ասես մեր սասւէրի նման՝ հետեւում է մեղ, թէ աղբատիկ խուզի մէջ և թէ փառաշխն ապարանքում: Դժրազդ ենք մենք և այդ ճակատագրական գժրադդութեամբ էլ պիտի մեռնենք. — Թախծալի սրտով արտայայտեց երիասարդ Օհանջանը, որ արդ սրանուն ներկայացնում էր մի տեսակ մարմնացած յուսահատութիւն:

— Մի սիալիր, զտուակս, գու հարաւորութիւն ունիս ազատուելու մըրկածուփ փոթսրկից, եթէ իհարկէ աշխատիս ժամավաճառ չ'լինել. վայրկեան առաջ զիմս զէպի փրկութեան նաւահանգիստը... և այդ զժուար բան չէ: Քո անրաւ հարսաւութիւնը, Խոջա-Օհանջան, բնական է, որ չէր կարսդ վրիպել «Ենիշէրիների» այնքան նուրբ հոտառութիւնից և սուր տեսութիւնից. օ, օ, նրանք գայլի աչքեր ունին, շան հոտուակիր. գիտեն ամեն բան և անգապում սաւառնում են, ուր որ համեղ պատառ կայ կլանելու... վտանգը անխուսափելի է, եթէ չնպաս անյապաղ հեռանալու Կարմի արիւնաներկ պարիսպներից: — Այդ խօսքերը, որ տողորուած էին բարեկարական մաքուր հորից: — Այդ խօսքերը,

դու անկեղծութեամբ, բաւական գժուարութեամբ դուրս թռան կարծահասակ ծերունու մաշուած կըծքից. այդ բառերն արտասանելիս՝ դողում էին նրա մոյգ-կապտագոյն շրթունքները. մագաղաթի երեսը փոփոխակի կերպով կարմրում ու սեանում, արեան ու կապարի գոյն էր-ստանում:

—Բարի, բայց ի՞նչպէս իմ ձեռքով քայքայեմ հայրենի օջախս, զրկուեմ սեպհական տուն ու տեղից. վաճառականական յաջող գործերից, այս և այն մարդի վլայ ունեցածս մհծաբանակ դրամներից, մի խօսքով ի՞նչպէս կարողանամ խղել ընկերական ու առեաբական կապերս. որոց յանձնեմ ծնողներիս ու հարազատներիս ոչնչով փոխարինելի շիրմները:

—Միթէ ես ցանկանում եմ ջլատել իմ առեաբական տան ոյժերը, միթէ մարդս կարող է իր սեպհական աշքերի կուրութիւնը խնդրել: Օհանջան, դու իմ աշքերի լոյսն ես, իմ սրաի և հոգու անբաժան մտերիմը. բռ անխոնչ աշխատութեան ու քրտնքի արդիւնքն է ահա այն մեծ անունն ու փարթամ կարողութիւնը, որ այսօր վայելում է չաճի-Մուստաֆա-է-Քիչնու ընտանիքը. բայց ես կամենում եմ մի որոշ ժամանակ զրկուել աշողութիւնից էլ, երջանկութիւնից էլ. իմ իղձն է զոյգ աշքերով կոյը նստել, մինչև կանցնի փոթորիկն ու ամեն ինչ տապալող ոգին... զրկուիր ուրեմն դու էլ նիւթական կարողութիւնից. աշխատիր միայն փրկել բռ և մատաղ զաւակներիդ կեանքը, որ անտարակոյս ամենից թանկագին և ոչնչով փոխարինելի է քեզ համար:—Իւրաքանչիւր բառ առանձին շեշտով աւելացրեց ծերունի էֆէնդին:

—Լսում եմ, չաճի-աղա, հնազանդւում եմ, բայց ուր գնամ. ուր գաղթեմ...

—Երզնկա, զաւակս, ես այդ վաղուց մտածել եմ:

«Երզնկա» այդ անունը մի անդամ պտաեցաւ Օհանջանի բաղմահոգ գլխում և նա, ասես խելացնորի նման, սկսեց մհծաբայլ երթեկել վաճառատան երկարութեամբ: Նրա գէմքը վայելուշ էր. բարակ իրանով, որ սեղմուած էր Պարսկաստանի ամենանուրը և թանկագին շալի մի քանի փաթոթների տակ, որի ծալքերում, առջևի կողմից՝ խրուած էր արծաթի՝ ձուաձև ժամացոյցն ու «տապան» պողպատից կռած թանկագին դաշոյնը, սուկեծոյլ պատեանով, փղոսկրեայ կոթով և լալ ու յակինթ ակներով նախշուած: Բարձրահասակ էր նա, լայն երեսով, մոյգ-շապանակագոյն աշքերով ու թուխ ընչացքով, միշտ հաճելի ժպիտն երեսին, հեղահամրոյը և քաղցրաբարոյ:

—Պաղթեմ, չաճի-աղա, էլ հարամակեց ինձ համար հայրենի երկրի օդն ու ջուրը, նիսան ու կացը... մնաս բարե...—Արաբերեց

նա և արտասուրի ջինջ և խոշոր կաթիլներով թրջեց իր առնական դէմքը:

Բ.

—Պատրաստուիր, սիրելի Գայլիանէ, պէտք է վաղն և հթ մեր րոլոր շարժական կայքերը, սրոնք փոքր ի շատէ արմէք ունին և հարկաւոր կ'լինին մեզ նոր հայրենիքում, ճանապարհենք դէպի երզնկա. եռ արդէն վարձել իմ ջորիները, նրանք դուրս կդան առաւտեան շատ վաղ՝ գեռ արշալոյսը չբացուած:—Դրկախառնելով նորատի կնոջը, տարօրինակ թափւութեամբ՝ գուժեց Օհանջանը:

Մանկամարդ տիկնոջ ամբողջ մարմնով անցաւ մի քսումնելի սարսուռ. նա ցնցուից և գողաց:

—Ենչու համար, ի՞նչ կայ արդեօր...—խեղդուկ ձայնով հաղիւ կարսպացաւ արտասանել Գայլիանէն, որին՝ ծանօթ էր հայ զրամատիրոջ ապագան և ընդհանրապէս շրջապատող պայմանները. անշուշտ այդ բանը շատ անգամ լսել էր, այդ տիսուր երկոյթը յաճախ կրիսուել էր այս և այն բարեկամի ու ծանօթ բըիստոնէի հետ...

Չատ բանել կան, որ առ այժմ հարկաւոր չէ պարզել, հոգիս, զու պիտի լսես այդ բոլորը իր ժամանակին, միայն շտապիր մի վայրկեան առաջ կաղմ և պատրաստ լինել. վազը դուրս կ'գնայ մեր իրեղնների կարաւանը, իսկ երկու օրից յետոյ կուղեսրինք և ինքներս:

Գունաթափ կնոջ սիրալ լցուեցաւ անասելի թափւութեամբ, զոյգ ափերի մէջ ծածկեց սիրունիկ դէմքը և սկսեց հեկեկալ և գասնապէս արտասուել: Նկատելով այդ սրաշալիք տեսարանը՝ փոքրիկ Աւետիքն ու չոփփումէն, որոնցից առաջնին՝ 7 և երկրորդը՝ 4 արարեկան կայտառ և սիրուն մանկինեներ էին. ասես անուշահոս վարզի մի զոյգ կոկոններ, փալելով մօր ծնկներին՝ իրենք էլ սկսեցին արտասուել. տիսուր հեծկլտանքը արթնացըրեց անուշ ընից փոքրիկ չաճիպապին, որ օրօրոցի կապանքների միջից՝ ահագին ճիշ ու աղմուկ բարձրացըրեց. նա էլ լաց եղաւ, թերես բնազդմամբ հետևելով իր հարազատների օրինակին—վիշան ու կոկիծը ընդհանուր էր...

Հետևեալ առաւտեան, զեռ շէր հնչել եկեղեցու փայտեղէն կոչնակը, զեռ նոր էր պարզում արեելը ծիրանագոյն համելի լուսաւորութեամբ, երբ Կարինից դէպի երզնկա տանող ճանապարհը բռնուած էր քառասնի չափ բևսնակիր ջորիների կարաւանով. նրանք փոխադրում էին Օհանջանի տան կահկարասիքը, ընտափ գորպերն ու փոխադրում էին Օհանջանի տան կահկարասիքը, ընտափ գորպերն ու փոխադրում էին Օհանջանի տան կահկարասիքը, իր նոր հայրեպղնձի անօթները իր ապագայ բնակութեան տեղին, իր նոր հայրեպղնձի անօթները:

Այն օրից անցան երկու տիսուր գիշերներ ևս, երբորդ գիշերն էր. ամեն բան պատրաստուած էր Օհանջանի և իր ընտանիքի փոխազրութեան համար դէպի երգնկա: Այդ երեսով ընտանութեան չափ՝ գաղանի էր պահուած և համարեա ոչ ոք չ'գիտէր նրանց ուղևորութեան կամ փախստեան արամազրութիւնը. նոյն իսկ իրենց մերձաւորների տեսութիւնից վրիպում էր թէի նշպիսի ահնդային եռանգով Օհանջանը կարճում էր իր վաճառականական հաշիւները Կարինում. թէ նա ամեն բան յանձնում էր իր այլակրօն, սակայն անպայման հաւատարիմ ու վաստահելի ընկերոջը...

—Մենք դուրս կցանք դեռ լոյսը շ'բացուած, կ'շատապնք միութեան մէջ անց կենալ «Գիւրճօղլու» դուռը. այդ ուղին՝ բնակչութեան նկատմամբ՝ բաւական դատարկ է և անշուշտ կարող է անհիտելի անել մեր վախուսաը. —հոգեկան ծանր հառաշանքի հետ արաբերեց երիտասարդ Օհանջանը, իր ափերի մէջ ո՛ղիւրի սիրելի կնոջ մոմեղէն ձեռը:

—Յոյս ունես ուրիմն, որ այնուհետե ճանապարհը մինչև երգնկա անվտանգ կ'լինի. —հարցրեց Գայիանէն:

—Ինձ դժուար է միայն աղատուել Կարնոյ անսիրս «Ելնիշէրիների» ճանկերից. այնուհետե վտանգը իսպառ հեռացած կ'լինի մեղանից. —մի տեսակ ծանրութեամբ շարայարեց Օհանջանը, ապա սկսեց հաշուել և իր կաշեղին գոտու և հանդերձի ծալքերում ամփափել դեղնագոյն սոկու վայլվլուն շեղջը:

—Ո՞քան կարողութիւն ունինք մենք. —Կարծես մանկական միամտութիւնով հարցրեց Գայիանէն:

—Հապատակի կամ սարուկի համար—ահազին, իսլամի աշքը ծակող՝ մի խոշոր կարպութիւն. —երեք հազար քիսայա (այս այլ առանձին կամ թուրք ընկերոջ փախանակազրուով՝ երգնկայում, մի մասը թողում եմ այսակ՝ զանազան վսասհելի մարդկանց վրայ. իսկ մնացած՝ վեր կառնենք մեզ հետ... —հաճելի ժպիսն երեսին՝ կարծես ծաղրելով կնոջ միամտութեանը, պատասխանեց երիտասարդ ամուսինը:

Կէս գիշեր էր, մոյգ-կապտագոյն երկնակամարը ցօղուած էր անթիւ ու անհամար շողակնի նման վայլվլող աստղերով ու ասուպ-

\*) Ծանօթ. Խերաբանչեւ ըեսան կշուռում է՝ 500 պետար (գուռուշ). իսկ ուսուց այժման վաղով՝ 40 ըստ ըլլէ:

ներով; Հայկական վաղեմի մայրաքաղաքը (Կարինը) մրափում էր խոր և հանգիստ քնի մէջ. նա լուս էր՝ ինչպէս մոռացուած գերեզման... և ահա այդ խորհրդաւոր պահուն նրա խաղաղութիւնը յուզում կամ վրգուում էին մի խումբ գիշերաշջիկների սոնաձայներ, որոնք թախծալի մթութեան մէջ՝ անցնելով խորդ ու բորդ փողացները՝ կանգ առին հայոց-թաղում, մի երկյարկանի պատշգամաւոր շինութեան առաջ և ուժգին բաղկեցին գուռը.

—Նրանք են. օհ, նրանք են: —Սրապատառ բացականչեց տանաէր՝ Օհանջանը:

—Նրանք են... —գրեթէ շնչասպառ ընկնելով ամուսնի գիրկը՝ կրկնեց Գայիանէն: Աւետիքն ու Հռիփսիմէն, որ ցարդ արթուն էին և ուրախ-ուրախ վազգում, սարսափահար փաթաթուեցին ծնողներին և լաց եղան:

—Էլ հնար չկայ, սիրելիո, դու ծածկուիր երեխաների հետ ներքնատան նկուղներից մինում. թաղ ծառան ու աղախինը ընթրիք պատրաստեն, սպասաւորեն, ևս կընդունեմ նրանց...

—Զէ, շեմ թոյլ տալ քեզ բաժանուելու ինձանից. կրողը տանի դրանց, թաղ բաղիսն դուռը որքան և կամենան, մի բաց անիր...

—Աւելի վաս եթէ ուժով ներս խուժեն... չէ, հոգիս, հարկաւոր է մեղմացնել կամ գէթ չափարոել նրանց վայրագ կատաղութիւնը — և այդ կ'լինի միմիայն սիրալիր ընդունելութիւնով ու մեծարանքով: — Նկատեց գունաթափ Օհանջանը:

Դրսում սկսուեց բազուկների գոլծը. լուսում էին ծանր մուրճի հարուածները, որոց գէմ անտարակոյս երկար միջոց չէին կարող ընդդիմանալ դռան տախտակներն ու վայտեղին նիգը, նրանք սկսեցին խորակուել...

—Ո՞վ էք, ինչ էք կամենում. —Ճայնեց տանաէրը:

—Հաճի-Մամոն և իր խումբը, բաց արա... զէհ, շնուռ... —եղաւ ահարկու պատասխանը:

Օհանջանը սկսեց աւելի գունաթափուել և դողդողալ. նրա աշքերի առջե ասես մազմին առած՝ պատկերացաւ պատուի անարգանին ու սոսկալի մահը..., և անդիտակցարար բաց արեց տեղ-տեղ փշրուած գուռը, ձեռը նախ գետին և ապա՝ ճակատին տարաւ՝ «Ժամալլահ» արեց, և ամենայն ակնածութեամբ ու յարգանքով ողջունեց անկոչ հիւրերին:

—Լսեցինք, Խոջա-Օհանջան, որ ճանապարհորդ ես, եկանք քեզ բարի երթ մաղթելու... —ծակող հեգնութեամբ՝ շեշտեց Հաճի-Մամոն, որ մի կարճահասակ, ճարպու մարդ էր, ոտից մինչև գլուխ զինուած ատրճանակներով, կեռ սրով ու դաշոյնով, նա հագել էր ենիշէրիի

այլանդակ տարազը, երկար ու բազմանկի հենանի ասպետական գլխարկով. այդ ձեռվ հագնուած ու զինուած էին և նրա 30-ի չափ արենալը ընկերները:

— Այս գիշեր մենք քո հիւրն ենք, տեսնենք թէ ինչպէս պիտի հիւրասիրէ Խոջա-Օհանջանը իր երկրացիներին վերջին հրաժեշտի վայրկենում... — Աւելացրեց նա:

— Հիւրը Աստծունն է. իմ տէր չաճի-աղա, ես ձեր խոնարհ սուրուկն ու ծառան եմ, այս ձեր տունն է... հրամայեցէք ինչ որ կ'կամենաք:

Չարուեցին նրանք ընդարձակ սենեակի ամայացած յատակի վրայ, ուր գեռ տարածուած էին տեղափոխելու անյարմար համարուած թանձր թաղիքները, մաշուած կապերտներն ու օթոցները: Ճուտով բացուեց ընթրիքի համար՝ պղնձի ո ինին համադամ խորտիկներով, ընտիր գինիներով ու անուշահամ օշարակով: Օհանջանը ձեռքերը կրծքին սեղմած՝ կանգնել էր դռան մօտ՝ պատրաստ նրանց սպասին. թէն մի քանի անգամ խնդրեցին հիւրերը իրենց հետ սեղանակից լինել, բայց նա Ենիչէրիի աշքով նայեց գործին և այդ պատիւը չափից աւելի համարեց իր համար ու չկամեցաւ շեղուել չափառութեան շրջանակից...

Նրանք ամենայն ախորժակով վայելեցին «զեավուրի» ընթրիքը. ստացան վայելուշ ընծանել. ստացան և առատ «գիշ-քիլասի» (ատամի կամ ուտելու վարձ): Արշալոյսի վարդագոյն ճառագայթները հրդեհել էին արենելքի հեռաւոր հորիզոնը, երբ չաճի-Մամոն, իրը թէ, գինու աղղեցութեան տակ, սկսեց մի ինչ որ վիճաբանութիւն իր ընկերների, կամ, որ աւելի ճիշտն է, ստորագրեալների հետ, նրանք խառնուեցին միմեանց և կեղծ վէճը վերածուեցաւ գանհարութեան: Օհանջանը տարակուսուեցաւ. դժուար էր հասկանալ խաղի էական խորհուրդը, սակայն կուրացնելով նրանց իր առատ ընծաներով՝ հացովն ու ոսկովը, չէր կարող ասպետութեան մէջ, որ և է տմարդութիւն նկատել... նա գլխիկոր կանգնած էր դռան մէջ տեղում և բեկրեկուած հոգով սպասում էր դրամայի վախճանին:

Չաճի-Մամոն աչքի տակով դիտում էր տանաիրոջ շարժումները և օգուտ քաղելով պատեհ յարմարութիւնից, մեկնեց գէպի նա իր կարճիկ կարաքինայի լայնարելան փողը. որոտաց հրազէնը և անողորմ գնդակը չվրիպեցաւ նպատակից, Օհանջանը վայրկենական անշարժութիւնից յետոյ՝ տարածուեցաւ դռան և պատշպամրի մէջ տեղում. նբա վարդագոյն, անպարտ արիւնով ողողուեցին սեպհական տան որմերն ու յատակը, դուռն ու պատշպամրը...

— Բարի՛ ճանապարհ, բարի՛ ճանապարհ: — Ասացին չնուհա զարտ հիւրելն ու հը՛հալով հետացան:

ՍԻՐՆԵՑԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ

U.

1872 թուականի գարնանային մի մութ գիշեր էր, անօսը մշուշը չորքել էր երկրի երեսին. խոկ բարձրում թուի-թուիս ամպերը ասես թանձը քողի նման՝ մէկ ու մռայլ սրողել էին ատտեղազարդ երկնակամարը. տիրում էր խորին լուսթիւն, երբ զիրակի արեմտեան մակամարը. տիրում էր խորին լուսթիւն, երբ զիրակի արեմտեան մասում, խոխոջալից Ախուրեան գետի ծաղկաւէտ ափերի հետ, երկու մինուած ձիաւորներ հեռանում էին հետ ի հետ, արագընթաց: Ձիաւորներից մէկը՝ ցորնեզոյն երեսով, մինչև ականչները հասնո՞՝ երկայն ընչափով, ընդհանրապէս զիղեցիկ զիմապէեսով ու խոշոր աշքերով մի մարդ էր. նրա խորհրդաւոր շաբումներն ու հրամայական ձայնը մի մարդ էր. նրա խորհրդաւոր շաբումներն ու հրամայական ձայնը անհուշա ապացոյց էին, որ նա մի պարզ շինական կամ հասարակ անհուշա ապացոյց էին, որ նա մի պարզ շինական կամ հասարակ անհուշա ապացոյց էին չէր: Այդ պահուն նրա զունաա երեսի վրայ կարանձնաւորութիւն չէր: Այդ պահուն նրա զունաա երեսի վրայ կարանձնաւորութիւն չէր ներքին յուղման տարօպինակ այլայլումն. կարծես սակաւ դացւում էր ներքին յուղման տարօպինակ այլայլումն. կարծես սակաւ ինչ առաջ ակամայից գործել էր նա մի սարսափելի ոճիք՝ արինստ, ինչ առաջ ակամայից գործել էր նա մի սարսափելի ոճիք՝ արինստ, սլտաճմիկ... նա առաջ էր գնում տիրու, գուցէ յաւսահատ և մտայոց. սլտաճմիկ... նա առաջ էր գնում տիրու, գուցէ յաւսահատ և մտայոց.

— Թայց ի՞նչ կար այսքան յետանալու... ո ը, թումսն ու-  
ղիպեցին. թերես... — խօսեց ասածին ձիառը և աշխերը շոր՝ կոզմ  
պարձնելով ասես մի շատ կարեսը կամ հետաքրքիլ առարկոյ էր որո-  
նում: Այդ պահուն հիւսիսի մեղմ քամին հասցըց նրանց խորհրդաւոր  
սուլոցի ծանօթ ձայնը:  
— Կաց, լսո՞ւմ ես..., նա ինքն է՝ խսմայիլը: — Թացագանչեց հսկա-  
կաց, լսո՞ւմ ես..., նա ինքն է՝ խսմայիլը:

հասակ ձիաւորը. որի ոտ ու ձեռը՝ սրտի ուժեղ բարախման հետ, տակաւին շարունակում էին գողդողալ...

Սուլոցի ձայնը կրկնուեց. պատանի չերքեզը առաջ աշամակեց իր ձին, նրան հետեւ և միւսը, թեթև հրացանը ձեռի մէջ, պատրաստի բռնած:

Ճռառվ վայր իջան նրանք ձիերից և նեղկակ կածանսվ, ծիլծիլ ժայռերի միջից անցնելով՝ մտան մի խոտաւէտ հրապարակ, ուր նոյն օճապտոյտ Սխուրեանը իր վիրաւոր պոչը առած՝ ֆշշալսվ ու տնքալով փախչում էր սարի ու ձորի, մէգի ու մշուշի մէջ իր ներկայութիւնը ծտծկելու կամ իր գլուխը ջախջախել ցանկացողի գարշապարից ամուր կծոտելու, արինքամ անելու բուռն տենջանքով... թերեւ ամաշում էր նա գիշերային մթութեան մէջ ուղեկցել թիւրքին ու աւազակին, ականատես լինել այլանդակ, արինոտ պատկերների ու աղէխարշ վէպերի... և հենց այդ հովում, գետի աւազանի մի խորշում դիմաւորեցին նրանց մի քանի ուրիշ ձիաւորներ:

— Օ՞հ, որքան անսիրտ և անողում էք գուք. — ասաց նրանցից մէկը. — միթէ կարելի՞ է ձեռ բարձրացնել՝ սպանել անդօրին, երբ նա անձնատուր է լինում. զա ասպետական գործ չէ. այդպէս են վարւում միմիայն վախկաները, վատերը, փոքրոգինորը... — խօսողը իսկապէս գիւրեկան և բարի գէմք ունէր, հին չերքեսկով, անմաքուր ու պատառտուն բաճկոնակով, գլխին ծածկած ունէր ոչխարի մորթուց կարուած՝ մոյգ-գեղնագոյն գլխարի, ոտքերին՝ քրդական կարմիր սանդալներ. զինուած՝ խէնչալով, կարարինայով, աշտէով...

— Դէ՞հ, տղայք, աճապարեցէք. բաւական երկար ճանապարհ ունինք մեր օթեանը հասնելու: — Լսուեց մեզ ծանօթ հրամայողական խոպտ ձայնը: Բոլորն էլ մարակեցին իրենց ձիերին և խմբուեցին հրամայողի շուրջը:

— Անտարակոյս, տղայք, համեղ որս ունեցած կ'լինէիք: Ցետացաք, շատ յետացաք: — Դառնալով հետեղներին՝ խորհրդաւոր շեշտով յարեց հրամայողը:

— Հարիւր ոսկու չափ գուտ գումար և բաւական արժէքաւոր իրեղններ, որոնք սակայն ամփոփեցինք նոյն տեղում—ձորամիջի աւերակ եկեղեցում: — Ուրախ-ուրախ արտարեց մէկը նորեկներից:

Մէգն ու մշուշը՝ շաղի ու շողի վերածուած՝ շոքել շոյում և մարդարափ հատիկներով ու արծաթի ժապաւէններով՝ նախշուում էին ուշն ու խոտը, երփներանդ ու անուշանոտ ծաղիկների իւրաքանչիւր թերթիկը, ոսան ու տերերը... երկինքն էլ սկսել էր պարզուել. բիւրաւոր աստղեք փայլվում էին շողակնի պայծառութեամբ. իսկ կտուած պայտի նման՝ մթագնած ու խոժոսուած կիսալուսինը՝ իջում

էր Ախուրեանի ջրերի մէջ իր գլուխը թաղելու կամ մինչև արշալոյս նրա սրտամորմնք ողբը լսելու... Մեր կարիճներն էլ սակաւ ինչ յետոյ, մուտ գործեցին մի փոքրիկ պարսկական գիւղ և կանգ առնենելով՝ բաղնեցին բարձրաւանդակի վրայ գլուած՝ մի ինչ որ շինութեան գուռը:

— Ո՞վ է. — լսուեց ներսից:

— Մենք, քո բարեկամնեղը. — պատասխաներին եկուորները. շուտով բացուեցին մուտքի թանձը փեղկերը և հիւրերը ներս խուժեցին:

— Զեր այցը բարի լինի. իմ աշքերի իմ գլխի վրայ: Աստուծով գործերդ յաջողակ ին: — Խօսեց ատանէլը, որ միջանասակ, ճարպոտ և հաստլիկ մի անձն էր, վառ և սնդիկ նման շարժուն բիերեսով:

— Փառք Աստուծոյ և՝ աջողակ ենք և՝ անվնաս, թէն թ.,.. ամառանոցի պահապաններից մէկի սպանումը, որ յատկապէս իմ անմտութեան չնորհիւ կատարուեց, բաւական սրտատանջութիւն և վիշտամառեց ինձ: — Ասաց աւազակապետը, որ քաջի հոչակ ունէր Բարձր-հայքում և յայտնի էր Դ. — անսննով:

— Իգուր չեն ասում թէ՝ հայը արիւն է տեսել.. հը, հը, հը. գնդակի տարափի մէջ էլ զու խոյս ևս տալիս հակառակորդից մի քիչ արիւն թողնելու: — Խօսեց Մանսուրը:

— Ասալիկայ գիշեր ձորակի աւերակում յայտնի գրի մէջ ամփոփուած պիտի գտնես արծաթեղին իրեղէնների հետ՝ մի թանձը կապոց կանացի բենեղի ու մետաքսի հագուստներն էլ, որոնք գուցէ արիւնոտ լինին... կանյայտացնես մինչև մեր վերադարձ Ղարախաչից: — Միջամտեց մի ուրիշը:

— Մինչեւ նոր աւար, քաջութեան և ասպետութեան մի նոր առհատշեայ... — Լսուեց զանազան անկիւններից:

— Մի ուրիշ պահապանի սպանութիւն, նոր արիւն... հը, հը, հը... — Աւելացրեց ճարպոտ տանտէրը:

Բ.

Այն տունը՝ ուր մտան գիշերային անկոչ հիւրերը, շրջապատուած էր ցածրիկ և խարխուլ պարսպով: Երկու բարձրուղիչ բարդինիներ ձիգ տարիներից հետէ, որպէս լսու և համբ վկաներ՝ կանգնած էին այդ տագականոցի զոյդ նեղկակ պատուհանների առջեւ: Այդ բնակարանը արտաքուած պարզ էր և անպաճոյն. հրարիային թուի քարերով, անտաշ ու անհարթ. առաստաղը ծածկուած էր ուռենու ճիւղքերով ու տատասկներով: Ներսից՝ ձիգ ու անձուկ սրահի մէջ բացում էին երեք տարբեր դռներ. երկուսը՝ միմեանց դէմ յանդիման,

իսկ երբորդը՝ սրահի մուտքի հանդէա, ուր և կ ընդունուեցին նորեկ-ները: Այս սենեակը բաւականին մաքուր էր. տաճկական վառարանի—օջախի մէջ ծխում էր տասնեատկ աթարի դէզը. նրա ճակատից քարշ էր արած ձիթի խեցեղն ճրագը, որ իր աղօտ լուսով հազիւ թէ լուսաւորում էր սենեակը և գարշելի ծխով օդը ապականում: Սենեակի որմերը գարդարուած էին և նոր տեսակի զէնքերով, գլխարկներով, գյոնզգոյն հագուստներով և Քհօռ-օղլու կամ Զահ-իսմայէլի առասպելական պատկերներով:

Երբ աւազակապեաը յանձնում էր տաճախրոջ յափշտակուած օսմանեան լիրաները, յայտնուեցաւ մի քիւրդ աւազակ՝ քարշ տալով մի գեղատեսիլ նորատի կնոջ:

—Ի՞նչ կարիք կար այդ անմելի արարածին էլ թրեել. անսիրտ հրէշներ, աշխատում էր թշուառ գերգասանի գոյութեան վերջին կայծն էլ մարել...—Դոչեց հոմայէլ անունով աւազակը: Օրիորդը՝ որ այդ պահուն հայուհուն յատուկ ամօթխածութեամբ սեսրակ աշքերը գետնին ուղղած՝ և՛ երկիւղից և՛ ամօթից ու վշաի անհնարին ծանրութիւնից հեծկլում և լաց էր լինում դառնապէս, յամբաքայլ մօտեցաւ հսմայէլին, կարծես լոելեայն նրանից փրկութիւն ակնկալելով:

—Աղջիկս...

—Դու բարի ես, տէր, թնդ Ամենակարսովը օրհնէ քո կեանքը:—Մի տեսակ ուրախութեամբ բացագանչեց աղջիկը և ծունկ չոքած՝ փարում էր նրա ոտքերը. մօտեցաւ քիւրդը և կամենում էր գուրս կորպել հսմայէլի գրկից հայուհուն, բայց ապտակի ծանրութիւնը յետ կասեցրեց նրան:

—Դլուխս կտամ, այ հսմայէլ, և որսս չեմ թողիլ քո ձեռին...—բղաւում էր քիւրդը:

—Աղջիկը մեր գլխաւորինն է՝ Դ.-ինը. հասկանում ես, լամուկ.—աղմկեցին մնացած աւազակները:

—Թնդ հսմայէլը որոշէ՝ ինչպէս և կամենայ:—Առայ աւազակապեաը:

—Աղջիկը աղատ է, աղատ...

—Թնդ կատարսէի քո կամքը, սիրելի հսմայէլ:

—Հէ, աղջիկը կմնայ իմ տանը, իմ կանանցում...—Մէջ մտաւ Մահսուրը:

—Այդ անհնարին է, մի զրկէք ինձ իմ արդար աւարից, աղջիկը իմ սեպհականութիւնն է...—Քիւրդ հրսսակի այդ յանդուզն խօսքերը ընդհատուեցին Մահսուրի բռունցքների հայուածներով. սակայն քիւրդը իր որոշման մէջ այնքան էլ չ'ատամանուեց. գուրս բաշեց սրածայր խէնչալը և մեխեց ասպնջականի սըտի մէջ: Հաստիկ պարսիկը դոյդ

ձեռքով արիւնոտ գաշոյնը կրծքին սեղմած՝ յինուեց պատին: Բարձրածայն լկտի քրքիշը յանկարծ վերածեցաւ աշշութեան ու սուգի. նրանք շրջապատեցին մարդասպանին. շողովում էր պաղպատը, լսելի էին և սրերի շաշիւնը. իրաբանցումը անօրինակ էր, արիւնոտ և ցնցող... մատաղահաս գեղջկուհին, որ իր վայելուց հասակով և հազուազիւտ գեղեցկութեամբ բոլորին էլ թովել ու կախարդել էր՝ սարսափահար գուրս թուաւ սենեակից:

—Այս լաւ է.—մտածեց ինքն իրեն հսմայէլը.—Հենց ճաշակն էլ նրանումն է, երբ շունը՝ շան մսից է ուտում, երբ անօրէնները կոտորում են միմիւն, երբ լամուկը՝ աղայի դէմ սուր է շողացնում...

Հսկահասակ Դ.-ը բարձրացաւ տեղից և աշաէի մի քանի հարուածներով՝ վերջակէտ դրեց եղերերգութեանը:

—Ծտապիր.—Նշանացի արեց նա՝ հսմայէլին, որը և աճապարեց հետեւ աղջկան և բարձրացնելով իր ձիու գաւակը՝ երգուեց իր ծնողների գերեզմանով՝ անվտանգ հասցնել նրան իր հօր բնակարանը:

Դերին ու աղատարարը աներեսութացան գիշերային աղջամուզի մէջ:

Գ.

Հսմայէլ աւազակը ծագումով հայ էր. նրա սկզբնական անսւնը չայրապետ էր: ծնուել և սնուել էր նա Սիւնեաց աշխարհի՝ ծուշի քարտքում, ուր և յիշուած անցքից մի քանի տարիներ առաջ՝ նա պարագում էր վաճառականութեամբ: Հայրապետը՝ Սիւնեցի տղամարդին յատուկ գեղեցկութեամբ՝ վայելուց հասակ և վառվառն աչքեր ունէր. բարեսիրտ էր նա, ջանասէր, խոհեմ և զգայուն: Երիտասարդական ամենաթարմ հասակում ամուսնացաւ, կամ որ տւելի ճիշան է, իր կամքի ու սըտի հակառակ՝ ծնողները հարկադրեցին նրան կապուել մի աղջկայ հետ, որին չէր սիրում և չէր կարող սիրել նա:

Հայրապետի ամուսինն էլ իր հերթում անտարբեր էր դէպի նա, որովհետեւ լաւ գիտէր, որ իր մարդի սիրոյ և միանգամայն ցնորդի առարկան մի ուրիշ աղջիկ էր, որին պաշտում էր Հայրապետը իր հոգու բոլոր կարողութեամբ:

Դառն վշաբերն ու ընտանեկան բաղմակումանի գժառութիւնները իսպառ սասնացրին Հայրապետին իր առետրական գործերից. նա արդէն անձնատուր էր եղել՝ գումարի, գինեմոլութեան.. Սըտի անմունալի մտերմի ամուսնութիւնից յետոյ, Հայրապետը սկսեց հետղիւտէ ընկնել նիւթապէս—սնանկանալ—և կորսնել իր բարոյական վարկն էլ:

Այդ ամենին վերահաս լինելով՝ խղճուկ կինը լաց էր լինում պառնապէս. նրա արտասուքը գետ էր գարձել, գարնանային պլասոր

ու վարաբուած մի գետ. իսկ սիրտը՝ մի բսրբոքուած հնոց... սակայն, մի յօյս, որ փոքր ի շատէ միսիթարում կամ ամօքում էր նրա վիճակի անհնարին դպւնութիւնը, դա զոյգ նորաբողբոջ մանուկների՝ երկու տարեկան Արամի և փոքրիկ Ելիզայի քաղցրութիւնը, նրանց ապագայ երջանկութիւնն էր:

Հայրապետի սիրտը հետզհետէ ամրանում և կոշտանում էր. կոշտանում էր ինչպէս ոսկոր, ինչպէս ապառուժ. նա այժմ բոլորովին խորթացել էր իր հարազատներից՝ կնոջից ու ծաղկափթիթ զաւակներից: 1867 թուականի սկզբումն էր, գարնանային մի գեղեցիկ առաւտօտ, երիտասարդ Հայրապետի և նրա սիրուհու բամակից բաղաքի խաժամուժը ընկած՝ քշում էր դէպի ոստիկանատաւն:

— Այդ գաղաններին, հրէշներին, մարդասպաններին... քարկոծ արէք. ման ու կախաղան է այդպիսիների բաժինը... — Աղմկում էր կատաղած ամբոխը:

— Օ՛հ, խնայեցէք գէթ իմ անտերունջ զաւակներին. Հայրապետը անպարտ է, անպարտ է նա այդ գործում ինչպէս իւրաքանչիւրը ձեղանից... — Աչքերը արտասուքով լի, աղէնարշ ձայնով գոսում էր Հայրապետի կինը, որ խելացնորի նման՝ ոտարորիկ ու հերարձակ հետեւում էր վրէժնողի բազմութեանը:

Սակայն թէ ծանօթ հասարակութիւնը և թէ իր տմուսինը՝ Հայրապետի նկատմամբ՝ վաղուց արդէն յաւակնութիւն ունէին սպասելու նման եղեւնագործութեան, և Հայրապետը մասամբ արդարացրեց նրանց գուշակութիւնը, նա չ'կամեցաւ առաջն առնել իր սիրունու շար դիտարութեան, որ խորհում էր մի կերպ չեղոքացնել իր հարազատ մարդին, որպէսզի կարողանար անարգել և աղատօրէն սիրել նրան. հեռանալ Հայրապետի հետ մի ուրիշ եղիքը: Մարդասպանի խոկունքը, նրա իդձը մնաց խպատ անիրազործելի, որովհետեւ արդարադատութիւնը անմիջապէս բանտարկեց նրան, ձերբակալելով Հայրապետին էլ և դատապարտեց նրանց յաւիտենական տաժանակիր աշխատութեան:

Մութ և խաւար զնդանի մէջ յուսաբեկ այրասպանը մի անգամ ևս յիշելով թանկագին Հայրապետին՝ աւանդեց իր մահկանացուն. իսկ երիտասարդ աղան մի լուռ և խաւար գիշեր, երբ անքուն պահնորդը գրսում տեղացող յարդ անձրեից պաշտպանուելու համար մի կողմքաշատած՝ ոչինչ չէր տեսնում ու լսում, կործանելով արգելանոցի պատուհանի վանդակը, դուրս գնաց այնտեղից՝ ճանապարհուելով դէպի Տաճկաստան: Անատօլիայի քաղաքներից մինում նա հարկադրուեց կրօնափոխութեամբ փրկել իր կեանքը անխուսափելի կորսաից... ընդունեց Մուհամմէտի վարդապետութիւնը և թլիփատուելով վերա-

կոչուեցաւ Խմայէլ. այնուհետեւ վաճառականութիւնն ու խաղաղ կեանքը արհամարհած՝ Խմայէլը մտաւ հայ-փախստական Ղ.-ի կամաւորների շարքում և Մանսուլ-աղայի հովանաւորութիւնը վայելելով երկու պետութիւնների սահմանագլխի երկրներում ազատ ու անվախ առաջ էր մղում աւազակութեան, արեան ու զրկանքի գործը: Սակայն, պէտք է տաել, որ հաւասարաց հայը հազուագիւտ անկեղծութեամբ ճանաչում և պաշտում էր մարդկային ազգի Փրկիչ՝ Մեծ-վարդապետին—նա, գիշել ժամանակ, զերծ հետաքնին աշքերից՝ ամենայն ջերմեռանդութեամբ ու անձկանօր աղօթում և խաչակնքում էր իր երեսը, գիշերային խաւարի մէջ, կիսաւեր սրբարանի մամուռակալած ու մոռացուած խաչարձանի առջեւ ծունկ չոքած, իր որտարուղիս «մեղայականն» էր կարգում. զղումով ու ապաշխարելով իր հոգու փրկութիւնը հայցում: Թէպէտե, գէթ արաւաքուստ, նա անկարող էր ուրանալ և մնծ մարգարէի և «երկնային բարձրունքներից իջած» Ղուանի ճշմարտութիւնն ու սրբութիւնը... նա ամենայն անձկանօր սիրում էր իր նախկին հաւատակից—ազգակից եղբայրներին և իր ոյժի ու կարողութեան չափով պաշտպանում, և օգնութեան ձեռ էր կարկառում, երբ որ և կերպ վտանգուած է նրա վիճակը, երբ իսլամ հրոսակի բազուկը ծանրանում էր նրա վրայ, երբ տաճիկ պաշտօնէի կամ անսիրա կալուածատիրոջ ու հարկահանի կիզերումն ու հալածանքը հասնում էր իր գագաթնակէտին... հեռու ակնկալութեան կամ սին փառքի տենչանքից. նա հասնում էր իրաքանչիւր կարօսաւոր հային. շատերին աղատել էր կողովտուելուց, սպանուելուց և ուրիշ զանազան դժբախտութիւններից:

Տալաւէրի կիսակործան եկեղեցու մէջ պահում էր այն խմբի աւարը՝ որին պատկանում էր և Խմայէլը, այսպէս ասած՝ Ղ.-ի հրամանատարութեան ներքե:

Ք.

Ղ.-ը մի նոր դէմք էր, նոր հոչակ սաացած հերսո, որ խոյս տալով տաժանակիր աշխատանքից ու աքսորից՝ վայելելով Մանսուլ-աղոյի մտերմութիւնը՝ իր աւազակութիւնով ու քաջագործութիւնով՝ այդ կողմերում գող և սարսափ էր գցիլ: Խմայէլը նրա յօժարակամներից մէկն էր, մէկը՝ խմբի քաջասիրտ ու անկեներ անդամներից. նա պողպատի վահանի նման՝ ընդունակ էր մաքառելու սրի հարուածների և գնդակների տարափի դէմ... թէկ իր հայութեան նկատմամբ աշխատել էր զաղանի մնալ Ղ.-ից էլ: Գիշերուայ-այն պահուն, երբ քրդի բերած հայուհու համար կոռուցին աւազակները և Մանսուլը

արինաշաղախ գետին գլորեցաւ, Խսմայէլը յիշեալ աղջկան իր «արարի» ձիու գաւակն առած՝ աւազականոցից դէպի մօտակայ գիւղը սլացաւ:

—Մի լաց լինիր գաւակս դու այժմ ազատուած ես վտանգաւոր կացութիւնից. ազատուած ես և անզնաս մարդի մօտ... շուտով պիտի տեսնես քո հարազատներին...—Միսիթարում էր սրտաբեկ և յուսհատ աղջկան աւազակ—ազատաբարը:

—Մի, հարազատներս այլ ես գոյութիւն չունին այս աշխարհում... սպանեցին ծերունի հօրս, յափշտակեցին ու տարան մեր բոլոր ունիցածը, լժկանն ու կթանը,.. և երբ կամենում էին ինձ էլ զուրս կորդել հայրենի յարկից, եղբայրս դիմադրութեան ցոյցեր արեց. ախ, անիծուին այդ ցոյցերը, երբ կատարուում են նրանք անսակառ անխորհուրդ, թոյլ և անդէն, մեղ նման խեղճ ու կըակ շինականների ձեռքով։ Աւազակներից երկուսը սուսերամերկ արձակուցին եղբօրս վրայ, մարդասպան Զիլօն զուրս քաշեց ինձ տան սեամքից... օ, անիծուին նրանք։ 2'գիտեմ, չ'գիտեմ թէ ինչպիսի վախճան ունիցաւ գուծը. նա էր միայն մեր օջախի վերջին յոյսն ու միակ նեցուկը...—Արտասուքը աշքերին թոթովում էր կիսամեռ աղջիկը։

—Է՞հ, անիծուի իսլամութիւնը, որ այդքան անմեղ ու անպարա արին է ծծել...—վրայ բերեց Խսմայէլը, որ զգացուած էր և յուղուած։

—Չէ որ դու էլ, թէս բարեպաշտ, բայց տաճիկ ես։

—Ե՞ս, ես, այս, անհաւատ հմ այսօր, բայց մի ժամանակ քեզ նման հայ էի և ջերմեռանդ բախտոնեայ՝ եկեղեցամէր, Աստուածավախ...։

—Քիստոնեայ.. ասա էն խաչը.

—Խաչն էլ, մեռոնն էլ...։

—Ուրեմն մեղք և ամօթ քեզ, որ ուրացութեան դնով ձեռ ես բերել ասպետի, նոյն իսկ քաջի սին փառքը... հ՞ը, մեղք չէ, որ այդ սիրաը թիւրքի համար բարախի, խորչի իր խաչիցն ու աւետարանից, ժամիցն ու պատարագից։—Քաղցրաբար կշամքեց բարերարուածը։

Խսմայէլը մի ինչ սը կրծող վիշտ, մի ծանր, սպանող խայթ ու գալարումն զգաց իր ներսում. բարոյական այդ հարուածը ասես մահցու էր իր համար... և գիւղ համնելով՝ արձակեց աղջկան ու ինքը շտապեց հեռանալ, բայց ուր գնալ, ինքն էլ չէր իմանում. դառնալ նոյն հանապարհ՝ թիւրք և աւազակ լինել, միանալ աղգային սիսերիմների՝ չերքէցի ու քրդի հետ և յագենալ անմեղների քրտինքովն ու արիւնովը. շատ ծանր հարց էր նրա համար։

—Ուր գնամ, մտածում էր նա ինքն իրան—Դ.-ը մեղ համար

այլես կորսուած է, նրան մի օր կ'մորթին թաւրքերը՝ որպէս գեափուրի, կամ Կարսի միջնաբերդից կ'զլաբեն մինչի անդունդ. մանաւանդ այժմ, երբ պակասում է Մանսուրի հովանին։ Զարունակել արդեօք անարդ աւազակութիւնը. ոհ, ոչ, ոչ. ինչ անել ուրեմն...— Դոչեց նա դառնապէս և մարակեց ձիուն։ Արարին վաղ էր տալիս հնազանդ իր տիրոջ կամքին։

Մի քանի օրից յետոյ Խսմայէլը գեղջուկի շորերով մտաւ մի յայտնի հայաբնակ քաղաք. նրա ականջին հնչեցին Քրիստոնէական եկեղեցու գանգերի ներդաշնուկ ու համելի դողանջիւնը. նրա ցորնեզոյն գէմքը կապարի գոյն ստացաւ. նա ամօթահարուեց և ալեկոծ սիրտը լցուեցաւ անասելի գառնութեամբ... Խսմայէլը մտարեց այն երջանիկ ժամանակը, երբ գետ երեխայ, հնազանդ այդ ձայնին, դպրոցական տղայց հետ շատպում էր այդ սրբավայրը հանդիսանես լինելու այնքան պարզ և մաքուր հայկական ծիսակատարութիւններին, և քանի մեծանում էր նրա հասակը, այնքան էլ աւելանում էր նրա մէջ Զերմեռանդութիւն դէպի իր հայրենի անարատ կրօնը։ Խոկ այժմ ինչ էր նա... հեռացած մայրենի եկեղեցու գրկից, զուրկ հայ մարզի բարեկամութիւնից ու պաշտպանութիւնից՝ ընկել էր նեխուած մահմետականութեան գիրիկը, թէս սրասով ու հոգով, խօսքով ու գործով, աշխատել էր բարեկամ մնալ, գէթ պիտանի լինել նախկին հաւատակիցներին... Այսպիսի խոհերով մօակցաւ նա եկեղեցուն, ներսից լուսում էր մեղեղիկի անոյշ ձայնը. հասնում էր իրեն նաև կնդրուկի կարօտաւոր ու ախորժ անուշահոտութիւնը. բայց արեց գլուխը, բայց բնազդմամբ չ'վստահացաւ առաջ գնալ... խորտառուզուած մտածմունքների ովկիանոսում, նա ծունկ չոքեց տաճարի զռանը և երկար ժամանակ մնաց այդ գրութեան մէջ՝ ասես մեխուած, արձանացած նոյն տեղում... Յամեկաշտ աղօթաւուները նկատելով Խոմայէլի այնքան տխուր ու յուսահատ դէմքն ու պատառուուն հագուստը, զուրս զալով եկեղեցուց ողբրմութիւն էին ցցում նրա զգզուած գլխարկի մէջ, սպան նա ոչինչ չէր տեսնում. մժավանած աշքերով, սրայայդ և մտախոհ նստած էր գլխիկոր.. այդ գրութիւնը այնքան էլ երկար շ'տեց, երբ կամինում էր մտնել եկեղեցից զռան առջի հանդիպեց նրան աւագ-քահանան, որը միհնայն ժամանակ և տեղական չոգեոր Ատենի նախանդամ էր, բարեգործ եկեղեցականի հոչակ վայելող, հաստափոր ու հաստափիզ, Խսմայէլը ծունկ չոքեց նրա առջն և խնդրեց լսել իրան. լսել իր կեանիքի վէպը, գէթ մի հատուած իր մօտիկ անցիալից...։

— Օ՞հ, զաղթականներ ու մուրացիկներ, այլ ես անտանելի էք դարձել... ինչ է պակասում քեզ համար, հը, փառք Աստուծոյ, կաղ

շես և կոյր կամ անդամալոյծ, միթէ շես կարող մշակ լինել և քո օրական հացը հայթայթել—արդար ու աղնիւ ճանապարհով:—Զարմացմաք բացագանչեց քահանան:

— 2է, տէր-տէր ջան, ես մուրացկան շեմ, ես ողորմութիւն շնչ խնդրում քեզանից. հանդամանքները գլորեցին ինձ մահմետականութեան գիրկ... ես այժմ թուրք եմ, աւագակ, անօրէն...—և սկսեց նա հեկեկալ:

— Տուն արի, որդի, պէտք է սրբազանին խնդիր տալ. լսում ես մահմետականին քրիստոնեայ մկրտիլլ շատ գժուարութեամբ է աջողում, գումար է հարկաւոր... բայց անպատճառ տուն արի. այ տեսնո՞մ ես դա իմ տունն է:— Յոյց տալով եկեղեցու դէմ յանդիման գտնուող մի փառաշնչն երլիքարկանի բնակարան՝ տեղացրեց անդամ-քահանան:

Իսմայէլը ոչինչ չհասկացաւ և ապուչի նման իր հայացքը սեեռել էր հանդիպակած տանը, որ իր արտաքինով իշխանական ապարանքի էր նմանում... նա կամենում էր խոստովանիլ, արժանանալ կենարար արեանի ու մարմնին, «Հայ դաւանալ» վերսախն աղօթել հայոց-Աստծուն և ապաշխարել. մինչդեռ նրանից «ինդրապիր» և «զումար» էր պահանջուում:

— Որպէս զի իսպառ ծածկուած լինի գաղտնիքը, թէ ես հայ եմ, աքսորավայրից փախած, կարեսը է մահմետական ձեանալ մինչեւ որ մի բարերար մարդի շնորհիւ վտանգից բոլորովին աղատաւած, կարող կ'լինիմ իմ հարազատների, իմ ընտանիքի գիրկը վերադառնալ:— Այսպիսի մտածմունքի մէջ էր նա, երբ մօտեցաւ մի երկյարկանի տան, որի պատշգամի վրայ յամբաքայլ ճեմում էր մի հաստափոր աղա, կարճ և լայն թիկունքով, պաշտօնական փայլուն ուսողիրներով և զնզնդան խթաններով:

— Աղա, — ներքեց ձայնեց Իսմայէլը՝ գլուխը թեի տակն տուած՝ տխուր և անհամարձակ—ի սէլ. Աստուծոյ աղատիր իմ հոգին մահմետական հաւատից, ես քո ստրուկը, քո գերին կ'լինիմ:

Աղան իր ածելած երեսը դարձրեց դէպի աղերսողը և մոխրագոյն բբերը սեեռած նրա վրայ, հետաքրքրութեամբ սկսեց տնտղել նրան: Իսմայէլը նոյն խնդիրը կրկնեց և երորդեց:

— Կորիր, անմիտ կենդանի...— զայրացած գոչեց հասակաւոր սպայը:

— Դոնեա ցոյց տուր ինձ հայ մկրտուելու համար մի դիւրին ճանապարհ... ես սիրում եմ Աւետարանի վարդապետութիւնը, լուսաւորչի եկեղեցին...

— Կորիր, — նորից ձայնեց աղան—ախր իմ ինչ բանն է թուրքի գործին խառնուիլ:

— Ա՛խ, ես էլ հայ եմ. հայ աւազանի զաւակ... թոյլ տուր, աղա, գէթ մի ամենակարձ միջոց պատսպարուիլ քո հովանու ներքե:

— Դնա, ասում եմ քեզ...

Իսմայէլը խոր հոգւոց հանեց և յամրաքայլ հեռացաւ այնաեղից: Մի ամբողջ շաբաթ խեղճ օտարականը քահանաների և «իշխանների» ոտքերն ընկած՝ իրեն տաճիկ ցոյց տալով՝ խնդրում էր նրանց հովանաւորութիւնը: Ինչպէս ասացինք թուրք էր ցոյց տալիս իրեն, որովհետեւ բաց անել իր վշտու սիրտը ուրիշի առջև, ասել ճշմարիտը նա չէր կարող. զգուշանուում էր զաւաճանուութիւնից: Հայրենասէրների այդ մարդաշատ քաղաքում չ'պատահեցաւ մի բարի մարդ, որ փոքրի շատէ կարեկցէր կամ գէթ բարոյապէս մխիթարէր անտէր, անտուն ու անպաշտպան մարդին... Փողոցային տղմի մէջ—գինեաներում թափառող—երիտասարդները միայն ըմբռներով նրա վիճակի դառնութիւնը՝ խարհուրդ տուին Տարօնի Ս. Կարապետ վանքը գնալ, ուր թերևս զիրծ պիտի մնար վտանգից, պիտի մխիթարուէր հոգեպէս և ի վերջոյ պիտի ունենար իր ամենօրեայ մի պատառ ու հացը:

### Ե.

Իսմայէլի գուշակութիւնը՝ Ղ.-ի նկատմամբ՝ շուտով արդարացաւ:

Մահմուրի տարադէպ մահով քայքայուել էր և աւազակային խմբի կազմը՝ ամբողջութիւնը. այն օրից շատ ժամանակ չէր անցել, որ Ախուրեանի եղբը, տաճկական պահականոցի մօտ, բարձր տէզի ծայրին ցցուած՝ մի մարդկային արխինաների զլուխ ի ցոյց էր դրուած ժողովրդին: Ներքեսում, սայլի վրայ, տալածուած էր նրա վիթխարի դին. մի առասպելական տիտան, երեակայական քեօռ-օղի էր նա, որին դաւաճանութեամբ սպանել էին թիւրք զինուրները և այն՝ ձերբակալելուց յետոյ՝ քամակից գնդակահար անելով...»

Սուլթան-Աղիզը հիացած այդ հերոսի՝ Ղ.-ի քաջագործութեան հոչակոլ՝ կտրած գլուխը պահանձել էր Կ. Պոլիս, գիտել էր հայ-Դողիկաթի առնական—սքանչելի—գէմքը, սրտանց ցաւել էր նրա կորըստեան համար և հրամայել էր գլխատել այն անսիրտ հարիւրապետին՝ որ ընդունակ էր ձեռ ու ոտը կապուած հերոսին՝ քամակից գնդակահար անելով:

Ղ.-ը իսկապէս իր սիրած կնոջ դաւաճանութեան զոհը դարձաւ:

### Զ.

Ղ.-ի մահից մի քանի տարբիներ էին անցել:

Զմեռ էր. Բարձր-Հայոց լայնատարած դաշտերն ու ժայռոտ

բլուրները ծածկուել էին սպիտակ սաւանով. ցրտի անհնարին սաստկութիւնից ամեն ոք պատսպարուել էր մի տարուկ յարկի տակ. չէր լուռում գոյնզգոյն թռչունների բաղցը դայլայլիկը, չէր բուրում երփներանգ ծաղիկների այնքան հաճելի անուշահոտութիւնը, բնութիւնը կարծես մեռած գրութեան մէջ էր, երբ իրիկնադէմին ծանր գաւազանի օգնութեամբ, դանդաղ քայլերով մօտինում էր մի երխատարդ տղայ՝ ծարօնի գաւառում, բարձրուանդակի վրայ, հայր ձեռքով, հայկական ճարտարապետութեամբ կառուցուած հնագարեան հոյակապ վանքին. դա Ս. Կարապետի, իս հրաշագործութեամբ ահագին հոչակ ստացած՝ մենաստանն էր... եկուրը մի աղքատ, նիհար, մելամաղձիկ և գունատ դէմքալ կիրտասարդ էր. նրա ճակատի վրայ զըսշմուած էր շատ թշուառութիւնների հետքեր... իսկ զգգորուած ցնցուախները, որոցմով իբր թէ ծածկուած էր նրա մարմնի մերկութիւնը, լուռ վկաններ էին նրա անվերջանալի թափառականութեան: Գնում էր ոս մտայոյդ, ստկայն ինքն իրեն խրախուսելով:

— Հարկաւոր չէ յուսահատիլ ու լքանիլ. եթէ մի տեղ չյաջողեցաւ ինձ նոպատակիս հասնիլ, թերես մի ուրիշ տեղ աջողի այդ... գնա իմ, որ գէթ հնարաւորութիւն ունեցայ ողջամբ այստեղ հասնել, պէտք է ուրեմն ենթագրել և հաւատալ, որ նա, Ամենագէտն ու Ամենակարողը առաջնորդում է ինձ...

Այդպիսի մենախոսութեամբ լեռան մենաւոր—ցից-ցից—ժայռերն անցնելով մօտեցաւ նա վանքին. ջերմեւանդութեամբ խաչակնքեց երեսը և համբուրեց ժանդոտած ու մամուակալած սեաւոր քարերը: Վանական միաբանութիւնը՝ ըստ սովորութեան՝ ամենայն սիրով հիւրենակալեց նրան:

— Յանձնիր նորեկին՝ Տիրացու Մկրտչի խուցը, որ ընդարձակ է և հիւրենակալ: — Հրամայեց ժամակոշ-չաճուն՝ վանահայը:

Տիրացու Մկրտչի խոր քնի մէջ մըափում էր, երբ բաղխեցին նրա խցի դուռը:

— Սարկաւագ, այ սարկաւագ, վեր կաց. — Գոչեց ժամակոշը, որի խրստ ձայնը լսելով, տիրացու Մկրտչի վեր կացաւ տեղից և քնէած աշքերը շիմելով բաց արեց դուռը:

— Այս պանդուխտ մարդին ընդունիր քեզ մօտ, քո վիճակին բախտահալած մի տղայ է. — Խօսեց ալեղարդ ժամակոչը և ներս արեց օտարտականին սենեակի մէջ:

— Մտիր համարձակ, եղբայր, սա աղդի տուն է՝ հասարակաց սեպհականութիւն և յատկապէս ինձ և քեզ նմանների համար հիմնուած. հը, բայց ես չեմ ճանաչում հայ ես թէ տաճիկ—Աստուած զիտէ. բայց և այնպէս բարի լինի քո այցը... — Զուարճախօսեց

## սարկաւագը:

— Եօթն անուան դոււլն էլ տաճիկ կ'լինի. լսուած բան է: — Լսուած չէ հա. դէհ որ լսուած չէ, այժմ դու ասա՞ ո՞րտեղից ես գալիս և ինչ գործով:

— Կարինից... վանքում մի մասնաւոր զործ ունեմ հոգալս: — Մի տեսակ անհամարձակութեամբ պատասխաննեց եկուրը:

Բարբեսիրա Մկրտչի նրա համար խոտալի անկողին տարածելուց յետոյ, հրաւիրեց ընթրելու. «դունիկ» հացն ու «կանաչ պանիրը» նա կիրաւ ամենայն ախորժակով. ապա՝ երկուսն էլ զոհացան Սոտծուն, երկուսն էլ ծանր հառաչանքներով պառկեցին գիշերային հանգիստը վայելելու, սակայն հազիւ թէ Մորփէոսը տարածել էր նրանց աշքերի վրայ իր թեսերը, երբ ուժգին բաղխեցին պարսպի աւագ-դուռը:

— Ո՞վ է. — Կոչեց արթուն պահապանը՝ ժամակոչը:

— Վարչական պաշտօնեաներ. — Եղաւ պատասխանը:

— Այս վայրկենին, էքինդիներ, բանալին վանահօր մօան է... իսկոյն բաց կանեմ. — Ասաց ժամակոչը և չնշասպառ վաղ տուեց գէպի տիրացու Մկրտչի սենեակը:

— Օտարական, շտապիր, վեր կաց շտառվ. աիլացու Մկրտչի թնդ ծածկէ քեզ գետնափոր տան մէջ... եկել են անիծուած ոստիկանները. երեւ հոտ են առել... ինչ ես հրամայում, տիրացն, ընդունել նրանց: — Աւելացրեց նա:

— Քաշուելու բան չունինք, ընդունիր եթէ միայն իրօք զինորներ են և ոչ քիւրդ հրսոսակներ:

— Քիւրդի չեն, Սհմէդ շատուշն է՝ իր նիզամներով:

— Դէհ գնա ուրեմն... — Առանց սպասելու սարկաւագի պատուէրին՝ ժամակոչը հեռացաւ և բաց արեց դուռը:

— Համեցէք, համեցէք, բարի լինի ձեր գալուստար. — Ամենայն քաղաքավարութեամբ կամ, որ աւելի ճիշտն է, սարուկին յատուկ սասր ու շողաքորթ ձեերով հրաւիրեց նրանց ժամակոչը: ներս խուժեցին վեց հատ օսմանցի ձիաւսր զինուրներ:

— Ո՞ւր է այն տղան, որ այսօր վանք եկաւ... շուտով ցոյց տուր մեզ նրա թագստեան տեղը: — Խօսեց Ահմէտ-չափուշը՝ շարժելով ձեսի գալարուն մարակը:

— Ներեցէք, էքինդի, այսօր...

— Ինչպէս չէ, մենք իրաւունք տուինք անիրաւ խողին վանք գալու, բայց նա խրեց մեղ... հասկանում ես, խրեց...

— Այս, անպիտանը անշուշտ անմասութիւն է ունեցել սուտ ասել ձեզ... որովհետեւ այս քանի օր է, որ վանքում ոչ մի կողմնակի կամ օտարտական մարդ ոտ չի գրել. ձմռան սաստկութեան պատ-

ճաւազկ երթևեկութիւնը իսպառ ընդհատուած է. գուցէ բաղաք լինի գնացած, գուցէ...—կամենում էր հաւատացնել եկեղեցու սպասաւորը:

—Օ՞հ, անիծուած գեաւուր, դարձեալ համարձակուում ես սուտ ասել, խարել մեզ... առանց հնթագրութիւնների այս վայրկենին պիտի յանձնես մեղ եկուր շունը, հակառակ դէպքում քեզ քարշ կտանք և շան սատակ կանենք... լսում ես:

—Վանահօրն իմաց արա, ամբ քո ինչ գործն է վաստարանել:—կամենալով անուշը կապել՝ նկատեց զապտիաներից մէկը:

—Վարդապետի լաւ ծանօթն էր օտարականը և հէնց այս ըուպէին նրա մօտ է.—վրայ բերեց երկորդը:

—Անհաւատ, մարդապաշտ շներ...—մըթմոթաց երբորդը:

Լսելով, երիտառարդ տղայի գալուստը վանահայրը իր մօտ խընդուց զապտիաներին, որոնք պատմեցին թէ եկել են որոնելու մի փախստական սրիկայի, որ խոյս էր տուել Կարսի բանդից և ծածկուել էր վանքի պարսպների մէջ... վանահայրը քաջ գիտէլ որ սրած ախորժակով՝ ոսկորահաչ էին տալիս, ուստի մի քանի վայլվլուն սպիտակ մէջիտիաներ սեպմեց նրանց ափը, մի-մի գաւաթ՝ օշարակ հրամցըց և հաճելի գուարճախօսութիւնով բաց արեց նրանց առջև դարպասի փեղկերը. թիւրք պաշտօնեաները հեռացան Ա. Կարապետից ուրախ և գոհ սրառվ:

Վանահայրը հրամայեց Մկրտչին ներկայացնել իրեն օտարական երիտասարդը և սկսեց հարց ու փորձ անել թէ ո՞լ էր նա և ո՞րտեղից էր գալիս:

—Ես մի որբ և չքաւոր տղայ եմ.—այդպէս սկսեց երիտասարդ նորեկը, սրբելով աշքերի արտասուրքը—իմ հայրս կորսուած է... տասը ձիգ տարիներ անցան, որ պանդխտութեան ցոււլը ձեռիս, քաղաքից՝ բաղաք, երկրից՝ երկեր թափառելով պարում եմ ես նրան... եկայ մառմառ գերեզմանին, որ իմ մուրադը տայ, որ իմ թանկագին կորստի համար մի ճար ու դարման անէ. չէ որ սուրբ է, ամենադէտ ու ամենակարող...

—Բայց ո՞րտեղից ես դու:—Ընդմիջեց սարկաւագը, հազիւ կարողանալով զսպել իր ներքին յուղմունքը:

—Ըուշի քաղաքից:

Լսելով այդ՝ տիրացու Մկրտիչը սաստիկ գունաթափուեց, դողը տիրեց նրան և կարծես պատրաստում էր լաց լինելու:

—Սնունդ ինչ է.—մօտենալով նրան՝ հազիւ լսելի ձայնով հարցեց հետաքըքիր Մկրտիչը:

—Արամ...  
Այդ խորհրդաւոր անունը հազիւ դուրս եկաւ երիտասարդ տղայի

բերանից, որ սարկաւագը՝ ուրախութեան արտասուրքը աշքերին, գըրկախառնեց նրան և ջերմ համբոյըներով ծածկեց նրա դալուկ և նիհար այտերը:

—Յիրաւի՛ «Եօթն անուն» մուլազատու է, մուրազատու...

Ներկայ եղողները մի տեսակ ապշութեամբ դիտում էին այդ ցնցող, սրաշարժ տեսարանը. նորեկը՝ արձանի նման մնացել էր լուս և անշարժ... ինչ է նշանակում այդ բոլորը. ինչու է լաց լինում և ջերմագին համբոյըներով ողջագուրսում իրան մի պատահական կուսակրօն մարդ: Տիրացու Մկրտիչը հասկանալով երիտասարդի խոկմունը ու հոգեկան ալեկոծ վիճակը՝ ժպտալով բացականչեց.

—Քո հայրը կոչվում էր...

—Հայրապետ.—վրայ բերեց օտարականը:

—Այն, Հայրապետ, սիրելի դաւակս, այդ ես եմ ահա, բո ծնող հայրը...

Արամը զգացուած՝ փաթաթուեցաւ հօր պարանոցը և անհուն ուրախութեամբ ու անվերջանալի համբոյըներով ծածկեց երկար տարիներով կորսուած իր հարազատի կոշտացած ձեռը:

Նոյն գիշեր մթին սենեակում առանձնացած՝ հայր և որդի ծանօթացըրին միմեանց ձիգ տարիների, անցեալի հետ:

Սիւնեցի Հայրապետը, նախկին Խոմայէլ աւազակը, երիտասարդների խորհրդով գնացել էր Ա. Կարապետի հոչակաւոր մենաստանում իր կեանքի մնացած օրեւը աղօթքով ու ապաշխարութեամբ անցնելու: Վանքի մէջ նա լաւ ընդունելութիւն դտաւ և իսպառ անծանօթ մնալու համար՝ ինքն իրան Մկրտիչ անուանեց: Ծերունի վանահայրը հաւատիանալով ջերմեանդ մարդի հազուազիւտ հաւատարմութիւնն ու ժրութիւնը՝ սարկաւագի կոշումն տուեց նրան և առհասարակ արտօնուց ընդարձակ իրաւունքներով. այնուհետև նա դարձաւ վանահօր աջ բաղուկը, նրա մտերիմն ու սիրելին...

Մկրտիչը միակ անձն էր վանքում քաջ ու անվեհեր սիրա ունեցող. վարժ՝ զէնք բանեցնելու գործում, ուստի և նրան էր յանձնուած վանքի պաշտպանութիւնը արտաքին թշնամիների դէմ:

Է.

Այն օրից մի քանի ամիսներ էին անցել:

Գարնանային մի զուարթ առաւօտ, երբ հրեղէն գունդը նոր էր սկսել իր սոկեփայլ ճաւագայթները սփոել կանչազարդ տափարակների և մացառուտ բլուրների վրայ, երբ Մայիսեան երփներփն ծաղիկները իրենց սքանչելի գեղեցկութեամբ ու անուշահոտութեամբ

մանուկ բնութեան հրաշալի ձիքերն էին մարմնացնում, ելք քաղցրախօս, նախշուն թռչնիկները ոստից՝ ոսա, ծաղկից՝ ծաղկիկ թռչկոտելով՝ իրենց հսկեդրաւ մեղեդիներով լցնում էին հովասուն օղը, Ա. Կարապետի մենաստանից գուլս, ծաղկախիտ բարձրաւանդակի վրայ կանգնած էին Մկրտիչն և իր որդին: Երիտասարդը ճանապարհում էր զէպի հայրենիք. նա մի քանի անգամ մնաս բարեաւ էր ասել ծնողին և երբէք չէր յագենում նրան գրկախանելուց ու համբուրելուց... Տիրացու-Մկրտիչը ամենայն անձկանօք փաթաթուած իր սիրելի որդուն և՛ յուսադրում և՛ լաց էր լինում... ասես վերջին հրաժեշտն էին տալիս միմեանց այլ ևս կենդանի շնանդիպելու տիսուր յաւակնութեամբ:

—Մնաս բարեաւ, անգին հայրիկս,—անհուն վշտով համակուտած կրկնում էր Սրամը,—պիսի աշխատիմ հնարաւոր եղածի չափ շուտով վերադառնալ քո ցանկալի տեսութեանը...—Աւելացնում էր նա դողդոջիւն ձայնով:

—Դնաս բարեաւ անմոռանալի գտւակս, չմոռանաս շուտով վերադառնալ բրոդի հետ միասին. ախ, իմ աննման էլիդա, ինչպէս փափագում եմ տեսնել, գրկախանել և համուրել քեզ... լսիր, որդեակ, իմ ընակութեան տեղին թռղանայատ մնայ բոլորից, որսվհեան անբարեմիտ մարդկանցով լիքն է աշխարհը—չար մարդիկ կարող են թունաւորել իմ վերջին խաղաղութիւնն էլ, որ կամենում եմ վայելի այս մենաստանում, Ա. Կարապետի դռանը, աքնութեան և ապաշխարութեան մէջ...

Այդ պահուն նա յիշեց իր ամուսնին, որին՝ կենդանութեան ժամանակ չ'կարողացաւ սիրել և գնահատել. արտասուրի տաք-տաք կաթիները ընդհատեցին հոգեկան սպանող վշտերը՝ իր գլխում դարթնած մաշող վերյուշերը:

—Առ այդ տեղին մետաղի համեստ ծրարը, որդեակ իմ,—մի քանի բոպէից յետոց, նորից սկսեց Մկրտիչը—թիւրը նիղամն ու անկուշ զապատիան այլ ևս չեն նեղիլ քեզ... առ և այդ մատանին, որ քո դժբախտ մօր միակ և ոչնչով փոխարինելի յիշատակն է, աշխատիր միայն անկորուսա պահել... աւելի ոչինչ չունիմ քեզ տալու՝ Փրկչական աջն ու խաչը քեզ պահապտն. գնահ, զաւակս Աստուած քեզ հետ...

Մի անգամ ևս համբուրելով երիտասարդի գունատ այտերը, արձակեց նրան: Սրամը պաշարեցնի մախաղով բեռնուած՝ ծանդ ցուպը ձեռին՝ գանդաղ կիրպով փոխեց իր քայլերը զէպի առաջ, յուսահատ և սրատարեկ... մեղթ յետ էր գարձնում իր արտասուալից աչքերը զէպի թշուառ հայրը, որ երկար ժամանակ պարսպի առջև, մոմեղէն

արձանի տէս լուռ մեխուած՝ որդու հեռանալն էր դիառում և մերժ սեեւում էր իր հայացքը զէպի անծայր հորիդոնը, ուր նրա միտքն ու սիրաը թէ առած՝ թռչում էր անտէր և անօգնական թռղած էլիդային գրկախառնելու տենչաներով:

—Գնա, —մենախօսում էր Հայրապետը՝ չհեռացնելով աչքերը իր սիրելի որդուց, —գնա, իմ վելջին յոյս ու մսիթարանք, Տիրոջ աջը թիղ օգնական... խեղճ տպայ, անհայր և անմայր, հայրը՝ թէ կինդանի, բայց բարոյապէս մեռած է, տխուր, այլանդակ անցեալով, կըօհափոխ, աւագակ, սրիկայ...

Զոյգ սրտակից զէմքերը երկար ժամանակ ակնապիշ նայում էին միմեանց, մինչև որ գնացողի աչքից իսպառ անհետացան դարաւոր վանքի մամուակալած կատալները... Սարկաւագը մի անգամ ևս ձգեց իր տիսուր հայացքը որդու անցած զասիփայրի վրայ և ջերմ, խեղդող արտասուքը սրբելով՝ ներս մտաւ պարսպի դոնով:

Ը.

Սրամի բացակայելուց յիտոյ Մկրտիչը վերսկսեց իր նախկին կեանքը. նոյն նուանդով և ոգեսութեամբ նա շարունակում էր իր տքնութիւնն ու աշխատանքը Սուրբ Կարապետի պատերի մէջ. սակայն իր անգին որդու զէմքն ու շարժումները յաճախ ներկայանում էին նրա տեսութեան առջե, գալարում էին աղիքները՝ սաեղծելով տիսուր ու ցաւոտ, յաճախ նաև այլանդակ և յուզող պատկերներ... խորասուլում էր նա մըրկածուփ ովկիանոսում. և այդ դրութեանը հետեւում էր միշտ մելամազնութիւնն ու տիսուրթիւնը, անհուն վիշտն ու լճացած արտասուքը... Մկրտիչը կամ նախկին Հայրապետը, յաճախ մտարեցում էր իր հանգուցեալ ծնողներին, կնոջը, տուն, տեղ, արենակիցներին և ընկերներին, որոնցից նա յաւիտեանս բաժանուծ էր. զըկուած էր նաև հայրենիկ վերադառնալու այնքան տենչալի յօյսից... օրերն անցնում էին արագ և նրանց միատեսակ լինելուն միակ միտթարութիւնն այն էր, որ յաւակնութիւնն ունէր ենթաղբելու թէ՝ շուտով գրկելու է իր սիրելի զաւակներին:

Այդ իսկ ժամանակ երկու մեծ ինքնակալութիւնների միջև ծագել էր անարկու և արիւնառուշ պատերազմը: Քիւրդերն ու լեռնցի չերքէղները տուաել ևս զրդուած լինելով հայ-քրիստոնեայի զէմ, սանձարձակ գործում էին ամենայն տեսակ չարութիւններ. որովհետեւ պատերազմը լզւում էր Քրիստոնէից աղատութեան, նրա ապագայ բարօրութեան փառաւոր տենչով...

1877 թւականի Յուլիսի վերջերին՝ Ա վանքի մանահօրից՝ Ա. Կա-

բապետի վանահայրը հետևեալ բովանդակութեամբ մի նամակ ստացաւ.  
«Եմսիս 27-ին ջիւռն ե քը՝ միացած տեղական քիւրդ և չերքէդ  
հրոսակների հետ, յարձակուեցին մեր սրբավայրի վրայ, ներս խուժե-  
ցին պարսպով, պղծեցին տաճարը և յափշտակեցին սրբազան անօթ-  
ները. սկիհ, խաչ, աւետարան... սկզբում մենք որոշեցինք դիմադրել.  
ինձ վիրաւորեցին, ժամակոչ երիտասարդը և վանքը պահպանելու հա-  
մար ձեր ուղարկած քաջամարտիկ Մկրտիչը հինգ քիւրդ սպանելուց  
յետոյ, չարաշար և սոսկալի մահով նահատակուեցին...»

Այդ ցնցող տողերը կարդալուց յետոյ, վանահայրը մի տեսակ  
հոգեկան զայրոյթի և ապշութեան մէջ խորասուզուեց: Նա կորսրել  
էր իր հաւատարիմ վնկերոջն ու անձնուէր սպասաւորին. իսկ վանքը  
զրկուել էր՝ արթուն պահպանից ու ժրաշան մշակից:

— Խեղած մարդ, թանկագին Մկրտիչս,— գոչեց չայր-սուրբը, —  
քեզ ոչ ոք չ'կամեցաւ ճանաչել ու գնահատել. դու իսկապէս դադա-  
փարի՝ ազգի և եկեղեցու գոհը եղաւ. խաղաղութիւն նշխարներիու:

\* \*

Ն-վանքի կողոպտուելուց յետոյ, գրեթէ մի տարի էր անցել,  
որ մի գեղեցիկ օրիսրդ, գեռահաս երիտասարդ աղայի և ալեղարդ  
ծերունու հետ, յիշեալ մենաստանից ոչ այնքան հեռու գտնուող գե-  
րեզմանատան մէջ մի շիրիմ էին որոնում. երկար ժամանակ որսնե-  
լուց յետոյ, վերջապէս ծերունին մօտենալով մի ցածրիկ հողաթումբի՝  
բացադանչեց.

— Ահա, սիրուն զաւակներս, սա է ձեր տարաբաղդ հօր դամ-  
բարանը. ահա այստեղ՝ մայր-հողի ծոցում ամփոփուած են հայ հե-  
րոսի երկրային մնացորդները՝ պահանջելով վրէժինդրութիւն...

Սրամնումոք համբուրեցին նրանք հողի ու քարի կոյտը և ուխ-  
տեցին վրէժինդիր լինել. Սրամն ու էլիզան սրբեցին իրենց աշքե-  
րի արտասուրը և իրենց ծնող հօր՝ Սիւնեցի հայրապետի յիշատակը  
ահջինջ պահելու համար, մի անպանոյն, մի կոշտ ու անտաշ որձա-  
քար տնկեցին նրա աճիւների, նրա հողաթումբի վրայ, որի ճակա-  
տին վանահայրը յարմար դատեց քանդակել մի բառ միայն՝ վրէժ...

## ԵՐԿՈՒ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ

(իրական անցք)

Ա.

Մթին թուխպերով ծածկուած էր Տուրուքերանի պայծառ հո-  
րիզոնն ու ջինջ կապտագոյն երկնակամարը. այդ թանձը մէկ ու մա-  
ռախուղը չայկական օջախի ծուխն էր, հայի վարդագոյն արեան ճեն-  
ճերոցն ու գոլորշին, որոնք սակայն միախառնուում էին՝ դէպի երկինք,  
դէպի Որէն ոլացող հոգեկան մըմունջների ու աղէխարշ, ցաւոտ հառա-  
չանքների հետ.— գա տարաբաղդ սարուկի մարմնացած բողոքն էր...

Տաւրոսի գարաւոր աննկուն և միշտ անընկճելի լեռնաշղթան,  
նրա աղատ ու կորովի հարազատները ճկում էին իրենց անմեղ ու  
անպարտ պարանոցները սասի զինուորի և արիւնաբռու քիւրդի անո-  
ղոք սրերի, տէպերի ու աշտէների առաջ, խոնարհել էր նրա գրօ-  
շակը, որ այնքան հապարտ ծածանսւում և փողփողում էր սեպացած  
ժայռերից մինչև կիմար բարձրացող՝ կատարներում. ամենուրեք տի-  
բել էր գերեզմանական լոռութիւն, մերթ ընդ մերթ միայն լսում էր  
հրացանաձգութեան խուլ որտուր և ժամերով ընդհատւում... ընդհատ-  
ւում էր՝ աւելի ուժգին, աւելի թափով շարունակուելու համար:

Բայց ինչ էր նշանակում այդ բոլորը:

Սասունը՝ աննման և անկախ Սասունը, չայութեան արդի  
ապաստանաբանը, քաջերի ծննդաբանն ու նրանց վերջին դամբարանը  
պաշարման ու նուաճման վիճակի մէջ էր. յելուզակ քրդի հալածանքը  
չէ միայն նրան արցունք ու արիւն վոթել տուողը, այլ՝ կարծես ին-  
քը՝ բնութիւնը իր առօրեայ պատահարներով... հարազատները յուսա-  
գուրկ և սրտաբեկ, գագաղուած մեղուի նման դուրս են թափել իրենց  
փեթակից և փախուստ են տալիս աջ ու ձախ. սովո՞ւ սրածութիւնը  
այլ ևս հանգիստ չի տալիս նրանց, հայը այլ ևս անդօր է մաքառել  
ու տոկալ:

Ծիրաննեգոյն, անօսր վերջալոյսի հետ, «Տաւորիկ» շէնի նեղկակ  
կիրճով, «Սատանի-կամբջի» վրայից, խաւար ուրուականի նման՝ թափ

անցնում էին երկու մանկամարդ գէմքել. նրանք եղջերուի քայլերով  
աճապարում էին դէպի Մամիկոնէից տան՝ գեղեցիկ Տարօնի՝ այժմ սևի  
ու սգի մէջ ծփացող՝ վայրերը. մէկի ձեռին հրացան կար, երկրորդի՝  
թեթև ուսի վրայ՝ փոքրիկ մախաղ՝ մի երկու գունիկ (հաց), մի  
քանի տասնեակ փամփուշաներով, որ սաէպ երեւմ էր գեղեցկածա-  
ւալ սեագոյն գանգուլների ներքեցից...

—Պէտք է խոյանալ դէպի «Փոփան քար» այնտեղ թերևս  
կարողանայինք մի քանի օր աղատ չունչ քաշել, թերեւս զերծ մնալ  
ոսուխի հալածանքից.—մրմնջաց ուղերդներից մէկը:

—Այս, բայց այս խսկ վայրկենին կատաղի կուի է մղում այնտեղ.  
սպառում է ուղմամթերքը, նեղում է անտանելի սովը. բացի այդ,  
խսպառ կտրուած է և ճանապարհների հաղորդակցութիւնը, վտանգը  
անխուսափելի է. մնում է ուրեմն ցանկալի աղատութիւնը պառել  
Տարօնի հարազատների գրկում... թէ հսդ չէ, եթէ թանկագին կորը-  
տից յետոյ, մեր գոյութեան վերջակէան ևս կ'գրուի այստեղ...—  
գլուխը բարձրացնելով և սերսակ՝ կեանքի կրակով բորբոքուած խո-  
շոր աշքերը դէպի հայրենի՝ «Տաւորիկ» սեռած, խորը թառաչ ար-  
ձակելով՝ մակարերեց երկուսը:

Նրանք անհանգիստ և անդադրում վաղ էին տալիս, սակայն ան-  
տեղեակ էին բնաւ թէ ինչպէս, սառուէրի նման՝ հետեւում էր նրանց  
հրոսակների խումբը, սրոնք անթարթ աշբով դիտում էին փախստա-  
կանների իւրաքանչիւր շաբժումը և ոստոստում էին՝ ժայռից-ժայռ,  
մացառից՝ մացառ...

## Բ.

Թացւում էր ծիծաղկոտ արշալոյսը. հետաւոր հորիզոնը հրդեհ-  
ուած էր հաճելի կարմբութեամբ, մերձենում էր նաև իր լուսափիւռ  
կատարելութեանը. շքանում էր արնեգոյն կիսալուսինը իր խոնարհած  
և խորակուած եղջիւրներով. աներեւութանում էին և փայլվլով աստ-  
ղերն ու դժգոյն ասուպները. երփներանգ ծաղիկներով ցողուած լե-  
ռան ստորոտում, մի գեղածիծաղ տափարակի վրայ, վայրի վարդենի-  
ների տակ, շաղի ու շողի հետ տապածուել՝ անուշ մըափում էին եր-  
կու սիրուն գէմքեր, որ երկու տաբրեր սեսի էին պատկանում. մինը՝  
հազիւ 17 գալուններ տեսած՝ հրեշտակային անհման գեղեցկութեամբ,  
առոյգ և վայելչակաղմ աղջիկ էր. սասունցու անպաճոյն և անփոյթ  
շրջազգեստի մէջ, զլխաբաց և հերածակ. խսկ երկորդը՝ 20-21 տա-  
րեկան մի զուսբճատես, յալթանգամ երխասարդ տղայ էր. տեղա-  
կան նախշուն բաճկոնակով, բազմածալ կապոցը զլխին, որը եղեր-

ուած էր գոյնդգոյն ուլունքներով ու արծաթաթել ծոպերով. նրանք  
գրկախառնել էին միմեանց, ինչպէս երկնային անմեղ ու անարատ հո-  
գիները. Քշերային անհնարին ուղերութիւնից յետոյ, նրանի կամե-  
նում էին վորը ինչ հանգստանալ—կազդուրել սպառուած ոյժերը  
գարձեալ նոյն թափովն ու եռանգովը շարունակելու քարքարոտ, շա-  
րագուշակ ճանապարհը...

Վաղսրդեան արեի ճառագայթները չէին, որ սուր փշերի ու  
սլաքների նման ծակուեցին նրանց քնչած աշքերը և նշ էլ քաղցրա-  
խօս թոշունների հաճելի դայլայլիկներն ու հոգեզուարճ մեղեդին...  
որ մի ակնթարթում սալի կանգնեցրին նրանց, այլ հալածաղ խմբի  
յանկարծական և անակնկալ յայտնութիւնը:

—ՀՇը, փայտեկին խաչը թնդ այժմ աղատէ ձեղ... գեավուր-  
ներ.., շնւա, անձնատուր եղէք...—Դուաց խմբի առաջնորդը՝ շեշ-  
տակի մեկներով իր վեցհարուածեան ատրճանակը:

—Անօրէնները՝, անօրէնները...—միաժամանակ թոթովեցին  
փախստականների թանձրացած լեզունները:

—Մեր պահանջը սէր է, սէր միայն...—լսուեց քրգական լսիրը  
ըերաններից:

Երիտասարդ տղայի արձակած առաջին գնդակը գետին տապա-  
լից խմբապետին, այնուհետև երկուստեք տեղաց գնդակների սոսկալի  
տարափլ:

—Աղատ Սասունցին չի կարող շուն սիրել...—և ձայնակցում էր  
հրացանի որոտը. մի մենաւոր ժայռի ապաւինած՝ տղան անդադրում  
արձակում էր հրացանից. խսկ աղջիկը՝ անվեհեր ու համարձակ՝ փամ-  
փուշ էր մատակարաբում:

Ընկան արիւնաշաղախ, անկինդան, ահա առաջին, երկորդ,  
երրորդ, չորրորդ...ները, մինչդեռ հպարտ Սասունցին անխոցելի է և  
մարտնչում է առիւծի կատաղութեամբ. սակայն զեղանի աղջկայ սա-  
թի նման աշքերից գլուխեցին մարգարտի երկու խոշոր կաթիւներ...  
գրանք յուսահատութեան վերջին կայլակներն էին—անխուսափելի  
կորստի առհաւատչեան:

—Կաց, եղբայր... բաւական է, այժմ թնդ մեղ շխողխողէ նեն-  
դամիտ յելուգակի սուրը... երկու փամփուշ մնաց միայն. մինը՝ իմ  
բաժինն է, երկորդը՝ ամ, լեզուս չի զօրում, որ ասեմ... գարձու-  
իմ կրծքին հրացանիդ փրկարար փողը. մնաս բարեաւ, սիրելի՛ եղ-  
րայրը...

—Խելացի՛ է քո որոշումը, թանկագի՛ն քոյրս. մնաս բարեաւ...  
Որոտաց հրացանը երկու անգամ ևս...

Հարադատ քրոջ և եղբօր վարդակոյն արիւնները խառնուեցին  
միմեանց...

Քիւրդ հրոսակների կորուսան ու սուզը կրկնակի էր:

## ԱՐԳԻՆԱ

(Լիգենդա)

Լրիւ 10 դար կամ 1000 տարին բոլորուել էր, այն բարեբաստիկ օրից, որ Սւետալանի փրկարար լոյսը տարածուել էր ի սփիւս աշխարհի. տասը դար առաջ՝ սիրոյ, եղբայրութեան, ճշմարտութեան ու խաղաղութեան մարմնացած գաղափարը՝ հնքը՝ աշխարհի Փրկիչը չարաշար հալածուեց անարդարութեան, արծաթսիրութեան և բռնութեան ձեռքով. փարիսեցինների և օղինականների դատաստանը անարդ խաչի վրայ բևեռեց նրան, ճգնելով յաւիտեանս գերեզման իջեցնել հաւասարութեան ու մարդասիրութեան պքանչելի վարդապետութիւնը... սակայն ժամանակի հետ, աւելի ամբանում և զօրեղանում է նա, մարմին և հոգի հագած՝ շըջում է աշխարհիս երեսին և իր խաղաղանով հալածում է բռնութիւնն ու անարդարութիւնը, զրկանքն ու հալածանքը...

Եւ այդ օլուայ—խաչելութեան հազարամելի անունով չայոց զահնշահ Աշոտ Բագրատունին հիմնարկում էր մեծածախ, ճոխ և փարթամ Անի՝ հրաշակերտ մայրաքաղաքը, ընծայելով այդ բիւրաւոր ժողովրդեան բնակավայրը երորդութեան խնամածութեանը, յատուկ ցանկութեամբ, որ 1001 թուականի Տիրոջ հրաշափառ Յարութեան տօնին՝ 1001 տաճարներում, հայ կղերը հազար և մի պատարագ մատոցած էր, այնուհետև անվերջ կրկնելով մեծ վարդապետի դարերով առաջ կատարած քառութեան ու թողութեան խորհուրդը,.. Խաչիկ երանելի չայրապետն էլ ամենասուրբ երրորդութեան փառքի անունով իր խորանն էր կանգնեցնում երազգաւորս կամ Շիրակաւանի մօտ, այժմեան Արգինա գիւղում, որի, մինչև երկինք բարձրացող, հրաշակերտ կաթուղիկէն, Անիի՝ Տիրամօր կամ Մայր-եկեղեցու նման՝ իր ճարտարաբուեստ կազմութեամբ, գողարիկ մանուածներով, նուրբ մողայիքներով ու մանրանկար քանդակներով չայստան աշխարհի ժամանակակից հրաշալիքներից մինն էր համարւում:

Վարդափառի տօնի նախընթաց օրն էր, Տրդատ ճարտարապետի վերահսկողութեան ներքե, ջանասէր մեղուների նման՝ անհանգիստ ու

անդադրում աշխատում էին վարդապետներն ու մշակները, հոգևորականներն ու աշխարհականները, տէրերն ու սարուկները, ամենայն ջան և ճիգ թափում էր նոյն օրն և հիթ աւարտելու կաթողիկէի վերին մասը և կանգնեցնելու այնակ մարդաչափ արծաթաձոյլ խաչը, որ նուիրել էր Կաթուանիցէ Հայոց բարեպաշտ և շինարար թագուհին, սակայն հրեղէն գունդը թեքուել էր գէպի արևմուտք. ժամանակը երեկոյանում էր և հանրահռչակ ճարտարապետը տարակուսում էր նոյն օրն աւարտել շինութեան գործը և կանգնել քառաթե խաչը:

— Հոգե՛որ Տէր, եկեղեցու օծումը պէտք է յետաձգել մինչև նաւասարդ՝ Տիրամօր վերափոխման տօնին. այսօր անհնարին է աւարտել: Արեգակը խոնարհել է դէպի մայր, ապարդէն է այլ ևս աշխատանք ու բրտինք շուայել...—խորին ակնածութիւնով արտաքերեց շնորհալի ճարտարապետը:

— Ո՛չ, սիրելի սրբեակ Տրդատ, ոչ մի կերպ չեմ կարող յետաձգել օծման ս. Խորհուրդը, որովհետև վազուան համար յատկապէս հրաւէր է կարդացուած. և արդէն խմբուել են այստեղ հազարաւոր բարեպաշտների բազմութիւն. նաև հոռոմներ, վրացիներ, աղուաններ..., այս գիշեր պիտի ժամանեն՝ Արքայական ընտանիքը, աւագանիքը, նախարարներն ու ազատները... աշխատեցէք, որդի, աճապարեցէք, իմ հաւատը մեծ է. նա անտարակոյս պիտի աջակցէ ձեզ անելութապէս:—Բուռն հաւատով և հաստատուն յայսով մակաբերեց ժողովը հոգեսը պետք, որ յամբաքայլ շրջելով տաճարի շորս կողմում, աղօթք և սաղմոս էր մրմնջում և յաճախ օրհնում ու քաջալելում էր ջերմիւնունք աշխատաւորներին:

— Անհնարին է, սուրբ հայր, անհնարին է, այսօր չի վերջանալ շինութիւնը. գեռ խաչի պատուանդանն ու ինձորը բոլորելու երկար միջոց է հարկաւոր...—Աղմկեցին վարդապետներն ու մշակները, տէրերն ու սարուկները:

— Մի թերահաւատիք, սիրելի զաւակներս, Ամենակարողն Աստուած աջակից է ձեզ: Նրա կամքն է այսօր իսկ աւարտել իր Տան շինութեան գործը.—լի հաւատով կրկնեց ալեգարդ Հայրապետը:

— Բայց ժամանակը չի կանգնում, արել վազուց թեքուել է գէպի մայր, երեկոյանում է, տես...

— Թողարկանի արեգակը, նա էլ պարտական է նպաստել իր Արարշի ամենասուրբ անունով ձեռնարկուած գործի աջողութեանը...— Հաղիւ թէ երջանիկ Հայրապետը արտասանեց, երբ հրեղէն գունդը անշարժ կանգ առաւ, ասես մեխուեց իր տեղում:

— Օրհնեալ է Աստուած,—ասաց Քահանայապետը:

— Օրհնեալ է Լուսաւորչի հաւատը:— Զայնակցեց ամբոխը:

Ցենդային եռանդով շարունակուեց հաւատով սկսուած և հրաշքով աւաբուած գործը: Հնչեց երկաթի կոչնակը, կատարուեց վասպանական օրհներքն ու քաղցրաբառառ մեղեդին:

— Տէս սուրբ Հայր, Աստուածային տաճարի գաղաթին փողփուում է արդէն Փրկչական խաչը. քո սուրբ օրհնութիւնով կատարեցինք մարդ պարտը:— Համբուրելով հայրապետի աջը՝ առանձին բերկութեամբ աւետեց Տրդատը:

— Ուրեմն արեն էլ կատարեց իր պաշտօնը...— Եւ դառնալով գէպի արեգակը՝ շարժեց իր մոմեղէն ձեռը ասելավ՝

— Ար ի գնա.

Այն օրից էլ յիշեալ աւանը կոչուեցաւ՝

«Արի-Կնա» կամ ինչպէս ասում է ժողովուրդը՝

Ար գնա:

## ՏԻՐԱՑՈՒ ԱԿՕՆ

Ա.

1874 թուականի ամառը ընկերների մի խումբ Մարմաշէնի մենասահնում, «Վահրամաշէն» ամրացի բեկորների մօտ սրսնում էինք սեպաձեկ կամ բենոազիր արձանների այն ապառաժը, որ՝ հնագէտների առելով՝ քանդակուած է մեզանից 3-4 հազար տարիներ առաջ և անշուշա պարունակում էր իր մէջ մեզանից դարերով ասած ապար ժողովրդի գոյութեան մի ամբողջ, թերես և պերճախօս պատմութիւն, երբ մեր առջե անակնկալ յայտուեց տիրացու Ակօն. 30-32 տարեկան, շիկագոյն, խիստ մորուքով, գունատ գէմքով ու մի աշքը զլիթէ միշտ կիսախուր՝ պշած երիտասարդ։ Նա հազած ունէր բրդի կառքից՝ մոխրագոյն չերքեսկի, երկար, կաշուէ գոտիով, ոտներին՝ աղքատիկ շուտեր, զիխին՝ կիսամաշ շափխա, ձեռին՝ ցնցուտու նման՝ մի անօրինակ, ողորմելի հովանոց... Առաջին անգամ հանդիպեցայ և ծանօթացայ ևս նրա հետ, հէնց այդ տեղ, «Վահրամաշէնի» քարտոքանդ հղած ամրոցում։ Հայկական անցեալի համբ տեսմ թէ՝ նրա մեծութեան, կուլտուրայի, բարեպաշտական ձգտումների խօսուն յիշատակաբանների մօտ։

Տիրացու Ակօն յայտնի էր մեզանում որպէս հոգեւրական կոչման թեկնածու, վարդապետ գառնալու յատուկ տենչանքով ու բուռն աւինով՝ բաղաքից-բաղաք, վանքից-վանք թափառող մի համեստ, հաւատաւոր անձնաւորութիւն, որ 1860-ական թուականներին, «եղբայրների» հետ միասին Լիմ և Կառւց անապատն էր գնացել ճգն ելու:— ՚ի գէպ՝ կար ժամանակ, որ ճգնաւորութեան գաղափարով տագորուած էր մեր երիտասարդութիւնը, ինչպէս երէկ կեղծ աղքասիրութեան, իսկ այսօք՝ մարդասիրութեան, հաւատարութեան, եղբայրութեան... ոչ—անկեղծ հովերով... Վասպւրականի Արծուի կախարդիշ հոչակը. Էլեբարական հօսանքի նման՝ անցել, ողոզել էր արեւելքից՝ արևմուտք, օսմանեան երկրներից մինչեւ մեր սահմանները... և ուրիշ կերպ էլ չէր կարող լինիլ, որովհետեւ... այդ երեսից ժամանակակից հայի բարոյական ձգտումների, մտքի և հոգու արտայայտութիւն,

աւելի պարզ՝ ճշմարիտ հայրենասիրութեան մարմնացումն էր... և ըրծիւը գիտէր հիպնոսել... ահա, ծնողներից գաղտնի, տնտեսական պայմաններից անկախ՝ հեռանում էին մեր շատ քաղաքներից ու գիւղերից դէպի վասպուրական՝ անապատականութեան հոգեշարժ գաղափարով տողորուած «եղբայրները» հեզ ու խոնարհ, միշտ գլխիկոր, անհամարձակ ու ներողամիտ, աստուածավախ և բարեպաշտ. գլորում, չքանում էին նրանք նաև մեր գտառական քաղաքից ու ջիրակի գիւղերից քարանձաւներն ու վանական մժին խուցերը՝ պարբերաբար, խումբ-խումբ... «եղբայ Կայապիտը» «եղբայ Գէոյը» «եղբայ Ասատոյը» «եղբայ Պետոսը» «եղբայ Օվանէսը»... մեր «եղբայ Սկօն» էլ վազուց չէ, որ շատերի նման՝ ստրջացած և հիասթափուած՝ վասպուրականից հայրենիք էր վերադարձել և տսես՝ ուրուականի նման սաւառնում էր մեր չէն ու աւել վանքերի, քալուքանդ եղած ապարանքների շուրջը. նա նման էր մի նախշուն թիթեռնիկի, որը անբաժան է իր սիրած ու փայփայած խալոյնից մինչև որ զոհ կ'զնար նրա լավուղ բոցերին և այնպէս իր սիրուն գյութեան վերջակէալ կ'զնէր:

Մի վիթխարի, ժանդոտած ու մամուկալած ժայռի առաջ կանգ տուաւ մեր խմբակիը. հեղինակաւոր տիրացուն մատնանիշ անելով բարի ճակատին խնամքով քանդակուած և ձիգ դարերով անաղարտ մնացած՝ հինգ տող բեռագրերը, ժամանակակից եկեղեցականին յատուկ ժանդութեամբ ու շեշտով տսաց.

— Օրհնեալ լինի ձեր յիշատակը, թանկագին նախահայրեր, հապա եթէ հրաշով բաց անէիք ձեր աշքերը և նկատէիք ժամանակիս ծովացած մեղքն ու գոյութեան կոսուի անհնարին դժուարութիւնը.— տնտեսական ձախող պայմանները... օ, օ, օ, աղատ ժամանակների բաղդաւոր զաւակներ, անշուշտ կեանքն անտանելի պիտի լինի ձեզ համար...— Սպահ դարձաւ նա դէպի մեզ— Այդ խանձուած ապառաժի վրայ, մեղանից հաղարաւոր տարիներ առաջ քանդակուած՝ մեր նախորդներն անվերծանելի բառերով աւանդում են; որ՝ «քառասուն հաւկիթը մի փարայով (<sup>1/s</sup> կոպ.) գնել և ընտանիք ենք կառավարել. վայ մեղանից յետոյ ապրող և ընտանիք կառավարողներին»: Այն, վայ ձեղանից յետոյ աշխարհ եկող և, մանաւանդ վերարկու հագնողին...

— Տիրացն Ակօ,— միջամտեցին ընկերներս,— ինչպէս է եղել որ անվերծանելին վերծանելի է դարձել և քառասուն ձուի մի սղորմիլի պատմութիւն զուրս եկել:

Դէհ, եղբայր, իմտատուն մարդիկ ժամանակին կարդացել և աւանդել են մեր պապերին... և այդ պարզ, տարրական երկոյթը բնորոշում է շատ բաներ տնտեսական վիճակի նկատմամբ:

— Տիրացու Ակօ, զա մի առասպել, մի լեգենդա է, որ պատ-

մուռմ է և՛ Թիֆլիզի Խօջեվանքի՝ գերեզմանատան տապանաքարի, և՛ «Քէօբրի-Քէօյի» կամրջի, և՛ շատ տեղերում զրուած արձանների մասին:

— Ասում են թէ այս արձանները վկայում են՝ որ Մարիամաշէն կամ Մարմաշէնի հրաշակերտ մենաստանները իրենց հիմնադիր Պահլաւունիների ժամանակ՝ ամբողջովին ոսկեզօծ են եղել և լուսաւորչի թոռ՝ Պահլաւները՝ 40 տարի ալ-արնեզոյն մախմուրի շապիկով, 40 տարի կարմիր մահուղի, 40 տարի շալեղին և 40 տարի կարմիր կատուղ են ծածկել կամ ինամել... Սյո էլ հօ գրած չէ ձեր խօջենց գերեզմանատան կամ Քեօբրի-Քէօյի կամրջի ճակատին. հը՝ ը՝, տեսէք, որ նրանց կրօնական ազգային զգացումները մաքուր, անխարդախ և անխառնուրդ են եղել, ինչպէս վազորդեան ցողի անապակ կաթիլները: Երենց նիւթական կարսութիւնը, վարդագոյն արիւնն անգամ, զիտակցօրէն զոհ են բերել պաշտած ու փայփայած գաղափարին: Տեսէք, թէ որքան հաստատուն և ամուր են եղել նրանց հաւատի ոյժը, անօրէնների սրերը բթացել են մորթոսելուց, մինչդեռ նահատակների պարանոցները սունկի նման են բանել, ծայր ու սահման, վերջ ու վախճան չեն ունեցել... Ահա թէ ինչու կարմիր են եօթն խորհրդաւոր թիւ կազմող՝ խորանների արտաքին որմերը, նրանց մախմուրի ու մահուղի շապիկները: Եւ այս երեսոյթը բնորոշող է թէ սրբան բարեպաշտ են եղել մեր երջանկայիշատակ պապերը. ինչպէս կապուած են եղել նրանք՝ ազգային—հարազատ եկեղեցու հետ, օժտուած առաքինական վսեմ ձգտումներով... եսկ այժմ, հը՝, այժմ լուսաւորչի անհովիւ մնացած զառնուկներիս սպասնում են պատառական հրէշաւոր բողոքականութեան և վաղուց նեխուած կաթօլիկութեան ժանիքները... էլ ով կարող է մտածել թէ՝ արիւնով ու հալալ բարինքով հաստատուած այս հրաշակերտ և հոյակապ առաջարները կիսաւել են, ապաւների ու բուերի ատաստանարան...»

Զգացուած սրաով թախիծն ու վիշտը երեսին՝ ատաց տիրացու Ակօն և ագահութեամբ հոտառեց իր կծու քթախոտը:

Բ.

Տիրացու Ակօն մի տիպ էր, որի նմանները սակայն հազուագիւտ չէին մեղանում սրանից 25-30 տարիներ առաջ. ներկայումս նրանք մոլորակի նման են երեսում մեր կուսակրօն հոգեորականութեան թիսպոտ մթնոլորտում. այժմ վեղարաւորը տարօրինակ թերահաւատութեամբ է վերաբերում իր կոչման վեհութեանն ու սրբութեամբ. իսկ որոշ, դրական սկզբունքն ու դաւանանքը կարծես բացակայում են.

փոխանակ հոգեգուարճ մեղեղիների, ժամի ու պատարազի, մինչև կոկորդ թաղուած են նրանք աշխարհային զեղլս կեանքի ու զուարճութիւնների տղմում. կարգում են՝ նիցշէի, թոկի, լասալի, Որնանի, Դարդինի,.. վարդապետութիւնները, որոնցից սակայն ոչ նշ չեն հասկանում. ճին, վանական լոցերին՝ յաճախ՝ փոխանակում են ընդարձակ՝ թանկագին արդ ու զարդով կահաւորուած՝ զահլիճներն ու ընդունարանները, ուր քաջցրահնչիւն դաշնամուրը՝ «փափլիկ, մոմեղէն մատներով» իր պատուաւոր տեղն է բանում շաղի ու շողի նման՝ «հօրքոյրերի», «մօրաքոյրերի», ընդարձակ շրջան, հացկերոյթ, պար, երգ, թղթախաղ, կոնծաբանութիւն, աւելին ասեմ, երբեմն նաև դատ ու դատաստան, անձնական ստոր կիբք, գծուծ հաշիւներ և մոլի նկըրտումն. ամեն տեսակ սբրապղծութիւն, խաչագողութիւն, զրկանք ու հալածանք... ի գէպ՝ իղուր չէր գանդատաւոմ մի փորձուած եկեղեցական ասելով թէ՝ «այդ նորելուկ վարդապետներից ու քահանաներից Սստուած փըկէ ու ազատէ մեր խեղճ ազգին. ազատութեան բառը՝ սանձաբկութեան փոխելով ոչ հինը կարող են պահպանել և ոչ նոր մի լաւ բան տալ. ժողովրդին հեռացնելով ամեն հոգեոր վայել-չութիւնից՝ ասես՝ վայրկենից՝ վայրկեան դէպի կորուստ են մղում...» է՛հ, ինչ զարմացք որ ժամանակը իրն է անում, սակայն մոռացութեան ատուզ սեագլուխներին իրենց թանկագին մուշտակներով և հոտաէտ իւղերով այս և այն կեղրոնական քաղաքում անմեղ ու անպարտ մայթերը, սալայտակներն ու զրօսավայրերի ճեմելիները մաշելիս, աւելացնենք, որ այսօր քիչ չեն նաև այն առաջադիմական և իրենց լուսամիտ համարող իսկապէս թուլասիրտ ապիկար քահանաները, սրոնք ընդունակ են իրենց անձնական առօրեայ շահերին գոհ բերել ոչ միայն իրենց կոչման վեհութիւնն ու սրբութիւնը, այլ և ազգային եկեղեցին էլ. որ իրենք ամեն օրինազանցութիւն անելով հանդերձ՝ հոգով ու մարմնով օտարի գլուում բազմած՝ եղբօր աշքի շիւն են նկատում. երբ կարելի է դրամ կորզել և ազգասիրի հոչակ վայելել՝ նրանք եկեղեցական իրաւունքի և շահերի մի-մի հոկայական պաշտպաններ են ձևանում. ազնուաբար գիտեն կեղծել, նենզել ու քծնել, երբ պէտք է գլուխները կամիլաւկայով ու կրծքերը ականա կուռ խաչով զարդարել... Սստուածային տաճարը վաճառատուն են գարձրել և «ձրի տուրը» ոչ միայն ապրուստի միջոց, փեշա կշնել, այլ և, շատ անզամ, գանձեր դիզելու աղբիւր...

Դու սխալուած չէիր, տիրացու Ակօ, 40 ձուն մի փարի առան և ընտանիք պահեցին. 40 վանքեր շինեցին և հայի ինքնուրոյնութիւնն ու կրօնը սուրբ և անաղարտ պահեցին, վայ մեղանից յետոյ եկեղեցականութեան ու վանականութեան մասին խօսողին...

Գ.

Այն օրից 13 տարի էր անցել: Տիրացու Ակօն այժմ կուսակրօն սարկաւագ էր. երկրորդ անգամ ևս հանդիպեցի նրան Կ. քաղաքի ակնավաճառ Սվախմեանի խանութում, դարձեալ մի խումբ հայրենակից ընկերներով, արդէն հասունացած՝ «մաղով ու մօրուքով» մարդիկ էինք, զիաէինք հայր-Ակօի ծագումն ու անցեալը, իդեերն ու ձգտումները՝ նրա դարձագալ կեանքն ու մաշող հակումները: Ալեխառն մորուքն ու թուումած դէմքը՝ լայնկեկ ճակատի խորունկ ակօսների հետ միասին, մխիթարական բաներ չէին կարող պատմել նրա անցեալից. գիտենալով հանդերձ տիրացու Ակօի էութիւնը՝ անհոգ, ուրախ, ու զուարթ ընկերներիս խմբակը սիրում էր օգուտ քաղել նրա միամտութիւնից — խօսեցնել նրան, մատ դնել արիւոտ վէրքին, իր երեակայած վանահայրութեան, սիրած ու պաշտած «Մրէնի» անունով:

— Սարկաւագ, ուր էիր գնացել.

— Եջմիածին, եղբայր.

— Վեհափառին տեսամբ,

— Հը՝, չուվմում լինել և Պապին շտեսնել. չոքէ չոք գնացի սուլը առայ, ասաց՝ քեզ մի պատուական վեղար կտամ, աշխատիր, շուտով վանքը շնչցրու: — Մանածի նման՝ գունատ դէմքին մի տեսակ կենդանութիւն ատուզ՝ ասանձին հաճութիւնով գոհացնում էր իւրաքանչիւրի հարցասիրութիւնը:

Սարկաւագը վազուց չէ, որ վերադարձել էր իջման տեղից. որպէս բարյական քաջալերութիւն կամ տրիտուր իր գառնաշարչար աշխատանքին՝ այսինքն՝ Մրէնի 500 տարուայ աւելակ վանքը մաքրելու և փոքր ի շատէ կանոնաւորելու համար՝ խստացել էին վեղար տալ, վանահայր նշանակել և նա յաւակնութիւն ունէր հաւատալու թէ՝ պիտի կարողանայ շնչցնել 613-614 թւականներին Դաւիթ Սահառունի հայ-նախարարի ձեռքով հիմնարկուած՝ «գեղեցկայարմար» կաթուղիկէի, հրաշակերա մատուռների ու ապարանքների ուրացուած ու մոռացուած դարաւոր մնացորդները, մոգական մի հարուածով կիանք ներշնչել, պահապանների (միաբանական) խումբ հաստատել, դպրոց բանալ. անորոշ ժամանակներից քրդական խաշին և ասպատակող իւղամի ասպնջական դարձած՝ սրբավայրի հոկայական կամարների ներքի հնչեցնել Սստուածապաշտութեան հոգեսքանչ ալելուն և տարածել կնդրուկի անուշահուութիւնը... սակայն այս անզամ ևս, շատ անզամների նման՝ գոհացը էին նրան միմիայն յուսագրելով:

— Օքնեալ լինիս, որդի, աշխատիր, կասենք Վեհին, որ մի բան անի քեզ համար. — ասել էին սինողականները:

— Ապրկաւագ, հ. հ. ասառածաբանները քննեցին քեզ.

— Ի՞նչ քննութիւն, եղբայր, ես հօ դպրոցի աշակերտ չեմ. 10 տարի ճգնաւորութիւն արած, 25-30 տարիներ կեանքս սեխ ու սպիտակի, գրքի ու կարգմունքի մէջ մաշած անձն եմ. «Չամիչները» անդիք գիտիմ, ճարտասանութիւնն էլ վելագիք. չէ որ ես էլ փոքրի շատէ ուշադրութեան արժանի անցեալ ունիմ... իմ նպատակն է՝ լոյս տարածել, ուր խաւարն է թագաւորում. աղնիւ ու բարի քաղաքացիութեան, եղբայրութեան գաւանանքը տարբացնել, ուր բացակայում է ճշմարիտ բանականութեան, գիտակցութեան ու խղճի բնադրդ...

Վերջապէս, ասացի իրեն, չողեսը Տիրոջը, որ իբրև շինարարագութաւոր եկեղեցականի՝ դիւրութիւն տայ ինձ մի ընկած, բուերի բոյն և գաղանների որչ գարձած սրբավայր իր նախնական վիճակին վերածելու: Այդ սքանչելի, նախրական գաղաքարն է ինձ ողեսորդին ու առաջնորդողը. էհ, ուրախ կ'լինիմ, եթէ գիտուն, ասառածաբան հոգևորականներ զեկավարեն իմ դպրոցը. ես էլ, եթէ անշնորհ եմ ամօլ լինելու, գէթ «չորոցք» կլինիմ, կ'քարշեմ իմ լուծը, ինչպէս մի վտիտ, ոսկոր ու մորթ եղած եղը իր բոլոր ուժովն ու կարողութիւնով շարժուելիս...

— Էհ, այն ասա, քո ծրագիրը հաւանութիւն գտնաւ Վեհի կողմից:

— Ի՞նչպէս չէ, եղբայր, մինչև իսկ յուսադրեց և քաջալերեց.

— Ի՞նչպէս:

— Մի սրտարուվխ «պահպանիչ» ասաց և հրամայեց իմ վահանայրութեան մասին հաղորդագրել մարմնաւոր իշխանութեան:

— Իսկ վեղաճը.

— Վեղաճը... հա, «պիտի հրամայեմ, ասաց չողեսը Տէրը, որ քեզ աբեղայ ձեռնադրեն»:

Դ.

Ի՞նչպէս ասացինք իր տեղում տիրացու Ակօն, կամ ի՞նչպէս սովորաբար անուանում էին՝ «Մընի սարկաւագը», որի երեակայութիւնն ընդգրկում էր միմիայն Սստուծաշնչի պատմութիւնը իր այնքան զբարիչ բարոյական մտապատկերներով, որբան էլ անծանօթ ժամանակակից մտար կեանքի բարդ պայմաններին—իսկական քաղաքակթութեանը—այնուամենայնիւ իր զբօշակին անպայման հաւատարիմ և փայփայած գաղափարին անձնուել մէկն էր: Սակաւապէտ, անարծաթ, ժուժկալ, մարմնացած հեղութիւնն էր նա, և իր Մեծ-Վարդապետի նման՝ իր կոչումով՝ աշխարհի «մեծամեծներից» մէկը լինելով

հանդերձ և փոքր էր, և տոկուն ու զիջող, և ներողամիտ, կարգապահու...

«Մի միծ ընկած օջախ ծխացնել—մի հինօրեայ վանք շնչցնել—ահա այն սքանչելի գաղաքաբարը, որի համար չնշում էր նա, որի համար բաբախում էր բարի զգացումներով տոգորուած սիրտը՝ այնքան հիւծած ու մաշուած կրծքի տակ...

— Էհ, մի այդպիսի գործ կատարելով, ես իրաւոնք պիտի ունենամ մտածելու, թէ ինձանից յետոյ էլ ասողներ կ'լինեն՝ «ողորմի հոգուն. աիրացու Ակօն անյիշատակ շմեռաւ»:

Վեհի կողմից «պատուական վեղաբ» ստանալու հոգեսքանչ յոյսը, զառն շարչաբանքի և սրատանջութեան մի այլ դուռ բաց արեց Ակօյի համար. ուրիշ էին ժամանակի պահանջները, ոսկայն նա գիտակցօրէն թէ ոչ, լոգում էր հոսանքին հակառակ և իզուր էր ենթագրում լուծել այն կնճռոտ հանգոյցը, որ հիւսուած էր բարդ կեանքի այնքան ստուար թելերով... թէ ուստեղից և ինչպէս, յայտնի չէ, սակայն վաստն այն էր, որ Պարսկաստանից գաղթած՝ հարիւրաւոր ընտանիքի գլուխ էր անցել նա և ինչ որ նախապատրաստութիւն էր աեմնում Մընում բնակութիւն հաստատելու համար:

— Մընը իմ վանքն է, սիրելի եղբայրներ,—հաւատացնում էր նա, — զնանք, շնչցնենք. իրաքանչիւրին ձեզանից այժմէն իսկ այգու տեղեր, արտեր և մարգագետիններ եմ յատկացնում, միայն թէ պէտք է բաց անել ջրի տուոն, հակառակ զէպքում, միանգամայն անհնարին է ապրել աւերակ-անապատում...

— Գնանք, մշակինք բարերեր հողը. խաղողի այգիներ ձգենք. տուն ու տեղ հաստատենք. մենք էլ ապրենք, մեր զաւակներին էլ մի պատառ հացի տէր լինելու հնարաւորութիւնը ստեղծենք... — միաձայն հաւանութիւն տուն շինականները և հարիւրաւոր մարդիկ՝ բահով ու բրով, ուժեղ բազուկներով և տմուր, հաստատուն քայլերով բռնեցին Մընի քարքարոտ ճանապարհը:

— Սարկաւագ, ի՞նչպէս կարողացար մուտ գործել բրդական ամառանոցներն ու գիւղերը՝ 18 վերսա տարածութեան վրայ բաց անել Մընի գարերով խանդարուած առուն և յափշտակել այն՝ ինչ որ այսու իրաւամբ քիւրդինն է համարւում, չէ որ ջրի սակառութիւնը խիստ զգալի պիտի լինէր նրանց առօրեայ գոյութեան համար ես:

— Ուրեմն ինչու է տառած թէ՝ «բրատմբ երեսաց քոյ կերլիցես դհաց». միթէ իմ իրաւոնքը քրդից իբրև չնո՞ր պիտի լինդրէի. համ, զլուխս էլ ոտի տակը զնէի, որ արսէր, բայց եթէ պատմեմ իմ այդ սիրագործութեան մանրամասնութիւնները, պիտի ծիծաղիք, պիտի առասպելի կամ կատակի նիւթ շննէր, քաշւում եմ:

ԻՐ ՓՈԽԱՐԵՆ

U

Անցնում եմ Քիչնեկ «Սիրապինովկայա» փողոց, պատառում է ինձ մինը՝ իմ ծանօթ ոսւս-պաշտօնեանելից.

— Հանի ես նորութիւն. — դիմում է նա լին:

— ի՞նչ կայ. — հարցնում եմ անհամբերութեամբ, զիտեհալով, «ր օրուայ հետաքրքրութեան նիւթն ու առարկան պատերազմի գաշան է:

— Յոյները խռովագում են անօրինակ եռահեղով, այդ սարքացած  
Արթուրի նշանաբանն է՝ փախուստ և փախուստ... Լարիսը առ-  
նուած է արգելն և, ասում են, որ թագաժանդ Կոնստանտինն էլ վի-  
րաւորուած է... Հը՝, ափսոսն ես.— աւելացրեց խօսակիցս—ի՞նչ տա-  
րակոյս, որ այս անխօրհուրդ քմահաճութիւնն ու ոտնձգութիւնը շատ  
թանգ պիտի նստի Աթենացոց համար:

—Այդպէս չէ,—մօտենալով մեզ և սղջունիլով, ընդպրչոց օճառ  
տապօթի ճակատամարտում իր քաջութեամբ հոչակ ստացած մի պաշ-  
տօնաթող հելլեն-սպայ, —դարձաւոր աւանդութիւն կայ, որ եթք վե-  
րածնի չելլենի փառքը՝ Կոնստանդինը թագաւորէ և Սովիան թա-

—Ասա, ասա, թող որ մի քիչ էլ ծիծաղինք:  
 —Ճշմարիտն ասած, իմ ցանկութիւնն էր գողառուց մախաթվինել, բայց դժբաղպարար ուրբաթը շուտ հասաւ քան զշաբաթը...  
 —Ի՞նչպէս թէ մախաթ շինել, հարցըին ընկերներս:  
 —Ի՞նչ ասեմ ձեղ, որ Ալէքսանդրապալոցի լինելով հանդեղձ ժողովրդականութիւն կամ քաղաքացիութիւն ստացած այդ պարզ՝ առած ասեմ թէ ոճն էլ չէք հասկանում, ուրեմն լսեցք. մէկը մեր հայրենակիցներից, որ չէր կամենում փողով մախաթ տանել, գնում է դարբնի մօտ, երբ վերջինս գլխիկոր, արին քրտինքի մէջ՝ ըստեներ էր կռում:

—«Ուստան ջան մի մեխ տաս»—ասում է նա:

—Ա՛ռ,—ձգում է նրա առջե վարպետը, մի համիկ բենը հօ ոշինչ արժէ:

—Ուստան ջան, այս ծայրը սրեմ:—Վարպետը սրում է:  
 —Ուստան ջան, այս ծայրը ծակես:—Ծակելուց յետոյ միայն դարբինը բարձրացնում է իր ծանրացած գլուխը և նկատում է, որ իր շինածը մի քանի կոպէկ արժողութիւն ունեցող՝ մախաթ դարձաւ:  
 —Ճէր օրհնած, ասա ցանկութիւն ունիր գողառուց մախաթ շինել տալու... զայրացմամբ բացագանչում է դարբինը, բայց և այնպէս խելացի կամ ճարպիկ մարդը ձբիաբար ստանում է իր մախաթը... հասկացար. այժմ դառնանք իմ խսրհրդաւոր «մախաթին». Կաղզվանում մի աման վաքս առայ, լուծեցի ջրի մէջ և նըանով քաթանի պարկը ներկած՝ անցրի գլուխս, —դա իմ վեղարն էր, իսկապէս Անտօնեան վեղար. ապա վաքսի փայլվլող թիթեղի ամանն ու խուվը գոյնզգոյն ժապաւէններով, դուք հասկացէք բուն շիբակեցու գուլպի կարմիր ու կանաչ թելերով, քարշ արի պարանոցովս, որ մայիսեան արեի հրեզէն ճառագայթների տակ, չողակնի նման կայծերին էին տալիս. —դրանք իմ ցքանշանները, իմ ականակուռ խաչերն էին... անվեհեր կանգնեցի գաղթականների առջն, ինձ հետեւմ էին տասն դայդ նզներով լծած գութանը և հարիւրաւոր ուժեղ բազուկներ. բահի ու թիերի եռանդուն շարժում... քիւրդ թէկերը տաղաւարներից՝ իրենց գամբոններով ու լամուկներով՝ աղմկեցին, երիի տրամադիր էին զիմադրել, սակայն, միթէ կարող էին բրիստոնեայ պետութեան մէջ հալածել եկեղեցականին, հաղել նրա քղանցին... չէ որ սարսափ ու ակնածութիւն էին ներչնչում նրանց իմ վեղարը, իմ վերաբկուն, իմ խաչերը, հողաթափերս ու փառաւը, ալեծածան մօրտքս անզամ...  
 Եւ նրա խորհրդաւոր ծիծաղին միախանուեց մեր բոլորի ըլքիչը:

Ե.

—Մեր սարկաւագը յանդուգն է, օրինազանց է... ոտնձգութիւններ և ինքնազլիսութիւններ է անում.., ցանկալի՛ է, որ Զերդ վսեմութիւնը միջոց ընդունէիք հետացնելու նրան հոգեսրականութեան ասպարիզից:—Սև նախանձից կուրացած՝ եկեղեցական վարչութեան տեղական ներկայացուցիչ՝ հայր-Ռոբրաթը, առանց որ և է խոճահարութեան՝ դիմումն արեց մի բարձրաստիճան կամ «գերազանց» պաշտօնեայի:

—Ամենայն պատրաստականութեամբ, եթէ միայն վերաբերելիս լինէր այդ խնդիրը աշխարհական վարչութեան, մեղ համար ինչ թէ հայ եկեղեցականը յանդուգն է կամ կամակոր: Դուք, ինքներդ, հնարաւորութիւն և լիազօրութիւն ունիք նրան կարգի հրաւիրելու:— Ասաց պաշտօնեան, միան գամայն հրաժարուելով թաթախել իր ձեռքերը անմիղ մարդի արեան մէջ, բայց Յուդան՝ իր երեակայական բարձրութեամբ հանդերձ՝ ճիգն էր թափում այդ ողորմելիի, բայց խեկապէս ջանասէր մըջիւնին ոտի տակ տրուել ու բնաջինջ անել. ինչո՞ւ, որովհետև նա՝ որ սիրում էր փառքի մրտենիներ մուրալ... չէր կարսղ հաշտ աչքով տեսնել թէ ինչպէս ժողովուրդը կարեորութիւն է տալիս և յանձնին տիրացու Ակօֆ տեսնում ու շօշափում է եկեղեցականի խսկական պատկերը իր առաքինական կամ բնորոշ երևոյթներով... Եւ նրա գնդակը շվերիպեցաւ նպատակից. մի-երկու շաբաթից յետոյ, բարձր իշխանութեան անունով ազգաբարուեց Մըէնի շաբարախտիկ սարկաւագին, որ այլ ևս իրաւոնք չունիք իր փայփայած մենաստանը յաճախել և նոյն խակ հոգեսրականի սքեմ հագնել...

—Մարկաւագ, ուր էիր աներեսութացել, երբ ոստիկանները որսնում էին քեզ ձերբակալելու համար. արդեօք աւերակների մէջ, ձորակների պուրակներում, թէ ժայռերի ծերպերում:

—Քաղաքումն էի, եղբայր, լսեցի, որ ինձ նման մի ողորմելի մարդի մինչև խոկ կարեսութիւն էին տաւել ու սրոնել... և գիտէք ինչու համար... հաւատացնում են, որ մեր աւագ-եղբայրներից մէկի թելազրութեամբ, որը հեղինակութեամբ, դիրքով ու գիտութիւնով ինձանից անհամեմատ բարձր է և, մինչեւ խոկ, վայ ինձ եթէ ասեմ, ո. Գրիգորի գահը բազմելու յաւակնութիւն ունի, կամեցի են ինձ բանդարկել և հալածել... էհ, զուգազիպութիւն տաեմ թէ՝ բախտի մի խաղ, որ ինձ անփոցելի պահեց արդէն լարուած որոգայթից... բայց չէ, ես այժմ ամեն բան կորուսի, իմ վահերն էլ, իմ յոյսերն էլ... օ, օ, բարսյական այս հարսածը անտանելի՛ է, մահացու է ինձ համար:

Զ.

—Եկա՛ւ, նահանգապետն եկար... այ, այ... սարսափում եմ. մայրիկ ջան, տես, քաղաքապահ ոստիկանները սրոնում են ինձ... տհան և նա, ինքը՝ հայր-Ռւբբաթը, ոսմուր մուշտակով, նստած բազկաթոռի վրայ, թելադլում է, որ ինձ կախաղան բարձրացնեն... ինձ վրայ կոկորդիլոսի արտասուք են թափում, բայց և այնպէս գրում են իմ մահուան զատավճիռը... ախ, նրանք անողութ են, խստասիրա և արիւնարբու, բայց իմ Յիսուսը պիտի ներէ նրանց՝ «զի ոչ զիտեն թէ զինչ գործեն»:

Մի անպաճոյն, աղքատիկ բնակարանում տապի ու տենդի մէջ՝ զառանցում էր տիրացու Ակօն: Նրան շրջապատել էին իր հարազատներն ու բարեկամները և լաց էին լինում սրտամորմոք, աղէխարշ... Տիրացու Ակօն խելագարստած էր:

—Վեղարի՛դ մեսնեմ, Մընիդ մեսնեմ, աննման սարկաւագ. — կուրծքերը ծեծելով կրկնում էին հարազատները:

—Տօ եղայր, բան չեմ ցանկանում, թնդ Ամենակարսղն Աստուած իմ վանքը, իմ Մընը չեն ու հաստատուն պահէ. հոգ չէ. եթէ մի Ակօ էլ պակաս կ'լինի աշխարհի երեսից... թնդ նա իր անհուն ներողամտութեամբ թողութիւն չնորհէ նրան, որը իմ անպարտ արիւնը մատաւ և ինձ համար շատ համարեց աշխարհի լսյոն ու արելը... իմ իղձերը, իմ սիրուն «մուրաղը» սրտումս անկատար՝ իր սաղմի մէջ խեղեց. յափշտակ'ց իմ մխիթարանքն ու փառքը—իմ պատուական վերաբերն. մատնեց ինձ քահանայապետին, ինչպէս Յուղան՝ աշխարհի Արարշին. քարտաքնդ, տակն ու վրայ արեց իմ գեղեցիկ ծրագիրը՝ իմ միաբանութիւնը, իմ գպլոցը, մի բուռն շինականներիս բարեկեցիկ վիճակը .. օ, օ օ ...

Օ՛, օ օ ... խեղն աիրացու Ակօ: Եւ նա շուտով կնքեց իր մահկանացուն. զոհուեց իր պաշտած ու փայփայած գաղափարին՝ իր Մընին՝ ինչպէս նախուն թիթեսնիկը՝ իր սիրած խարոյիկ բոցերին...

Եյս անգամ ընկերների մի ստուար բազմութիւն յուղարկաւորեցինք նրան իր մշտենջենական օթեանը:

## «ՔԵԱԼԼԱՃԻՆ»

(պատմական անցք)

Ա.

Եթէ Սիւնեաց Վասակ իշխանի գուստը՝ տաճարաշէն ու բարեպաշտ Կատարանիդէ Դագկայ՝ չայոց և Վրաց թագուհին կամեցել է իր աստուածամիրական եռանդն ու գովելի խանդը զարից-դար, սերնդից-սերունդ հուչակելու համար, բացի Ընիի հրաշակիրտ կաթուղիկէն նաև Խծկօնից միաբանաբանում Ս. Կարապետի անունով երկնանման խորանը կանգնեցնել, Անթիպատղապարիկ՝ արեելքի Վեստ և Գուլ Սարգիսն էլ, գուցէ խորանացէն թագուհու փառքն ու անհուն ջերմեռանդութիւնը նսիմացնելու անբարտաւան դիտաւորութեամբ կանգնել է իր հոյակապ «քաւարանը» ասածինի հանդէպ, նրանից աւելի շքնալ, աւելի գեղեցիկ ու պանծալի...

Ժէ-ըդ կարի վերջին քաւորդումն էր, Վարդավառի տօնին Խըծկօնից գեղածիծաղ ձարն ու հովիտը լցուած էր երփներանգ ծաղիկների սրանչելի անուշահոտութիւնով. երիտասարդ բնութիւնը հրաշալի է այստեղ. սէզստ բլբակներն ու մինաւոր ժայռերն իսկ, գետեզն ու ծմակները ցողուած են բիւրաւոր գոյնի ու տեսակի շուշաններով, վարդերով և զանազան հոտաւէտ ծաղիկներով. խուլ՝ ասես լալկան ու բոզպաւոր կարկաշով փախչում է սառնորակ ու վճիտ առուակը. ծաղկից-ծաղիկ ոստոստելով՝ իրենց հաճելի դայլայլիկներն են արձակել չայաստանի բազմերանգ, նախշուն ու քաղցրախօսիկ թոշունները... բնութեան թովիչ և անհման գեղեցկութեանը միախառնուել էր և զուարթաղէմ մարդկանց տօնական զարդարանքը: Հինաւուրց վանքի շրջապատում խոնուած էր արանց ու կանանց հոծ բազմութիւն, հարուստ ու թանկագին տարագով. երիտասարդ տղայք՝ ոսկեզօծ կամալներով, արծաթի կոճակներով և ուրիշ զարդերով էին զուգուած, իսկ նազելի նորահարսներն ու գեղեցկատես օրիորդներն արծաթաձոյլ կօշիկներով, ոսկեղէն ալպարանշաններով, մարդարտայեռ մանեակներով, ականակուռ կամարներով, մատանիներով և ուրիշ պաճուռ-

հանքներով էին պշտուած... ուրախութեան ու հրճուանքի, խաղի ու խնդումի ախորժ ազմուկով դղբում էր բանաստեղծական ձորակը. մի տեղ՝ աւաւիդի ու օրնգի ձայնն է թովում մարդի, մի այլ տեղ՝ մանկամարդ օրիորդների քաղցր մեղեդին կախարդում է երիտասարդ տղաների սիրտն ու հոգին... կիսաւեր պարսպի տաջե ճարպիկ լարխաղցը իր չնորհալի սսաստումով Ս. Կարապէտի կարողութիւնն ու հրաշագործութիւնն է հոչակում. մի ուրիշ անկիւնում՝ կոյր գուսանի վլիին ամբոխը կուտակուած՝ լուռմ է նրա առասպելական յօրինուածները՝ ներսների, մարտիրոսների, սրբերի... կեանքից. մի խօսք վարդապոկի կիւրակէին Խծկոնից ձորակում լեզու են առել՝ ժայռեն ու ջրերը, ծաղիկներն ու խոտերը, ծառերն ու թփերը...

Հնչեց կոշնակի խուլ, ասես երկնային, խորհրդաւոր որսոտի ձայնը. թնգաց բարեպաշտ ուխտաւորների ջերմեռանդ սիրտ, նրանք խումբ խուռմ շտապեցին եկեղեցին: Իւրաքանչիւր սքչիք մի զայգ կանաչ ու գեղին կերոնի. կամ մի պաղուց խնկի փոխարէն՝ լի յսսով և ջերմ հաւատով ակնկալում էր ցանկալի «մուրաղը» ստացած՝ վերադառնալ իր բնակավայրը...

Նոյն ուխտի վանահայը՝ Յովհաննէս վարդապետը, այդ բարեպաշտ ու աստուածահաճոյ եկեղեցականը այսօր ս. պատարագն է մատուցանում. երգում է գեղջուկ տիբացուների սառւար խումբը, ձայնակցում են նրան և ժայռոտ բլուրները իրենց խորը՝; անվերջ կըրկնուող արձագանքով. միախառնում է և խնկի ու կնդրսնի անուշահութիւնը ծաղկանց բուրմունքին:

## Բ.

Պատկառելի պատարագիշը «խաղաղութիւն» էր բարեմաղթում, մինչեւ խաղաղութեան տաճարում և գուրսը տիրել էր սոսկալի իրարանցում ու ազմուկ, լաց ու ճիշ...

Ի՞նչ է պատահել արդեօք.

Ցիսունի շափ զինուած քիւրքերի և թիւրքերի մի տսպախումբ՝ չասան անունով քիւրդ ցեղապետի առաջնորդութեամբ՝ շրջապատել էր մենաստանը և սպասնում էր սրախողիսող անել բոլորին, եթէ նրանք կամովին չեն մերկանալ իրենց փարթամ զարդերից և ունեցուածքից. եթէ կ'յամատին յանձնել նորատի հարսներն ու նազերի աղջիկները իրենց գաղանական հաճողքին...

— Հնայր սուրբ, կոտորում և կաղոպառում են դրսում, անօրէնի բազմութիւնը պաշարել է և սկզբացին... — լուռմ է ամեն կողմից:

— «Խաղաղութիւն ամնեցուն»: — Սուանց շփոթման շարունա-

կում է սառնարիւն պատարագիշը:

Ջրջապատի մէջ լուռմ է հրացանի սոսկալի որոտը, աշաէների ու աէկերի շաշլւնը, որոց սակայն ձայնակցում է ներսից ձնծաղի ներգաշնակ ձայնը և Աստուածաշութեան ալէուն... ալեղպար արհղան անխռով սրասվ ու հանգիսա հոգով իր պաշտօնն է կատարում, նրա սիրտը՝ լի հաւատագի աներկրայ է իր հօտի անվանդ պաշապանութեան մասին...

Տաճարից գուրս՝ խրախճանքի ու գուարճութեան տեսարանը սուցի ու կոծի է վերածուել. այնտեղ կողոպաւում և արեան մէջ ատպալուում է եռանգոտ երիտասարդը, բռնաբարւում է գեղեցիկ կինը, աղջիկը... Աստուածային խորանը միայն զերծ է սրածութիւնից, թերեւս Յովհաննէս վարդապետի սարսափն ու երկիւղը թոյլ չի տալիս աւաղակներին մերձենալ սրբարանի մուտքին:

Վերջացաւ պատարագի սրբազնի արարողութիւնը. վրդովուած հօտի անվլոգով հովիւը վայր իջաւ սեղանից. տեսաւ զարդարուն կանանց՝ մերկ և բոկոտն, երիտասարդ տղայոց՝ արինաներկ. շօշափեց ժողովրդի կրած զրկանքն ու հալածանքը...

Սրիկաններն արգէն քաշուել, հեռացել էին վանքից, տանելով իրենց հետ նաև վանքի հարստութիւնը՝ անասնեղէնը — կովն ու մագին, եղն ու զոմէշը. — երբ հայր սուրբը նստեց իր կապագոյն նժոյգ ձին և քաջամարտիկ զօրպարի նման՝ խթելով ասպանդակները ձիու փորին՝ երկար տէգը ձեռին և շողակնի նման փայլվլող մերկ սուրբը բերանի առած՝ կայծակի արագութեամբ անցաւ քարքարոս բլուրներն ու Տեկուու գետակը: Նրան հետեցին մի քանիսը կտրէն ուխտարներից:

Լուռեցաւ հրացանի ճարճատումը. աւազակներն այլ ևս անկարսով լինելով խոյս տալ կամ ազատիկ վանահօք ճանկերից՝ հին Տեկուի մօս, տափարակ տեղում խմբուած՝ սկսցին մարտնչել: Վարդապետի սրածայր տէգը ծակոտում և դիաթեաւալ գետին էր գլորում պատահողին. իսկ նրա սուրբը՝ գերնղու նման՝ հնձում էր գլուխները, կարճ միջոցից յնտոյ, 40 անձերի արինոտ դիակները տարածուած էին նոյն վայրում, դրանց թուռումն էր նաև Հասանի զին. իսկ գերիներն ու աւարը իսպառ աղատուած էին:

Այդ օրից՝ Յովհաննէս վարդապետը կոչուեցաւ Քեալլան ճի և արինաներկ հովիւը՝ չասան-ջան. այդ օրից Խծկօնից մենաստանը երկար տարիներ զերծ մնաց ասպատակների սրածութիւնից ու յափշտակութիւնից:

Պ.

Մի գեղեցիկ առաւտա, չնորհարաշխութեան անունով Կարսի փաշայի մօտ հրաւիբուած՝ Քեալլածին բարշ էր արուած նոյն քաղաքում, կամրջի մօտ, կախաղանի սինից. Նրա դին զուցէ չարժանացաւ մայր հողին, բայց անարատ հոգին այսօր էլ սաւասնում է չայս եկեղեցու և հայ ժողովրդի շուրջը, նրա խաղաղութիւնը տակաւին կոծում է օդեղէն ալիքները...

## ԵՐԱԶ

Հետաւոր, անորոշ խաւարի և անսահման աղջամդի միջից, ուր ելքիմն հրդեհուում էր արեի բոցեղէն գունդը և նրա հրեղն ձողերը ձգւում էին աշխարհս մի ծայրից՝ մինչև միւսը, երեաց քառածի մի լուսեղին կառք, որի բազմոցի վրայ կանգնած է մի լուսասփիւս գէմք, որ մերթ ալեոր ծերունու և մերթ ծաղկավիթիթ պատանու է նմանում, հրեշտակային անմեղ ու գերրնական՝ անարատ կերպարանքով: Նրա մարմինը ծածկուած է անօսր, սպիտակ՝ մինչև սրունգները իշխող սաւանով, որ եղերուած է ոսկեղէն ծովերով ու փնջիկներով. Նա բանած ունի՝ մի ձեռին սիրոյ, հաշտութեան և խաղաղութեան, ասես լուսի փշրանքներից կերտուած փրկչական խաշը, միւսում՝ դալար, յաղթական մրտինին, և կանգնած է նա արթուն նաւավարի նման՝ կատաղի փոթորկի ու ալեկոծութեան մէջ տարտիքերող՝ կայմի վրայ. յայնատարած բազուկները դէպի վեր, դէպի ջինջ ու անհուն կապոյտները պարզած, պատանու մեղբածօրան շրթունքները թախանձանքի ու աղերսի բասեր են մըմնջում տմուր հաւատով ու լի յօյսով... սպիտակահեր ծերուկի բոցավառ աշբերից՝ որոնք յառած ու սիեռած են դէպի հիւսիս ու հարաւ, ցայտում են միաժամանակ խնդութեան ու տիբութեան, յուսոյ և յուղման, միիթարութեան ու սրտատանջութեան աղի կայլակներ. Նա ժապառում է մանկական անմեղ և զուարթժպիտակի առաջնորդ հիսութափականը... Նրա մերկ սաների տակ երեսում է կիսաքանդ ու հնոտի կառքը երփներփն ծաղիկներով, անուշահու վարդերով, նաև փշերով ու տատասկներով բեռնուած. որի բազմոցի վրայ կանգնած է նա, սակայն առանց հովելու կամ ծանրանալու նրան...

Անշուր կառքի ձիերը, որ կատաղաբար առաջ են վազում, կարծես չորս տարբեր կողմերի բաժանուելու բուռն ցանկաթեամբ. տարբերուում են միմեանցից նաև իրենց գոյներով. միջին դոյզը, որ ուղղակի քարշ է տալիս փոքրովի լծակը՝ մի կայտառ երիտասարդ նժոյգ է, ձեան կամ բամբակի նման սպիտակ, բայց անարկաւ, հպարտ և ամենի. աջակողմեանը՝ յոդնած և կարծես ծանր մտրակների ներքեւ

շնչառապառ և ուժասպառ եղած, կարմրագոյն երիվար է վիլաւոր և արիւնաներկ, որ վայրկենից-վայրկեան սպառնում է վայր զլորուել, այլ ևս յաւիտեան լոյս ու արև չ'ահսնելու համար. Երբորդը՝ թէն առիւծի կամ վագրի նման կոտրաւող, սակայն սովոր ու մորթ դարձած՝ մի սեաթոյր-ծերացած բեռնակիր է, ճալոսա աշքերով ու զազիր դէմքով. Նրա մարմինը ծածկուած է անթիւ սպիներով և տակաւին ծորում է գարշեկ շարաւը. չորրորդը՝ օ՛, օ՛, նա խորագէտ է և խորամանկ. Հրավուրիչ է միայն նրա արտաքինը. կապտագոյն է նա, կանացի պշրանքով զարդարուած և կախարդիչ հայացքը անհանդիսա դէպի արեեկը սեհուած... Նրանք բոլորը փախչում են շերաշերա ճաճանչների վրայով, որոնք սակայն հետղնեաէ հեռանում են միմեանցից և աւելի ընդարձակ ծաւալ ստանում, նրանց ոտքերի տակ, ամպեղէն կոյտերի մէջ երեսում են՝ շղթայ և մարակ, սուր և սուին, ուումբ և թնդանօթ... տեսնուում են նաև այլանդակ դէմքեր, ահուելի ուրուականներ, քսամնելի տեսարաններ ու աղէխարչ պատկերները...

Կառավարի ալեզարդ գլխի հետքարշ է տրուած կամ աւելի ճիշտն ասած՝ նրա քամակից՝ խաւարի և յոյսի միջև իբրև մի անջրպես՝ կանգնած է բաց-մոխրագոյն ցանցաձև վարագոյր, մանը, փայլ-փլուն ասուալներով ու՝ երբեմն գունատ. և դժգոյն աստղերով ծածկուած...

Անուշանու ծաղիկներով ու վշերով բեռնուած կառքի բեկեկուած անիւները դանդաղ և յուսահատական կերպով առաջ են շարժուում կամ իսկապէս երեւուում ու աստանուում են դէպի ցանկալի իջկանը. իսկ բազկատարած կառավարը, խաղաղ ու անվիրով կերպարնով շարժում է սիրոյ և միութեան քառաթե խաչը, շարժում է նաև խաղաղութեան և փառքի կանաչ մբտենին. Նա ճիգն է թափում մի վայրկեան աւաջ անվտանգ ու ապահով հասնել ցանկալի հանգիստը...

Եւ լողում է նա ծովացած տանջանքների մէջ...

## ԻՒԶԲԱՇԻՆ

Ա.

Թ.-եցի Կարօն հին եասաւուլներից էր, եասաւուլի բնորոշ գծերով, որի նմանը տեսնուում ենք պ. Պոօշեանցի՝ «Հացի-խնդրում». Նա մի կատարեալ «Միկիտան Սաքօ» էր, բայց համեմատաբար պարզամիտ ու աւելի հակումն ունեցող դէպի ասպետական յատկութիւնները. իհարկ է աւազակութիւնն ու յափշտակութիւնն էլ նրա հայացքով ասպետական աստառ ու բնաւորութիւն ունէին:

Դիւղում նա «Խլզբաշի» էր կոչւում և քարշ էր անում արծաթաթել անկուածով եղերուած՝ կապտագոյն չերքեսկու վազմաների հետ, զոյգ բրոնզի մեդալներ 1853-56 թուերի ուուս-տաճկական պատերազմի յիշատակին սահմանուած, երկուոն էլ ս. Գէորգի ժապաւնիսերով. մեդալներից մէկը համարեա միշտ խրած ունէր նա փամփուշաների արանքում, որպէս զի անծանօթի աշքում երեար թէ այդ ծածկուած շրանշանը ս. Գէորգի արծաթի խաչ է, որ այնքան կարեսութիւն էր տրուում մեղանում... Կարօն շատ պուռուախօս, սնապարծ մարդ էր, և այդ մծախօսութիւնը, յաճախ մտացածին հերոսութիւնները յարմարուում էին նրա արտաքինին.—լիք, յաղթանդամ, բարձրահասակ, երկար, մինչեւ ականջները հասնող ոլոր ընչացքով, ածելած դէմքով և սուր, թափանցող, նրա առնական դէմքին ասես մի առանձին վեհութիւն տուող աշքերով; Նա գիւղական ունեոր ընտանիքի որդի էր, սակայն գիտէք թէ այդ ժամանակներում ինչ էր պէտք գիւղական ունեորի հռչակ վայելելու համար. 30-40 օրավար հող, մի գութան 6-8 լուծ եղներով և մի քանի կթան կով ու ոչխար. ահա բոլորը; Նրա պատկառելի ծերուկ հայրը 1830 թուականի գաղթականութեան հէնց առաջին օրից գիւղաւագ է եղել և ահագին հռչակ ու հեղինակութիւն ունեցել: Կարօյի դէնքերը՝ սուրը, գաշոյնը, կարարինան, «շեշխանա» հրացանը, թամբի զոյգ ատրճանակները, գտկի «վշտովը», կրծքի վազմաները, գօտին ու մտրակը, բոլորը՝, անխտիր ու հատած-ալծաթաթապատ էին. իսկ թանկագին նժոյգ երիվարը և նրա պչը առաջ էին ծակում. սարսափ էր աղդում Կարօն, երբ ահա-

գին եղիզնի տէզը ձեռին ճօճացնելսվ աշտանակում էր ի՞ս ոսկիգոյն ձին կամ, ինչպէս ինքն էր անուանում «Ղուլա-քեահլանը» և Ալէքսանդրապօլ քաղաքի փոշելից հրապարակներն ու նեղկակ, գալարուն փողոցները վեր ու վար շափում. ի՞նչ հոգս, եթէ մի-երկու երեխայ տակով կանէր կամ խեղճ ժամակոչ ժահէնը մեռելի գարշտնոս «ջաղպը» (դագաղ) շալակին գերեզմանատանից՝ եկեղեցի վերագառնալիս՝ նրա ձիու սմբակների տակ ջարդ ու փշուր կ'լինէր... ո՞վ էր դիտաղն ու լոսղը. շէ որ այդ բաղդաւոր օրեւին մեր եասաւուները մի-մի անսանձ ենիշէրներ, հրոսակներ էին:

Խւզրաշի-Կարօն փոփոխակի կերպով ենթարկւում էր երբեմն եղբօրս իբաւասութեան, որ ոստիկանութեան պաշտօնեայ էր և երբեմն՝ դպրոցական ընկերոջս Խւանի՛ հօրեղբօրը. այս երկուսն էլ իր ժամանակ գրեթէ փայլուն աստղեր էին Ալէքսանդրապօլի մութ ու խաւար մթնոլորդում, ուր չինովնիկութիւնը ամենակարող մի ոյժ էր համարւում... զիւղական խւզրաշիները, քեահաները (զիւղաւագ) ու եասաւուները կապուած էին քաղաքացի աղանիերի ու «չինովնիկների» հետ «քաւոր-սահնահայրութեան» կապերով և ահա այդ իսկ քաղաքական գարձուածի չնորհիւ ևս էլ, Խւանն էլ Կարօյենց ընտանիքում սանիկներ ունէինք. երկուսս էլ «քաւոր» էինք, երկուսս էլ նոյն շափով յարգանք ու մեծարանք էինք վայելում Խւզրաշնց հիւրասէր յարկի տակ. մենք անրաժան էինք նրանց խրախճանքներից, հարսնանեսի, փեսակեսի, հարսանիաց, մկրտութեան, ուխտագնացութեան և ուրիշ հանդիսաւոր ուրախութեան մասնակցութիւնից...

1868 թ. Վարդավառի պասին էր, գույց վերջին հինգշաբթի կամ ուրբաթ օրը, որ Խւանն ու ևս գոմէշների սայլի մէջ ինամքով տեղաւորուած՝ Խւզրաշի Կարօյի հսկողութեամբ՝ գիւղ էինք գնում, կամ աւելի ճիշտ, որպէս խաչեղբայրութեան թեկնածուներ, ուղարկւում էինք «հարսնատեսի» ուրախութեանը մասնակից լինելու. «հօ, հօ, հօ»... հին աեսակի՛ գեալ-գեալ արարան (սայլը) իր պատող թանձր առանցքով ու ահագին, միապազաղ անիւներով դժոխային ձայներ ու ճողնչիւն հանելով՝ իրիկնադիմին մեղ հասցրեց Թ.-գիւղը, որ Ալէքսանդրապօլից ընդամենը՝ 5-6 վերստ հեռաւորութիւն ունի. բաւական բարձր սիզաւէտ սարահարթի վրայ, հովասուն օդով և բիւրեղի նման՝ ջինջ ու սառը ջրերով:

Իր նորաշէն «այլանի» զբանը գիմաւորեց մեղ ծերունի նահապետը՝ Խւզրաշի Կարօյի հայրը՝ ձեան նման սպիտակ, մինչև գոտին իջնող մետաքսի մօրուքով, մեղրամոմի նման նուրբ ու գունատ, իսկապէս ակնածութիւն ներշնչող գէմովի, ծխախոտի ահագին չխպուիր ձեռին, ու ամպի պէս՝ քուլա-քուլա բարձրացող ծխով:—Համեցէր,

համեցէր, իմ աչքի վրայ տեղ ունէք:—Ասաց նա յարգանքով և աեղաւորեց մեղ, աթարի գէզով ծխացող օջախի՝ աջ ու ձախ կողմիւում՝ պարուկական գորգերով ծածկուած տախտակամածների վրայ: Քիչ յետոյ խմբուեցին գիւղի առաջաւոր, իշխան մարդիկը. ահա դեռ երիտասարդ, բայց անժամանակ գեղնած ու թոշնած՝ Ասաւածային տաճարի պաշտօնեան իր երկար գաւազանով, անպաճոյն «աէր-ողորմեա»-յով և սրածայր քոշերով. ապա շարան-շարան եկան և երկրորդական մարդիկ մինչև իսկ գիւղի տկլոր ժամանարն ու «քոստոգիրը»: Այժմ չեմ մտարերում, բայց ըստ սովորութեան այդպիսի զէպերում քահանան հարց ու փորձ էլ անում քաղաքայի մանուկներին՝ գրքից, կարգմունքից, ժամից ու պատարագից: Ցիշում եմ միայն թէ ինչպէս պատկառելի ծերունին՝ Կարօյի հայրը՝ ի միջի այլոց, տպաւորութիւն գործող ողեսորութեամբ ու մեր մանկական սրտերի մէջ խոր ակօս գցող գոյներով Նկարագրեց 1810 թուականի «մեծսովը» Բարձր չայքում, որաեղի գաղթական էին և իրենք. պատմեց և իր պապի մի առասպելական բարեգործութիւնն ու տեղի սևնեցած հրաշքը. «Պապս շատ բարեգործ մարդ էր,—ասաց նա,—մեծ սովին ամբողջ գաւառի ձրիարար հաց մատակարարողը, Սստուծոյ ողորմութեամբ, նա էր միայն. երկու շտեմարան լի ալիւր ունէինք, օրուայ ընթացքում դատարկւում էին նրանք «իսէր ու խէյրաթի» այսինքն՝ բաժանուում էին անխափը և՛ հային, և՛ թուրքին, և՛ բիւրդին, և՛ նասրադինին... իսկ բարի լոյսի հետ, հրաշքով լցուում էին ամբարները ալիւրով և այսպէս շարունակուեց ամիօներ ու տարի, մինչև որ անցաւ Աստուածային ցասումը և՛ առասութիւնը տիրեց երկրին»: Լսողներն զգացուած՝ հաւանութեան ու զարմացքի ցոյցեր էին անում. գովում էին անցեալ ժամանակների աւաքինութեան ու ճշմարիտ մարդասիրութեան ողին, մինչև որ սեղան փուուեցաւ և ձիթի ճենակերով ու ծխացող լուսով մեղ ընթրիք արուեց, անշուշտ կտաւահատի կծու ձիթով տապակուած խորտիկներով ու թարմ ընդեղչներով:

Բ.

Ճարաթ գիշեր սայլերը լծուեցին. մանկամարդ հարս ու աղջիկների հետ միասին ինձ և Խւանին էլ զետեղեցին մի սայլի մէջ և սատանայական սուլոցով ու անվերջանալի «հօ, հօ..», ներով. մեղ ճանապարհեցին գէպի Ա, գիւղը: Առաջին անգամն էր, որ գիշեր ժամանակ ճանապարհ էի գնում, այն էլ բացի Խւանից, օտար ու չխուկան գեղջկուհիների հետ միասին: Խւզրաշի Կարօյին ընկերացել էին և մի քանի նոյնպիսի գինուած ու զարդաբուած երիտասարդներ:

Պարզ գիշեր էր, մոյդ-կապտագոյն հրկիսակամարը ծածկուած էր քիւրաւոր շողակնի նման փայլվլով ասաղերով ու ասսւաներով. ցերեկուայ անհնարին տապից յետոյ, լիուան հովն ու ծաղիկների անուշահոտութիւնսվ սնուած թեթև քամին համեմի գուրգուրանքով քուն էին քերում մեղ վրայ, սակայն ձիերի տրոփիւնը, ասպանդակների ու գէների շառաչը և հրացանների անակնկալ որսուլ խանգարում էին մեր այնքան անուշ նիլին. սարսափով դիտում էինք գիշերային աղջամզջի մէջ առկայժող վառօղի բոցը և լուս ու խաղաղ լիններում արձագանք գանսղ՝ սոսկալի ճարճատիւնն ու որսուլ... մեր երեակայութիւնը ստեղծում էր հազար ու մի աեսակ այլանդակ մտապատկերներ, կոշմարի նման՝ ճնշող ու խեղգով: Խրաքանչիւր սեպացած մի ժայռ, մի ծերպ, կամ հողի թումբ, մի մացառ կամ մասրենի մեղ թւում էր թէ աւազակների զինուած խմբեր են, որ ահա, ահա, օրօրում, առաջ են շարժում մեղ վրայ յարձակում գործելու և անգթարար սրախողխող անելու համար: Խանը շփելով քնչած աշքերը և ծանրապէս յորանջելով յուսագրում էր ինձ՝ փոխագարձաբար ես էլ Խանին. իսկ Խրաքաշի-Կարօն անհանգիստ վեր ու վար անելով՝ իր զօրեղ, բամբ ձայնսվ, պատմում էր ձիաւոր ընկերներին՝ թերևս յաւակնութիւն ունենալով հասկացնելու նաև ուշագրութեամբ լսող հարս ու աղջիկներին, թէ ինչպէս հօտեր է քշել, մարդկանց թալանել, խանութներ ու տներ կարել, մաքսանենգութեամբ պարապել. Ղարախաչում աւազակապիտ նարին վրայ տուել և իր կենոցի (եափնյի) տակից անակնկալ կերպով «ղարաբինան հայտելամիշ» արել և՝ «անհաւատ շանը» արնթաթալի գետին գլորել. թէ ինչպէս հոչակաւոր գող-Եղիկի, Զատիկի, Մարտոյի, քոռ չամբարձումի, Խրաքաշի-Մէյթիի, Արմուտլեցի Խաչօյի, թուրք-Զէյնալի..., հետ, գանազան մովրովների ու գաւառապետների հովանու կամ պաշտպանութեան ներքեւ՝ «աշխարհը քանդել է արին հոսեցրել»: Նրան ձայնակցեց մի ուրիշ ասպետ, երեկի ժամանակին նոյնպէս եասաւուլ եղած, երկիրը ուսի տակ տուած և արին հոսեցրած:

— էն վոխտը եղրդի-նաշառլիկը (յեզդին հայունակ) նամէնքօն էր, Սատուած բանը աջողէ. շատ գարզմանդ, միլայիմ խսան էր. Ղալամբարովի, Սոսի-աղի, Դիլբանա Մկրտչի, Սանասարովի, չասանաղի... թթերը սադ ու սոլ կտըմ էին. եալմահ էին էնըմ մեղի գեղ ու բարվան կտրելու. տօ, վալլահ, եասաղ էլ էին թոցընըմ, փոշտ էլ էին կտրըմ, ու ստով գլխով իրանց թասլըմ էնըմ, մեր փայն էլ ալլահ վէքիլսառնըմ ու չի ստի մէ զբաղ կաղնըմ... խէր ու բարաբեաթկար, ազրէր, հիմի Սէմեններօն ջահէ-ջուհուներուն է երես տալըմ. քթամի (կաշառք) մասլահաթը, որ իմացել է, խոլվաթ թէ այսան,

պէխերն է քեօքհան էնըմ, ոտները գետնին տըփըմ, ու օխտը հեղ ուըսի խոշը բերող՝ անուշ քիւփուըը բաց թողնըմ»...

Խրաքաշիները իրննց այնքան ուշագրաւ և ոգեսրող՝ «եղրդի-նաշառլիկների» պատմութիւնը դեռ չին վերջացրել, երբ՝ ասես՝ շան հոտառութեամբ՝ որսի հետքի ընկան:

— Մանչեր, — ասաց Խրաքաշի-Կարօն, — ես ու իմ Աստուածս, ձորի մէջ չէնլիկ կայ. Դուլա քեահլանս անկնները սլվլցընըմ է, եան զաշաղ է, եա թումարի (վաճառականի) քեարվան. ձիերուդ գլուխը դարձուցէր չեօլ-քեասմա վար իջնինք, աշենք թը փրթիմ կրնընը բերէ մեր հարմցուի թալահին...

Նրանք շեղուեցին ճանապարհից ու կածաններով աներեսութացան մթութեան մէջ. մենք լարուած ուշագրութեամբ ու հոգեկան խեղող անհանգստութիւնով սպասում էինք մի արտակարգ դէսքի կամ իսկապէս արհաւիրքի:

Զատ ժամանակ շանցաւ, որ խաղաղ օդը ալեկոծուեց հրացանների ուժգին որոստվ: Լսում էին Խրաքաշի-Կարօյի ձայնը և օգնութիւն խնդրող աղմուկներ: Յայանուեցաւ, որ մեր Խրաքաշիները գրծ էին ունեցել Դաղստանի լեռնականների հետ, որոնք այդ թուականներին խումբ-խումբ գաղթում էին լեռնոտ Կովկասի ասւներից դէպի օսմանեան երկիրը, յաւակնութիւն ունենալով Սասունում ու Զէյթունում հաստատելու իրենց նոր բնակատեղին... եւ մեր մնապարծ քաջերը՝ վրացու շան նման՝ հազիւ մտղապուրծ՝ իրենց փրկութիւնը պտրում էին «արաբաների» շուրջը:

— Տղմք, — ասաց մի խուպոտ ձայն, — էդոնք էման զոշաղ են, օր մէկը՝ քառասուն հոգու բալի շի էնըմ...

— Լսուատորչու հաւատ՝ Մոսէս կինիազն էր, օր կրցաւ Զամիլին թառ ժաժ էներ... ըսըմեն՝ տաս տընուր գեղին հազար սալդաթը շէր կրըմ վրայ տալ...

— էն դտուալ խաչ ու միտալ տվին օր հաստն ու հիսապը կորաւ... Արգիբէկցին էլ, Ալէքսան բէզն էլ, Սահակ աղէն էլ, ուսումնիկոլն էլ, Զէյնալ բէզն էլ, Օհաննէս աղէն էլ, չաճի Ղազարն էլ... քո մմա Զամիլի զօշունլուղին (պատերազմին) ափիցար դարձան ու խաչ առան: — Վրայ բերեց մի ուրիշ՝ կարծես հիւծախտով տանջուող մարդի ձայն:

— Խրաքաշի Կարօ, դուրպան, էն դոորա ձէնդ նա խչուն փորդ ընկաւ:

— Դիլու ու աղուէսի մասալը գիտէք, տղաք, — հեղնեց մի երկրորդը:

— Եօ, տը սնւս էք հէչ չէ. հիմի օրա շախմախ զարնեմ, քիւ-

թունիդ երեսն էլ մեր բող իշու սանկն է գտաել... տահա ի՞նչ պարզէնաք կը. բայ իլիսէն մէ էրկու Դաղստանի քեահլան ջոկեմ ու խնամտանց փէշքեաշ տանեմ, հըմմը տէսաք, գիւլան կարկուտի պէս վրաներս թափեցին.—արամարանեց կամ իրը թէ արդարացըրեց ինըըն իրեն՝ ոչ երկուտթեան մէջ՝ իւզբաշի Կարօն:

Պէս գիշերն անց էր, որ մեր կարաւանը իր ականջ ծակող մուգիկով (առանցքների ճռճուցով) գիւղ մտաւ, իւզբաշին մի տան քարաշէն շրջապատով վեր մագլցեց և ներս մտաւ. տան պահապան ահազին գամբուը, այս տարօրինակ դէպքից կարծես այսահար եղած՝ վախանակ հաշելու, ձայնը փորը ընկած՝ սկսեց մի տեսակ կաղկանձել. երկուդից խեղճի լեզուն թանձրացել էր, գուցէ և՝ այժմեան գիտութիւնով՝ կաթուածահար էր եղել:

—Խնամի, խնամի, բաց էրա զուսը, թէ չէ էրթիկը գլխուզ վլեմ կը,—իրը թէ զուարճախօսում էր իւզբաշի-Կարօն, վրզովելով խնամոնց հանգիստը:

Սակաւ ինչ յետոյ, արդէն տարօրինակ իւզբանցում, կեանք ու կենդանութիւն կար «խնամոնց» հիւրընկալ յարկի ներքե, ծխում էին ու ամպի նման բարձրացող՝ ձիթի խեցեղէն ճրագները, ծխում էր և տասնեակ աթարի կոյտով բեռնուած՝ վառարանը, կարմիր ու կանաչ բոցերով թըծուում էին ահագին խորութեամբ գետնի մէջ թաղուած-թռնիրները: Այր մարդկի բաժակները ձեռներին՝ բուռն ինքնամուացութեամբ, ամեն տեսակ բարեմաղթութիւններ անելով, մաքի ու լեզուի ծուծն ու քանքարն անխնայ շոայլելով՝ կուլ էին տալիս չամչի թէ քիշմիշի թունդ օղին, իսկ կանայք սաքուի (գոմի սենեակ) եղեք կողմերն էլ բռնած, զոմի մութ խորշեսից, իրը թէ գաղտնի, դիտում էին այդ սրտազբաւ տեսարանը. երբեմն էլ ներս ու զուրս էին անում այս կամ այն յանձնարարաւթիւնով, դէմքերը շղարշով կամ ընթակալով ծած կած, լուռ, չխօսական և ամօթխած... ի հարկէ, որպէս քաղաքացիներ, նոր և անծանօթ մարդիկ, ես և եւանն էլ զերծ չէնք նրանց առանձին ուշագրութիւնից. յարմարաւոր դէպքում արնտղում էին մեր հանգերձները, կօշիկները, գլխարկները..., իւզբաշիների նիշն ու աղմուկը հօ երկինք էր բանել և ամբողջ գիւղի քունն ու խաղաղութիւնը վրդովել. տուն ու զուռ լի էր ժողովրդով, քեահան էլ, տէրաէրն էլ, իշխաններն ու ծերերն անգամ, ուզափ կարաւանի նման՝ շաբան-շաբան ներս էին խուժում կարծես մէկը՝ միւսին կանխելու և Աշտարակի օղիից մի բաժակ աւելի անուշ անելու համար:

Մինչդեռ վայտեղէն սեղանի շուրջը հասակաւոր «խնամիք» բոլորսւած՝ ջան էին ասում ու ջան լսում, օղին էին սպառում և չիպուխներն անդապրում վստացնում, կամ ծխախոտ շունեցողը իր չիպուխի հոգին էր առնում անհանգիստ փշելով կամ լուլէն մաքելով, իբր թէ ծխախոտ լցնելու պատրաստութիւն տեմում, իսկապէս ուշագրութիւն հրաւիրելու նվատակով, և ստէպ ծխախոտի մասին խօսք ու զրոյց բաց անում. ներկայացաւ տեղացի սազանդար՝ աշուղ-Ղարիպը, որ թուլքերէնի հետ զուգընթացար երգում և պատմում էր նաև հայերէն լեզուով. նա սկսեց խփել իր ահազին սազի վայլիլուն թեկիրին, համարեա միւնոյն երգի անվերջանալի կրկնութիւնով՝ մարզի մէջ ակամայ ձանձրոյթ յարուցանելով.

«Մէկը ճերմակ,

Մէկը գեղին,

Մէկը ալ,

Մէկը կարմիր,

Մէկը կապոյտ,

Մէկը կանաչ,

Մէկը՝ ու...»

Թէ ինչ էին նշանակում այդ հօթը խորհրդաւոր գոյները և ինչ պիսի երգի հետ էին հիւսուած, այժմ չեմ մտաբերում. բայց երգի թէ եղանակը և թէ զոյների դասաւորութիւննը այս օր էլ խոր տեղ է բոնել իմ յիշութեան մէջ. մանաւանդ Ղարիպի ծաղկատար, ածուխի նման՝ արիից սեացած զէմքն ու ծամածութիւնները. ահազին, մինչև ականջակոթերը հասնող ըերանը և դուրս պրծած բիբերով՝ այլանդակ աշբերը, որոնք ասես ներկայացնում էին նրան բնութիւնից հալածուած՝ մի մարմնացած վիշտ, իսկապէս արգահատելի դար ի պութիւն... Արդեօք մի բան ստանում էր նա այդ եռանդուն ջանը և արիւն բրաինք աշխատանքի համար թէ ոչ, Աստուած գիտէ, սակայն լաւ միտս է, որ յաճախ նա ընդհատում էր իր երգը և սարսափելի ճիշով գոտում էր՝

«Եաւոյ, եաւոյ...»

Չուցաւ, չուցաւ,

Բողազա չուցաւ»...

Եւ մի-մի գտաւթ օղի էին տալիս պատակած, շորացած կոկորդը թրչելու համար:

Վարդապատի կիրակին էր, տօնական հանդերձներով զուգուած ծեր ու տղայ, հարս ու աղջիկ ծաղկանց նման՝ երփներփն թարմ ու

գունատ, հոտաւէտ ու խամբած, միասին վնջուած, բռնել էին եկեղեցու ներսն ու դուրսը. մերոնք էլ հօ, իւղաշի լինելով հանդերձ սրաերթումն Աստուած ունէին, երեսներին ամօթ ու պատկառանք, վայր գլխին օղիի բաժակները, բերանները սրբեցին և ակնածութեամբ մտան եկեղեցի: Դիւղական մութ ու խոնաւ տաճարի փայտեղէն ծածկի ներքեւ մեր եկեղեցու աննման խօսնակի—Ընորհալու—հոգեսքանչ մեղեղներն էին չարաշար կերպով նահատակուում. խակ դրսում դաւուլի ու դուսնի կլկլոցը ականջ ծակում. սրնգի ձայնն էլ այս և այն տանիքից իր համեստ պարաքն էր կատարում, միախառնուելով ընդհանուր ինդութեանն ու պղմուկին. էլ ով էր սպասում պատարագի վախճանին. բաւական է ով աղը օրհնուած էր և մատաղը մորթուած...

Թերես ծերունի քահանան կենդանի խօսքով բացարեց ժողովովին օրուայ նշանակութիւնն ու վարդավառի տօնի ծագումը հայոց մէջ՝ հեթանոսական ժամանակներից.—չեմ կարող ասել, յայտնի է միայն, որ մեր հոգեոր հովիւները, այն թուականներին, լաւ թէ վատ, իրենց մտաւոր պաշարի ու կարողութեան չափով, սիրում էին միսիթարել «բանաւոր հօտին», խրատել, որ աղբիւրի պէս «թալեն» իրենց մեղերը, ծոմ ու պաս պահեն, «խաշ-համբոյր և ժամոց» ասն. նոյն երեսոյթն աւելի լայն ծաւարով տեղ էր բռնում և քաղաքի եկեղեցիներում. ո՛վ Ալէքսանդրապոլցին չի յիշում այս և այն հոգեորականի իմաստալից կամ ցանցառ քարոզները. այս և այն անապատական կամ նորելուկ արեղայի, Տէր Մովսէս, Տէր Աստուածարան, Տէր Արարայ, Տէր Փշտով... քահանաների այնքան ճապաղ ու զաւեշտական բեմասցութիւնները:

Զոգ ու կրակ էր: Քափի ու բրտնքի մէջ, դուրս գալով եկեղեցուց՝ գեանափոր տների, հազածածկ կտուլների վրայով, ուղտի բարաւանի պէս՝ բռնեցինք մեր ասպնջական ինամոնց տան ճանապարհը. մի տեղ՝ մարդի ոտը ներս է խրուտ խարխուլ տանիքից, մի սրիշ տեղ՝ ահագին, կարծես մարդի յօշոտող գամփոները վրայ են արձակում, միւսում՝ մի աւերակ բնակարանի միջով, որ խսկալէս գարշելի առականութեան բոյն է գարձել, անցնում ենք դէպի գալարուն, ծուռն ու մուռ, քարքարոտ ու անմարուր սոխաղը (նրբափողոց). բայց որ տեղից էլ որ անցնէիր, ով էլ որ լինէիր թէկուզ «Եղղղի-հաշառ-լիկ» կամ իւղաշու տիտղոսը վայելող ու զոյգ, միասնասակ բրսնզի փայլիլուն մետալներով ու կէս-կէս արշին երկարութեամբ քարշ ընկած ժապաէններով մարդ՝ այնտամենայնիւ սափորով ջուրը շաղ էր արտում երեսիդ. չի որ վարդավառ էր, հաւասարութեան, ազատութեան, խաղի ու խնդումի օրեր, մանաւանդ որ իւրաքանչիւր հայ քրիստոնէի վրայ բարոյական պարագ կար կատարելու եկեղեցական

այդ կարեոր ծէսը:

Դեռ այդ ոչինչ, եթէ ձեր նոր հագած շորերը սրսկում էին ջինջ ու մաքուր ջրով, հավա ինչ կասէիր այն բանին, եթէ փայտի քուղաներով մածունն ու կաթը, գոյլերով թանն ու պանցի շմառկը եղբարաբար շաղ տային ձեզ վրայ... թէկ այդպիսի առանձին ուշադրութեան կամ բաղդի արժանի էր իւղաշի Կարօն միայն, որպէս հեղինակաւոր կամ առաջաւոր մարդ, որի մոթ ալ-փ ափախի ց սկսուած մինչեւ երեք խոչըր բեռների վրայ յենուող, վիրական լարշնները (կօշիկ), նաև նուրբ չերկեսկին ու լաստիկի լայնկեկ անդրավարտիկը ծածկուեց մածնի թանձը շերտով: Իհարկէ նրա հետ խաղ էին անում խկապէս իւղաշի ու իշխան խնամիները: Տուն ու գուռ սպիտակիլ, մածուն ու թան էր դարձել, ջրուել ու ողողուել:

Ճաշից յեայ գիւղի նորահաս, երիտասարդ տղայքը ձիարշաւ սարքեցին, մեր իւղաշիներն էլ հոնի մի-մի իւղած մահակ ձեւներին դուրս եկան ձիարշաւի. ու ամպի նման բարձրացող փոշին շղարժ պէս բռնել էր երկնքի երեսը. խոնուած ամբոխի միջից լսում էր ասպանդակների շառաչը, գովասանական բացագանչութիւններ ու պախարակող քրքիչներ... տեսնում էինք օդի մէջ սլացող մահակների տարափը, սրաջաւ ձիերի վրայ՝ ինչպէս կրկէսներում՝ զանազան տեսակ ներկայացումներ կամ խաղ անելը: Մէկի ձին էր վայր ընկնում և փոշու մի ահագին ամպ սկ ուրուականի նման՝ մինչև երկնք բարձրանում, որին անմիջապէս հետեւում էր հետաքըքիր ամբոխի վայրենի հոսանքը. միւսը՝ ինքը ձիու վրայից գետին էր գլուրում ու շատ ցաւակից կրծքերից վշտի բացականչութիւն ու հաւաշանքներ կորզում, շատի աշքերից էլ լեղի արտասուք քամում. և այդ երեսոյթը կարծես աւելի մօտեցնում էր մեղ Վարդավառի տօնին՝ հեթանոսական գարերում...

Զըկուածն ու հալածուածը միմիայն նորահարսն էր, որ ամբողջ օրը թանձը վարդագոյն քողը երեսին, մոմակերտ արձանի նման, կանգնած էր տան մի անկիւնում լուս ու մունջ, ձեռքերը կուրծքին, գլուրա խոնարհած,,, բայց նա բաղդ չունէր, «բարի» չէր նաև մեր այցը, որովհետև այդ օրը մի մութ անկիւն պիտի գրաւէր Ա.-գիւղի տարեգրութեան մէջ...

Ժամը մօտաւուապէս շն էր, երբ բոթը գիւղ հասաւ թէ, վրացի գիւղացոց նախիւը մտել է Ա.-ցոց սահմանը և արտերը ոտնակոխ արել ու վշացրել:

—Թէզ, էս սահթին գնացէր տաւարը քչէր, բերէր էս տեղ գուկսաղ էրէք,—հրամայեց իւղաշի Կարօն:

Զիրիդը խանգարուեց, տաք գլուխ երիտասարդները կայծակի

արագութեամբ թուան դէպի հանդն ու սարը, սմանք ձի նստած, իսկ մեծամասութիւնը հետի, երկար փայտեր ու մահակներ ձեռներին: Մի երկու ժամից յետոյ գիւղի ձախ կողմի ձօրակը բռնուած էր ժողովրդի բազմութիւնով. եկիւ, խմբուել էին նաև զրացի գիւղի բնակիչները ամեն սեռի ու հասակի. զուռնի կլկլցին, «եայլիներին» ու պարերին յաջորդեց աղէխարշ սուզն ու սրամումոք շիւանը... ձակատամարտը սկսուեց սառը զէնքերով—սրերով, դաշոյներով ու մահակներով. բաղխումը անակնկալ էր և երկուստեք անպատճառափի: Տեսարանը իսկապէս սոսկալի՛ էր: Ես ու իւանը, որ մոռացուած էինք բոլորից և առանց պաշտպանութեան թողուած գիւղի եզրին, ձորակի բարձրում կանգնած՝ դիտում էինք թէ ինչ էր կատարում կարկաչիւն առուակի զեղածիծաղ ափերի հետ: Ահա, Ա.-ցիք իրենց հակառակորդի տաւարը գիւղ են քչում. նրանց տէրերը յամառութեամբ պահանջում են վերադարձնել. խնդիրը բանի գնում աւելի խորանում, պատուի և իրաւունքի պաշտպանութեան սուր բնաւորութիւն է ստանում: 'Ի դէպ' ինչպէս վերջում տեղեկացանք, սահմանի նկատամբ հաշիւներ են եղել մէջաեզում. վիճելի հողերը, փոփոխակի կերպով անցել են մէկ համայնքից՝ մրսին, նահանգական հաղաշափ հստօմինը յաճախ՝ ստանալով մի կլորիկ գումար՝ հողը կտրել, առել է դիցուք Ա.-ցոց, հետեւալ անդամ նոյնքան գուցէ և աւելի ստանալով շափել է յօդուած նբանց սահմանակից, հակառակորդ շնավաններին և այսպէս շարունակաբար: Այժմ մնում էր, որ սեպհական ուժով ու արիւնով լուծուէր իրաւունքի այնքան կնճռու խնդիրը, մահաւանդ որ երկու կողմից էլ ժողովրդի կատաղութիւնը յուղող՝ հեղինակաւոր եւզբաշիներ կային. «Զարկէք, ծօ, մի վախնաք, մինք կուտանք ջուղապը» (պատասխանը)—գուռում էին ամեն կողմից: Սառը՝ սարսափ աղոսդ փայլով, արեկի ճաճանչների հետ խաղ էին անում սրածայր դաշոյններն ու կեռ սրերը, շարժում էին և բահերն ու թիերը, մահակներն ու ճիւղունները: Տէր Աստուած, կանայք սրտապատաս, անհնապին ճիշելով, հերածակ, ստարորիկ, լաց ու որոտումով խռնուած կը սող տղամբրդանց ժխորին վազգում են. մէկի ոտները վարում, միւսին՝ գլկախառնում. որ կողմը նայես՝ աղիք գալարող դժբաղդութեան մի նոր պատկեր է երկում աշքերիդ. բոլորն էլ վայրենի, սիրտ մաշող, արիւնոտ...

Սակայն այդ շփոթն ու իրաբանցումը այնքան էլ երկարատես չեղաւ, սառնորակ առուակը տեղ-տեղ կարմրին էր տալիս. ժայռերն էլ, մացառներն ու ծաղիկներն էլ մի քանի տեղ արիւնաներկ էին: Ի՞նչ եղաւ տաւարը. չգիտեմ, տեսնում էինք միայն թէ ինչպէս ուսերի վրայ բարձած՝ գիւղ էին բերում աշքերիդ. բոլորն էլ վայրենի, սիրտ մաշող, արիւնոտ...

0՝հ, ինչպիսի թանկագին արեներ խաւարեցին այդ չարագուշակ օրը. քանի՛ մատաղ ու նորահաս կտրիմներ ծանը վէրքել ստացան ու սպանուեցին...

Իւանի հետ շրջում ենք ճակատամարտի հրապարակում. առուակի մօս, մի կանաչ հարթութեան վրայ տարածուած է արդէն յաւիտենական քնարվ սիրուն աշքերը փակած մի երիտասարդ տղայ, նրան շրջապատել են մայրն ու քոյրը, «նշանածն»: ու հարազատները, աղի արտասուք են թափում և տիսուր «ողբ» ասում. գովում են նրա աննման՝ «ղալամով քաշած» պատկերը. առաքինասէր ոգին, կտրմութիւնը... մատաղ էին լինում, մեռնում էին նրա արեիններից սկսած՝ մինչև արախինը. անիծում էին անգութ ու անսիրտ ոճրագործի օրն ու արելը, նրա «սեիկն էին կապում»...

Քիչ հետուն մի ուրիշն է տարածուած գուրս թափուած աղիքներով ու փորսափիրով, նոյնպէս շրջապատուած սրտակիցներով, որոնք գլխներին տալով, կուրծքերը ծեծելով, անկուշտ ու անդադրում լաց են լինում ու հեծեծում. մէկը՝ ուշադնաց սեղմուել է նրա կրծքին, միւսը՝ փաթաթուել է ոտներով...

Նայում ես շուրջը, նոյն երգը, նոյն քստմնելի տեսարանը:

Ճալակած զառիվեր են բարձրացնում ոչ միայն վիրատորուածներին, այլ և վշտահար, ուշաթափ կանանցն ու օրտապատառ աղջիկներին: Ահա, այդ խկ պահուն ուրուականի նման, պատառտառներին: Այսպէս կարմիր ու կանաչ արեկի համար, մուրազը աշքերին մնացած սիրականներիս սկ ու գեղին բաղդի համար:

—Կեցէք, կեցէք, մարիկներ, բուրիկներ, մի երկու խօսք էլ ես տսեմ, մի երկու կաթիլ արտասուք էլ ես թափեմ անուշիկ եղբայրներիս կարմիր ու կանաչ արեկի համար, մուրազը աշքերին մնացած սիրականներիս սկ ու գեղին բաղդի համար:

Եւ լացախառն ճայնով սկսեց մի շատ աղէխարշ, ցնցող ու սըրտագրաւ, տսես թաղման մեղեղի, նոյնպէս համեմուած իր սովորական երգի խորհրդաւոր յանկերով.

Մէկը կարմիր,

Մէկը կապոյտ,

Մէկը կանաչ,

Մէկը սկ,

Մէկը ճերմակ,

Մէկը գեղին,

Մէկը՝ ալ...

—Ա՛լ, ինչպէս մայիսեան նորաբաց վարդը, ինչպէս անտառի,

Եռան պոյտը, ինչպէս ծիածանի գօտիի մի շերտը...

Ղարիպի սաղը այս անգամ լուսմ էր, նա չգիտէ դրուատել եղբայրասպանների թէկուզ հերոսութիւնը,, Ղարիպը անխափիր լաց էր լինում երկուստեք ընկած՝ «կանաչ-արևների» համար:

Եւ այդ բոլորը պտտում էր մի պատառ հացի շուրջը, մի կտոր սկ հողի համար, որ այն ժամանակ ինձ և իւանին մի անհառկանալի երեսից կամ հանելուկ էր թուռ:

Տուն վերադարձանք. մեր ասպնջական խնամին կտմ հարսնացուի հայրը գլխից մահակի հարուած ստացած՝ արիւնաներկ փըռուած էր տան կեդրոնում. իսկ իւզբաշի-Կարօն հէնց կոռու տաքացած վայրկենին իր «Ղուլա-քեահլանի» գլուխը դէպի քաղաք էր գարձրել և անհետ եղել. և այս բանը ուշ հատկանալի եղաւ մեզ. կէս գիշերին միայն, երբ գտառական պաշտօնէի քամակն ընկած, մի խումբ կողակների հետ, մտաւ նա Ա.-գիւղը:

Մենք վերադարձանք հետեւեալ օրը իրիկնադէմին: Քարքարոս լեռան լանջի հետ սև ժապաւէնի նման ձկուած՝ ոլոր մոլոր ճանապարհը տեղ-տեղ բռնուած էր մարդասպանների կարաւանով, որոնք, քամակներից կապուած ձեռներով, եասաւուլների ու կողակների անդութ մարակների ներքև՝ քաղաք էին քշւում թերես դատուելու, բայց ամենայն հաւանականութեամբ «կթուելու» համար... այն ժամանակներում հօ, յաճախ կրկնուած երեսից էր Կարօյի փոխարէն Ղարօյին աքսորել...

## ՕՍՄԱՆ-ԵԱՄԱՆ...

Ա.

Վէգիխասս ու Ազարակ գիւղերի սրտաճմլիկ և քստմնելի դէպքերից ու տարագրութիւնից յետոյ, նոյն երեսոյթը մուտ գործեց նաև Ալաշկերտ. Ալաշկերտցիք էլ սկսեցին իրանց բաղդն ու մի պատառ սկ հացը որոնել օտար վայրերում, օտար երկնի ու աստղերի տակ...

Ղարաբիխսա գիւղը, Ալաշկերտի վիճակում, իր արգաւանդ և րարերեւ հողերով, ընտիր մարգագետիններով, հովասուն օդով ու սաւնորակ, առատ ջրերով յայտնի վայրերից մէկն է.—ծիծաղկոս և հրաշալի՛ է բնութիւնը. թէկ խիտ ու թաւուա անտառների տեղ՝ այժմ չոր ու ցամաք մացառներ են ցցուել. խաղողի և թղի փոխարէն՝ փուշ ու տատասկ է քաղւում, որովհետեւ... որովհետեւ երկաթի անհնարին լուծը գարերով մաշել ու արնքամ է արել աշխատաւոր սալուկի, հալածական հայի պարանոցը. ջանասէր մշակը չէ վայելել երբէք իր հալալ աշխատանքի ու արգար քրանքի արդինքը...

Մի տարօրինակ առաւոտ էր. մէկ ու մառախուղ բամբակի կոյտերի նման գիզուել, չոքել էին Ղարաքիլխսի վրայ. եթէ անաշառ երկինքը իսկապէս զգայուն է ու տխուր, ինչո՞ւ ուրեմն վրէժինդիր չէ նա իր լուսեղին կամարների ներքեւ կատարող՝ զրկանքներին ու շարութիւններին, որածութեանն ու բռնութիւններին...

Յօ-ի շափ թիւրք գաղթական ընտանիքներ յայտնուեցին Ղարաբիխսա գիւղում և հարկագրում էին անյապաղ յանձնել հայի տունն ու տեղը, լեռներն ու դաշտերը իրենց՝ իսլամներին բնակութեան համար, որովհետեւ հասմայուած էր այդ վայրերում հաստատել տիրող տարրի օթեանը, որովհետեւ՝ «համեղ պատառը ուժեղինն է»...

Անհնարին և անխորհուրդ էր դիմագրել. նրանք սկսեցին գուրս տալ սեպհական յարկից հայի մանուկը՝ իր օրօրոցով, ծերունուն՝ իր անկողնի մէջ... տունը թիւրքինն էր. թիւրքինն էր նաև նրա փոքր ի շատէ արժէք ունեցող իրեղէնը. կարասին, անսանեղէնը, բժացած գութանն ու ժանգուած գերանդին:

Հոգեսր ու մարմնաւոր գլուխները աճապարեցին քաղաք, արդա-

լադատութեան դիմել... արդարադատութիւն, վաղը արդէն մեռած տառ՝ անօրէնութեան հայրենիքում. նոյն սե երեկոյին թիւբքը գուարճանում էր հայկական բնակարանում. իսկ հարազատ՝ գարաւոր ժողովուրդը, ինչպէս տեսանք, ամենայն ընչից զրկուած՝ իր սեպհական տան պատերի տակ ու աղբանսցների վրայ. բաց, աստեղազարդ երկնակամարի ներքև տարածուած էր սրտարեկ և յուսահատ: Նրանց լացի ու աղէխարշ մըմունջի հեծկլատանքը կոծում էին օգեղէն ովկի-անոսը. նրանց լեզի արտասուքը առու էր գարձել ու ցողում էր հա-րուսա մնութիւնը, որ սակայն վազօղեան արեկի ջերմ ճառագայթ-ների տակ պէտք է յօդս ցնդէին, թերես մի օր համրացած կապոյտ-ներում արժանաւոր հպատակումն ստանալու համար:

F.

Փատիշահի կառավարութեան անդառնալի հրամանը մեղմացնելու և Ղարաքիլիսա գիւղը յիշուած պատուհասից մի առժամանակ պատելու համար բարեփառ գայմազամը հարիւր ոսկի էր պահանջում, մի պատկասելի գումար, որ հաղիւ գտնուէ նոյն խոկ գաւառական՝ արքունի արկղում:

—Թոյլ տուէք ուրեմն, թսղնել սուլթանի երկիցը և գաղթել,  
ուր որ կ'ցանկանայինք ինքներս:—Աղմկեցին բահանան ու իշխանները:

—Կայրղ էք, ազնա էք, քրիստոնեայ պետովթեան հովանին պատրաստ է ձեզ համար, բարի՞ ճանապարհ.—Հեգնական ժպիտով ուղուց գայմագամը:

Թողած իրանց կանաչ արտերն ու գեղեցիկ մարդագետինները, առն ու տեղ, հայրենի օդն ու ջուրը, հարազատների պաշտելի շիրմներն ու սրբութեան աշճարները անհաւատի ձեռ՝ վշտու ու տիտր շարժուեցին նրանք դէպի Կովկաս, կարող Արծուի լայնատարած թե- երի հովանու տակ իրենց չարքաշ կեանքի մնացած մասն ևս անցնե- լու. գէթ ազատօքէն պաշտելու լուսեղէն խաչը և փրկելու իրանց ըն- տանիկան սրբութիւնն ու ոչնչով փոխարինելի պատիւը վայրենաբա- րոյ գողովբով գաղանական բանաբարութիւնից...

Դազթող խմբին ուղեկցում էր՝ «Համլիքիէ» քիւրդ զօրքերից մի փաքըիկ վարձկան խումբ։ Նրանք յանձն էին առել և քիւրդական աղնիւ խօսքով հաւասարացրեել, որ 5 ոսկու փոխարէն՝ ապահով և անվտանգ պիտի հասցնեն մինչև ուռսական սահմանը։

Գանդաղ շարժւում են նրանք, սրտի և հոգու անհնարին մօրմոքը տանջում է նրանց դառնապէս. այժմ իսպան որբ են, անտէր, անպաշտպան ու անտէրունջ...

Հաղիւ ճանապարհը կէս էր եղել, ելր մի գողաւոր ձօրակում  
հանդիպեց նըանց մի ուրիշ բըդական ասպախումբ և պահանջեց անձ-  
նառառը լինել:

—Մենք խոստացել ենք անհաւասներին մինչև սահմանագլուխ անվտանգ և անվիճակ հասուցանել. —պաշտպանեցին ճշմարտած ուղեկիցները:

Առաջ շարժուեցին մի բանի սղոս առ:

— ԴԻ՞Ն, անհաւատներ, վճարեցիք ձեր պայմանած տուբը. Հուս,  
շնուտ, եթէ չէք կամենում մեր բազուկների ու սրերի ոյժը ձեր պա-  
րանոցների վրայ փորձել, եթէ...—առաջարկեցին շամփուկները:  
— Ե՞ս պահանջեմ ռատը մեր պայմանն էր սահմանը անցնել.—

—Վճարենք, ականին, թայ սովորութեան

մկեզ լայկան ժողովուրդը:

— Այս, մենք ձեղ անվնաս կ'տանենք մինչև սահսասպալութ։  
Վճարեցին իրանց վերջին ունեցած ոսկիները. քիւրդելը առան-  
ձին բերկըութիւնով զուարճացան ու հրհուցին։

q

Երեկոյ էլ. անսահման ու անեղը կապոյտնելում ցոլում էին աստղերն ու ասուպները դալուկ ու դժգոյն. Նրանց գունատ փայլը և նման էր բաղդահալած—դաղթական ժողովրդի հոգեկան դրսյար և նախն ու վիճակին...

Մթնում էր երկինքը. իսկ ամպյի դաշտում, առևտուր մարների մէջ լսում էր հայ ընտանիքների ծանր հեծկտանքը, մանուկների լցն ու աղէխարչ մորմոքը. լսում էր և պահապան քիւր սերի լիրը հբհոցն ու լսիւր բարբանջանքը...

Մի մօտենաբ անշաւատոսը լրտ, ովք ու ու ու հապաները:

— Դուք վերադարձէք, մնայցած ճախապարհին ստոք կուլսպցուք  
նըանց.—պահանջում էին աւագակները: Սկսուեց կեղծ կուիւ, կեղծ  
հրացանաձգութիւն: Համբիդիէները իբր պարտուած՝ խոյս տուին և  
աներեւութայցան գիշերային աղջամուղջի մէջ. հրոսակները՝ գիշատիչ  
նման՝ շրջապատեցին գաղթականներին:  
գայլերի նման՝ շրջապատեցին գաղթականներին:

—Վճարեցէք ձեր վրկանքի գիւղը, ելժէ լիրօք ցաւզաւու չք  
ջամբ մտնել ռուսական երկիրը:  
Ծիրանագոյն արշալուսի հետ հայերը այստեղ ևս ներկայացըին

## 5 Ճիրանագոյն սսկիներ:

—Ո՞չ, այդքան թեթև վճարով չի աղասուիլ գեավուրը՝ իսլամի ճանկերից։ Տեսէք, ուզեմն մեր արդար դատաստանը։

Եւ սկսեցին գաղթականների ունեցուածքը բաժանել երկու մասերի. մի կողմում գասաւորեցին մինչև մի դուռուց (5 կոպ.) արժողութիւն ունեցող առարկան, իսկ միւսում՝ ինչ որ աւելի արժէքը, առաջինը՝ աէլերի, իսկ վերջինը՝ իրենց արդար բաժինն համարելով:

Ըստաբուած իրեղէնների մեծ մասը բարձեցին թալահած և զների մէջքերին, վեր առան և մի նորատի, սիրուն աղջիկ իրանց բէգին (ցեղապետ) ընծայելու համար և ծածկուեցան ժայռոտ ձորակում...

۹۲

Հետեւեալ երեկոյեան զաղթականները մերկ և բաղյած ոս դժին մեր երկիրը. բարեգութ պետութեան զգայուն զինսորը թոյլ տուեց նվանց անց կենալ սահմանագլխով, որովհետեւ նա անկարսող զգաց իրան արգելք գնել հալածուած ու զըկուած բրիստոնեայ ժողովրդի փրկութեանը...

Նրա սիրտն էլ կտրատուեց, երբ տեսաւ իր առջև ծունկ չոքած հարիւրամեայ ալիզարդ ծերունուն, որ իր կրած զրկանքների ու հալածանքների մասին համբի նման՝ ձեռ ու ոտավ նշանացի էր անում, խաչակնքում էր երեսը ու արտատուք աչքերին դառնապէս մըմնջում,

—ԱՌԱ, բրադ, վայլահ օսման-եաման:—

## ՅԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՑԵԱԼԵՑ

U

1892 թւականի ամռան սկզբումն էր, երկարատև երաշտը մեծ սարսափ ու մտատանջութիւն էր պատճառել Վանանդ ու Ջիրակ գաւառի ժողովրդին. հացահատիկի ցանքը զարայի բերքի ու արգաւանդ հանդերսում սկսել էր կծղի՝ խամրի ու չորանալ. խոտը՝ հօ վաղուց խանձուել էր և սպառնում էր կերպի թանգութիւն գուցէ և անսանեղինի կոտորած. սակայն, այդ դեռ բաւական չէր, առասպելական վիշտավի նման վրայ էր հասնում մի անհամեմատ սարսափելի պատուհաս՝ այլանդակ հնդախտը, որի բացի լների սիրագործութեան ահարեկող հոչչակը մեծ աքայլ հասնում, մօտենում էր մեզ Կասպից ծովի հեռաւոր ափերից. նա գալիք էր՝ «մահ-կրտորբածի», նա գալիս էր տրինածարաւ մանկաղը ձեռին՝ աջ ու ձախ կոտորելու մանաւանդ նորատի կանանց ու ծաղկահաս երիտասարդ տղաներին... ահարեկուած խաժամութը ակներկ տեսնում էր երկնային ցաման շօշափելի արգասիքը՝ քաղց ու կոտորած. Աստուած գիտէ, թէ որքան տներ պիտի փակուէին, որքան կանաչ արմներ պիտի թոշնէին ու խաւարէին. ահն էր պատճառը, որ հազարաւոր հաւատաւոր մարդկանցով շըջապատուած Ալէքսանդրապօլի «եօթը-վիրաց» հրաշագործ պատկերը ասես ոտ էր ելել ու շըջում էր քաղաքից-քաղաք, գիւղից՝ գիւղ... Ամենուրեք առատօրէն մատաղներ էին մորթուում, հօկում ու պատագ մատուցանուում և այդ ծանր ճգնաժամում նահապետ չայր սուրբը կարեսը համարեց այցելել իր վիճակին, Ջիրակի արևմտեան մասին. անցնում էր նա գիւղից՝ գիւղ յատկապէս վերահասութիւն գործելու իր բանաւոր հօտի ներքին վիճակին, միիթարելու և բարոյապէս յուսագրելու նրան:

Ինձ ես հաճելի էր ուզեկցել հայր-սոռըրին, բայց այս անգամ  
տիսուր ու մտախոհ մենք պիտի անցնէինք՝ այժմ վշտի երկունքով  
անքացող՝ մի ժամանակուայ ուլախ ու զուարթ ձիբակի հիւրասէր  
գիւղերով, գեղածիծաղ հովիտներովն ու ծաղկաւէտ դաշտերով:—Մի  
գեղեցիկ առաօտ մեր կառքը կանգ առաւ Ուզունքիլիսա աւանում,

այս կողմիւրում, գեռ թիւրքաց աիլապետութեան ժամանակներից անուն ու հուշակ ստացած՝ «մէջլիսի» անդամ և զիւղաւագ՝ Մալլասապայի տան առջե: Դիմաւորեց մեղ ինքը՝ Մալլասա աղան ոսկի պարանոցական մեղալով, կապոյտ մահուղից, արծաթաթել անկուածներով զարդարուն՝ չերքեսկի հագած: Նա միջահասակ մարդ էր. ձեան նման սպիտակ մազելով, ածելած ու բոլորչի գէմքով, իսկ իր տարեթիւը նա հաշում էր այսպէս:

—Եթէ Զեր աղօթքով իմ Տէրը անցածի վրայ 20 տարի ևս աւելացնի, աշքի լուսով, զուարթ սրտով ու գեանջ արեով՝ հարիւր տարին բոլորած՝ երիտասարդ դայը հողի գիրկ իջնեմ, լաւ կ'լինի. անշնչաղ մի քանի հարս ու աղջիկ ու պիտի կապեն ու սուգ անեն. շատերն էլ լաց պիտի լինին ու ասեն՝ «ափսոս Մալլասը վաղաժամ մեռաւ, ծաղիկ հասակում խամրեցաւ ու չըրցացաւ»:—

Նշանակում է նա այդ ժամանակ առնուազը՝ 80 տարեկան հասակ ունէր. և իրօք, մարմնով առողջ ու սրտով գեռ երխասարդ էր, ուրախաղէմ, զուարճախօս, ասես անվիշտ ու անցաւ:

Երբ հայր-սուրբը հետաքրքրուեց զիւղի անցեալով, ծերունի նահապեալ տեղական առաջաւոր մարդկանց ներկայութեամբ առանձին ոգերութեամբ ու հաճոյքով պատմեց հետեւալը.

—Ժառայ եմ,—սասաց նա—օսմանցի Խաթուն—օղլուները զիւղէ սուլթանից անկախ՝ ալիրապետում էին այս կողմերին, սրովհեան 17-րդ դարի առաջին քառորդում խարէութեամբ գրաւել էին նրանք «Մախաս-բերդը» պարսիկ խաներից և զարերով տիրացել նրան. 1804 թուականին՝ գեներալ-ծուշկովի ձեռքով «Մախաս-բերդի» քայլացումից ու առումից յիտոյ, զարձեալ մի շաբք զիւղեր, որոց թուում և Ռուսնքիլիսան, յիշուած ընտանիքի այս կամ այն անդամի սեպահական կալուածն էր համարուում: Մըրանից 40-50 տարիներ առաջ՝ 20 զերդաստանով ես գաղթեցի այս զիւղը. պայմանաւորուեցի աղայի հետ, որոշ քանակութեամբ զրամական տուրք տալ, սակայն մեր պայմանը խախուս էր, առանց որեւէ գրաւոր ապացուցութեան. և միթէ թիւրքը գրաւոր իրաւունքով էր տիրում մեր հայրենի երկրին կամ ի վերջոյ կարեւորութիւն տալիս էր նա «զեեպուրի» թուղթ ու գրին... էհ, այն ժամանակները ոյժի ու սրի ժամանակներ էին. խօսքը, իրաւունքը ուժեղինն էր և երեակայեցէր, որ Մալլասը կարողանում էր մարտու Խաթուն-օղլիների գէմ...

—Դիւղամիջում հին-հին գերեզմաններ կային հայերէն արձանագրերով ու քանդակուն մամուակալած խաչերով: Տեսնում էր այդ հոյակապ ու փարթամ եկեղեցին. ասում են, որ 900 տարի է ինչ ճինճերում է արեգակի ասեղնոտ ճառագայթների ներքի, ինչ ծհծկուում է

կարկուախ ու անձրկի տարավիներից. հիւսիսից՝ Ղարախաչ լեռան բամին է հաջ քորում ու մաշում, հարաւից՝ սև սև ամպերից ժայթքող կայծակին ու փայլակը... բայց գեռ փառաւո՞ր է, գեռ կանգուն է ու կիմացկուն, ասում են երազգաւորս վանքին (Բաշ-Ջեօրգակիալ) ժամանակակից է Տրդատ ճարտարապետի ձեռագործ. էհ, ժամանակն ու ճաւող հանգամանքները նրա սրածայր գագաթն են միայն կտրել ու ձաւող հանգամանքները նրա սրածայր գագաթն էլ առաջին շպրտել, սրածայր եմ ասում, որովհետեւ հինց գրանից էլ առաջացել է գիւղի անունը՝ «Շւզուն-քիլիսա»: Նկատելով, որ հանրահուշակ խաթուն-օղլիները օրից՝ օր ընկնում և ասես ճմլում են Կարսի զօրել վաշաների ճիրաններում, մտածեցի օգուտ քաղել պատեհ դէպքից. և մինչեւ երբ պէտք է անօրէնը մեր արիւնը ծծէր... հը՝, մենք էլ մարդ էինք, մեզ էլ կարեսը էր հնար գտնել ընդ միշտ թոթափելու անսիրտ աղաների սպանող լուծը.—«Մալլասա աղա, պատրաստել էր հարկը, տասանորդը»— իւրաքանչիւր աշնան երևում էր աղայի ներկայացուցիչը:

—Հարկը՝, հասոյթը... մենք ուայաներս արիւն քրտինք թափենք և Խաթուն-օղլին ոտները պարզած անուշ անի... վիենիք...

—Հարկը՝, հա, բայց գործերս անաջող են. աղա, այս տարի ցանքից սպասուած արդիւնքը չ'ստացուեց. երաշտ էր, մորեխ էր... մալի, մարդի հիւանդութիւն կար... թոնդ ներողամիտ լինի մեր տէրը մալի, մարդի հիւանդութիւն կար... յինդ ներողամիտ լինի մեր տէրը կ'վճարենք եկող աշնան... մի համեստ «բախչիշ» տալսվ՝ ճանապարհուում էին եկողին և այսպէս շարունակարար, մինչեւ որ քարշ տուին ինձ Կարսի «սարայը» (գատարան), ուր խորհրդաւոր ժամանական բազմած՝ իր զալիօնն էր կլկացնում երկրի կուսակալ էմին-փաշան. նստուած էին նաև մեծ-մարգարէի ներկայացուցիչ՝ Մուֆթին. դատաւորներն ու ժողովի մնացած անդամները. նա խստիւ բողոքում է գեավուրի ոտնագութեան դէմ և պահանջում է անմիջապէս դատարկել զիւղը, պատժի ու «կախաղանի» անարդ սինն է ցոյց տալիս. «Եթէ զիւղը, պատժի ու «կախաղանի» անարդ սինն է ցոյց տալիս. «Եթէ կ'հրաժարուէի իսկայն վճարել ձիգ տարիներից կուտակուած հարկն ու հասոյթը». աւելացրեց փաշան:

—Երկիրը Սուլթանինն է. բացի նրանից ստրուկ հայը անարդ է համարում երկրորդական մարդկանց պահանջը:—Ասացի ես:

—Եմ հայենական, պատենական ժառանգութիւնն է:

—Այդ սինն է, նա իմն է. շինական-հալատակին՝ ողորմած փատիշամի հրամանուկ:

Փատաթզթերը բացակայում էին երկուատեք:

—Այժմ գառնանք մի շօշափելի ապացոյցի, որը լուեկայն պիտի վկայէ «պատենականի» ու «հայրենական» ժառանգութեան» խնդիրը. ինչպէս է այդ զիւղի անունը.—հարց եմ տալիս ես բէյն:

— Ուզուն-քիլիսա:

— Հը՛, Ուզունքիլիսա, և մկրեր են այսօր նրա բնակիչները:  
— Դեավորներ, հայեր:

— Ահա հենց այդ երեսյթը իրաւունք է տալիս ինձ Ուզունքիլիսան իմ սեպհական գիւղը համարելու, այդ տեղ են իմ պատերի աճիւնները, իմ և իմ հայրենի պաշտած եկեղեցին, որ հագար տարիներից իւեր հնչուում է՝ «Ուզուն, ուզուն, ուզուն-քիլիսա»...

— Աֆէրը՝մ, ափէրը՝մ...— ասաց փաշան. գիւղը բռն է. քրտինք թափող շինական հպատակինը:

— Եւ բննաւորի ճանկերից կորդածս այդ գիւղը ներկայումս 80 տուն բնակիչ ունի, տաճարը «ուզուն» (երկար) և անվեղար տաճարը զարդարուն է, չեն ու պայծառ. ունինք զոյգ քահանաներ և փոքր ի շատէ բարեկարգ-ծխական ուսումնարան... Է՞հ, լաւ թէ վատ, մեր իւղով տապակուում ենք, եթէ մի այլ «խաթուն-օղլի» լոյս շընկնի և քար շմաղի մեր գլխին»:

— Կատարե՛ալ հերոսութիւն է, Մալխաս-աղա.— ասաց Նահապեան հայր սուրբը.— Խաթուն-օղլիների ձեռից մի ամբողջ գիւղ կորդել այնքան էլ հեշտ բան չէ:—

— Այն, հեշտ չէր, սակայն թիւբքի տիրապետութեան ժամանակ Մալխասն էլ մի Մալխաս էր. այժմ միայն նա կատու է դարձել..., բայց պատմեմ ձեղ հերոսութեան մի այլ դէպք, որ աւելի նշանակութիւն ունի քան հաւի նման վետրուած մի Խաթուն-օղլիի կալուածի յափշտակութիւնը, և որը կարող է բնորոշել թիւբք իշխանութեան տածած յարգանքն ու ակնածութիւնը դէպի հայոց հոգեսրականութիւնը:

Բ.

Մալխաս-աղան սկսեց իր պատմութիւնը այսպէս.— 1870-71 թուին, մի ունեոր ընտանիքից այրի կին, որ ունէր մի անշափահաս արու զաւակ և մի 15-16 տարեկան զեղեցիկատես գուսար, ցանկանալով ալպագյում զօրեղ պաշտպան ունենալ, որը պիտի կարողանար մաքառել իր տագըների դէմ, եթէ վերջիններս յաւակնութիւն ունենային զրկել նրան հասանելի մասից. զիշանում է իր արգէն նշանագրուած աղջկայ ձեռը յանձնել թիւբք երխասարդի, որ տարեներով իրանց տան խաչարածն էր: Հակառակ աղջկայ կամքին՝ քիւղը փափցրեց, տարաւ նրան և տաճկական օրէնքով կատարուեց նրանց միութեան խորհուրդը: Սյս տգեղ երեսյթը բնականաբար ընդհանուր զայրոյթ առաջացրեց մանաւանդ հայ երիտասարդների շընանում. Ի՞նչ կ'լինէր այնուհետեւ մեր վիճակը, եթէ իւրաքանչիւր քաղցած ու բո-

կոտն խաչնարած «լամուկ» իրաւունք համարէր իր ակրոջ նշանագրուած աղջկայ կամ նորատի կոնջ ձեռից բոնած՝ մզկիթի պատերի ներքի պատսպարուել... լրուած և յուզուած ժողովրդի որպէս թարգման, ես ներկայացայ կարսի Առաջնորդ՝ Ցովհաննէս Արք-Եպիսկոպոս Ծառունուն, ինդրելով ընդունել կարեսը միջոցները ազատելու ըլլիստոնեայ գառնուկը՝ Ղուռանի ճիբաններից:

— «Ե՞՞ն, Մալխաս-աղա, իզո՞ւր աշխատում ես մեր անցաւ գլուխ Աւետարանի տակ գնել... արժէ մի աղջկայ համար «սարայ» գնալ, փաշայի երես ելնել ու անհաճոյ խնդիրներ յուգել... և ի՞նչ կ'լինի մի աղջկանից... մեղ պէտք է գէթ առ երեսս շոյել թիւբքի արարքը, երբ անդօք ենք մրցելու նրա անպարտելի ոյժի դէմ»: Այդպէս էր սրբագանի քաղաքական հայացքը. այդ կերպ վերաբերուեցին և քաղաքի ազգաբնակութեան «բանիմաց» ու առաջնակարգ դասը, ամեն ոք իր սեպհական կաշուցն էր վախսենում. բայց Մալխասը դեռ սրբութ էր և զօրեղ. հոգ չէր, եթէ սուբք հաւատի համար նոյն իսկ դահճճը կ'կանգնէր իմ գլխի բարձրում. խաչակնիքեցի երեսս և ոտ դրի Փանատիկ փաշայի ընդունարանը:

— Փաշան ապրած մնա, արդեօք տարբերութիւն կայ նշանադրուած և ամուրի աղջկայ միջն, արդեօք տարբերում է տէրը՝ սարտկից, արիուհին՝ սպասաւորից...

— Անշնչառ, անշնչառ.— վրայ բիրեց փաշան:

— Ուրեմն թոյլ կ'տաք, իմ տէր, որ խօսիմ մի ինքստինքեան անախորժ երեսյթի մասին:

— Եթէ նա հետաքրքիր կ'լինի ինձ համար:

— Քիւրդ խաչնարածը յափշտակել, տարել է իր տիրուհու աղջկան, որը նշանագրուած էր արդէն իր սիրած աղայի հետ... ինձ յանձնուած է զաւակի հայ աղգաբնակութեան կողմից թախանձել ձեր ողորմած ուշագրութիւնը... թէն, առանձնաբար պիտի ասեմ, որ մեր Սրբագան Առաջնորդը կամենում էր այդ առթիւ հեռագրել Կ. Պոլիս մեծ-եպալքոսին, բայց ես խօսք տուի նրան, որ պիտի միջնորդ հանդիսանամ ձեր վսեմութեան առաջ և բռնաբարուած աղջիկը՝ իմ ողորմած փաշայի անդառնալի հրամանով իր ծնողին վերագրձնեմ:

Փաշան տարուերերուեց, նրա մանրիկ, ճպուու աշքերի բարձրում կուտակուեցին կնճիռների շերտերը, տաես, կրակ ու բոց, կարկուտ ու կայծած թափիլու համար. սակայն խնդիրը փափուկ էր, նեղ-կրօնական—մի նորատի, սիրուն աղջիկ թերեւս Մուհամեդի գրափառում անմահական ջրերի մէջ թաւալուող յաւերժահարսերի նման՝ մեծ-մարգարէի ներշնչամբ՝ անհաւատութիւնից՝ ուղղափառութեան էր դիմել. դենակետը վաւերացրել էր նրա միութիւնը իսլամ տապայի հետ... իսկ

Մալխասը ակնարկում էր Առաջնորդի տրամադրութեան մասին՝ «բողոքելու Բ. Դրան» և այդ բոլորը անտարակոյս բարեհնչիւն բառեր չէին նրա լսելիքի համար...

—Հը՛, նեղմիք է երեսում քո վարդապետը. մի գիւղական աղջիկ և Մեծ-Եպաքոս. կարելի՞ է...

—Խնդիրը այնքան մօտ է Մրբաղանի որախն, փաշա, որ զօր ու գիշեր հանդիսաւ չունի. երեխի նման լաց է լինում կատարուած անարդարութեան, բռնութեան համար. մտածեցէք, աէր, խաշնարածը յափշտակում, փախցնում է իր տիրոջ աղջկան, որ արդէն պատկանում էր ուրիշին և տեղական վարչութիւնը կարեկցութեան ոչ մի ցոյց, ոչ մի նշոյլ չի անսւմ... ընդմիջեցի ես:

—Թարի, ես կ'հոգամ ինչ որ կարեռն է, եթէ միայն աղջիկը համաձայնի վերադառնալ իր եկեղեցու և ծնողի գիրկը... հանդստացրէք ձեր վարդապետին:

Գ.

Երկու օրից յետոյ ես կոչուեցի դատարան: Բայց գուք ելլր և է տեսնել էր տաճկական դատաստանատաւն, նա շատ պարզ է, առանց շլացուցիչ կամ տպաւորութիւն գործող արդ ու զարդի՝ պաճուճանքների՝ աջ ու ձախ կիսումաշ գորգեր են փուռած, որմարանի տախտակամածից հաղիւ թէ տարբերուող լայնկել կահաւորակով, որի մէջ տեղում ծալապատիկ բազմում է ինքը՝ երկրի կառավարիչը, ոսկեհուռ դալիխոնը առաջին. մի կողմում՝ սլորուն սալիտակ սաւանը գլխին շերտ-շերտ փաթաթած՝ զադին-գենպետը—միւս կողմում՝ «միւֆթին» և «մէջլիսի» մնացած անդամները. իհարկէ վերջիններս ծնկաշոք, օշարակի գաւաթը կամ սրճի կթդան առաջներին. մի անկիւնում նստած է քեաթիպը (քարտուղար) պղնձի մելանառը գօտկում խրած և մի փոքրիկ թղթի կտոր ծնկանը բռնած. զադին խօսում է Ղուրանից. իսկ փաշան՝ փատիշահների կարած շարիէթներից, որ փոխանակում է օրէնքին, որովհետև օսմանեան տիրապետութեան մէջ, մանաւանդ այդ ժամանակներում, իսպառ բացակայում էր օրէնքը ու՝ յաճախ՝ խղճի ձայնը. ամենայն բան կախուած էր փաշայի անձնական հայացքից ու տրամադրութիւնից. իսկ Ղուրանի անունով դատիի ձայնը անդառնալի պատգամ էր, մանաւանդ ելլր ինքիքը վերաբերում էր քրիստոնեաներիս. ես էլ կծկուած էի մի անկիւնում, բայց որպէս նոյն ժողովի անդամ և՝ ձայն և՝ հեղինակութիւն ունէի: ներկայ էր և փախցրած աղջիկը. նա կանգնած էր նախշուն վարագուրի միւս կողմում անտեսանելի կերպով, անշուշտ տաճկական տարագը հագին,

կապտագոյն սաւանով ծածկուած:

—Ի՞նչպէս է քո անունը:—Հալցրեց փաշան:

—Փաթմա:

—Նախ քան Փաթմա լինելու:

—Դարձեալ Փաթմա, միշտ Փաթմա, որովհետև ես 'ի մանկութինէ սիրել եմ Աստուածահանոյ Մեծ-մարդարէի հաւատը և հաղիւ հնարաւորութիւն եմ ունեցել փրկել իմ հոգին յաւիտենական կորստից:

—Նշանակում է դու այլ ես չես ցանկանում վերադառնալ քո ծնող մօր մօտ, հը՛:—Խորհրդաւոր ժպիտն երեսին, շփելով դեղնագոյն մօրուքն ու աչքի ծայրով դիտելով փաշայի դէմքի գծագրութիւնը՝ մէջ մտաւ զադին:

—Սրբազն մարգարէի ներշնչմամբ և իմ ծնող մօր յատուկ հաճութեամբ ես ընգունեցի հսլամի կրօնը և իմ յօժար կամքով ընտրեցի քիւրդ չասոյին ինձ ամուսին...—Լսուեց աղջկայ բացատրութիւնը վարագոյրի քամակից, որ կարծես մի սառը ջուր անցաւ իմ երակներագայութիւնը մթագնեցին և դողն ու երկիւղը պաշարեց սրտիս: Փարով, աշքերս մթագնեցին և դողն ու երկիւղը պաշարեց սրտիս: Փատիշահի ներկայացուցիչը խոժոռադէմ նայեց իմ երեսին. միւֆթին ու զադին խոլորդաւոր ակնարկներ փսխանակեցին, իմ գրութիւնը աւելի քան նեղ էր և կրեսիքական:

—«Պէտք է վերադառնաս բրիստոնէութեան. Ղուրանի վարդապետութիւնը իւրաքանչիւր պատահական գեաւուր իմ չեմ ընդունում իր փարախում...—կէս ժպիտը ցամաքած երեսին՝ ասաց փաշան իոկ միւֆթին շփելով խինայով ներկուած կարմիր մօրուքը՝ անհանգիստ կերպով՝ «ստահ-ֆրուլահ» էր անում (մեղայ Աստուծոյ):

—Ես գեաւուր չեմ, ես չեմ կամինում կորստի մատնել իմ հոգին. ես պաշտում եմ միմիայն Ղուրանի անսրատ վարդապետութիւնը:

—Ուրեմն գիտակցորէն ես ընդունել ճշմարիտ հաւատը:—Ճեշտեց զադին:

—Այն, այն, այն. վկայ են աստղերն ու լուսինը, երկին ու գետին, վկայ է և սուլբ Մարգարէի հրաշագործ վերնագգեստը:

—Էֆէրըմ, էֆէրըմ... փառը Մուհամէտին:—Լսուեց ամեն կողմից:

—Դստիրիկս, գառնուկս, միթէ չես ցանկանում գառնալ քո լոյս հաւատին, ուրանում ես անուշիկ հօրդ գերեզմանն ու նրա սրբազն աւանդը:—Միջամտեցի ես:

—Ես կուապաշտ չեմ, ես հայ չեմ. հանգիստ թողէք, իզուր մի վրդովէք ինձ:

—Վախեցիր քո ստեղծող Աստծուց, սիրուն զաւակս, մի թոյլ տար որ Քրիստոսի հաւատը նսեմանայ... սղծուի սուլբ աւագանը,

ուր դու մկրտուեցիր և մենք կորագլուխ լինինք, վերջապէս լսիր քս խղճի ձայնին, ի՞նչ բարոյական շահ մի սրիկայ խաշնաբածից:

— Ես խալամ եմ, լսում էք, ազաշում եմ փաշս, իմ տէր ու ապաւէն փաշա, մի թոյլ տաք, որ անհաւատները խանգարեն իմ հոգու անդորրութիւնը: — Զայրացմամբ բացագանչեց աղջիկը:

— Հարերը՝ հմայել, գողացել են քո սիրտն ու հոգին, խեղճ աղջիկ...

— Ստահ-ֆրուլահ, ստահ-ֆրուլահ: — Մըմռաց մուֆթին: Փաշան տարօրինակ ինքնաբաւականութեամբ կլկացրեց դալիօնը, քթի լայն-լայն ծակերից արձակելով թամբազուի անուշահոտ ծուխը:

— Փառք Աստուծոյ, փառք մեծ-մարգարէին: — Տմբացնելով գլուխը՝ կրկնում էր զաղին:

— Փաշա, — խօսելու արտօնութիւն ստանալով, սակաւ ինչ առաջ շարժուեցի ես, — 16 տարի մի որոշ դաւանանքի, հաւատի ծառայել, հայ մեծանալ, հայ օջախի գաւակ լինել և մի քանի օրուայ հրապուրանքի, գուցէ ահի ու դողի աղղեցութեան ներքեւ ոտնահրել ամեն սրբութիւն, չեմ կարծում թէ նոյն իսկ ձեզ համար էլ հաճելի երեսոյթ լինի. թոյլատրեցէք զէթ Յօր ծնողական յարկի տակ անցնել, մտածել, և ըմբռնել իր արարքը. այսուհետեւ դարձեալ հարց ու փորձի հնֆարկեցէք և եթէ վերսախն պնդէ, աղատ է ընդունելու Սոտծուն հաճելի հաւատը. թող օրհնուած լինի և իր ամուսնութիւնը բիւրդ չասօյի հետ:

— Անկարելի՛ է, անկարելի՛ է, սրբազն Դուռանը արգելում է այդ: — Ըսդմիջեց զադին՝ ծանր շշտով, հեղինակարար:

— Ես հնազանդ եմ, սակայն ցաւում եմ, որ այլ ես հնարաւորութիւն չունիմ արգիլելու Սըբագան Առաջնորդին հեռագիլու Վեհափառ Սուլթանին: Եւ այդ հեռագիլը վաղուց արդէն պատրաստ էր, եթէ ես չկամենայի ծառայել իմ տէր փաշային:

— Կարելի՛ է, Մալխաս աղա, բայց լաւ գիտեցիր, որ եթէ Յ տարիներ այս աղջիկը քեզ մօտ մնալու լինի, այսուամենայինիւ նրա հաւատը այնքան ամուր է և խալամի կրօնը զօրաւոր, որ քո երեակայական դարձը՝ դարձ էլ պիտի մնայ և քո ջանքերը ապարդին պիտի անցնին...

— Իշալլահ, իշալլահ, այս ջերմութեանը ձիւն կ'զիմանայ, աղջիկը՝ մարգարէի ներշնչմամբ՝ հաւատի է եկել, ուղիղ ու ճշմարիտ հաւատի: — Աղաղակեցին բոլորը:

— Երեք օրով աղջիկը յանձնում ենք ձեզ. — շարունակից փաշան՝ բայց խստիւ արգելում եմ որ և է ճնշումն գործել կամ աշխատել խարէութեամբ գրաւելու նրա միամիտ սիրտը:

Աղջիկը՝ ոչ այնքան հաճութեամբ՝ հետեւց ինձ մինչև իր մօր բնակարանը:

Դ.

— Մենք գնում էինք լուռ ու մունջ, — շարունակեց Մալխաս աղան, — ես մտածում էի թէ ինչպիսի հնարագիտութեամբ կարելի էր հեռացնել աղջկայ զլխից իր, իհարկէ անգիտակցօրին՝ փայփայած խլամութեան գաղափարն ու դէպի «լամուկը» տածած սէրը: Կանգ առանք մի կրպակի առաջ. նրա համար գեղեցիկ զարդարանիքներ ու բաղցրեղիններ գնեցի. — առ, աղջիկս, — ասացի, երբ մօտեցանք նրա մօր իջևանած բնակարանին — այդ բոլորը քո տրամադրութեան ներքեւ են, բաժանիր առատօրէն ում և կամենաս, Մալխասը այսուհետեւ քո հոգեսը ծնողն է, հետեւաբար և քեզ համար այլսս ոչինչ պակասելու չէ. — բայց աղջիկը լուռ էր, ինչպէս մոմեղին արձան, անտարակոյս սկսուել էր խղճի խայթը. մայրը, որ շարաշար զղացել էր իր տղեղ արարմունքը համար, զլխաբաց զիմաւորեց իր հարազատին. շրջապատեցին բարեկամներն ու արիւնակիցները, սակայն իմ յատուկ պատուիրանով ոչ որ չ'յշեցը նրան կրօնափոխութեան և ընդհանրապէս իր այլանդակ արարքի մասին, երեք օր շարունակ ընտիր ընծաներով ու քաղցրեղիններով ես այցելում էի նրան, բայց առանց որ և է խօսակցութեան ու յորդորանքի. նկատում էի թէ ինչպէս քիւրդ լամուկը, զիմուած միւսուլմանների հետ, անցուդարձ էին անում նրանց թագովն ու գանովը և այդ հսկողութիւնը կատարւում էր միմիայն այն նպատակով, որ մի գուցէ փախցնէինք աղջկան ուրիշ երկիր. իսկ թէ նա իսլամ էլ պիտի մնար, այդ բանում նրանք բոլորովին վստահ էին և ապահով:

Լրացաւ պայմանաժամը:

— Այժմ մենք պէտք է գնանք «աարայ», զստիկս, և եթե քոցանկութիւնն է քիւրդ խաչնարածի կին մնալ, ես իմ ձեռօք կ'յանձնեմ նրան, բարով վայելես: — Այդպիսի խօսքերով զիմեցի ես աղջկան, բայց նա լուռ էր, լսվում էր միայն խեղգուլ արտասուրի հեծկլտանքը:

Ներս մտանք դատալան, մինչև գետին խոնարհութիւն արի թամալլահ՝ փաշային: Նշանացի արի աղջկան, որ անց կենայ վարպոյը միւս կողմը:

— Ո՛չ, աղա, — դարձաւ նա ինձ — ես չեմ կամենում բաժանուել քեղանից. «նամահրամը» թըբուհունն է. իսկ ես չ' որ հայ-ըրիստուն նեայ եմ...

Այդ նշան էր ճշմարիտ զղջման, ես արդէն բարձրացել էի իներուդ կապոյտները. սիրտս հանգիստ էր, որ գէթ սրբազնի անունը

շարաշար չէի գործադրել, կարողացել էի փրկել մի անմեղ հոգի կորստեան վհից և, որ գլխաւորն էր, սրբուած էր հայի օջախը այդ տեսակ խմբումից...

—Պատմիր այժմ թէ ինչպէս պատահեց քո փախուստը քիւրդ տղայի հետ:—Խօսեց փաշան:

—Թոյլ կտաք արդեօք պատմելու համարձակապէս, ինչ որ ճշմարիտն է:

—Անշնւշտ, անշնւշտ, ինչ որ ճշմարիտն է:

—Քիւրդ չասօն մեր տանը խաշնարած էր, ես էլ արդէն նշանագրուած աղջիկ էի, նա սիրահարուած է եղել ինձ վրայ, մինչդեռ ես յարդանքի կամ համակրութեան ոչ մի կայծ չէի տածում դէպի այդ մարդը, մեր տան գուհիկ ծառան. և միթէ անուանի օջախի աղջիկը՝ նշանագրուած լինելով հանդերձ՝ կ'զիջանիք սիրելու մի բոկտն, քաղցած... լամուկի...

—Յետոյ, յետոյ.—Լսում էին բոլոր լարուած ուշագլութեամբ:

—Յետոյ, այդ սրիկայ չասօն մի գեղեցիկ օր համարձակութիւն ունեցաւ առաջարկել ինձ,—թափանձել իմ ձեռք, փոխարէնը խոստանալով ընդունել քրիստոնէութիւն, ուղերձիլ ինձ հետ Ս. էջմիածին և այնտեղ մկանուիլ ու ապրիլ պարսից երկրում:

Փաշայի դէմքը խոժոռուեց, ճակատի վրայ կուտակուեցին ասես միմեանց հրճող շերտերը, պշլած աշքերը լցուեցին վրէժինդրութեան արինով և նա մերենարար սկսեց ագահութեամբ կլանել դալիօնի ծուխը՝ իր շեշտակի հայացքը բնաւ շբաժանելով շիկացած պատրոյկից. միւս կողմանը՝ զագին «Ալլահ, Ալլահ» էր մըմնջում. ներքին յուզմունքից տարուրերելով ալեսոր գլուխը, ինչպէս հաստաբուն, բարձրութէ մարենին հուժկու մըրկի առաջ:

—Զիջայ նրա թախանձանքին, որովհետեւ կամենում էի մի հաճելի ծառայութիւն անել իմ Տէլ-Յիսուսին.—շարունակեց աղջիկը, —բայց քիւրդը դաւաճանեց իր շարաշար երդմանը և փոխանակ էջմիածին գնալու ու քրիստոնէութիւն ընդունելու, ուժի զօրութիւնով քարշ տուեց ինձ իր տաղաւարը, ուր իսլամները՝ մահակի հարուածների ներքէ՝ հարկադրեցին ինձ թուրքանալ. իմ սրտի ու կամքի հակառակ մօլլան կատարեց մեր «քեարինը» և այնուհետեւ սպառնում էին յօշտել ինձ, եթէ կ'համարձակէի գուրս ասել ճշմարտութիւնը կամ երբ և է մտածել դարձեալ իմ մայրենի եկեղեցու գիրկ վերագաւանալ...

—Քեզ հաւատալու համար, գեաւանելք, պէտք է քեզանից աւելի անմիտ ու ապօւշ լինել... քո խօսքերը միանդամայն սուտ են, կեղծ, շինծու, ոչ, ոչ, այդպէս չէր խօսում երեք օր առաջ Աստուծոյ առջն ճշմարտութիւն խոստովանող՝ աղջիկը:

—Խրատուած է, խրատուած է...—միջամտեցին դատաւորները: —Երեք օր առաջ և այսօր, հը կռապաշտնէր...—զայրագին բացագանչեց զագին, սըբելով ճակատի քրահնքը և ագահութեամբ դատարկելով թանձը սուրճի կժղուած:

—Սրանից երեք օր առաջ ես խոր համոզուած էի, որ եթէ համարձակուեմ խօսել իմ ներքին համոզմունքի մասին ճշմարիտը, պիտի խողխողէք ինձ և հէնց «սալրայի» գրանը պիտի նահատակուեմ... բայց վերահաս լինելով, որ ձեր մէջ խօսում է Աստուծոյ և արդարութեան ձայնը, որ գուրք չէք էլ մտածել կարեւութիւն տալ մի որ և է աղջկայ խալամ գառնալուն, ևս վստահութիւն ստացայ բողոքելու քիւրդի խարէութեան դէմ և աղերսել, որ Փատիշահի արդար օրէնքով դատէք նրան. իսկ ինձ արտօնէք վերադառնալու իմ ծնող մօր մօտ... ևս այլ ևս խւամ չեմ և միթէ հաւատը, համոզմունքը բռնութեամբ է ներշնչում...

Եւ այդ խօսքերի ու խրոխս ձայնի մէջ այնքան անվեհերութիւն ու անխարդախ անկիղծութիւն կամ, որ անիրաւութեամբ սնուած ֆանատիկ փաշան և Աւետարանի անհաշտ ոխերիմ զագին՝ համախններով հանդերձ, մնացին լուս և ապշած. նրանք տարօրինակ սառնութեամբ նայեցին միմեանց երեսին և, անտարակոյս, իրանց սրտում կշտամբեցին Առաջնորդի յանդուգն դիտաւորութիւնը, որ իմ միջոցով, սպառնում էք բողոքել փաշայի անիրաւութեան դէմ, մինչդեռ, ինչպէս ասացի, իւշղան Ռշտունին սարսափահար եղաւ, երբ ևս աղերսեցի նրա կալող միջամտութիւնը այս գործում:

Ծափ տուեց փաշան. «Հուբուք» և սուրճ դրուեց իմ առաջ. յաղթանակը մեր կողմն էր, աղջկան առանձնացնելով՝ յայտնեցին դատարանի որոշումը. «աղջիկը յանձնել չայց Առաջնորդարանի տնօրէնութեանը»:

Այդ լուրը կայծակի արագութեամբ տարածուեց ամբողջ քաղաքի տաճիկ ազգագնակութեան մէջ. սկսուեց ատամների կրծատումն... բայց փաշայի կամքը սուրբ էր, թէկ Կարսի նեղնեղ, գալարուն փողոցներից անցնելիս աջ ու ձախ քարկոծում էին մեզ թիւրք մանուկներն ու խաժամութը, թէկ տեղում էր մեր գլխին հայհոյանքի ու անէծքի տարափը...

Ե.

—Եր սովորութեան համաձայն Ցովհաննէս արքեպիսկոպոսը նոր եր վերադարձել լողարանից. յայտնի է, որ նա սիրում էր առաւատ երեկոյ լուացուել սառը ջրով, տարւայ բոլոր եղանակներում ևս նոյն իսկ Դեկտեմբեր ամսին: Պատրիատ էր նրա համար մեղքի թանձու-

թեամբ՝ շաքարի օշարակը և իւղալի ընթրիքը՝ մի մեծ ափսէ տապակած ճակընդեղ ոչխարի մածնով թաթախուած—երբ ես ներս մտայ աւետելու իր անունով կատարածս սխրագործութեան ցանկալի լուրը:

—Աղջկան աղատեցի թիւրքի ճանկերից, հոգեոր տէր.—ասացի նրան:

—Ի՞նչ աղջիկ,—զարմացմամբ հարցրեց սրբադանը, որ այդ պահուն անշուշտ աւելի զբաղուած էր իր օշարակովն ու իւղալի բորանիով, քան որ և է «մոլորեալ գառի» փրկութեան խնդրով:

—Քրդի թրեած գեղջկուհուն...

—Հը.

—Այն աղջիկը, որի մասին ես մի անդամ շնորհ ունեցայ թախանձել ձեզանից՝ պաշտօնապէս դիմել փաշային...

—Ցետոյ:

—Ցետոյ դիմեցի ինքս:

—Է՞հ, ի՞նչ շահ այդ դիմումից:

—Գիտէք ի՞նչ, սրբազնն, մի անդամ հանրահոչակ Քեոռ-օղլին շատ քաղցած էր, մտածեց անձամբ գնալ գառնարածի մօտ և մի գառը ինդրել: «Դու ովկ ես» հարցրեց հովիւը.—հը՝մ, չ'գիտե՞ս, ես Քեոռ-օղլին եմ:—«Այնքան հոչակուած Քեոռ-օղլին միթէ դու ես և ի՞նչի ես նմանում... դէ՞հ, չուտով հեռացիր այս տեղից. ես ձրի գառը չունիմ քաղցած Քեոռ-օղլիներին բաշխելու:—եւ իսեղն Քեոռ-օղլին հեռացաւ ձեռնունայն, բայց քաղցը նեղում էր, պէտք էր կերակրուել, ուղարկեց իր ծառաներից Այլագին: Եկաւ վերջինս, փայր իջաւ ձիուց, սրածայր տէզը լիրեց գետնի մէջ, ոլորեց ընշացքը և հակայաբար մօտեցաւ նոյն հովուին.

—Ճաւառվ իմ տիրոջ համար մի գառ ընարիր:—Աղմկեց նա.

—Ո՞վ է քո տէրը—«սարերի թագաւորը, առիւծներին ու վագրներին տապալող՝ աշխարհահոչակ Քեոռ-օղլին»: Սարսափը տիրեց հովուին, մթագնեցին աշքերը և մոլորուեց իր անելիքը.—իմ ամբողջ հօտը թող զսի լինի նրա անունին... համեցէք, ընարեցէք ի՞նքներդ քանիսը որ կամենաք...

—Բարի, —ասաց սրբազնը—ի՞նչ ես կամենում հասկացնել դրանով. չ'լինի թէ զու էլ Այլագութիւն ես արել:

—Այն էլ չ'լսուած. մէջլիսում խօսեցի, որպէս ձեր ներկայացուցիչ. ասացի՞ որ իմ Քեոռ-օղլին որոշել է այս անարդարութեան դէմ բողոքել Սուլթանին, գրել պատրիարքարան և այլն:

—Է՞հ, Մալխաս-աղա, վաս ես արել, շատ վատ... նրանք պիտի թշնամանան ի՞նձ, նրանք...

—Որպէս թէ մինչև այսօր բարեկամներ են եղել:

Թողէք ինդրեմ, ի՞նչ թշնամանալ, երբ ինքը՝ աղջիկը դիմացը ու պնդեց, որ ոչ մի դէպքում չի ուրանալ իր լոյս հաւատը... ասաց՝ որ իրեն փախցրել է քրդի լամուկը պայմանով քրիստոնեայ մկրտուելու, որ մօլան ուժի զօրութիւնով կատարել է՝ «նիքեահը», որ...

—Տէր ողորմիա, այդ հօ լաւ է եղել, Մալխաս-աղա, էքիքը՝մ, շատ ապրիս... —ասաց սրբազնը և ինքնարաւական կերպով ոկսեց շոյել իր մօրուքի ալեխասոն թելերը. մի փայրկեան թերես երևակայում էր նա ինքն իրան աւելի քան «Քեոռ-օղլու»-ական բարձրութեան վրայ: Մեր խօսակցութիւնը հազիւ թէ անցել էր երկրորդական խընդիրների. հարիսայի, խաշի, կարմրախայտ ու իշխան ձկի... երբ փոքրաւորը յայտարարեց թէ գալիս են մէջլիսի անդամներից երկու էքինդիներ սրբազնին այցելութեան:

—Էքինդիներ... ի՞նչ ես ասում, ծօ, այս ի՞նչ արիր, Մալխաս-աղա, տունս քանդեցիր... —ասաց նա զայրացմամբ. թուսումած դէմքը՝ աշնան տերեի նման դալկացաւ ու գեղնեցաւ. ձեւները դողդողացին և շփոթուած իրարանցաւ.—ի՞նչ արիր, ի՞նչ արիր, տունս աւերեցիր:

—Մի վրդովիք, սրբազնն, պատրաստ եմ իմ գլխով պատասխանատու լինել ձեր առջե. աղաշում եմ հանգստացըք ձեր ջղերը... անշուշտ մի ուրիշ գործ կունենան էքինդիները ձեղ մօտ:

—Ուրիշ գործ, ի՞նչ գործ. իմ տունս քանդեցիր, փաշան անշուշտ իր գժգոնութիւնն է յայտնում. ձեր, ձեր շնորհիւ, մի գեղջկուհու համար պիտի սեանամ և կորագլուխ մնամ...

—Մտան նրանք, այն աժգահա սրբազնս ասես փոքրացել, չէր էլ երեւմ իր փոքրիկ ընդունարանում:

—Եկել ենք,—առացին տաճիկ բէյերը—մեր խորին գոհունակութիւնը անձամբ յայտնելու ձեղ, հայ ժողովրդի հոգեոր տէր, որ վատահ լինելով վսեմափայլ փաշայի արդարամտութեան վրայ, աղդարել էրնք վերադարձնել մոլորուած աղջկան իր փարախը:

ծերունի առաջնորդի սիրաը տեղն ընկաւ. ուրախութեան ժպիտը խաղաց գիրուկ դէմքի վերայ:

—Իհարկէ, իհարկէ, —ասաց նա—ես բնաւ տարակուսելու հիմք չունիմ, որ Վեհափառ Փատիշահի արժանաւոր ներկայացուցիչը և բարեխիղճ է, և արդարամիտ, որ սրբազնն Ղուանը բնաւ չի թոյլարիլ մէկին բռնութեամբ խլամութիւն ընդունելու... չէ որ մենք Սուլթանի հլու և հաւատարիմ հալատակները, նրա անձնուէր ստրուկներն ենք:

—Անշուշտ, անշուշտ, -վրայ բերին բէյերը:

—Բայց ճշմարիտն ասած, այս գործի աջողութեամբ երկուստեք

պարտական ենք Մալխաս-աղային, որ արգելք եղաւ ինձ հեռագըելու Պատրիարքարան և ձեզ՝ շլոելու խաժամուծի անարդար ձայնը...

Կրկին չնորհակալութիւն արին նրանք և հեռացան: Աղջիկը յահանձնուեց Տէր-Զօրաբարէլի տանը մի քանի օրով, մինչև որ կ'խաղաղուէին յուղուած մտքերը, կ'մեղմանար իսլամ, միշտ ֆանատիկ ամբոխի կատաղութիւնն ու զայրոյթը:

Հասկանալի՞ է թէ այդ երևոյթը որքան բարձրացրեց հալածուածՔրիստոնէութիւնը մեր երկրում, սրբազնի անուան մեծութիւնն ու իմ փառքը:

† \* \*

—Երիւ մի շաբաթից յետոյ—շաշունակեց Մալխաս-աղան,—ըստական ծանր գլխագին (բաշլուղ) ստանալով՝ գաւառակում շտեմնուած ուրախութեամբ ու կերպումով կատարուեց հոգեգստերս հալսանիքը Բաշ-Քեագիկլարցի մի երիտասարդ տղայի հետ. նա այժմ հասակաւոր կին է, զաւակների ծնող, գոհ իր վիճակից և բաղդաւոր ամուսնական գորութեամբ: Թէև լամուկը չ'հանգստացաւ հալածել այդ ընտանիքին և ամեն տեսակ անախորժութիւններ առաջացնել, բայց Խուս-Ցանկական պատերազմի ժամանակ, հէնց այդ կինը՝ ինքը խէնչալի մի հարուառով քնացրեց նրան գիւղամիջում և հրապարակաւ սրբեց իր օջախի և ճակատի բիծն ու արատիքը...

—Նշանակում է մի Այվազ էլ աղջիկդ է եղել:—չեզնեց Հայր-Սուրբը:

—Զէք հաւատում, հը՛, եթէ կամենաք կասեմ Սիւմբուլին (իր որդին՝ Սմբատ) ձիերը թամբել տայ, միասին գնանք Բաշ-Քեագիկլար, անձամբ տեսնենք հոգեգստերիկիս, ինքներդ պատմել տուէք նրան և հաւատաւոր եղիք... իհարկէ տեղի սառնորակ աղբիւլների ակնում կ'այսելնք խորոված գառը:

—Ռ'չ, ո՛չ, —ասաց Նահապետ Հայր Սուրբը— այժմ քեզ հետ մի-ասին Անի կինանք, այնտեղ՝ ներսէս վարդապետի ներկայութեամբ պիտի պատմես՝ «Նաշատու» դէպքը:

—Լաւ, Հայր-Սուրբ ջան, իմ գլխի, իմ աշքի վրայ, պայմանով, որ այս շաբաթ գուք Մալխասի հիւրը լինիք:

## ԱՐԵՒԱԾԱԳԻՆ

Երազ էր արգեօք թէ իրականութիւն. դժուամը է որոշէլ: Զգիտեմ նոյնպէս քնած էի ես թէ արթուն, բայց մայիսեան մի կարճատե գիշեր էր, որ սակայն ինձ թւում էր երկար, տաղտկալի, սրամամաշ ու սպանող... անքնութիւնից տանջուած՝ դանդաղօրէն ու անվտահ մտնում եմ պարտէզ. նայում եմ շուրջն, ինձ թւում է թէ ամենուրեք թագաւորում է գերեզմանական սուր ու խաւար, ցաւ ու վիշտ. լուում է լաց ու թախիծ, նվզոց ու հեծկլտանք...

Իմ պարտէզը նիրհում է ինչպէս մոռացուած դամբարան, խաղաղ ու անվրդով. սաղարթախիտ, բարձրուղէշ նոճիներն ու մարենիդաղը, նարնջենին ու թղինին, արձանի նման սաւել ու շուարել են. ները, նարնջենին ու թղինին, արձանի նման սաւել ու շուարել են. յոդինածութիւն նիրհուն աերեները մեղմի փոփոխում են անվտահ, անհանրանց նիրհուն աերեները մեղմի փոփոխում են անվտահ, անհամարձակ բողոքաւորի խեղդող մըմունջով. մի ճնշող վիշտ, սպանող յոդինածութիւն կօշմարի նման՝ եկել, չոքել էր իմ սիրուն այգու կրծքին՝ կարծես նրան խեղդելու անյագ տենչով...

Եւ պարտիզի հեռաւոր մի անկիւնից լսելեայն թաւալում էր յոդինածունց ու մթապատ գետակը, որից՝ սպիտակ սաւանի նման քուլացուած գիտում էր թանձը մէզը, ցրտաշունչ ու մուայլ, ինչպէս մի հսկայ հլէշ կամ գերեզմանական սրուական:

Եւ իմ գետակի պղպջակները հեղիկ ու մնջիկ գլորվում էին Աստուածածին մեջ ու մարձակ սաւանի նման գուլացուած գիտում թէ ուր—թափուելու համար, տաղտուկ, տիրադէմ, նման մեռած մարդի սաւած աշքերին...

Հայացըս դարձուրւմ եմ դէպի սարալանջը, որի խորտուրութակերեսոյթը ծածկուած է թաւուտ անտառով. ծառերի ճիւղերը ասես բաղկատարած՝ ցցուել են զէպի վեր, զէպի բարձրը, անհունը. նրանց շիփ-շիտակ կատարեները հայցում են ինչ որ նուիրական ու խորհրդաւոր...

Պարզում է արենեքը. ինձ թւում է թէ հեռաւոր հորիզոնում մի համաշխարհային հրդեհ է բռնկել. հանգչող թէ առկայծող բոցերն էին, որ միախառնուելով մէզի ու մառախուզի հետ, ընդգրկում, լավում ու ողողում էին երկիրը արխինստ լուսով. կարմըին է տալիս

ծով ու յամաք, սար ու ձոր... և իմ պալսէզը, ուր մայիսեան թարմ ու մանուկ ընութիւնը իր առատ ձիբքերն է բաշխել ու սքանչելի գահը հաստատել. — հազարերանդ գոհարներով ու մարդաբաժի շաղով ծածկուած՝ ծիծաղում է մարդի երեսն ի վայր. կանաչ և ծաղիկ, վարդի ու շուշանի եղեմական անուշահոտութիւնն...

Եւ ուժգին թափահարող արևի ճամանչների ներքեւ ցրւում են ամպի փշբանքները. իսկ խտղտացող ջինջ ու կապոյտ երկնակամարը, ինձ երեսում է ժպտուն ու զուարթադէմ...

Հիեղէն գնախ ոսկեղինիկ ճառագայթները ցրելով մէջն ու մառախուղը՝ ողջագուրում են իմ պարտիզի իւրաքանչիւր շիւղն ու տեղեր, դիակացած անտառն էլ | շիտկուրմ ու արթնանում է քնից. ողջունում է գեղանկար արևածագը... լսելի է դալար տերենների ախորժ սօսափիւնը և ես նկատում եմ թէ ինչպէս խոժոս ու արիւնոտ ակնարկ ձգելով զէպի անհուն ու թափանցիկ կապոյտները՝ արեի շիկացած պաքները միախառնուում էին գետակի ջրերին և վրդովում նրա հանգիստ քունը. նա էլ սկսեց աղմկել ու հրհրուիլ զմբութի հրապուրիշ հոսանքով...

Հազարաւոր աղմուկները կեդրսնանում, խմբւում են մի տեղ, ասես մի ներգաշնակ համերգ լինի, դուքքեկանք պարզ ու հմայող... գոռզուում էր անտառը, շաշում էր գետակը, համբուլեւում էին հազարերանից ծաղիկները, լաշաւմ էր տերենների հոծ բաղմութիւնը. Թագաւորում էր վազօրգեան լոյնի ու արևի ախորժ ջերմութիւնը:

Թւում էր ինձ թէ կղզիանում, լճանում էին նրանք հեռաւոր կեանքի պայծառ մթնոլորտում. հաւատալով թէ երբէք արել այդպէս չէ ջերմացրել երկիրը և իր լուսափիւո ճառագայթներով վանել մթին պիշերուան տալակալի խաւար...





36654